ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ
Հեռ՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ
Հեռ՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 (մեկ հարյուր) եվրո
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	**Թողարկման ծավալ՝** Առավելագույնը 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, 40,000,000(քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար, 10,000,000 (տասը միլիոն) եվրո
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ՄԱՍ 2 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 7

2.1 Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ 7

2.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր 11

2.3 Բանկի զարգացման միտումները 14

2.4 Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ 15

2.5 Ղեկավարությունը և բաժնետերերը 15

2.6 Պարտատոմսերի հիմնական տվյալները 18

2.7 Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը 19

2.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը 20

2.9 Այլ տեղեկություններ 20

2.10 Ամփոփ ֆինանսական տվյալներ 20

ՄԱՍ 3 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 23

3.1 Ռիսկային գործոններ 23

3.2 Հիմնական տեղեկատվություն 25

3.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն 26

3.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 38

3.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 49

3.6 Լրացուցիչ տեղեկատվություն 49

ՄԱՍ 4 ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 52

4.1 Անկախ աուդիտորներ 52

4.2 Ռիսկային գործոններ 52

4.3 Տեղեկատվություն թողարկողի մասին 56

4.4 Բիզնեսի նկարագիրը 60

4.5 Թողարկողի կառուցվածքը 64

4.6 Զարգացման վերջին միտումները 64

4.7 Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները 69

4.8 Հսկող անձինք 86

4.9 Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ 87

4.10 Էական պայմանագրեր 88

4.11 Մասնագիտական կարծիքներ 89
4.12 Այլ տեղեկատվություն 89

ՄԱՍ 5 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 91
5.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/ 91
5.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/ 97
5.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 104
5.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Բանկի կազմակերպչական կառուցվածքը 105
5.5 ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման պայմաններ 106
5.6 ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ 113

ՄԱՍ1 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Անդրեյ Մկրտչյան	**Խորհրդի նախագահ**		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռուբեն Վարդանյան	**Խորհրդի անդամ**		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նուբար Աֆեյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի	**Խորհրդի անդամ**		31.5.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ալեքսեյ Գերմանովիչ	Խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Օլեգ Ցարկով	Խորհրդի անդամ		01.06.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Պիեռ Գյուրջյան	Խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Հանեսյան	*Գլխավոր տնօրեն*		31/05/2017
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գոհար Խաչատրյան	*Գլխավոր հաշվապահ*		31.05.17թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գևորգ Թառումյան	*Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն*		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գագիկ Սահակյան	*Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն*		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անդրանիկ Բարսեղյան	*Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար*		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Բաբայան	*Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով տնօրեն*		31.05.17թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արման Բարսեղյան	*Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն*		31/05/17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Ջրբաշյան	*Տնօրինության անդամ, Հարգացման գծով տնօրեն*		31/05/2017,
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Բուրաստան Մովսիսյան	*Տնօրինության անդամ, Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով փնօրեն*		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սամվել Աղաբաբյան	*Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար*		31.05.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Արտակ Հանեսյան	Գլխավոր տնօրեն		01/06/17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

(Պատասխանատու անձանց ստորագրություն)

ՄԱՍ 2 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.ameriabank.am:

2.1 Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ

Անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ինտերնետային կայքը, այն ֆիզիկական անձի անվանումը, ում հետ կարելի է կապվել թողարկողին առնչվող հարցերի դեպքում և նրա հեռախոսի համարը, թողարկողի համառոտ պատմությունը, ռազմավարությունը, կանոնադրական կապիտալը և վերջինիս կառուցվածքը, բիզնեսի նկարագիրը (արտադրած արտադրանքը և մատուցված ծառայությունները և այլն), կազմակերպական կառուցվածքը (եթե խմբի անդամ է, ապա նաև խմբի կառուցվածքը), թողարկողի դրամադրության տակ եղած ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը և այլն:

2.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «Ամերիաբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “Америабанк”

անգլերեն՝ “Ameriabank” Closed Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “Америабанк”

անգլերեն՝ “Ameriabank” CJSC

Բանկի պետական գրանցման վայրն է՝ Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ
Բանկի պետական գրանցման համարն է՝ 50:
Բանկի գտնվելու վայրն է՝ Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ

Կապի միջոցները՝

Հեռ.՝ (+37410) 56 11 11
Ֆաքս՝ (+37410) 51 31 33
էլ. Փոստ՝ info@ameriabank.am
կայք՝ www.ameriabank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ Թողարկող կամ Բանկ) հաճախորդի մենեջերների հետ, որակավորված ներդրողները կարող են նաև կապվել Ներդրումային Բանկային գործառնությունների դեպարտամենտի Կապիտալի Շուկաների բաժնի որևէ աշխատակցի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37410) 56 11 11:

2.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) հիմնադրվել է 1992թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 1992թ-ի սեպտեմբերի 8-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0154: Նույն թվականի դեկտեմբերի 8-ին Բանկին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 50 լիցենզիան:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ:

Ստորև ներկայացված է համառոտ պատմական ակնարկ Բանկի զարգացման ժամանակագրական կարևոր նշումներով՝

- 2007թ. Հայներարտբանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը ձեռք բերվեց «Թի Դի Էյ Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից:
- 2008թ. «Հայներարտբանկ» ՓԲԸ-ն վերանվեց «Ամերիաբանկ» ՓԲԸ:

- 2010թ. Բանկը ձեռք բերեց «Կասկադ բանկ» ՓԲԸ-ն:
- 2014թ Բանկի վարկային պորտֆելը համալրվեց նոր վարկերով՝ «Նորվիկ» ՈՒՎԿ վարկային պորտֆելի մի մասի ձեռքբերման հաշվին:
- 2015թ-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (EBRD) 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարեց՝ Բանկի բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով, իսկ IFC-ն 50 մլն դոլար հատկացրեց Բանկին՝ բանկի նորմատիվային կապիտալն ավելացնելու նպատակով:

2.1.3 Բանկի կանոնադրական կապիտալը

2016թ-ի վերջի դրությամբ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում էր ավելի քան 32 (երեսուներկու) միլիարդ ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 100,273 (մեկ հարյուր հազար երկու հարյուր յոթանասուներեք) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320,000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հիմնական բաժնետերերն են «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդը», «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը» և «Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդը», որոնց պատկանում են Բանկի բաժնետոմսերի համապատասխանաբար 65.8%-ը, 20.7%-ը և 13.5%-ը:

2.1.4 Բանկի մասնաճյուղերը

Բանկն ունի 13 մասնաճյուղ և 100-ից ավել բանկոմատ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Մասնաճյուղի հասցեները մանրամասն ներկայացված են **Ազդագրի 4.3.1.5 մասում**:

2.1.5 Բանկի խմբի կառուցվածքը

Բանկի բաժնետեր է հանդիսանում «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդ» ընկերությունը, վերջինս հանդիսանում է նաև հետևյալ ընկերությունների բաժնետեր՝

- ԱՄԵՐԻԱ ՓԲԸ
- ՊՐՈԴԵԿՈ ՓԲԸ
- ԱՄԵՐԻԱ ԻՆՔ

2.1.6 Բանկի կազմակերպչական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 4-ում**:

2.1.7 Բիզնեսի նկարագիրը

Բանկը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 1992թ սեպտեմբերի 8-ին և դեկտեմբերի 8-ին ստացել է թիվ 50 բանկային գործունեության լիցենզիան: 2016 թվականի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 64.4 մլրդ ՀՀ դրամ: Բանկը ընդհանուր կապիտալի մեծությամբ 2016թ-ի արդյունքներով զբաղեցրել է ՀՀ բանկային համակարգում առաջին տեղը:

2016թ-ի արդյունքներով Բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 719,4 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 655.0 մլրդ ՀՀ դրամ: Բանկի ղեկավարությունը շարունակելու է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը 2010 թվականի վերջին կայացված ռազմավարական որոշումը (պահպանելով գործող կորպորատիվ հաճախորդների բազան՝ աստիճանաբար ավելացնել մանրածախ ծառայությունների տեսակարար կշիռը) իրագործելու ուղղությամբ: Լրացուցիչ տեղեկությունները մատչելի են Բանկի ինտերնետային կայքում:

2.1.8 Ակտիվների որակը

2.1.8.1 *Ակտիվների համարժեքությունը*

2016 թվականի արդյունքներով Բանկի զուտ շահույթը, համաձայն աուդիտի ենթարկված հաշվետվությունների, կազմել է 6.2 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունն կապիտալի միջին մեծությանը)՝ 10.2%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմեց 8.9%: Մինչ 2018թ-ը Բանկը նախատեսում է լրացուցիչ կապիտալի ներգրավում, ինչն էլ հավելյալ հնարավորություն կստեղծի՝ ապահովելու վարկային պորտֆելի արագընթաց աճին համապատասխան տնտեսական կապիտալի բավարար մակարդակ:

2.1.8.2 *Ակտիվների որակը*

2016 թ.-ի վերջին Բանկի վարկային պորտֆելը[1] կազմել է 522 մլրդ ՀՀ դրամ: 2016թ.-ի ընթացքում, հաշվի առնելով տնտեսության ներկայիս վիճակը, Բանկի համար առավել արդիական է եղել պորտֆելի որակի կառավարումը, նոր վարկեր

[1] Վարկեր, ֆինանսական վարձակալություն և ֆակտորինգ

տրամադրվում էին միայն լավագույն հաճախորդներին, որոնց ֆինանսական վիճակը բավարարում էր Բանկի սահմանված առավել խիստ չափանիշներին:

2.1.8.3 *Ակտիվների իրացվելիությունը*

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար: Ի հավելումն ստորև ներկայացվում են ՀՀ ԿԲ իրացվելիության նորմատիվները (հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա միջին ցուցանիշ)՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծություն 2016	Փաստացի մեծություն 2015	Փաստացի մեծություն 2014	Փաստացի մեծություն 2013	Փաստացի մեծություն 2012
$Ն_2^{1*}$	15%	31.23%	29.91%	26.50%	31.32%	26.63%
$Ն_2^{2**}$	60%	133.17%	151.26%	94.34%	171.03%	144.86%

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն

2.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր

2.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ **Ազդագրի 4.2** մասում:

Աճող մրցակցություն շուկայի համակենտրոնացման արդյունքում: Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա: Սույն Ազդագրի պատրաստման պահին բանկային հատվածում նկատելի են համակենտրոնացման միտումներ, որոնց արդյունքում կարող են առաջանալ բանկեր, որոնք իրենց չափերով համադրելի կարող են լինել Թողարկողի հետ և սրացնել մրցակցությունը, սակայն Թողարկողը նույնպես ակտիվորեն մասնակցում է այս գործընթացին՝ փորձելով ապահովել իր առաջատար դիրքերը:

Արտարժութային ռիսկ: Թողարկողն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժութային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Այնուամենայնիվ, ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր էական արժեզրկումը հիմնական արժույթների նկատմամբ կարող է բացասական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա՝ վատթարացնելով արտարժութային վարկերի սպասարկման որակը, մեծացնելով պահուստավորումը և արդյունքում իջեցնելով Թողարկողի շահութաբերությունը:

Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ: Չնայած Բանկը ներդրել է բավականին ճկուն և արդյունավետ գնագոյացման համակարգ իր կողմից առաջարկվող ծառայությունների համար՝ պետք է նկատի ունենալ, որ, կախված Թողարկողի կողմից ծառայությունների գնային առաձգականության և եկամուտների առաձգականության բնութագրիչներից, Բանկի հասույթը կարող է նվազել ՀՀ-ում սպասվելիք գնաճի պայմաններում:

Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Հնարավոր է, որ հաջորդող տարիների ընթացքում Բազել-3 ստանդարտների ներդրումը թե դրական և թե բացասական ազդեցություն ունենա Բանկի գործունեության ու ֆինանսական արդյունքների վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկեր: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկի չաշխատող վարկերի ու ակտիվների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ներայացված է Ազդագրին կից ֆինանսական հաշվետվություններում: Բանկի ղեկավարությունը փորձում է ներդնել վարկային ռիսկի կառավարման, սահմանափակման ու նվազեցման արդյունավետ մեխանիզմներ:

Շուկայական ռիսկ: Շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը: Այս ռիսկի բացասական ազդեցությունը Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա նվազեցնելու համար Բանկի Ռիսկերի կառավարման կենտրոնը սահմանել Բանկի ռիսկի ախորժակի մեծությունը, մշակել է շուկայական ռիսկի սահմանաչափեր, դրանց հետևելու և պահպանելու վերահսկման արդյունավետ մեխանիզմներ:

Տոկոսադրույքի ռիսկ: ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը ենթակա է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Թողարկողն այս ռիսկը մեղմելու համար կիրառում է մի քանի գործիքներ, ինչպիսիք են՝ իրացվելի միջոցների (կանխիկ, պարտատոմսեր և այլ արագ իրացվելի ակտիվներ) բավարար մակարդակի մշտական պահպանումը Բանկում և ֆինանսական գործընկերների հետ առկա վարկային գծերի մատչելիության ապահովումը:

2.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ **Ազդագրի 3.1** մասում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության մակարդակի վերանայման՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ցուցանիշների փոփոխությունների և/կամ նման փոփոխությունների սպասումների հետ կապված:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Վարկանիշի փոփոխության ռիսկ: Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղղակի կախվածության մեջ է գտնվում Թողարկողի և/կամ հենց պարտատոմսի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից/վարկանիշներից (S&P, Moody's, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում սովորաբար պարտատոմսի գինն ընկնում է կամ նույն է, որ պարտատոմսի եկամտաբերության աճի վերաբերյալ սպասումներ են ձևավորվում:

2.3 Բանկի զարգացման միտումները

Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները (խորհրդի բացատրություններն այն գործոնների վերաբերյալ (կատարված դիտարկումներ, արտոնագրեր, լիցենզիաներ, իրականացված գործառնություններ, դատական հայցեր, սպասվող կազմակերպական փոփոխություններ և այլն), որոնք ունեցել են կամ ունենալու են էական ազդեցություն ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա)

2.3.1 Զարգացման միտումները

Բանկի գործունեությունը նպատակաուղղվելու է որակապես նոր ծառայությունների տրամադրմանը, ակտիվային գործառնությունների հուսալիության բարձրացմանը և դրանով իսկ ներդրողների և ավանդատուների շահերի պաշտպանմանը: Բանկի կողմից շարունակվելու են շեշտադրվել մանրածախ և ՓՄՁ ուղղությունները՝ ապահովելով վարկային պորտֆելում դրանց տեսակարար կշռի շարունակական աճը: Բացի այդ, Բանկը նախատեսում է, որ գալիք տարիների ընթացքում մանրածախի մասնաբաժինը չպետք է նվազի: Նախատեսվում է ակտիվացնել նաև պլաստիկ քարտերով գործառնությունները, բանկ-հաճախորդ համակարգերի, ինտերնետ բանկինգի միջոցով հաճախորդների սպասարկումը, բրոքերային ծառայությունները:

Հաճախորդների կառուցվածքի առումով Բանկը հիմնականում շեշտադրելու է տնային տնտեսությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների տեսակարար կշռի ավելացումը: Հիմնական թիրախ են հանդիսանալու Բանկի մասնաճյուղային ցանցի շրջանում տնտեսական ակտիվություն ունեցող հաճախորդները: Միևնույն ժամանակ, զարգացնելով հեռակա բանկային տեխնոլոգիաները, Բանկն իր ծառայություններն ավելի մատչելի կդարձնի ոչ ռեզիդենտների և հեռավոր շրջաններում բնակվողների համար:

2.3.2 Դատական հայցեր, սպասվող փոփոխություններ

Ընկերությունը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են

էական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և:

2.4 Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ

Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Բանկի 2014թ, 2015թ. և 2016թ. ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի կողմից: 2017 թ.-ի ֆինանսական գործունեության աուդիտը նույնպես իրականացվելու է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի կողմից:

2.5 Ղեկավարությունը և բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը (կառավարմանը մարմնի անդամների անձանց անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, փորձառությունը, աշխատակիցների ընդհանուր թիվը, խոշոր բաժնետերերի անունը, ազգանունը, թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության չափը և այլն)

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմինը,
- Տնօրենների Խորհուրդ,
- Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ
- Տնօրինությունը և Գլխավոր տնօրենը - Տնօրինության Նախագահը:

2.5.1 Բանկի բաժնետերերը

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Բանկի բաժնետերերն են եղել՝

- Ամերիա Գրուպը (Սի-Ուայ) - 65.8%
- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ - 20.7%
- Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ – 13.5%

2.5.2 Բանկի խորհուրդը

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Բանկի Խորհուրդը բաղկացած էր 7 անդամներից՝ նախագահ և վեց անդամ, որոնց որակավորումը, ինչպես նաև փոխլրացնող փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն անդրադառնում են Խորհրդի արդյունավետության վրա:

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառությունը
Անդրեյ Մկրտչյան	Խորհրդի նախագահ	Ավելի քան 20 տարի
Ռուբեն Վարդանյան	Խորհրդի անդամ	Ավելի քան 25 տարի
Նուբար Աֆեյան	Խորհրդի անդամ	Ավելի քան 25 տարի
Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի	Խորհրդի անկախ անդամ	Ավելի քան 25 տարի
Ալեքսեյ Գերմանովիչ	Խորհրդի անդամ	Ավելի քան 15 տարի
Օլեգ Ցարկով	Խորհրդի անդամ	Ավելի քան 15 տարի
Պիեռ Գյուրջյան	Խորհրդի անդամ	Մոտ 30 տարի

2.5.3 Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ

Տնօրենների խորհրդի կողմից իր իրավասություններն առավել արդյունավետ և պատշաճ իրականացնելու նպատակով Տնօրենների խորհրդին կից ստեղծվել են «Աուդիտի», «Վարձատրության», «Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման» կոմիտեները:

Աուդիտի կոմիտե	Վարձատրության կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե
Կոմիտեի հիմնական նպատակն է ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը, բարձրացնել բանկում ֆինանսական հաշվետվողականության, արտաքին աուդիտի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետությունը:	Կոմիտեի նպատակն է աջակցել բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել նշված համակարգի որակի գնահատումը, իրականացնել վարձատրության կիրառվող մեխանիզմների մոնիտորինգ՝ լավագույն որակավորում ունեցող մասնագետներին	Կոմիտեի նպատակը բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համար արհեստավարժ, հմուտ, փորձառու, առաքինի մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգրավումը, այդ

	ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու նպատակով:	թվում՝ փոխարինելիության ապահովումն ու կադրային բարելավումը, ինչպես նաև կիրառելի օրենսդրական կարգավորմանը համապատասխան՝ կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձի ներդնումը:

Կոմիտեների գործունեությունը որևէ կերպ չի ազդում Տնօրենների խորհրդի իրավասությունների ու պարտականությունների վրա և չի սահմանափակում դրանք: Կոմիտեներն իրենց պարտականություններն իրականացնում են ինքնուրույն, սակայն վերջնական հաստատման համար կոմիտեների որոշումները և նախագծերը ներկայացվում են Տնօրենների խորհրդին: Համաձայն բանկի ներքին կանոնակարգերի՝ մանրամասն մշակման և քննարկման ենթակա ցանկացած հարց սկզբում պետք է քննարկվի կոմիտեների մակարդակով, այնուհետև ներկայացվի Տնօրենների խորհրդին:

Տնօրենների խորհրդին կից կոմիտեների կառուցվածքը

ԿՈՄԻՏԵՆԵՐ	**Աուդիտի կոմիտե**	**Վարձատրության կոմիտե**	**Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե**
Տնօրենների խորհրդի անդամները			
Անդրեյ Մկրտչյան			**նախագահ**
Ռուբեն Վարդանյան		**նախագահ**	անդամ
Նուբար Աֆեյան		անդամ	անդամ
Ռոբերտ ֆոն Ռեկովսկի	անդամ		

Պիեռ Գյուրջյան	**նախագահ**		
Օլեգ Ցարկով	անդամ		
Ալեքսեյ Գերմանովիչ		անդամ	

2.5.4 **Բանկի տնօրինությունը**

Բանկի Տնօրինությունը կազմված է 10 անդամներից՝

- Արտակ Հանեսյան՝ Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն,
- Տիգրան Ջրբաշյան՝ Տնօրինության անդամ, Զարգացման գծով տնօրեն,
- Գոհար Խաչատրյան՝ Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ,
- Անդրանիկ Բարսեղյան՝ Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար,
- Գագիկ Սահակյան՝ Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն,
- Սամվել Աղաբաբյան՝ Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար,
- Գևորգ Թառումյան՝ Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն,
- Արման Բարսեղյան՝ Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն,
- Արթուր Բաբայան՝ Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով տնօրեն,
- Բուրաստան Մովսիսյան՝ Տնօրինության անդամ, Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն:

Բանկի աշխատակիցների միջին քանակը 2016թ.-ին 597էր (2015՝ 581):

2.6 Պարտատոմսերի հիմնական տվյալները

Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները (արժեթղթերի տեսակը, քանակը, ընդհանուր ծավալը, անվանական արժեքը, արժույթը, տոկոսադրույքը, նպատակը, սպասվող ժամանակացույցը և միջոցների օգտագործման նախատեսվող ուղիները և այլն)

Թողարկվող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն, իսկ տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով, իսկ դրանց դիմաց արժեկտրոնային վճարումներ կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով/Եվրոյով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի/Եվրոյի նկատմամբ հրապարակված պաշտոնական փոխարժեքը:

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է առավելագույնը 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար, 40,000,000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար և 10,000,000 (տասը միլիոն) եվրո եվրոյով թողարկված պարտատոմսերի համար:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/100 (մեկ հարյուր) եվրո:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տարեկան արժեկտրոնի մեծությունը մինչև հարկերը վճարելը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.7 Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, ընդ որում, եթե ծրագրային ազդագրի գրանցման պահին թողարկողը դեռևս չի որոշել թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, նշվում է, թե հասարակությունը ինչպես և երբ կարող է տեղեկություններ ստանալ այդ մասին.

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

2.9 Այլ տեղեկություններ

Այլ էական տեղեկություններ ըստ թողարկողի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում (Թողարկողի կանոնադրության և այլ պաշտոնական փաստաթղթերի կարևոր դրույթներ, փորձագիտական եզրակացություններ, կարևոր համաձայնագրեր, կանոնադրությանը և պաշտոնական այլ փաստաթղթերին հղումներ և այլն)

2015թ. ընթացքում Ամերիաբանկը և Վերակառուցման ու Զարգացման Եվրոպական Բանկը (EBRD) կնքեցին 40 մլն ԱՄՆ դոլարի բաժնետիրական կապիտալի ներգրավման պայմանագիր, որից 30մլն ԱՄՆ դոլարը ներդրվեց 2015թ.-ի դեկտեմբեր ամսին, իսկ մնացած 10 մլն ԱՄՆ դոլարը կտրամադրվի Բանկին կոնսոլիդացիոն ծրագրերի իրականացմանն աջակցելու համար:

2.10 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ստորև ներկայացվում են Բանկի 2014-2016թթ ամփոփ ֆինանսական տվյալները՝

Ցուցանիշի անվանումը (հազար ՀՀ դրամ)	2016 (աուդիտ անցած)	2015 (աուդիտ անցած)	2014 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	6,206,686	4,815,102	7,148,870

Ցուցանիշի անվանումը (հազար ՀՀ դրամ)	2016 (աուդիտ անցած)	2015 (աուդիտ անցած)	2014 (աուդիտ անցած)
Սեփական կապիտալի միջին մեծություն	61,132,071	46,698,234	40,125,897
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	**10.15%**	**10.31%**	**17.82%**
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	6,206,686	4,815,102	7,148,870
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	542,907,430	421,155,680	343,304,867
Ակտիվների շահութաբերություն (ROA)	**1.14%**	**1.14%**	**2.08%**
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	6,206,686	4,815,102	7,148,870
Գործառնական եկամուտ	22,585,397	21,090,371	20,053,293
Զուտ շահույթի մարժա (NPM)	**27.48%**	**22.83%**	**35.65%**
Գործառնական եկամուտ	22,585,397	21,090,371	20,053,293
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	542,907,430	421,155,680	343,304,867
Ակտիվների օգտագործման գործակից (AU)	**4.16%**	**5.01%**	**5.84%**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	542,907,430	421,155,680	343,304,867
Սեփական կապիտալի միջին մեծություն	61,132,071	46,698,234	40,125,897
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**8.88**	**9.02**	**8.56**
Զուտ տոկոսային եկամուտ	14,875,037	14,753,986	14,625,260
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	410,601,421	318,442,515	241,126,406
Զուտ տոկոսային մարժա (NIM)	**3.6%**	**4.6%**	**6.1%**
Տոկոսային եկամուտ	42,624,265	35,733,246	27,711,993
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	410,601,421	318,442,515	241,126,406
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	**10.4%**	**11.2%**	**11.5%**
Տոկոսային ծախսեր	27,749,228	20,979,260	13,086,733
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	478,058,205	371,498,774	300,690,635
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	**5.8%**	**5.6%**	**4.4%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	6,206,686	4,815,102	7,148,870
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	100,273	82,118	79,524
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	**61.90**	**58.64**	**89.90**
Սպրեդ	**4.6%**	**5.6%**	**7.1%**

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ*

* Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են **Հավելված 3**-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 3 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Ռիսկային գործոններ

Այն ռիսկային գործոնները, որոնք անհրաժեշտ են առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի շուկայական ռիսկը գնահատելու համար:

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության մակարդակի վերանայման, ընդ որում ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ցուցանիշների փոփոխությունների և/կամ նման փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել և/կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայական պայմանների փոփոխություններից և սպասումներից, Թողարկողի կողմից վճարվող անվանական արժեկտրոնների վճարման և պարտատոմսի անվանական գումարի մարման մեծությունները, արտահայտված թողարկման արժույթով, չեն փոփոխվում:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն ձեռք բերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռք բերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավարությունների հավանական բացակայությամբ: Հավանական է, որ վերաներդրման ռիսկը ներդրումային որոշում կայացնելու գործընթացում էական գործոն չի

հանդիսանա ընթացիկ կամ կարճաժամկետ (մեկ արժեկտրոնային ժամանակամիջոցից ոչ ավել) ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով (թողարկողի վարկանիշ, պարբերական արժեկտրոնային վճարումներ, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և առևտրին թույլատվություն կարգավորվող շուկայում, ինչպես նաև շուկա ստեղծող ընկերության կամ ընկերությունների հետ համապատասխան պայմանագրի կնքման բանակցությունների վարում): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ելնելով տնտեսական միջավայրի բացասական փոփոխություններից և/կամ ֆինանսական շուկայի անբարենպաստ միտումներից ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Արտարժութային ռիսկ: Թողարկվող պարտատոմսերն արտահայտված են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով, և հետևապես նեդրումները և ներդրումների ետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի/ԱՄՆ դոլարի/Եվրոյի:

Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել ավելի ցածր (գնաճի չափով) անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից:

Վարկանիշի փոփոխության ռիսկ: Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղիղ կախվածության մեջ է գտնվում Թողարկողի և/կամ հենց պարտատոմսի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից/վարկանիշներից (S&P, Moody's, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում սովորաբար պարտատոմսի գինն ընկնում է կամ նույնն է, որ պարտատոմսի եկամտաբերության մեծության նկատմամբ սպասումները բարձրանում են:

3.2 Հիմնական տեղեկատվություն

Առաջարկի նպատակը և, հնարավորության դեպքում, հնարավոր ներգրավվող զուտ գումարների մեծությունը՝ բաժանված ըստ օգտագործման նախատեսվող ուղղությունների: Այդ ուղղությունները պետք է դասակարգել ըստ առաջնահերթության: Այստեղ զուտ գումար ասելով հասկանում ենք հավաքագրված համախառն գումարի և այդ գումարները հավաքագրելու համար կատարված ծախսերի տարբերությունը:

Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվելու են միջնաժամկետ վարկերի տրամադրմանը, սակայն միևնույն ժամանակ Բանկն այս թողարկմամբ նպատակ ունի հասնելու հաշվեկշռի պասիվային մասի կառավարման արդյունավետության բարձրացմանը, այլ հավասար պայմաններում ավելի քիչ ծախսատար միջոցների ներգրավմանը, հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնմանը և տարատեսականացմանը (դիվերսիֆիկացիա), նախքան Բանկի առաջնային հանրային տեղաբաշխումը (IPO) Լոնդոնի ֆոնդային բորսա և/կամ ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա հարթակներում հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացմանը, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը հնարավոր ներդրողների լայն շրջանակում:

Բանկի կողմից երկար տարիներ շարունակ իրականացվել է ֆինանսավորման աղբյուրների տարատեսականացման (դիվերսիֆիկացիա) գործուն քաղաքականություն, որի նպատակն է եղել բանկի համար ապահովել մեկ ֆինանսավորողի կամ մի քանի ֆինանսավորողների խմբի ռիսկի նվազեցումը, հաշվեկշռի երկարաժամկետ պարտավորությունների մասի ֆինանսավորման կայուն ենթակառուցվածքների ու հարմոնիկ գործարար հարաբերությունների ստեղծումը:

3.2.1 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, ընդ որում, եթե ծրագրային ազդագրի գրանցման պահին թողարկողը դեռևս չի որոշել թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, նշվում է, թե հասարակությունը ինչպես և երբ կարող է տեղեկություններ ստանալ այդ մասին.

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից

պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

3.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

3.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը

Արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր (առկայության դեպքում)

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

3.3.2 Երկիրը

Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են փվյալ արժեթղթերը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

3.3.3 Արժեթղթերի ձևը

Արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում պետք է նշել այն անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեթղթերի ռեեստրը

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Միեր Մկրտչյան 5Բ, հեռ.՝ +(37410) 589151, +(37410) 543321)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

3.3.4 Արժեթղթի անվանական արժեքը և քանակը

Արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում)

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/100 (մեկ հարյուր) եվրո:

Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կհաշվարկվի Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

3.3.5 Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է/ԱՄՆ դոլարը/Եվրոն:

3.3.6 Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (սփորադասությունը): Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչ պայմանների դեպքում է հնարավոր այդ արժեթղթերի վերադասակարգումը

Համաձայն ՀՀ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին օրենքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.
- երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.
- երրորդ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 10 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 10 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով:
- չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման

կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.

- հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
- վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.
- յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ Պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով՝

- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը տասը միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը հինգ միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային Պարտատոմսեր, և դրամային Պարտատոմսերի գումարը հինգ միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային Պարտատոմսերի գումարը՝ մինչև տասը միլիոն ՀՀ դրամով.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային Պարտատոմսեր, և նրա դրամային Պարտատոմսերի գումարը պակաս է հինգ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային Պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժութային Պարտատոմսերի գումարը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային Պարտատոմսերի տարբերության չափով:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ Պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Պարտատոմսերի վերադասակարգում կարող է տեղի ունենալ նոր արժեթղթերի թողարկման դեպքում, եթե դրանք համարվելու են վերադաս, այն էլ միայն այն մասով, որը չի վերաբերվում ավանդների երաշխավորման հիմնադրամին:

3.3.7 Արժեթղթերից բխող իրավունքները

Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը,

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվել են պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները՝

1) ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից,

2) Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,

3) գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով,

4) իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում.

   - ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, դրանք ՀՀ ԿԲ և ֆին. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
   - թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

Միաժամանակ, պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3.3.8 Անվանական տոկոսադրույքը և վճարման պայմանները

Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները, մասնավորապես, տոկոսների վճարման պարբերականությունը, կոնկրետ օրերը (օրերի հաշվարկման կարգը), տոկոսի սպացման հայտերի ներկայացման թույլատրելի ժամանակահատվածը և մայր գումարի վերադարձման կարգը: Եթե տոկոսադրույքը ֆիքսված չէ (փոփոխուն է), ապա՝ ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է սպանալ այդ ցուցանիշի (դրա փոփոխության) մասին տեղեկատվություն: Այս դեպքում պետք է նաև նկարագրել, թե շուկայական ինչպիսի պայմաններ կարող են ազդել այդ ցուցանիշների վրա, ինչպես նաև այն մասին, թե ով է իրականացնելու այդ փոփոխուն տոկոսադրույքի հաշվարկը

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու է ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով, իսկ ներդրողներին վճարվելու է ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով/Եվրոյով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի/Եվրոյի նկատմամբ հրապարակված պաշտոնական փոխարժեքը :

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրը Դեպոզիտարիայի աշխատանքային օրվա ավարտի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը արժեկտրոնների մարման (վճարման) օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝

մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Բանկը հարցում է ուղարկում Դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Ռեեստրում ճիշտ հաշվեհամարի բացակայության դեպքում վճարումը իրականացվում է ներդրողին առձեռն՝ Բանկի գլխամասային գրասենյակում: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կփոխանցվի/կսառեցվի Բանկում՝ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև՝ Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերման ու գումարի փոխանցման ուղղությամբ:

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
    - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
    - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];
    - D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
    - D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;

- D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

3.3.9 Արժեթղթերի մարման ժամկետը

Արժեթղթերի մարման ժամկետը: Մասնակի մարումների դեպքում, դրա նկարագիրը: Վաղաժամկետ մարման հնարավորության դեպքում (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ), դրա ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրը՝ Դեպոզիտարիայի աշխատանքային օրվա ավարտի դրությամբ: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Բանկը հարցում է ուղարկում ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Ռեեստրում ճիշտ հաշվեհամարի բացակայության դեպքում վճարումը իրականացվում է ներդրողին առձեռն՝ Բանկի գլխամասային գրասենյակում:

ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ՀՀ դրամային/ ԱՄՆ դոլարով/Եվրոյով հաշիվը չի գտնվում հաշվարկային բանկում), ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման

գումարները կստանան պահումներով՝ համապատասխան Բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների:

Թողարկողը վճարման/մարման հանձնարարագրի(րերի) իրականացման հետ միաժամանակ կտեղեկացնի Դեպոզիտարիային՝ ներկայացնելով պարտատոմսերի մարման վերաբերյալ համապատասխան հանձնարարական(ներ):

Պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.10 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը: Համառոտ նկարագրել նաև դրա հաշվարկման մեթոդը:

Արժեթղթերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ սույն **Ազդագրի 3.4.3.1 մասում** բերված բանաձևի համաձայն:

3.3.11 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Եթե առաջարկվող արժեթղթերը նոր թողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր թողարկման մասին:

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Բանկի Խորհրդի 2017թ մայիսի 23-ի նիստում (Որոշում թիվ 05/17/09): Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Բանկի Տնօրինությունը առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացնել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ):

3.3.12 Շրջանառության սահմանափակումներ

Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները. դրանք ՀՀ ԿԲ և ֆին. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

3.3.13 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Արժեթղթերից սրացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքի, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման

մեխանիզմների կիրառման և /կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

3.3.13.1 *Շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲի:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ Օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ համախառն եկամտի թվին են դասվում փոխառության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցում, պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման, ֆակտորինգային այլ գործառնությունների իրականացումից ստացվող եկամուտները: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 (քսան) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման

աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

3.3.13.2 *Եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Պարտատոմսերից ստացված եկամուտները՝ կապիտալի հավելաճից, ենթակա չեն հարկման, իսկ տոկոսների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսների յուրաքանչյուր վճարման դեպքում:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

3.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

3.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք), ինչպես նաև տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Տնօրինության որոշմամբ է սահմանվում նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով կամ ֆոնդային բորսայից դուրս:

ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա 16:30-ը:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Թողարկողի կողմից հատուկ այդ նպատակով բացված բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ բանակային հաշվի վրա մնալը՝ մինչև

պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$V = P \times Q$ *, որտեղ՝*

- *V-ն պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:*
- *P-ն պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 3.4.3.1 բաժնի համաձայն:*
- *Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

3.4.1.1 *Առաջարկի ընդհանուր ծավալը*

Թողարկման և (կամ) առաջարկի ընդհանուր ծավալը: Եթե թողարկման կամ առաջարկի ծավալը դեռևս որոշված չէ, նկարագրել, թե ինչ ժամկետներում կհրապարակվեն վերջնական ծավալի մասին տեղեկությունները, ինչպես նաև ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ/40,000,000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար/10,000,000 (տասը միլիոն) եվրո: Տեղաբաշխումը կարող է իրականացվել մի քանի տրանշերով: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3.4.1.2 *Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը*

Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխությունները)

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ծրագրային Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում՝ Օրենք) համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել

տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.1.3 *Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը*

Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրությունը, այսինքն, նկարագրել, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի այն անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և ներդրում կատարել արժեթղթերում

ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում ներդրողները պետք է առաջնորդվեն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրում կատարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/երը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացումից հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Բանկում բացված հատուկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար՝ Ազդագրի 3.4.1 մասում նշված անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկողման նպատակով Բանկում բացված հատուկ հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկողման նպատակով բացված հատուկ հաշվեհամարից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ--հանձնարարականում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկողման նպատակով բացված հատուկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ--հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Բանկին, եթե այն առաքվել է Բանկի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- ***Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչ փողոց 9, "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ", Ներդրումային բանկային գործառնությունների դեպարտամենտ, Կապիտալի Շուկաների Բաժին,*

  կամ

- ***Էլեկտրոնային փոստ**: **CapitalMarkets@ameriabank.am***

  կամ

- *այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ և հաճախորդի մենեջերների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*

- ***կամ***

  ինտերնետ բանկինգ համակարգը:

*Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի **Հավելված 1**-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի **Հավելված 2**-ում:*

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

Հայտում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող

պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

3.4.1.4 *Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը*

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

ՆԱՍԴԱՔ Օ Էմ Էքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում գումարների վերադարձն իրականացվում է համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

3.4.1.5 *Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը*

Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախատեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ վճարված գումարները

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

3.4.1.6 *Նվազագույն և առավելագույն գումարները*

Այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման հայտերում: Այդ սահմանաչափերը կարող են նշվել կամ որպես արժեթղթերի նվազագույն և առավելագույն թույլատրելի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն թույլատրելի համախառն գումարներ

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3.4.1.7 *Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը*

Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվեհամարին: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձիք պետք է նախապես կատարեն դրամական միջոցներ դեպոնացում՝ համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

3.4.1.8 *Առաջարկի արդյունքների հրապարակումը*

Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

3.4.1.9 *Նախապատվության իրավունքը*

Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-

հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը Թողարկողման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման հայտերի բավարարման հերթականությունը կախված է տեղաբաշխման համար ընտրված աճուրդի եղանակից և ձևից և կարգավորվում է Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

3.4.2 Տեղաբաշխման պլանը

3.4.2.1 *Ներդրողների խմբերը*

Ներդրողների որ խմբերին է ուղղված առաջարկը (հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն)

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի:

3.4.2.2 *Հայտերի բավարարման մասին տեղեկացումը*

Ինչպես են ներդրողները տեղեկացվում իրենց հայտերի բավարարման մասին

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրողները Թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը: Բանկի որևէ մասնաճյուղ ներկայացած և հաճախորդի մենեջերների միջոցով համապատասխան հայտ-հանձնարարականը լրացրած ներդրողը իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին տեղեկանալու համար պարտավոր է ներկայանալ բանկ և իր հայտ-հանձնարարականը լրացրած հաճախորդի մենեջերների միջոցով տեղեկանալ իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին:

ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին

տեղեկացվում են Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով սահմանված ձևով և կարգով:

3.4.3 Առաջարկի գինը

3.4.3.1 *Արժեթղթերի գինը*

Այն գինը, որով արժեթղթերն առաջարկվելու են: Եթե գինը հայտնի չէ, ապա պետք է նշել առաջարկի առավելագույն գինը և վերջնական գնի որոշման մեթոդը կամ պայմանները, ինչպես նաև առաջարկի գնի բացահայտման գործընթացի նկարագրությունը: Այստեղ պետք է ներկայացնել նաև այն ծախսերը և հարկերը, որոնք գանձվելու են գնորդից:

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

3.4.4 Տեղաբաշխումը

3.4.4.1 *Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները*

Այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել երաշխավորված տեղաբաշխում (անդերռայթինգ)

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

3.4.4.2 *Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները*

Այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն լավագույն ջանքերի գործադրմամբ, չերաշխավորված եղանակով տեղաբաշխելու է իր կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, 40,000,000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար, 10,000,000 (տասը միլիոն) եվրո ծավալով պարտատոմսերը:

3.4.4.3 *Տեղաբաշխման պայմանները*

Երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները և տեղաբաշխման համար գանձվող միջնորդավճարները: Եթե երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը թողարկման ոչ լրիվ ծավալն է ընդգրկում, ապա պետք է նշել թողարկման այն մասը, որը չի ծածկում այդ պայմանագիրը: Այստեղ պետք է նշել նաև յուրաքանչյուր տեղաբաշխողի մասը տեղաբաշխման ընդհանուր ծավալում

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

3.4.4.4 *Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը*

Երբ է կնքվել կամ երբ է նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերռայթինգի) պայմանագիրը,

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

3.4.4.5 *Վճարում ընդունող բանկերը և պահառուները*

Այն բանկերի անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է վճարում կատարել արժեթղթերի դիմաց, ինչպես նաև այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխում իրականացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում (ՀՀ, Երևան 0015, Գր. Լուսավորիչ փողոց 9) բացված հատուկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

ՆԱՍԴԱՔ ՕԷմԷքս Արմենիա Ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն արժեթղթերի դիմաց վճարումներ կատարում են գումարների նախնական դեպոնացմամբ: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ (հեռ.՝ +374 10 589 151, 543 321):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է Ամերիաբանկ ՓԲԸ:

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ:

3.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

3.5.1 Առևտրին թույտվությունը

Արդյո՞ք առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում (նշել նաև շուկայի անվանումները) առևտրին թույլտվություն: Այստեղ պետք է նշել, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Եթե հնարավոր է, պետք է նաև նշել առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Բանկը պարտադիր դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար:

3.5.2 Շուկաները

Այն շուկաների անվանումները (այնքանով, որքանով դրանք հայտնի են թողարկողին), որտեղ առաջարկվող արժեթղթերի նույն դասը կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի նույն դասն արդեն իսկ թույլատրված են առևտրին

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

3.5.3 Շուկա ստեղծողները

Այն անձանց անվանումները, որոնք ունեն պարտավորություն առաջարկվող կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի մասով ապահովել իրացվելիություն երկրորդային շուկայում (հանդիսանալ շուկա սփեղծող)՝ ներկայացնելով այդ պարտավորության հիմնական պայմանները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը կարող է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

3.6 Լրացուցիչ տեղեկատվություն

3.6.1 Խորհրդատուներ

Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության հետ կապված ներգրավված է եղել որևէ խորհրդատու, ապա նշել այդ խորհրդատուի իրավասությունների շրջանակը

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

3.6.2 Աուդիտորական եզրակացությունը

Ներկայացնել տեղեկատվություն, թե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության որ մասն է թողարկողի անկախ աուդիտորը աուդիտի ենթարկել և արդյո՞ք այդ մասով առկա է աուդիտորական եզրակացություն: Եթե առկա է եզրակացությունը, ապա ներկայացնել այդ եզրակացության համառոտ բովանդակությունը կամ շարադրել այն ամբողջությամբ

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 6-ում:

3.6.3 Թողարկողի վարկանիշը

Թողարկողին կամ նրա կողմից թողարկված պարտատոմսերին շնորհված վարկանիշը՝ նշելով արդյո՞ք նման վարկանիշը շնորհվել է թողարկողի նախաձեռնությամբ, թե ոչ: Այստեղ պետք է ներկայացնել նաև այդ վարկանիշի համառոտ իմաստը

2017թ-ի ապրիլի 24-ին “Fitch” միջազգային վարկանշային կազմակերպությունը վերահաստատել է Ամերիաբանկին շնորհած արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B պլյուս» վարկանիշը՝ սահմանելով Կայուն հեռանկար:

Նման վարկանիշի վերահաստատումը խոսում է Բանկի ընդունելի ֆինանսական ցուցանիշների, իրացվելիության զգալի պաշարի, վերաֆինանսավորման կառավարելի ռիսկերի և բարձր հեղինակության մասին: “Fitch” –ը կարևորել է այն հանգամանքը, որ չնայած ՀՀ բանկային համակարգում առկա բարձր մրցակցությանը, Ամերիաբանկը պահպանել է առաջատարի դիրքը շուկայում:

2016 թ. հուլիսի 20-ին “Fitch” միջազգային վարկանշային կազմակերպությունը չապահովված ոչ ստորադաս փոխառության երկարաժամկետ B+ և ակտիվների վերադարձելիության «RR4» վարկանիշ է շնորհել Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված 15 միլիոն ընդհանուր անվանական ծավալով դոլարային պարտատոմսերին (AMAMRBB21ER3): 2017թ. ապրիլին նույն վարկանիշն է շնորհվել նաև Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված 5 միլիոն ընդհանուր անվանական ծավալով դոլարային պարտատոմսերին (AMAMRBB23ER9) և 1 միլիարդ անվանական ծավալով դրամային պարտատոմսերին (AMAMRBB22ER1):

Միջազգային վարկանիշային սանդղակում B+ վարկանիշը համարվում է բարձր ներդրումային ռիսկ ունեցող վարկանիշ, որի գործնական նշանակությունը հետևյալն է՝ տվյալ վարկանիշն ունեցող թողարկողներն իրենց վարկային բեռի և այլ պարտավորությունների չսպասարկման ավելի մեծ հավանականություն ունեն քան այդ B+ վարկանիշից ավելի բարձր/ կամ սանդղակով վերև գտնվող վարկանիշ ստացած թողարկողները:

ՄԱՍ 4 ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 Անկախ աուդիտորներ

Նշել պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար թողարկողի աուդիտն իրականացրած անկախ աուդիտորների անվանումները և գտնվելու վայրերը: Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե որ մասնագիտական միություններին են անդամակցում այդ աուդիտորները,

Եթե պատմական ֆինանսական ժամանակաշրջանում թողարկողի աուդիտորները փոփոխվել են, հեռացվել են կամ նորից չեն ընտրվել որպես աուդիտոր, ապա նշել դրա հիմնական պատճառները:

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի հրավիրում է արտաքին աուդիտ, ով աուդիտի է ենթարկում «Ամերիաբանկ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունները: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

2014, 2015 և 2016 թթ.-ին Բանկի անկախ աուդիտորական ստուգումներն իրականացվել է «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից: «Էրնսթ ընդ Յանգ»-ը գլոբալ «Էրնսթ ընդ Յանգ» (EY) միջազգային աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպություն անդամ է: Ընկերությունն իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2008թ-ից:: «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ի հասցեն է ՝ ՀՀ ք. Երևան 0001, Հյուսիսային պողոտա, 1 շենք, գրասենյակ 27, հեռ.՝ (+37410) 50 07 90, (+37410) 50 07 05, կայքի հասցեն է՝ www.ey.com/am էլ. փոստ՝ yerevan@am.ey.com:

4.2 Ռիսկային գործոններ

Այս մասում աչքի ընկնող ձևով բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք կարող են ազդել թողարկողի՝ արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման ունակության վրա:

Ներքոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման վատթարացմանը, ինչը հավանական է, որ կարող է հանգեցնել Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատոմսերի արագ և շահավետ գնով իրացումը, արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը և մարումը: Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերից

բացի հնարավոր է նաև այլ խնդիրների առաջացում, որոնք հետագայում կարող են անցանկալի հետևանք ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի, արդյունքերի, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների (իրացվելիություն, եկամտաբերություն) վրա:

Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել Բանկը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ Բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի կամ շահույթի վրա:

Աճող մրցակցություն շուկայի համակենտրոնացման արդյունքում: Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա: Սույն Ազդագրի պատրաստման պահին բանկային հատվածում նկատելի են համակենտրոնացման միտումներ, որոնց արդյունքում կարող են առաջանալ բանկեր, որոնք իրենց չափերով համադրելի կարող են լինել Թողարկողի հետ և սրացնել մրցակցությունը, սակայն Թողարկողը նույնպես ակտիվորեն մասնակցում է այս գործընթացին փորձելով ապահովել իր առաջատար դիրքերը:

Արտարժութային ռիսկ: Թողարկողն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժութային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Ռիսկերի կառավարման գործող ներքին համակարգի պայմաններում վատագույն սթրեսային սցենարների դեպքում նույնիսկ, արտարժութային ճեղքվածքի գծով վնասները չեն գերազանցի ընդհանուր կապիտալի 0.4%-ը: Այնուամենայնիվ, հնարավոր ՀՀ դրամի փոխարժեքի էական արժեզրկումը հիմնական արժույթների նկատմամբ բացասական ազդեցություն կարող է ունենալ Բանկի հաճախորդների վրա արտարժույթով արտահայտված վարկային պարտավորությունների սպասարկման մասով և որը կարող է վատացնել ակտիվների որակը ու նվազեցնել Բանկի շահութաբերությունը: Արդյունքում Բանկը կարող է դժվարություններ ունենալ իր պարտավորությունների սպասարկման հարցում, ինչը ընդհանուր խնդիր է ՀՀ բանկային համակարգում՝ տնտեսության դոլարիզացման բարձր մակարդակի պատճառով:

Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ: Չնայած Բանկը ներդրել է բավականին ճկուն և արդյունավետ գնագոյացման համակարգ իր կողմից առաջարկվող ծառայությունների համար՝ պետք է նկատի ունենալ, որ կախված Թողարկողի կողմից ծառայությունների գնային առաձգականության և եկամուտների առաձգականության բնութագրիչներից, Բանկի հասույթը կարող է նվազել ՀՀ-ում սպասվելիք սղաճի պայմաններում: Այնուամենայնիվ,

տոկոսադրույքների վերանայման և տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների ու պարտավորությունների ճեղքվածքի կառավարման ճկուն քաղաքականությունը Բանկում թույլ են տալիս համարել, որ մակրոտնտեսական միջավայրի կտրուկ փոփոխության արդյունքում առաջացող վերոնշյալ ռիսկերը չեն կարող էական ազդեցություն ունենալ Բանկի ընդհանուր շահութաբերության և իրացվելիության վրա:

Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ: Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Հնարավոր է, որ հաջորդող տարիների ընթացքում Բազելյան 3-րդ համաձայնագրի ներդրումից ռիսկի գնահատման որոշակի սկզբունքներ սկսվեն կիրառվել, որոնք կարող են թե դրական և թե բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործունեության ու ֆինանսական արդյունքների վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկեր: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա:

Վարկային ռիսկ: Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ու Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը, որոնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Ստեղծված ռիսկերի կառավարման համակարգի արդյունքում Բանկի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների կշիռը չի գերազանցել 7%-ը, ինչը առնվազն 2 տոկոսային կետով ցածր է ՀՀ բանկային համակարգի համանման ցուցանիշից միևնույն ժամանակաշրջանում: Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված է նաև որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, վարկերի և վարկունակության նվազագույն պահանջների վերանայման և թեստավորման սկզբունքներ: Համաձայն սթրես թեստերի, վատագույն սցենարի դեպքում վարկային ռիսկի ազդեցությունը չի գերազանցում Բանկի ընդհանուր կապիտալի 3.5%-ը:

Շուկայական ռիսկ: Շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է

տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ: ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Շուկայական տոկոսադրույքների տատանումները կարող են ազդել Բանկի ֆինանսական վիճակի, եկամուտ/ծախսերի և դրամական հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը: Արդյունքում, 100 բազիսային կետով տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխության դեպքում գոյացած հանրագումարային վնասը, ըստ հաշվարկների, չի գերազանցի Բանկի ընդհանուր կապիտալի 1.2%-ը:

Գնային ռիսկ: Նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում բանկի կորստի ռիսկն է: Գրավների արժեզրկման ռիսկի կառավարման տեսակետից կիրառվում է վարկ/գրավ ցուցանիշի ճկուն կառավարում, գրավների կենտրոնացվածության կառավարում, ինչի արդյունքում չաշխատող ակտիվների կեսից ավելին վերադարձվում են առնվազն մեկ տարվա ընթացքում:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին ՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը: Բարձր իրացվելի ակտիվների մեծ կշիռը ընդհանուր ակտիվներում թույլ է տալիս

Բանկին գործել իրացվելիության ռիսկի ցածր պայմաններում, նույնիսկ այն սթրեսային սցենարի դեպքում, երբ տեղի է ունենում խոշորագույն 5 ավանդատուների միջոցների միաժամանակյա արտահոսք և միջբանկային միջոցների դուրսգրում. նկարագրված իրավիճակում իրացվելիության ցուցանիշների վրա ազդեցությունը չի գերազանցում 7 տոկոսային կետը՝ թողնելով ներքին իրացվելիության ռիսկի պարամետրերը ցածր ռիսկի գոտում:

Այլ ռիսկեր: Այլ ռիսկերը ներառում են իրացվելիության, վարկային, գործառնական և շուկայական ռիսկերից բացի բոլոր այլ ռիսկերը, ինչպես օրինակ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը, ռազմավարական, հեղինակության, իրավական և այլն:

4.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

4.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը

4.3.1.1 *Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը*

թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը: Եթե թողարկողի կանոնադրությամբ գրված են թողարկողի անվանման տարբերակներ օտար լեզուներով, նշվում են նաև դրանք: Եթե թողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ թողարկողը վերակազմակերպվել է, ապա ազատ ներկայացնել այդ մասին տեղեկատվություն

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ամերիաբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն,
ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “Америабанк”,
անգլերեն՝ “Ameriabank” Closed Joint Stock Company:

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ,
ռուսերեն՝ ЗАО “Америабанк”,
անգլերեն՝ “Ameriabank” CJSC:

2008թ.-ին Ամերիաբանկն անվանափոխությանը զուգահեռ ներկայացավ նոր կորպորատիվ ոճով՝ փոխված տարբերանշանով և նոր կորպորատիվ գույներով: Մեր նոր կորպորատիվ ոճը մշակվել է Identica աշխարհահռչակ բրիտանական ընկերության կողմից: Բանկի սպասարկման նշանն է՝

4.3.1.2 *Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը*

թողարկողի պետական գրանցման վայրը և համարը

Բանկի պետական գրանցման վայրն է՝ Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ

Բանկի պետական գրանցման համարն է՝ 50:

4.3.1.3 *Ստեղծման փվյալներ*

ստեղծման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը (եթե հնարավոր է որոշել)

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ ընթացքում «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը, սակայն 2015-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ) 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարեց՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով, ինչի արդյունքում դարձավ 20.7% բաժնետեր, իսկ «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ)-ի մասնաբաժինը կազմեց 79.3%: Այժմ Բանկի հիմնական բաժնետերերն են «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդը», «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը» և «Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդը», որոնց պատկանում են Բանկի բաժնետոմսերի համապատասխանաբար 65.8%-ը, 20.7%-ը և 13.5%-ը:

Բանկը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 1992թ-ի սեպտեմբերի 8-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0154: Նույն թվականի. դեկտեմբերի 8-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 50 լիցենզիան:

2008թ. մայիսի 19-ի Բաժնետիրոջ Արտահերթ Ընդհանուր Ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 04/08) "Հայներարտբանկ" ՓԲԸ-ն վերանվանվել է "Ամերիաբանկ" ՓԲԸ: Բանկի անվանափոխությունը գրանցվել է ՀՀ ԿԲ 23.05.2008թ. թիվ 1/506 Ա որոշմամբ:

4.3.1.4 *Բանկի գտնվելու վայրը, կապի միջոցները*

Թողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ), ինտերնետային կայքը, թողարկողի հիմնադրման երկիրը, մասնաճյուղերի ցանցի նկարագիրը, ցանկության դեպքում այդ մասնաճյուղերի գտնվելու վայրերը

Բանկի գտնվելու վայրն է՝ Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ:

Կապի միջոցները՝
Հեռ.՝ (+37410) 56 11 11,
Ֆաքս՝ (+37410) 51 31 33,
էլ. Փոստ՝ info@ameriabank.am,
Կայք՝ www.ameriabank.am:

4.3.1.5 *Բանկի մասնաճյուղերը*

Մասնաճյուղերի հասցեներն են՝

1. «Սայաթ-Նովա» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0001, Սայաթ-Նովա պողոտա 8 շենք, 47 տարածք
2. «Կասկադ» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0010, Դեղատան 6
3. «Կոմիտաս» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0033, Կոմիտաս 12, հ. 102
4. «Մոսկովյան» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0009, Մաշտոցի պողոտա 48, 2/1տարածք
5. «Արշակունյաց» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0026, Արշակունյաց պ. 34/3, «Երևան Մոլ» առևտրի կենտրոն, 2-րդ հարկ
6. «Արշակունյաց պլյուս» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0026, Արշակունյաց պ. 34/3, «Երևան Մոլ» առևտրի կենտրոն, 1-ին հարկ
7. «Շենգավիթ» մասնաճյուղ՝ ք. Երևան, 0046, Բագրատունյաց փ. 18 շ., 112 տարածք
8. «Քաջարան» մասնաճյուղ՝ ք. Քաջարան, 3309, Լեռնագործերի 16/31
9. «Կապան» մասնաճյուղ՝ Սյունիքի մարզ, ք. Կապան 3302, Շահումյան փող. թիվ 1 շենք
10. «Դիլիջան» մասնաճյուղ՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, 3901, Մյասնիկյան 66
11. «Վանաձոր» մասնաճյուղ՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, 2021, Տիգրան Մեծի 65
12. «Երիտասարդական» մասնաճյուղ՝ ք. Երևան, Ա. Իսահակյան փ. Մետրոնոմ առևտրի կենտրոն:
13. «Կումայրի» մասնաճյուղ՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան փ. 248/7

4.3.1.6 *Նշանակալի դեպքեր*

Թողարկողի հետ վերջին շրջանում տեղի ունեցած այն դեպքերը, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր թողարկողի իրացվելիության մասին գնահատական կազմելու տեսանկյունից

2014թ-ին Ամերիաբանկը և Նիդերլանդների Զարգացման Բանկն (FMO) կնքեցին 20 մլն ԱՄՆ դոլարի փոխարկելի ստորադաս փոխառություն ներգրավելու մասին պայմանագիր: Վերջինիս հնարավորություն կտա Նիդերլանդների Զարգացման Բանկին (FMO) փոխարկումից հետո դառնալ բանկի բաժնետեր:

2015թ-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ) 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարեց՝ Բանկի բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով, իսկ IFC-ն 50 մլն դոլար է հատկացրել Բանկին՝ բանկի կապիտալն ավելացնելու և ֆինանսական միջոցների հասանելիությունն ընդլայնելու նպատակով:

2016 թվականի մայիսի 12-ին Բանկը Գերմանական ներդրումների և զարգացման ընկերության (DEG) հետ կնքեց 20 մլն ԱՄՆ դոլարի առաջնահերթ մարման վարկային պայմանագիր:

2016 թվականի հունիսի 10-ին Բանկն իր ներդրումային կառավարիչ responsAbility Investments AG ընկերության միջոցով թողարկել և տեղաբաշխել է $20 մլն ընդհանուր անվանական ծավալով մուրհակ (պարտքային արժեթուղթ):

2016 թվականի նոյեմբերի 29-ին Բանկի և Պրոպարկո ընկերության միջև կնքվել է 20 մլն. դոլար արժողությամբ վարկային պայմանագիր:

2016 թվականի դեկտեմբերի 12-ին Բանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ-ի հետ կնքեց 10 մլն. դոլարին համարժեք դրամի վարկային պայմանագիր: Նույն ամսի 19-ին Գլոբալ կլիմայական ընկերակցության ֆոնդի (GCPF) հետ կնքվեց վարկային պայմանագիր՝ 30 մլն. դոլար արժողությամբ:

Ի հավելումն վերոնշյալի՝ պետք է նշել, որ Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար: Ի հավելումն ստորև ներկայացվում են ՀՀ ԿԲ իրացվելիության նորմատիվները՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծություն 2016	Փաստացի մեծություն 2015	Փաստացի մեծություն 2014	Փաստացի մեծություն 2013	Փաստացի մեծություն 2012
$Ն_2^{1*}$	15%	31.23%	29.91%	26.50%	31.32%	26.63%
$Ն_2^{2**}$	60%	133.17%	151.26%	94.34%	171.03%	144.86%

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն

4.4 Բիզնեսի նկարագիրը

4.4.1 Հիմնական գործունեությունը

4.4.1.1 *Բանկի առաքելությունը*

Ունենալով հաճախորդներին որակյալ բանկային և ներդրումային ծառայությունների համալիր փաթեթ տրամադրելու նպատակ՝ Բանկը սահմանել է հետևյալ առաքելությունը՝

Բարելավել կյանքի որակը՝

- տրամադրելով հաճախորդներին միջազգային որակի ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- իրականացնելով հասարակության բարօրության համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման սեփական մոդել՝ միավորելով հաջողակ մարդկանց,
- շարունակաբար ավելացնելով մեր բաժնետիրական արժեքը:

4.4.1.2 *Բանկի տեսլականը*

Բանկի տեսլականն է՝

- Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող միջազգային ընկերություն,
- Լինել թիրախային շուկաներում առաջատարը սպասարկման որակով և արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:

Բանկն իր հետագա գործունեության ընթացքում ուղղորդվելու է հետևյալ երեք հիմնական արժեքներով՝ հաճախորդների բավարարվածության բարձր

մակարդակ, աշխատանքի ու սպասարկման բարձր որակ, արհեստավարժություն և թիմային ոգի:

Համաձայն վերոնշյալ արժեքների՝ Բանկը կշարունակի ձևավորել ՀՀ բանկային համակարգում բարձր արդյունավետությամբ աչքի ընկնող կառավարման համակարգ և ներդնել կառավարման մշակույթի նոր արժեքներ, որոնք ոչ միայն կնպաստեն Բանկի հետագա գործունեության բարելավմանը, այլ նաև օրինակելի մոդել կհանդիսանան մրցակիցների համար:

4.4.1.3 *Բանկի նպատակները*

Բանկի միջնաժամկետ նպատակն է անընդհատ աճող մրցակցության պայմաններում, ամրապնդելով և զարգացնելով ՀՀ բանկային համակարգում ունեցած իր դիրքերը, ընդլայնել հաճախորդներին մատուցվող ծառայությունների փաթեթը և ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան սպասարկում, որը կծառայի Բանկի երկարաժամկետ և կայուն զարգացմանը:

Բանկի միջնաժամկետ քանակական և որակական նպատակներն ըստ առաջնահերթության հետևյալն են՝

- լինել բացարձակ առաջատարը սպասարկման որակով,
- հանդես գալ որպես ունիվերսալ բանկ՝ ծառայություններ մատուցելով ինչպես տնտեսության խոշորագույն սուբյեկտներին, այնպես էլ ՀՀ տնտեսության զարգացման համար շարժիչ ուժ հանդիսացող փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին և առանձնահատուկ ուշադրություն դարձնել տնային տնտեսություններին՝ այդպիսով ապահովելով վարկային ներդրումների ապակենտրոնացում,
- լինել առաջատարը նորարարություններով՝ առաջարկելով միջազգային լավագույն բանկային լուծումները,
- ապահովել ակտիվների՝ բանկային համակարգի նկատմամբ առաջանցիկ աճի տեմպ՝ պահպանելով եկամտաբերության և ռիսկերի ընդունելի մակարդակը,
- պահպանել բանկային համակարգի առաջատարի դիրքերը բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով,
- բարձրացնել Բանկի ֆինանսական արդյունավետությունը կապիտալի շահութաբերության և ծախսերի ու եկամուտների հարաբերության տեսանկյունից
- լայնորեն կիրառել կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- անընդհատ բարձրացնել աշխատակիցների որակավորումը և պահպանել ձևավորված բարձր թիմային ոգին,

Առաքելությամբ, Տեսլականով ինչպես նաև Ռազմավարական նպատակներով սահմանված թիրախային արդյունքներին հասնելու համար՝ Բանկը սահմանել է կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարները, որոնց շնորհիվ էլ կապահովի սահմանված արդյունքների արդյունավետ իրականացում:

- Շարունակաբար ներդրում կատարել սպասարկման որակի բարձրացմանը, ապահովել համապատասխան գործընթացների անընդհատ կատարելագործում,
- Ներդնել նոր բանկային և ներդրումային ծառայություններ և միջազգային պրակտիկայում կիրառվող նորարար լուծումներ,
- Շարունակաբար ներդրումներ կատարել անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և մոտիվացիայի բարձրացման, անընդհատ բարձրացնել աշխատակիցների որակավորումը և պահպանել ձևավորված բարձր թիմային ոգին,
- Շարունակաբար բարձրացնել ֆինանսական կայունությունը, ինչին ուղղված տարածաշրջանում վերջին տնտեսական զարգացումների արդյունքում Բանկը վերանայել է իր ռիսկ պարամետրերը,
- Շեշտադրել մանրածախ և ՓՄՁ բիզնեսի զարգացումը, հետագայում զարգացնելով նաև ներդրումային բանկային ծառայությունները, ապահովել հիմնական ցուցանիշների աճը՝ դառնալով առաջատարը արդյունավետության ցուցանիշներով
- Աջակցել հասարակության սոցիալապես անապահով և խոցելի խմբերին, ներդրում կատարել հասարակության զարգացմանը, աջակցել Հայաստանի մշակութային ժառանգության վերականգմանը և զարգացմանը

2010 թվականից Բանկն իր առջև խնդիր էր դրել փոխել 2007 թվականից որդեգրած կորպորատիվ ուղղվածությամբ ռազմավարությունը և էապես ընդլայնել մանրածախ բանկային ծառայությունները: Ելնելով վերը շարադրվածից՝ Բանկի ընդհանուր ռազմավարության գլխավոր նպատակն է Բանկի դիրքերի հետագա ամրապնդումը ՀՀ առաջատար բանկերի շարքում՝ ձևավորելով ունիվերսալ առևտրային բանկի մոդելը և հետագա զարգացումը: 2016 թվականին ևս այս ուղղությամբ ահռելի աշխատանք կատարվեց՝ ընդլայնվեց մանրածախ ծառայությունների ցանկը, շարունակվեցին ներդրումները մասնաճյուղային և ԱԳՄ սարքավորումներում, ինչպես նաև նշանակալի փոփոխություններ կատարվեցին մանրածախ գործառնությունների դեպարտամենտի կառուցվածքում, ինչն էլ ավելի աշխուժացրեց Բանկի մանրածախ գործունեությունը:

Ռազմավարության գլխավոր նպատակի ապահովման հիմնական խնդիրներ են հանդիսանում.

- հաճախորդների բազայի հետագա դիվերսիֆիկացումը և աճի ապահովումը՝ պահպանելով կապիտալի շահութաբերության ընդունելի մակարդակ,
- սպասարկման որակի բարձրացումը՝ ապահովելով միջազգային չափանիշներին համապատասխանող բանկային ծառայությունների և կորպորատիվ ֆինանսների ծառայությունների մատուցում,
- բանկային հիմնական՝ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանումը,
- ծառայությունների շրջանակի ընդլայնումն և համապատասխանեցումը հաճախորդների պահանջներին,
- շարունակական տեխնոլոգիական զարգացումը միջազգային առաջատար փորձին համահունչ,
- անձնակազմի որակավորման շարունակական բարելավումը:

4.4.2 Հիմնական շուկաները

4.4.2.1 *Հիմնական շուկաները*

Հիմնական գործունեության նկարագիրը՝ նշելով մատուցված ծառայությունների հիմնական տեսակները

"Ամերիաբանկ" ՓԲԸ-ն ունիվերսալ բանկ է, որը, լինելով դինամիկ և կայուն աճ արձանագրող ընկերություն, մատուցում է կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային լուծումների ամբողջական փաթեթ: Բանկը նաև առաջարկում է անհատականացված ֆինանսաբանկային լուծումներ: Բանկը որդեգրել է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից են անհատական մոտեցումը յուրաքանչյուր հաճախորդին և նորարարությունը՝ համատեղած բարձր պրոֆեսիոնալիզմի և փորձի հետ, ստանձնել է բազմակողմանի և բարձրորակ ֆինանսական լուծումներ տրամադրող գործընկերոջ դերը ՀՀ շուկայում և տարածաշրջանում գործունեություն իրականացնող հաճախորդների համար: Եվ այս մոտեցումը Բանկի հաջողության բանալին է՝ թույլ տալով Բանկին դառնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից մեկը:

4.4.2.2 *Մրցակցային դիրքը*

Թողարկողի մրցակցային դիրքի նկարագրությունը

Ամերիաբանկը ՀՀ առաջատար բանկերից է, որն ունի բանկային ոլորտի ցուցանիշները գերազանցող դինամիկ աճ: 2016 թվականը ևս բավականին բարեհաջող եղավ Բանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքերը ՀՀ առաջատար բանկերի շարքում, վերահաստատեց իր ներուժը որպես ժամանակակից, կայուն, իրացվելի, դինամիկ աճող և մրցունակ ֆինանսական ինստիտուտ՝ հետագա աճի, զարգացման և մրցունակության էական հնարավորություններով: Հիմնական շեշտադրումը փոխելով բանկային ծառայությունների ու սպասարկման որակի վրա՝ Բանկն արդեն իսկ դիրքավորվել է որպես նորարարությամբ և սպասարկման չափանիշներով առաջատար: Այսպիսով, Բանկը ամփոփել է 2016թ-ը որպես օրինակելի առաջընթացի ևս մեկ տարի՝ բանկային համակարգում զբաղեցնելով 1-ին դիրքը ըստ ակտիվների, պարտավորությունների, հաճախորդներին տրված վարկերի, կապիտալի և զուտ շահույթի ցուցանիշներով: Նմանատիպ առաջատար դիրքերը ևս մեկ անգամ վկայում են Ամերիաբանկի կողմից ստեղծված բացառիկ միջավայրի մասին, որտեղ հաճախորդներն ու գործընկերները կարող են ոչ միայն վայելել բարձրակարգ սպասարկում և ստանալ անհատականացված բանկային ծառայություններ, այլ նաև օգտվել Բանկի մշտական աճի ստեղծած հնարավորություններից:

4.5 Թողարկողի կառուցվածքը

Եթե թողարկողը խմբի անդամ է, ապա համառոտ ներկայացնել խմբի կառուցվածքը և թողարկողի տեղը այդ խմբում

4.5.1.1 *Բանկի խմբի կառուցվածքը*

Բանկի բաժնետեր է հանդիսանում «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդ» ընկերությունը, վերջինս հանդիսանում է նաև հետևյալ ընկերությունների բաժնետեր՝

- ԱՄԵՐԻԱ ՓԲԸ
- ՊՐՈԴԵԿՈ ՓԲԸ
- ԱՄԵՐԻԱ ԻՆՔ

4.6 Զարգացման վերջին միտումները

Այստեղ ներկայացվում են թողարկողի մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները և ծառայությունների սակագների միտումները վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք էական են և (կամ) որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս

4.6.1 **Արտաքին գործոնների վերլուծությունը**

Բանկի գործունեությունը մեծապես պայմանավորվում է արտաքին միջավայրում տեղի ունեցող իրադարձություններով: Բանկը սեփական և հաճախորդների կարիքները բավարարելու համար գործունեություն է ծավալում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Բանկի գործունեության վրա իրենց ուրույն ազդեցությունն են թողնում և՛ հայրենական, և՛ միջազգային տնտեսությունում տեղի ունեցող իրադարձությունները: Այսպես, Բանկի գործունեության վրա էական ազդեցություն են թողել՝

- Զարգացած երկրներում տնտեսության որոշակի անկայունները, ինչպես նաև դրա արդյունքում հիմնական ապրանքատեսակների գների (պղինձ, նավթ, ցորեն) վարքը,
- միջազգային շուկաներում տոկոսադրույքների սպասելի աճերը՝ չնայած ԼԻԲՕՐտոկոսադրույքի փոքր տատանումներին,
- 2016 թ.-ին ՀՀ տնտեսությունում հիմնական ճյուղերը (բացառությամբ գյուղատնտեսության և շինարարության) որոշակի աճ արձանագրեցին, ինչն իր դրական ազդեցությունը թողեց Բանկի գործունեության վրա,
- բանկային համակարգում մրցակցության պահպանումը:

Բանկն անընդհատ իրականացրել է ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարում, որպեսզի կարողանա չեզոքացնել վերը նշված երևույթների բացասական ազդեցությունը և հնարավորինս օգտվել ընձեռնված հնարավորություններից:

4.6.1.1 *Համաշխարհային տնտեսություն/միջազգային շուկաներ*

Արտաքին միջավայրի կանխատեսվող երևույթները, որոնք ազդեցություն կունենան Բանկի ծրագրերի վրա հետևյալն են.

2017թ-ին կանխատեսվում է համաշխարհային տնտեսության 3.0% աճ: ՀՀ առևտրային գործընկերներ հանդիսացող երկրների տնտեսությունները կդրսևորեն դանդաղ աճի միտումներ: Առաջիկա տարիների ընթացքում Ռուսաստանի տնտեսությունը կարձանագրի դրական շարժ և ներկայիս անկումը մոտ տարիներին կփոխարինվի դանդաղ աճով: Եվրոպայում սպասվում է դանդաղ տնտեսական աճ (1-1.5%)՝ բյուջեի և պարտքի սպասարկման շեշտադրմամբ: Չինաստանում աճը սկսել է դանդաղել (6.5%). իրականացվում է յուանի արժեզրկման քաղաքականություն առևտրին աջակցելու նպատակով: Մոտակա տարիներին Չինաստանում աճը կարող է ևս դանդաղել մինչև 6%-ի: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ում նշանակալի տատանումներ չեն գրանցվել և

սպասվում է, որ աճը կշարունակվի կայուն տեմպերով (2.3%): Ակնկալվում է, որ տոկոսադրույքներն առաջիկա մեկ տարում որոշակիորեն կաճեն և 2017 թվականին 6 ամսվա libor-ը կլինի մոտ 1.5%, իսկ հաջորդ 2 տարիներին կաճի մինչև 2%:

Ինչ վերաբերում է ՀՀ տնտեսության վրա ազդող հիմնական ապրանքատեսակների միջազգային գների փոփոխություններին, ապա համաձայն մեր կանխատեսումների՝ մոտակա տարիներին պղնձի գները որոշակի աճ կարձանագրեն, ինչն էլ կարող է դրական ազդեցություն ունենալ ՀՀ արտահանման ծավալների և ՀՆԱ-ի վրա: Ակնկալում ենք նավթի գների դանդաղ աճ: Հացահատիկի գները մոտ ապագայում համեմատաբար կայուն կլինեն, հնարավոր է որոշակի անկում 2017-ին, սակայն հետագա աճ 2018-2019թթ: Ինչ վերաբերում է ոսկու գներին, ապա կանխատեսվում է կայուն իրավիճակ դանդաղ աճի ռիսկով:

Քննարկումների արդյունքում արտաքին տնտեսաքաղաքական ռիսկերն էական չեն համարվել ու կանխատեսումների վրա սկզբունքային ազդեցություն չեն թողել:

4.6.1.2 *ՀՀ տնտեսությանն առնչվող կանխատեսումներ*

Ակնկալվում է, որ գալիք տարիների ընթացքում ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը կբնութագրվի դանդաղ տնտեսական աճով: ՀՆԱ-ի աճին նպաստող տնտեսության հիմնական ճյուղերը կլինեն գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, սննդի վերամշակումը (ներառյալ խմիչքները), տեղեկատվական տեխնոլոգիաները: Դրական զարգացումներ են սպասվում տեղեկատվական տեխնոլոգիաների, ծառայությունների և էներգետիկայի ոլորտներիում: Սպասվում է որ, կսկսի կրկին աճել օտարերկրյա ներդրումների ծավալը (ԵԱՏՄ և Իրանի գործոնների հաշվին), որոնք արդեն իսկ ձեռնարկված մի քանի խոշոր ներդրումային ծրագրերի հետ լրացուցիչ զարկ կտան տնտեսությանը: Գնաճը հիմնականում կտատանվի ՀՀ ԿԲ թիրախային միջակայքում[4%±1.5%]: Անշարժ գույքի շուկայում նկատվում է գների դանդաղ նվազում, կտրուկ փոփոխություններ չեն կանխատեսվում: Պայմանավորված Ռուսաստանի տնտեսությամբ և նավթի գների անկմամբ, 2015-2016թթ. ՀՀ ներմուծման և արտահանման կառուցվածքում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: Սպասվում է, որ 2017թ.-ին արտահանման ծավալները կշարունակեն ավելի արագ աճել, քան ներմուծումը, որը ևս դանդաղ վերականգնողական աճ կունենա: Ինչպես և կանխատեսվում էր ՌԴ տնտեսության վատթարացմամբ և ռուբլու արժեզրկմամբ պայմանավորված՝ 2015-2016թթ. ընթացքում փոխանցումների ծավալը որոշակիորեն կրճատվել է: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ 2016 թվականի վերջին երկու ամիսներից սկսած տրենդը փոխվել է և ակնկալում ենք, որ մոտ ապագայում

փոխանցումների ծավալները դանդաղ կաճեն: ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը 2017 թվականի համար կանխատեսվել է 490 դրամի շրջանակներում, իսկ հաջորդ երկու տարվա համար 510 - 530 դրամի շրջանակներում:

4.6.1.3 *Ֆինանսական շուկաներ*

Ակնկալվում է ֆինանսական շուկայում արտարժութային և դրամային միջոցների տոկոսադրույքների որոշակի անկում: Հաշվի առնելով տեղական շուկայի խնայողությունների խիստ սահմանափակ լինելը՝ ակնկալում ենք, որ խոշորագույն բանկերը կշարունակեն միջոցներ փնտրել և ներգրավել արտասահմանից: Ենթադրվում է նաև, որ պարտադիր ապահովագրության և կեսաթոշակային բարեփոխումների արդյունքում կավելանա դրամային երկարաժամկետ ռեսուրսների ծավալը:

4.6.2 **Բանկի հիմնական խնդիրները**

Բանկի միջնաժամկետ նպատակները բխում են առաջատար ունիվերսալ բանկ դառնալու ռազմավարական զարգացման ուղղությունից և Բանկի առաքելությունից: Միջնաժամկետ նպատակներն ամբողջությամբ իրագործելու համար Բանկն առաջիկայում պետք է իրականացնի հետևյալ խնդիրները՝

- առաջատարի դիրքերը պահպանելու նպատակով Բանկը նախատեսում է ակտիվների մեծությունը 2019 թվականին հասցնել շուրջ 882.6 մլրդ դրամի, զուտ շահույթը՝ 16.6 մլրդ դրամի, իսկ հաճախորդների քանակը՝ 127 հազարի,
- էականորեն ավելացնել ՓՄՁ-ների և ֆիզիկական անձանց նկատմամբ պահանջների տեսակարար կշիռը, որը պետք է բերի ապակենտրոնացման,
- ավելացնել քարտային ծառայությունների քանակը և դերը Բանկի գործունեությունում՝ քարտերի քանակը 2019 թվականի վերջին հասցնելով շուրջ 137 հազարի,
- զարգացնել հեռակա բանկային ծառայությունները՝ հաճախորդներին հնարավորություն ընձեռնելով բավարարել իրենց կարիքներն առանց Բանկ այցելելու,
- իրականացնել միջոցների արդյունավետ տեղաբաշխում՝ ակտիվների դիվերսիֆիկացում և պարտավորությունների հետ փոխհամաձայնեցված կառավարում,
- ընդլայնել Բանկի մասնաճյուղային ցանցը՝ Բանկի ներկայությունն ապահովելով հանրապետության բոլոր տնտեսապես ակտիվ կենտրոններում,

- ֆինանսական արդյունքների (եկամուտների) շարունակական դիվերսիֆիկացում,
- նոր ծառայությունների ներդրման շնորհիվ տոկոսային եկամուտներից կախվածության նվազեցում, հաճախորդների համար փաթեթների առաջարկում, դրամական փոխանցումների ակտիվացում, բանկային նոր տեխնոլոգիաների կիրառություն,
- Բանկի հիմնական ռիսկերի արդյունավետ կառավարում՝ պահպանելով վարկային ռիսկի ցածր մակարդակ, ինչպես նաև շուկայական, գործառնական և այլ ռիսկերի գնահատման և կառավարման համակարգերի կատարելագործում,
- աշխատակիցների վերապատրաստում և մոտիվացիայի բարձրացում:

4.6.3 **Բանկի ծառայությունների ծավալների փոփոխման միտումները**

Նախորդ պլանային ժամանակաշրջանում Բանկը միտված է եղել առաջատար և մրցունակ տեղ գրավել բանկային ծառայությունների հիմնական ուղղություններում՝ նպատակ ունենալով՝

- պահպանել առաջատարի դիրքերը կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայություններով՝ տրամադրելով կորպորատիվ բանկային և ներդրումաբանկային ծառայությունների ամբողջական փաթեթ,
- ակտիվացնել մանրածախ բանկային ծառայությունները և այդպիսով ապահովել ակտիվների և պարտավորությունների բավարար դիվերսիֆիկացում (ըստ տնտեսության ոլորտների, գործիքների և հաճախորդների),
- բանկային հիմնական ռիսկերը պահել թույլատրելի մակարդակի վրա (չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներիում մշտապես պահել 7%-ից ցածր, արտարժութային դիրքը հնարավորինս փակ պահել, նվազագույնի հասցնել գործառնական ռիսկերը և այլն),
- ավելի երկարաժամկետ հատվածում հասնել տոկոսային եկամուտներից կախվածության նվազեցման,
- ֆինանսական արդյունքների (եկամուտների) դիվերսիֆիկացում,
- միջոցների և նպատակային հաճախորդների ներգրավում (ներգրավել ռազմավարական նշանակություն ունեցող հաճախորդների, ում հետ կձևավորվեն գործընկերոջ փոխհարաբերություններ),
- աշխատակիցների վերապատրաստում և մոտիվացիայի բարձրացում:

4.7 Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները

Բանկի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

4.7.1 Կառավարման մարմինները և կառուցվածքը

Համաձայն Բանկի կանոնադրության՝ Բանկ սահմանել է հետևյալ կորպորատիվ կառավարման կառուցվածքը՝



* Բաժնետերերի ընդհանուր ժողով

4.7.2 Կառավարման մարմինների իրավասությունները

4.7.2.1 *Բաժնետերերի ընդհանուր ժողով*

Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով) հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը: Ընդհանուր Ժողովի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1. Կանոնադրության, Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կանոնակարգերի հաստատումը, դրանց փոփոխություններն ու լրացումները և/կամ նոր խմբագրությամբ հաստատումները,
2. Բանկի վերակազմակերպումը,

3. Բանկի լուծարումը,
4. Լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
5. Բանկի Տնօրենների Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի Տնօրենների Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության մասին որոշումներն ընդունվում են բացառապես Տարեկան Ընդհանուր Ժողովներում: Տնօրենների Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Տնօրենների Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
6. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, բաժնետոմսերի տեղաբաշխումը, բաժնետոմսերից բխող իրավունքների փոփոխությունը, բաժնետոմսերի փոխանցումների սահմանափակումները, ինչպես նաև Բանկի Կանոնադրական կապիտալի ավելացումը, այդ թվում՝ Կանոնադրական կապիտալի փոփոխությունը Բանկի աշխատակիցներին որպես խրախուսում Բանկի բաժնետոմսերի տրամադրմամբ,
7. Տնօրենների Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
8. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
9. Ընդհանուր Ժողովի վարման կարգի հաստատումը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքում՝ հաշվիչ հանձնաժողովի գործառնույթներն իրականացնող անձի նշանակումը,
10. Բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,
11. Դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը,
12. Առևտրային կազմակերպությունների, միությունների հիմնադրումը և այդ կազմակերպություններում, միություններում մասնակցությունը,
13. Տնօրենների խորհրդի նախագահի և անդամների հիմնական/լրացուցիչ վարձատրության առավելագույն սահմանաչափերի սահմանումը,
14. Բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

15. Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
16. Շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
17. Հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

Վերոնշյալ բոլոր կետերով նախատեսված բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Տնօրենների Խորհրդին, Տնօրինությանը կամ Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենին կամ այլ անձի, բացառությամբ 11-13 կետերում թվարկված հարցերի, որոնցով որոշումների ընդունումը Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Տնօրենների Խորհրդին:

4.7.2.1 ***Տնօրենների խորհուրդ***

Տնօրենների Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում, ինչպես նաև ապահովում է բաժնետերերի կողմից ներդրումների արժեքի առավելագույն ավելացումը (բաժնետոմսերի շուկայական գնի ավելացումը) և Բանկի այլ շահագրգիռ անձանց օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունը: Այդուհետ Տնօրենների խորհուրդն իր գործունեության ընթացքում ներկայացնում, պաշտպանում և ուղղորդվում է բաժնետերերի ու շահագրգիռ անձանց (բոլոր անձինք, որոնք իրենց ներդրումով՝ մարդկային, մասնագիտական, փողային, այլ, աջակցում են բանկի երկարաժամկետ առաջընթացին և մրցակցությանը, այդ թվում՝ բանկի ներդրողները, ավանդատուների վարկատուները, աշխատակիցները և այլն) շահերով, ինչպես նաև պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու համար Բանկի ներքին հսկողության գործուն և արդյունավետ համակարգի ներդնումը՝ սահմանելով ռիսկերի կառավարման ու ռիսկի ախորժակին վերաբերող հիմնական ելակետային դրույթները:

Տնօրենների Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
2. Ընդհանուր Ժողովի Տարեկան և Արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և

անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

3. Բանկի Տնօրինության անդամների և Տնօրինության Նախագահի - Գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և հիմնական/լրացուցիչ վարձատրության պայմանների հաստատումը,
4. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նշված ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի և տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների ներքին կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
5. Բանկի տարեկան բյուջեի (այդ թվում՝ տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի) հաստատումը,
6. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
7. Բանկի բաժնետոմսերի շուկայական գնի սահմանումը,
8. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշման ընդունումը, ինչպես նաև շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Տարեկան Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
9. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր Ժողովին ներկայացումը,
10. Ընդհանուր Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,
11. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
12. Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

13. Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
14. Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,
15. Բանկի Կանոնադրության 7.1.3 կետի առաջին մասի «բ», «ժա-ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն Ընդհանուր Ժողովի քննարկմանը,
16. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,
17. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
18. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը և լուծարումը,
19. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,
20. Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
21. Շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
22. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող վարկերի տրամադրման հաստատումը,
23. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից գույքի կամ այլ ակտիվների ձեռքբերման կամ վաճառքի գործարքների, ներառյալ փոխկապակցված գործարքները, կնքման հաստատումը,
24. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից իրականացվող ներդրումների, ներառյալ փոխկապակցված ներդրումների, հաստատումը,
25. Ընդհանուր Ժողովի կողմից որոշված սահմանաչափերի ներքո Տնօրենների խորհրդի նախագահի և անդամների հիմնական/լրացուցիչ վարձատրության չափի սահմանումը, ընդ որում նշված սահմանաչափերը սահմանված չլինելու դեպքում, Տնօրենների Խորհուրդն ինքնուրույն է որոշում Տնօրենների Խորհրդի նախագահի և անդամների վարձատրության պայմանները/չափերը.

26. Տնօրենների Խորհրդի կազմից ստեղծել Տնօրենների Խորհրդին կից հանձնաժողովներ/կոմիտեներ, հաստատել դրանց գործունեությունը կանոնակարգող ակտերը, նշանակել Տնօրենների խորհրդի քարտուղար.
27. Կանոնադրությունը, Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կանոնակարգերը, դրանց փոփոխությունները և լրացումները իր նախնական հավանությամբ Ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը,
28. Կանոնադրական կապիտալում մասնակցության/բաժնետոմսերի տրամադրման միջոցով աշխատակիցների խրախուսման ծրագրի և/կամ այդ իրավահարաբերությունները կարգավորող Ներքին իրավական ակտերի հաստատումը/փոփոխությունը,
29. ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, Ընդհանուր ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ հարցերով որոշումների ընդունումը:

Վերոնշյալ բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց: Տնօրենների Խորհրդին կից կոմիտեներին/հանձնաժողովներին տրված լիազորությունները չեն կարող որևէ կերպ նվազեցնել Տնօրենների Խորհրդի իրավասությունների ծավալն ու շրջանակը:

4.7.2.2 ***Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ***

Տնօրենների խորհրդի կողմից իր իրավասություններն առավել արդյունավետ և պատշաճ իրականացնելու նպատակով Տնօրենների խորհրդին կից ստեղծվել են «Աուդիտի», «Վարձատրության», «Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման» կոմիտեները:

Աուդիտի կոմիտե

Կոմիտեի գործունեության հիմնական նպատակը Բանկի ֆինանսական հաշվետվողականության, արտաքին աուդիտի անցկացման, ռիսկերի կառավարման, ներքին հսկողության ոլորտների համակարգումն ու արդյունավետության բարձրացումն է:

Կոմիտեն ուսումնասիրում է Բանկի ֆինանսական հաշվետվությունները և այլ պարտադիր հրապարակման ենթակա ֆինանսական տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ և եզրակացություններ: Կոմիտեի պարտականություններից է ուսումնասիրել.

1. հաշվապահական հաշվառման սկզբունքները և մեթոդները, այդ թվում՝ համապատասխանությունը կիրառելի հաշվապահական ստանդարտներին և այլ իրավական պահանջներին,
2. նշանակալի կամ արտասովոր գործարքները, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում նրանց էականության վրա,
3. բացահայտման պարզությունը և լիարժեքությունը,
4. աուդիտի արդյունքում կատարված էական ճշգրտումները,
5. փոխկապակցված անձանց հետ կնքված և առնչվող գործարքները, այդ անձանց մասով ԿԲ ներկայացվող համապատասխան հաշվետվությունները,

Տարին առնվազն մեկ անգամ Կոմիտեն անդրադառնում է հաշվապահական հաշվառման կիրառվող սկզբունքներին, այդ թվում արժեզրկման, ֆինանսական գործիքների, գուդվիլի, ապահովագրական պայմանագրերի գծով պարտավորությունների, արտոնությունների փաթեթների, հետաձգված հարկերի և գույքի հաշվառման գծով:

Կոմիտեն ուսումնասիրում և վերահսկում է վարկերի արժեզրկմանն առնչվող գործընթացներն ու արժեզրկման հաշվապահական ձևակերպումները և համապատասխան առաջարկներ ներկայացնում Տնօրենների խորհրդին: Կոմիտեն նաև ուսումնասիրում է արժեզրկման աստիճանը՝ որպես կանոն Վարկային և ռիսկերի կառավարման կոմիտեի եզրակացությունների հիման վրա:

Կոմիտեն վերահսկում է ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերը և գործառույթները, այդ թվում.

1. պարբերաբար ուսումնասիրում և գնահատում է Բանկի ռիսկերի կառավարման, ներքին հսկողության համակարգերի և Ներքին աուդիտի դեպարտամենտի գործունեութան արդյունավետությունը և ներկայացնում առաջարկություններ Տնօրենների խորհրդին,
2. ստանում և ուսումնասիրում է Բանկի ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերին վերաբերող հաշվետվությունները վերջիններիս առկայության դեպքում,
3. առաջարկներ է ներկայացնում Տնօրենների խորհրդին Ներքին աուդիտի դեպարտամենտի ղեկավարի և նրա տեղակալի (առկայության դեպքում) նշանակման/աշխատանքից ազատման վերաբերյալ,
4. շարունակաբար վերահսկում է Ներքին աուդիտի դեպարտամենտի ղեկավարի և նրա տեղակալի (առկայության դեպքում) անկախությունը, անկողմնակալությունը և մասնագիտական պատրաստվածությունը, ներքին աուդիտի դեպարտամենտի ռեսուրսները և հնարավորությունները,

5. ապահովում է Ներքին աուդիտի դեպարտամենտի ղեկավարի տարեկան գնահատումը՝ Կոմիտեի նախագահի կողմից,
6. ստանում և ստուգում է Ներքին աուդիտի դեպարտամենտի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունները կատարված աշխատանքների վերաբերյալ, դիտարկումները և եզրակացությունները՝ հասանելիություն ունենալով Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից պատրաստվող հաշվետվություններին և այլ նյութերին,
7. ստանում և ուսումնասիրում է Ներքին աուդիտի դեպարտամենտի հաջորդ տարվա աշխատանքային ծրագիրը նախքան Տնօրենների խորհրդի կողմից հաստատումը,
8. ստուգում է Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից արված դիտարկումների և առաջարկների գծով իրականացված ուղղիչ գործողությունները և ստանում է հաշվետվություններ այն դիտարկումների և առաջարկների վերաբերյալ, որոնց մասով ուղղիչ գործողություններ չեն ձեռնարկվել,
9. անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է ներքին աուդիտի արդյունավետության գնահատումն արտաքին անկախ մասնագետների կողմից և սահմանում նման գնահատումների հաճախականությունը,
10. անհրաժեշտության դեպքում ներկայացնում է կարծիքներ/առաջարկություններ Ռիսկերի կառավարման կենտրոնի և Ընթացիկ հսկողության բաժնի աշխատակիցների նշանակման, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, վարձատրության պայմանների հաստատման, գործունեության պարբերական գնահատման, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ:

Կոմիտեն վերահսկում է արտաքին աուդիտի հետ կապված գործընթացը և դրա շրջանակներում.

1. Տնօրենների խորհրդին ներկայացնում է առաջարկներ Բանկի արտաքին աուդիտ իրականացնող ընկերության ընտրության, վերընտրման կամ ծառայություններից հրաժարվելու վերաբերյալ, ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների պահպանմամբ առաջարկում է աուդիտ իրականացնող ընկերությունների թեկնածություններ՝ բաժնետերերի ընդհանուր ժողովում հաստատելու համար,
2. ստուգում է արտաքին աուդիտ իրականացնող ընկերության անկախությունը, անկողմնակալությունը և մասնագիտական որակավորումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով արտաքին աուդիտորի կողմից տրամադրվող խորհրդատվական ծառայություններին, որոնք կապված չեն աուդիտի հետ,

3. Տնօրենների խորհրդին է ներկայացնում առաջարկներ արտաքին աուդիտ իրականացնող ընկերության հետ կնքվող պայմանագրի պայմանների և վարձատրության վերաբերյալ,
4. ուսումնասիրում է արտաքին աուդիտ իրականացնող ընկերության՝ պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքերը, և առաջարկներ ներկայացնում հետագա գործողությունների վերաբերյալ,
5. ստանում և ստուգում է արտաքին աուդիտորների կողմից իրականացված դիտարկումները, եզրակացությունները, նամակ ղեկավարությանը՝ հասանելություն ունենալով արտաքին աուդիտորների կողմից պատրաստվող համապարփակ հաշվետվությանը և այլ նյութերին,
6. ապահովում է արտաքին աուդիտորների, ներքին աուդիտի դեպարտամենտի և Գործադիր մարմնի (Տնօրինության) միջև արդյունավետ համագործակցությունը և աշխատանքների համակարգումը,
7. ստանում և ուսումնասիրում է արտաքին աուդիտ իրականացնող ընկերության աուդիտի ծրագիրը:

Աուդիտի կոմիտեն հսկում և դիտարկում է Բանկում հայտնաբերվող խախտումների/թերությունների մասին իրազեկման համակարգի արդյունավետությունը: Մասնավորապես, կոմիտեն ապահովում է, որ բանկի բոլոր աշխատակիցները և շահագրգիռ անձինք հնարավորություն ունենան ազատ արտահայտել իրենց կասկածները/համոզմունքը ֆինանսական հաշվետվություններում առկա սխալների և այլ կասկածելի գործարքների վերաբերյալ: Կոմիտեն ապահովում է, որ նման դեպքերն անմիջապես ուսումնասիրվեն և իրավիճակից բխող համապատասխան գործողություններ ձեռնարկվեն:

Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա Կոմիտեն պարբերաբար ստուգում և վերահսկում է Բանկի համակարգերի և գործընթացների համապատասխանությունը կիրառելի նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև ուսումնասիրում է Բանկում փողերի լվացման դեմ պայքարի գծով վերահսկողական գործողությունների արդյունավետությունը:

Կոմիտեն վերահսկում և իր ուշադրության ներքո է պահում ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված բոլոր հանձնարարականների կատարման ընթացքը:

Կոմիտեն պարբերաբար և շարունակաբար գնահատում է Բանկի գործառնությունների անվտանգության հետ առնչվող ռիսկերը, այդ թվում SS օգտագործումից բխող ռիսկերը, և տարեկան մեկ անգամ վերանայում է Բանկի անվտանգության ոլորտում ընդունված քաղաքականությունը և գործունեության շարունակականությունն ապահովող գործողությունների ծրագրերը՝ համապատասխան առաջարկություններ ներկայացնելով Տնօրենների խորհրդին:

Վարձատրության կոմիտե

Վարձատրության կոմիտեի գործունեության հիմնական նպատակը Բանկի վարձատրության ոլորտին առնչվող կարգավորումների կատարելագործումն է, այդ թվում՝ վարձատրության քաղաքականության, վարձատրության համակարգի բարելավումը, վերահսկողությունը, նույն առարկայի սկզբունքային պահանջների և չարաշահումների բացառման պայմանների արդյունավետ գործարկումը:

Կոմիտեն ուսումնասիրում և Տնօրենների խորհրդին առաջարկներ է ներկայացնում հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Տնօրենների խորհրդի վարձատրության պայմանները, պարգևավճարները, դրանց փոփոխությունները, բոլոր վերոգրյալների չափերը և ձևերը,
2. Տնօրինության անդամների, ինչպես նաև էական ռիսկեր ստանձնած և/կամ առանցքային այլ աշխատակիցների (Տնօրենների խորհրդի կողմից նախապես հաստատված պաշտոնների ցանկով) վարձատրությունը և տարեկան պարգևավճարները,
3. պարգևավճարների/խրախուսման ֆոնդի ընդհանուր տարեկան գումարը,
4. Տնօրենների Խորհրդի ուղղակի ցուցումի կամ որոշման առկայության դեպքում նաև՝ պարգևավճարների/խրախուսման ֆոնդի ընդհանուր տարեկան գումարն ըստ ուղղությունների (դեպարտամենտների կամ ստորաբաժանումների) դրանց բաշխման վերաբերյալ՝ հիմք ընդունելով համապատասխան գնահատումների և/կամ գործունեության արդյունքները: Կոմիտեն նպաստում և գործուն աջակցություն է ցուցաբերում Բանկի վարձատրության սկզբունքների և դրույթների պատշաճ ի կատար ածման գործընթացին անդամների և Բանկի ղեկավար կազմի (տնօրինության անդամներ, Քարտուղար, Ներքին աուդիտի աշխատակիցներ և Տնօրենների խորհրդի որոշմամբ Բանկի անունից էական ռիսկեր ստանձնած կամ առանցքային դեր ունեցող հնարավոր այլ աշխատակիցներ):

Կոմիտեն հետևում է, որպեսզի Բանկի վարձատրության քաղաքականությունը, վարձատրության սկզբունքներն ու սխեմաները համապատասխանեն կիրառելի օրենսդրության պահանջներին, միջազգային լավագույն փորձին և շուկայում լինեն այնքան մրցունակ, որ հնարավորություն ընձեռնեն ներգրավել ոլորտի լավագույն որակավորում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներին և նրանց հետ կառուցել երկարատև աշխատանքային հարաբերություններ:

Կոմիտեն հիմնավոր առաջարկներ է ներկայացնում Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների, ինչպես նաև էական ռիսկեր ստանձնած և/կամ առանցքային դիրք զբաղեցնող աշխատակիցների վարձատրության բոլոր

տարրերի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում անդրադարձ կատարելով նաև կենսաթոշակների և ընդունման/արձակման բոնուսների վճարման առանձնահատկություններին:

Տարեկան առնվազն մեկ անգամ Կոմիտեն քննարկում է Բանկի վարձատրության քաղաքականության, սխեմաների և մեխանիզմների վերանայման, փոփոխման, կատարելագործման կամ հստակեցման անհրաժեշտությունը: Վարձատրության քաղաքականության բոլոր փոփոխությունները ենթակա են հաստատման Տնօրենների խորհրդի կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հավելյալ հաստատման Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից:

Տնօրինության անդամների և/կամ Բանկի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի տրամադրած տվյալների հիման վրա Կոմիտեն ուսումնասիրում և վերլուծում է Բանկի ռիսկերի ընդհանուր պատկերի վրա էական ազդեցություն ունեցող և/կամ առանցքային պարտականություններ ստանձնած աշխատակիցների ցանկը՝ ամեն տարի Տնօրենների խորհրդին առաջարկներ ներկայացնելով այդ ցանկի վերանայման անհրաժեշտության վերաբերյալ: Այն աշխատակիցները, ովքեր ստանում են Բանկի տնօրինության անդամների վարձատրությանը համարժեք կամ ավել վարձատրություն, ինքնաբերաբար կերպով ընդգրկվում են այդ ցանկում:

Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե

Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտեի գործունեության հիմնական նպատակը Բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների, Տնօրինության առանձնակի ռիսկ ստանձնած ղեկավար օղակների/մարմինների համար արհեստավարժ, հմուտ, փորձառու, առաքինի կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգարվման, այդ թվում՝ փոխարինելության ապահովումն ու կադրային բարելավումն է, ինչպես նաև առնչվող օրենսդրական կարգավորումներին համապատասխան՝ կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձի ներդրումն ու կատարելագործումն է:

Կոմիտեն համակարգում է Բաժնետերերի ժողովի կողմից Տնօրենների խորհրդի նոր անդամների նշանակման և գործող անդամների իրենց պաշտոնում վերահաստատման գործընթացը: Տվյալ գործընթացի շրջանակներում Կոմիտեն առաջարկում է.

1. Տնօրենների խորհրդի (հետագա) կազմը ձևավորելու գործողությունների ծրագիր,
2. Խորհրդի անդամին ներկայացվող պահանջները և Տնօրենների խորհրդի անդամների ընտրության չափանիշները,
3. Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ այդ թվում՝ Տնօրենների խորհրդի անդամների փոխարինելության ապահովման համար,

Կոմիտեն թեկնածուներ է առաջարկում Տնօրենների խորհրդի, վերջինիս կից Կոմիտեների, Տնօրինության, Տնօրինության նախագահիև առանձնակի ռիսկ ստանձնած ղեկավար օղակների/մարմինների համար /ընդ որում Տնօրինության անդամի թեկնածուների առաջադրումը չի սահմանափակում Տնօրինության նախագահին, կանոնադրությամբ վերապահված իրավունքը Տնօրենների խորհրդին Տնօրինության անդամի թեկնածուներ առաջադրելու համար/: Տնօրինության կազմի վերաբերյալ առաջարկները պետք է բխեն Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրենի հետ համատեղ պատրաստված և համաձայնեցված ծրագրից: Սույն կետում նշված պաշտոնների թեկնածուների առաջադրման մասով, այլ գործոնների հետ մեկտեղ, Կոմիտեն դիտարկում է.

- թեկնածուի անհրաժեշտ հմտությունները, գիտելիքը և փորձը, անկախությունը /շահագրգռվածության, փոխկապակցվածության և շահերի բախման հնարավորինս բացառումը/ կառավարման մարմինների անդամներից և այլ ղեկավարներից,
- Տնօրինության կազմի հավասարակշռությունը, այդ թվում՝ փոփոխությունների և դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը՝ միջազգային փորձի և սեռատարիքային կազմի առումով:

4.7.2.3 ***Խորհրդի նախագահը***

Տնօրենների Խորհրդի նախագահն ընտրվում է Տնօրենների Խորհրդի անդամների կողմից, Տնօրենների Խորհրդի անդամների կազմից՝ Տնօրենների Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Տնօրենների Խորհրդի նախագահը՝

1. Կազմակերպում է Տնօրենների Խորհրդի աշխատանքները,
2. Գումարում է Տնօրենների Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,
3. Կազմակերպում է Տնօրենների Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
4. Նախագահում է Ընդհանուր Ժողովում,
5. Կազմակերպում է Տնօրենների Խորհրդին կից կոմիտեների/հանձնաժողովների աշխատանքը,
6. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Ընդհանուր ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Տնօրենների Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Տնօրենների Խորհրդի որոշմամբ կատարում է

Տնօրենների Խորհրդի անդամներից մեկը: Տնօրենների Խորհրդի նախագահին վերապահված նիստերի իրականացման, կազմակերպման և անցկացման գործառույթները կարող են իրականացվել Տնօրենների Խորհրդի նախագահի հանձնարարությամբ՝ Տնօրենների Խորհրդի քարտուղարի կողմից:

Տնօրենների Խորհուրդն իր իրավասություններն առավել արդյունավետ և պատշաճ իրականացնելու նպատակով, կարող է՝

- Տնօրենների Խորհրդի կազմում ընդգրկել Տնօրենների Խորհրդի անկախ անդամներ,
- Տնօրենների Խորհրդի անդամների կազմում առանձնացնել Բանկի կառավարման գործընթացում մշտական հսկողություն իրականացնող անդամ/ներ/ /Տնօրենների Խորհրդի Լիազոր անդամ/, որի կարգավիճակը և գործունեության պայմանները սահմանվում են Տնօրենների Խորհրդի որոշմամբ և նրա հետ կնքված պայմանագրով, ընդ որում նշված անդամի համար կիրառելի է Բանկի ղեկավարների/աշխատակիցների համար սահմանված արտոնությունները և երաշխիքները:

4.7.2.4 ***Տնօրինությունը***

Տնօրինությունն իրականացնում է իր գործունեությունը նիստերի միջոցով, որոնք ենթակա են հրավիրման ամիսն առնվազն մեկ անգամ: Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման, որոշումների ընդունման կարգը: Բանկի Տնօրինության իրավասության մեջ է մտնում՝

1. Տնօրենների Խորհրդի հաստատմանը ներկայացվող Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի նախնական քննարկումն ու նախնական/պայմանական հաստատումը,
2. Բաժնետերերի ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի հաստատմանն ենթակա Բանկի ներքին իրավական ակտերին նախնական հավանություն տալը, բացառությամբ Կանոնադրության, Բաժնետերերի ժողովի, Տնօրենների Խորհրդի, կից կոմիտեների ու հանձնաժողովների, Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի,

3. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների և սակագների սահմանումը,
4. Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշումների ճիշտ և ժամանակին իրականացման ապահովումը,
5. Բանկի ակտիվների և պասիվների կառավարման իրականացումը,
6. Բանկի ընթացիկ, ամենօրյա գործունեությունը կանոնակարգող, օպերատիվ ղեկավարում պահանջող ու նկարագրողական բնույթ կրող ակտերի հաստատումը,
7. Բանկի հրապարակային պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատումը,
8. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող կամ Տնօրինության իրավասությանը վերապահված վարկավորման պայմանների շեղումով բանկային գործիքների տրամադրման հաստատումը,
9. Բանկի կողմից ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող գույքի կամ այլ ակտիվների ձեռքբերման կամ վաճառքի գործարքների, ներառյալ՝ փոխկապակցված գործարքների կնքման հաստատումը,
10. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից իրականացվող ներդրումների, ներառյալ փոխկապակցված ներդրումների, հաստատումը,
11. Բանկի կողմից մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման հարցի քննարկումն ու նախնական հավանություն տալը,
12. Բանկի ներքին և արտաքին աուդիտորների կամ այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների քննարկում և բացահայտված թերությունների մասով Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված միջոցառումների իրականացում,
13. Տնօրենների Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում՝ Բանկի աշխատատեղերի հաստատումը,
14. Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր տնօրենի իրավասությանը չվերապահված այլ հարցերի լուծումը,
15. Բանկի ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարների նշանակումը,
16. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

4.7.2.5 ***Գլխավոր տնօրենը***

Բանկի Գլխավոր տնօրենը՝

1. Տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ.
2. Ներկայացնում է Բանկն այլ անձանց հետ հարաբերություններում ՀՀ տարածքում և արտերկրում.
3. Գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.
4. Սահմանված կարգով կնքում է աշխատանքային և այլ պայմանագրեր.
5. Տնօրենների Խորհրդի հաստամանն է ներկայացնում Տնօրինության կողմից հավանություն ստացած ներքին իրավական ակտերը.
6. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը.
7. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին, բացառությամբ Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից նշանակվող անձանցից.
8. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
9. Կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ.
10. Ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները.
11. Բացում է բանկային հաշիվներ.
12. Կազմակերպում է Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ընդհանուր Ժողովին, Տնօրենների Խորհրդին, Տնօրինությանը և իրավունք չունի Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու.
13. Իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի, ներքին վերահսկողության ծառայության իրավասությանը չվերապահված իրավազորությունները.
14. Իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, ՀՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով ապահովում է Տնօրինության անդամներից մեկին Գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարցը.

15. Մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները.
16. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

Գլխավոր տնօրենը Տնօրենների Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում Տնօրինության և իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Տնօրենների Խորհրդի կողմից սահմանած կարգով: Նշված կարգով պետք է սահմանվեն առնվազն հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը, վերջիններիս ներկայացման կարգը և դրանցում ներառման ենթակա տեղեկությունների ցանկը:

4.7.3 Թողարկողի կառավարման մարմինների անդամները

Կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, ինչ գործունեություն են ծավալում նրանցից յուրաքանչյուրը թողարկողի կազմից դուրս՝ ազդագրի գրանցման ներկայացման պահին: Այս տեղեկատվությունը ներկայացվում է ըստ յուրաքանչյուր կառավարման մարմնի: Եթե ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պատվիրակվել կամ փոխանցվել են առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի), ապա ներկայացնել այդ անձի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը)

4.7.3.1 *Բանկի խորհրդի անդամները*

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Բանկի Տնօրենների Խորհուրդը բաղկացած էր հինգ անդամներից՝ նախագահ, մեկ անկախ անդամ և երեք անդամ, որոնց կազմը, անդամների թիվը և որակավորումը, ինչպես նաև փոխլրացնող փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն անդրադառնում են Խորհրդի արդյունավետության վրա:

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառությունը	Թողարկողից դուրս գործունեության ոլորտ
Անդրեյ Մկրտչյան	Խորհրդի նախագահ	Ավելի քան 20 տարի	չկա
Ռուբեն Վարդանյան	Խորհրդի անդամ	Ավելի քան 25 տարի	Բարեգործական, կրթական ու ներդրումային գործունեություն
Նուբար Աֆեյան	Խորհրդի անդամ	Ավելի քան 25 տարի	Կրթություն և ներդրումային գործունեություն
Ռոբերտ ֆոն Ռեկովսկի	Խորհրդի անկախ անդամ	Ավելի քան 25 տարի	Ներդրումային ֆոնդերի կառավարում
Ալեքսեյ Գերմանովիչ	Խորհրդի անդամ	Ավելի քան 15 տարի	Կորպորատիվ կառավարում
Օլեգ Ցարկով	Խորհրդի անդամ	Ավելի քան 15 տարի	Ներդրումային ֆոնդերի կառավարում
Պիեռ Գյուրջյան	Խորհրդի անդամ	Մոտ 30 տարի	Կրթական և բարեգործական գործունեություն

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառությունը	Թողարկողից դուրս գործունեության ոլորտ
Արտակ Հանեսյան	Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն	Ավելի քան 20 տարի	չկա
Տիգրան Ջրբաշյան	Տնօրինության անդամ, Զարգացման գծով տնօրեն	Ավելի քան 20 տարի	Հայ-ամերիկյան առևտրային պալատի նախագահ
Գոհար Խաչատրյան	Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ	Ավելի քան 20 տարի	չկա
Անդրանիկ Բարսեղյան	Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար	Ավելի քան 20 տարի	չկա
Գագիկ Սահակյան	Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն	Ավելի քան 20 տարի	չկա
Սամվել Աղաբաբյան	Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար	Ավելի քան 20 տարի	չկա
Գևորգ Թառումյան	Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն	Ավելի քան 20 տարի	չկա
Արման Բարսեղյան	Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն	Ավելի քան 20 տարի	Կողք հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
Արթուր Բաբայան	Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով տնօրեն	Ավելի քան 20 տարի	չկա
Բուրաստան Մովսիսյան	Տնօրինության անդամ, Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն	Ավելի քան 20 տարի	չկա

4.7.3.2 *Բանկի տնօրինության անդամները*

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Բանկի Տնօրինությունը կազված էր 10 անդամներից՝

Անուն, ազգանուն	Բնակության վայրը	Զբաղեցրած պաշտոնը
Արտակ Հանեսյան	ք. Երևան	Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն
Տիգրան Ջրբաշյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Զարգացման գծով տնօրեն
Գոհար Խաչատրյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ
Անդրանիկ Բարսեղյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար
Գագիկ Սահակյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն

Անուն, ազգանուն	Բնակության վայրը	Զբաղեցրած պաշտոնը
Սամվել Աղաբաբյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար
Գևորգ Թառումյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն
Արման Բարսեղյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն
Արթուր Բաբայան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով տնօրեն
Բուրաստան Մովսիսյան	ք. Երևան	Տնօրինության անդամ, Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն

Տնօրինության անդամներն իրենց իրավասություններն իրականացնում են Տնօրինության նիստերի միջոցով, Տնօրինության լիազորությունների շրջանակներում, նիստերին մասնակցելու և քվեարկությամբ որոշումներ ընդունելու միջոցով:

4.7.4 Թողարկողի մասնաճյուղերի կառավարիչները

Մասնաճյուղերի կառավարիչների անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, որոնցում կենտրոնացած է բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը

Սույն Ծրագրային Ազդագրի պատրաստման պահին Բանկի ոչ մի մասնաճյուղ չէր կենտրոնացրել Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը:

4.7.5 Շահերի բախումը

Արդյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև: Եթե այո, ապա պարզ ձևով նկարագրել այդ: Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին:

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախումը բացակայում է:

4.8 Հսկող անձինք

Այնքանով, որքանով հայտնի է թողարկողին, տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք թողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այո, նշել հսկողների անվանումը (անունը ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում թողարկողին)

Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձանց ուղղակի հսկողության տակ՝

1. Ամերիա Գրուպ (Սի-Ուայ), որն հանդիսանում է Բանկի 65.8%բաժնետոմսերի սեփականատեր:

2. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ, որն հանդիսանում է Բանկի 20.7% բաժնետոմսերի սեփականատեր: Հայաստանյան գրասենյակի հասցե՝ Վ. Սարգսյան 10, 2-րդ հարկ, Երևան 0010, ՀՀ, հեռ.՝ (+37411) 35 45 01, ֆաքս՝ (+37411) 35 45 20, էլ. փոստ՝ davism@ebrd.com, կայք՝ www.ebrd.com: Հայաստանյան գրասենյակի ղեկավար՝ Մարկ Դեյվիս:
3. «Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ», որին պատկանում են Բանկի բաժնետոմսերի 13.5%-ը:

Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձանց **անուղղակի** հսկողության տակ՝

1. RKVF Հիմնադրամ (հիմնադիր պարոն Ռուբեն Վարդանյան) - բաժնետեր Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) ընկերությունում;
2. Պարոն Նուբար Աֆեյան – բաժնետեր Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) ընկերությունում:

4.9 Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ

4.9.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում են պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ (ցանկության դեպքում կարելի է ներկայացնել այդ եզրակացության պատճենը): Ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը: Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, բացառությամբ, եթե ազդագրով հայցվում է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն

Բանկի 2016 և 2015 թվականների աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները ներկայացված են սույն Ազդագրի **Հավելված 6-ում**: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ http://ameriabank.am/Page.aspx?id=179&lang=33:

4.9.2 Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Եթե ազդագիրը գրանցման է ներկայացվում վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններ) վերջին օրվանից սկսած 9 ամիս հետո, ապա ազդագրում ներկայացվում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (եռամսյակային կամ կիսամյակային՝ կախված թողարկողի ցանկությունից), որոնք ծածկում են տարվա սկզբից առնվազն 6 ամիս ժամանակաշրջան: Այս միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել առանց աուդիտորական եզրակացության: Ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը: Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր

հայեցողությամբ կարող է չներառել նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, բացառությամբ, եթե ազդագրով հայցվում է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն:

Բանկի 2017 թվականի առաջին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներակայացված են Ազդագրի **Հավելված 6-ում**: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝http://ameriabank.am/Page.aspx?id=176&lang=33:

4.9.3 Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություններ

Եթե ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն, ապա տալ դրա նկարագիրը

Թողարկողի ֆինանսական վիճակի վրա ազդող էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

4.9.4 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ

Այս մասում ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում թողարկողի ներգրավվածությամբ այն բոլոր դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթների նկարագիրը (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին թողարկողը տեղյակ է), որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

Ընկերությունը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

4.10 Էական պայմանագրեր

Այստեղ ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը

2016 թվականի մայիսի 12-ին Ամերիաբանկը և DEG-ը ստորագրել են 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր:

2016 թվականի հունիսի 10-ին Բանկն իր ներդրումային կառավարիչ responsAbility Investments AG ընկերության միջոցով թողարկել և տեղաբաշխել է $20 մլն ընդհանուր անվանական ծավալով մուրհակ (պարտքային արժեթուղթ):

2016 թվականի նոյեմբերի 29-ին Բանկի և Պրոպարկո ընկերության միջև կնքվել է 20 մլն. դոլար արժողությամբ վարկային պայմանագիր:

2016 թվականի դեկտեմբերի 12-ին Բանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ կնքեց 10 մլն. դոլարին համարժեք դրամի վարկային պայմանագիր: Նույն ամսի 19-ին Գլոբալ կլիմայական

ընկերակցության ֆոնդ (GCPF)-ի հետ կնքվեց վարկային պայմանագիր՝ 30 մլն. դոլար արժողությամբ:

4.11 Մասնագիտական կարծիքներ

Եթե ազդագրի որևէ մասում օգտագործվել է հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք (եզրակացություն, հաշվետվություն, գնահատման ակտ և այլն), ապա ազդագրի այս մասում պետք է բացահայտվի այդ փաստը, այդ անձանց ինքնությունը (անունը, ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը)), որակավորումը և արդյոք թողարկողի հետ փոխկապակցված չէ: Այստեղ պետք է նշել նաև, թե ազդագրի ո՞ր մասում է օգտագործվել կամ ներկայացվել այդ կարծիքը: Եթե ազդագրում ներառված որևէ տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիացում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի թողնվել, որը կարող էր խեղաթյուրել այդ տեղեկատվության իմաստը: Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը:

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ծրագրային Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

4.12 Այլ տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում է հայտարարություն այն մասին, որ ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճենը) մշտապես մատչելի են հանրությանը.1) Թողարկողի կանոնադրությունը, 2) Փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ գնահատումները և վերլուծական նյութերը, որոնք պատրաստվել են թողարկողի պատվերով և որոնք կամ որոնց մի մասն օգտագործվել է ազդագրում: Այստեղ պետք է նշել նաև թե դրանցից յուրաքանչյուրն ինչ ձևով է մատչելի դարձվում հանրությանը՝ էլեկտրոնային, թե թղթային ձևով: Եթե էլեկտրոնային ձևով է մատչելի դարձվում, ապա նշել դրանց էլեկտրոնային հասցեները, իսկ եթե թղթային՝ ապա նշել համապատասխան հասցեները, որտեղից կարող են դրանք ձեռք բերվել

Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.ameriabank.am հասցեով:

Թողարկման վերջնական պայմանները կկցվեն սույն Ծրագրային ազդագրին, դրանց իրավասու մարմնի կողմից այդ մասին որոշման ընդունման պահից 7 օրյա ժամկետում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ՄԱՍ 5 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

5.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

(իրավաբանական անձանց համար)

Հայտ Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետական գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գտնվելու վայրը _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ ( )
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը ( )
գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը ( )
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

_____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրիին, ընդունում և համաձայն ենք դրանում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը* _____

(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Կ.Տ.

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043120372900 բանկային հաշվին են փոխանցվում են մինչև տվյալ

աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

(իրավաբանական անձանց համար)

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետական գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գտնվելու վայրը _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ ( )
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը ( )
գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը ( )
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը _____

Անձի ՀՀ դրամով բանկայի հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, ընդունում և համաձայն ենք դրանում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ	**քանակը թվերով (տառերով)**
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը*	**(օր, ամիս, տարի)**

Ստորագրություն	
Անուն Ազգանուն	**(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)**

Կ.Տ.

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043100494501 հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են կոնկրետ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած եվրոյով արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

(իրավաբանական անձանց համար)

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Իրավաբանական անձի անվանումը _____
(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետական գրանցման տվյալները _____
(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գտնվելու վայրը _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ ( )
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը ( )
գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը ( )
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի Եվրոյով բանկային հաշվի համարը _____

Անձի ՀՀ դրամով բանկայի հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրիին, ընդունում և համաձայն ենք դրանում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը* _____

(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Կ.Տ.

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043120035146 հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են կոնկրետ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

5.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

(Ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Հայտ ներկայացնողի անունը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ _____
(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ ( )
քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը ( )
գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը ( )
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

_____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրիին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ ենք, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված ենք, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթ:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա մեր Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ _____

քանակը թվերով (տառերով)

Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը _____

(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043120372900 բանկային հաշվին են փոխանցվում մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են կոնկրետ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

*ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության թողարկած դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

(Ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամը _____

(օր, ամիս, տարի, ժամ)

Հայտ ներկայացնողի անունը _____

(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ _____

(փաստաթղթի համար)

Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը _____

(օր, ամիս, տարի)

Գրանցման վայրի հասցեն _____

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____ (_____)

քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____ (_____)

գինը թվերով (տառերով)

_____

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը	( ) **ընդհանուր գումարը թվերով (տառերով)**
Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը	
Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը	
Բանկի անվանումը	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրիին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված եմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթ:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա մեր Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ	**քանակը թվերով (տառերով)**
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը	**(օր, ամիս, տարի)**

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043100494501 հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են կոնկրետ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

*ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության թողարկած եվրոյով արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

(Ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամը	**(օր, ամիս, տարի, ժամ)**
Հայտ ներկայացնողի անունը	**(անուն, ազգանուն)**
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	**(փաստաթղթի համար)**
Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը	**(օր, ամիս, տարի)**
Գրանցման վայրի հասցեն	

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____ (_____)

քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը _____ (_____)

գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____ (_____)

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի Եվրոյով բանկային հաշվի համարը _____

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

Արժեթղթերի հաշվի համարը _____

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրիին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված եմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու

տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթ:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա մեր Կողմերիս միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ	
Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ	**քանակը թվերով (տառերով)**
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը	**(օր, ամիս, տարի)**

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043120035146 հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են կոնկրետ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

*ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:

5.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

5.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Բանկի կազմակերպչական կառուցվածքը



5.5 ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման պայմաններ

…… 2017թ.

Ամերիաբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ------- ---------- 2017թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ում 9 Գ. Լուսավորիչ փողոց, 0015, Երևան, ՀՀ հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
	Թողարկողը (թողարկողի անվանումը)	“ԱՄԵՐԻԱԲԱՆԿ” ՓԲԸ
	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.3.6** մասում
	Թողարկման արժույթը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Առաջարկի գինը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/ 100 (մեկ հարյուր) Եվրո
	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	Ամերիաբանկի Տնօրենների Խորհրդի 2017թ մայիսի 23-ի նիստի թիվ 05/17/09 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
	Մարման ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/ 100 (մեկ հարյուր) Եվրո
	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
	Վաղաժամկետ մարմ7ան հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ	
	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Չի նախատեսվում
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ 9 Գ. Լուսավորիչ փողոց, 0015, Երևան, ՀՀ
	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի “ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա” ԲԲ ընկերությունը:
	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը դեռևս վարկանշված չեն
	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Անդրեյ Մկրտչյան	**Խորհրդի նախագահ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռուբեն Վարդանյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նուբար Աֆեյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ալեքսեյ Գերմաովիչ	Խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Օլեգ Ցարկով	Խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Պիեռ Գյուրջյան	Խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Հանեսյան	*Գլխավոր փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գոհար Խաչատրյան	*Գլխավոր հաշվապահ*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գևորգ Թառումյան	*Տնօրինության անդամ, Գլխավոր փնօրենի տեղակալ, ֆինանսական փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գագիկ Սահակյան	*Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անդրանիկ Բարսեղյան	*Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Բաբայան	*Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արման Բարսեղյան	*Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Ջրբաշյան	*Տնօրինության անդամ, Զարգացման գծով փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Բուրաստան Մովսիսյան	*Տնօրինության անդամ, Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով փնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սամվել Աղաբաբյան	*Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Արտակ Հանեսյան	Գլխավոր տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

(Պատասխանատու անձանց ստորագրություն)

5.6 ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ

Հաստատված է «Ամերիաբանկ» ՓԲԸ
հիմնադիրների ընդհանուր ժողովի
24/07/1992թ. որոշմամբ
(արձանագրություն N 1)

Փոփոխված է «Ամերիաբանկ» ՓԲԸ
բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի 23.12.2015թ. թիվ 04/15/03 որոշմամբ
(արձանագրություն N 04/15)

Գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում

Տնօրենների խորհրդի նախագահ՝

_____ Անդրեյ Մկրտչյան

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____ Արթուր Ջավադյան

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փոփոխված է

1. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 02/02/1994թ. որոշմամբ (արձանագրություն N 11)
2. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 12/07/1994թ. որոշմամբ
3. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 22/02/1995թ. որոշմամբ (արձանագրություն N 1), 14/04/1995թ. որոշմամբ
4. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 21/07/1995թ. որոշմամբ (արձանագրություն N 3)
5. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 27/11/1995թ. որոշմամբ (արձանագրություն N 4), 30/01/1996թ. որոշմամբ (արձանագրություն N 2)
6. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 03/04/1996թ. որոշմամբ (արձանագրություն N 4), 01/05/1996թ. որոշմամբ (արձանագրություն N 8)
7. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 27/12/1996թ. որոշմամբ (արձանագրություն N 15)
8. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 20/03/1997թ. որոշմամբ (արձանագրություն N 1)
9. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 26/08/1997թ. որոշմամբ (արձանագրություն N 3)
10. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 30/05/1998թ. որոշմամբ (արձանագրություն N 3)
11. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 21/06/1999թ. որոշմամբ (արձանագրություն N 6)
12. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 25/10/1999թ. որոշմամբ (արձանագրություն N 9)
13. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 11/02/2000թ. որոշմամբ
14. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 21/12/2000թ. թիվ 3 որոշմամբ (արձանագրություն N 4)
15. Բաժնետերերի Ընդհանուր ժողովի 02/02/2001թ. որոշմամբ
16. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի 20/06/2001թ. որոշմամբ (արձանագրություն N 4)
17. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի 21/06/2002թ. որոշմամբ (արձանագրություն N 1)
18. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 09/12/2002թ. որոշմամբ (արձանագրություն N 1)
19. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի 29/05/2003թ. որոշմամբ (արձանագրություն N 1)
20. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի 16/05/2004թ. որոշմամբ (արձանագրություն N 1)
21. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի 06/05/2006թ. թիվ 04 որոշմամբ (արձանագրություն N 1)
22. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի 20/10/2007թ. թիվ 05 որոշմամբ (արձանագրություն N 3)
23. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 21/01/2008թ. թիվ 04 որոշմամբ (արձանագրություն N 01/08)
24. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 12/03/2008թ. թիվ 05 որոշմամբ (արձանագրություն N 02/08)
25. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 19/05/2008թ. թիվ 03 որոշմամբ (արձանագրություն N 04/08)

26. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 16/08/2008թ. թիվ 06 որոշմամբ (արձանագրություն N 05/08)
27. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 29/10/2008թ. թիվ 07/08/06 որոշմամբ (արձանագրություն N 07/08)
28. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 15/06/2009թ. թիվ 03/09/03 որոշմամբ (արձանագրություն N 03/09)
29. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր (Համատեղ) Ժողովի 17/06/2010թ. թիվ 04/10/04 որոշմամբ (արձանագրություն N 04/10)
30. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 22/05/2011թ. թիվ 01/11/05 որոշմամբ (արձանագրություն N 01/11)
31. Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 25/05/2012թ. թիվ 01/12/04 որոշմամբ (արձանագրություն N 01/12)
32. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 15/10/2012թ. թիվ 02/12/03 որոշմամբ (արձանագրություն N 02/12)
33. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 21/03/2013թ. թիվ 02/13/04 որոշմամբ (արձանագրություն N 02/13)
34. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 30/05/2013թ. թիվ 04/13/03 որոշմամբ (արձանագրություն N 04/13)
35. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 20.07.2015թ. թիվ 02/15/03 որոշմամբ (արձանագրություն N 02/15)
36. Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի 23.12.2015թ. թիվ 04/15/03 որոշմամբ (արձանագրություն N 04/15)

ՀՈԴՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայներարտբանկ» ՓԲԸ ստեղծվել է 1992թ. հուլիսի 24-ի Բանկի Հիմնադիրների (բաժնետերերի) Ընդհանուր Ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 1), իսկ 1995թ. ապրիլի 14-ի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ վերածվել է բաժնետիրական բանկի՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ:

2008թ. մայիսի 19-ի Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 04/08) «Հայներարտբանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ»):

«Ամերիաբանկ» ՓԲԸ 14.05.2010թ. թիվ 02/10/01 և «Կասկադ Բանկ» ՓԲԸ 14.05.2010թ. թիվ 44/1 (արձանագրություն թիվ 44) որոշումների համաձայն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է նշված Բանկերի վերակազմակերպում՝ միացման միջոցով, որի արդյունքում «Կասկադ Բանկ» ՓԲԸ գործունեությունը դադարել է, իսկ «Ամերիաբանկ» ՓԲԸ պահպանել է իր գործունեությունը նաև որպես «Կասկադ Բանկ» ՓԲԸ իրավահաջորդ:

1.2. Բանկը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն (այսուհետ՝ «Կանոնադրություն») է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար: Իր ստեղծման և գործունեության ընթացքում Բանկն ենթարկվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «ՀՀ») օրենքների, իրավական այլ ակտերի և Կանոնադրության պահանջներին:

1.4. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական և այլ գործառնություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:

1.5. Բանկի բաժնետերերի և Բանկի միջև հարաբերությունները կարգավորվում են Կանոնադրությամբ:

1.6. Բանկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք /միջոցներ/, իր ֆիրմային անվանմամբ /հայերեն գրառմամբ՝ զուգակցված ռուսերեն և անգլերեն լեզուներով/ և խորհրդանիշով կլոր կնիք, պայմանագրերի/փաստաթղթերի հաստատման համար առանձին կնիք/ներ/, դրոշմներ, ձևաթղթեր, անկյունային դրոշմակնիք, հաշվարկային , ինչպես նաև Բանկի մասնաճյուղերի/ներկայացուցչությունների անվան նշումով կնիքներ, իսկ անհրաժեշտությամբ պայմանավորված՝ այլ տեսակի կնիքներ:

1.7. Բանկի պաշտոնական լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
կրճատ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АМЕРИАБАНК”
կրճատ՝ ЗАО “АМЕРИАБАНК”

անգլերեն՝ “AMERIABANK” Closed Joint-Stock Company
կրճատ՝ “AMERIABANK” CJSC

1.8. Բանկն երաշխավորում է իր հաճախորդների բանկային, առևտրային և այլ

գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.9. Բանկի հաճախորդների բանկային ավանդները և Բանկին ի պահ հանձնված նրանց դրամական միջոցները և այլ գույքը կարող է բռնագրավվել, դրանց վրա կարող է կալանք (արգելանք) դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ իրավասու պետական մարմինների կողմից:

1.10. Բանկն ունի ՀՀ օրենսդրությամբ բանկերին վերապահված իրավունքներ ու պարտականություններ, կարող է մատուցել ներդրումային ծառայություններ առանց լիցենզիայի՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

1.11. Բանկը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքների, ինչպես նաև դրա հետ կապված հաճախորդի կրած վնասների համար:

1.12. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

1.13. Բանկի իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Գրիգոր Լուսավորիչ 9:

ՀՈԴՎԱԾ 2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

2.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկը կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները՝

ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ և այլ ծառայություններ,

գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ),

դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,

ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,

զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ,

է) իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն, մասնավորապես և չսահմանափակելով Բանկի կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնելը կամ այլ կերպ ձեռք բերելը, օտարելը, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր,

է)1 օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն,

ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում),

թ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ,

ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և իրականացնել նման այլ գործարքներ,

ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժգ) մատուցել ֆինանսական կապիտալի շուկաների, կորպորատիվ ֆինանսների և ներդրումային խորհրդատվություն,

ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն,

ժե) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժզ) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ:

2.2. Բանկը կարող է Կանոնադրության 2.1 կետով նախատեսված գործառնությունները կատարել ինչպես ՀՀ պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ սպառողական վարկերի, որոնք տրամադրվում են ՀՀ դրամով:

2.3. Բանկի լիցենզավորման ենթակա բոլոր գործառնությունները կարող են իրականացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ստանալուց հետո:

2.4. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարաններում:

2.5. Բանկը ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք ՀՀ տարածքում հիմնվելու դեպքում գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից, իսկ ՀՀ տարածքից դուրս՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նախնական համաձայնություն ստանալով ՀՀ կենտրոնական բանկից և համապատասխան կարգով հաշվառվելով ՀՀ կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման փաստը վկայող փաստաթուղթը:

2.6. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում և դադարեցնում են իրենց գործունեությունը Բանկի Տնօրենների Խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկի ներկայացուցչությունները և մասնաճյուղերը գործում են Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա, դրանցով նախատեսված լիազորությունների սահմաններում, իսկ ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարները՝ համապատասխան կանոնադրությունների և Բանկի Տնօրինության նախագահի - Գլխավոր տնօրենի կողմից տրված լիազորագրերի հիման վրա:

2.7. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս գործող բանկերում՝ այդ մասին 5-օրյա /հնգօրյա/ ժամկետում տեղյակ պահելով ՀՀ կենտրոնական բանկին:

2.8. Բանկն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական և փոխառու միջոցների տիրապետումը, գույքի վերագնահատումը, սահմանում է տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները, մատուցվող ծառայությունների միջնորդավճարի չափերը և սակագները:

2.9. Բանկն օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող է իրականացնել պետական բյուջեի դրամարկղային սպասարկման գործառնությունները:

2.10. Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը պարտավորություն չեն կրում նրա (Բանկի) պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

2.11. Բանկն իրավունք ունի իրականացնել Կանոնադրության 2.1 կետում ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ ֆինանսական գործառնությունների հետ, եթե այդպիսի գործունեություն կամ գործառնություններ սահմանվել են բանկերի համար կամ առկա է ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը: Եթե նման գործունեությունը կամ գործառնություններն ենթակա են լիազորված մարմնի կողմից լիցենզավորման, ապա Բանկը նման գործունեություն կամ գործառնություններ կարող է իրականացնել բացառապես համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

ՀՈԴՎԱԾ 3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ, ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկի բաժնետեր կարող է լինել ՀՀ, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք (այդ թվում նաև միջազգային կազմակերպությունները), իսկ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Բանկի բաժնետեր չեն կարող լինել կուսակցություններն ու արհեստակցական միությունները: Մեկ բաժնետիրոջը պատկանող՝ Բանկի Ընդհանուր Ժողովում քվեարկության իրավունք տվող բաժնետոմսերի քանակը չի սահմանափակվում:

3.2. Բանկի բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել Ընդհանուր Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ) մասնակցել Բանկի կառավարմանը,

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

դ) նախապատվության կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Կանոնադրությամբ և/ կամ Բաժնետերերի ժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ,

ե) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները,

զ) Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2 (երկու) և ավելի տոկոսին տիրապետելու դեպքում, անվճար ստանալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները (եթե նույնիսկ դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք),

Սույն ենթակետում սահմանված տեղեկությունները Բանկի կողմից տրամադրվում են բաժնետիրոջ գրավոր պահանջը ստանալուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում՝ փոստով առաքելու կամ անձամբ այն վերջինիս տրամադրելու միջոցով,

է) հայցով դիմել դատարան՝ Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների զանգատարկման նպատակով,

ը) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելի մասը,

թ) հանդես գալ առաջարկություններով Ընդհանուր Ժողովներում.

ժ) քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

ժա) ծանոթանալ Ընդհանուր Ժողովի արձանագրություններին և որոշումներին,

ժբ) ՀՀ օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով, Բաժնետերերի ժողովի ընտրությամբ կամ առանց վերջինիս ընտրության անձամբ ընդգրկվել կամ ունենալ ներկայացուցիչ/ներկայացուցիչներ Տնօրենների խորհրդի կազմում,

ժգ) օգտվել ՀՀ օրենսդրությամբ, Բանկի և Բաժնետերերի միջև կնքված բաժնետերերի համաձայնագրով/պայմանագրով (այսուհետ՝ Բաժնետերերի պայմանագիր) Բանկի ներքին իրավական ակտերով, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.3. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) ժամանակին կատարել հայտարարված Կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնետոմսերի վճարումը,

բ) չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները,

գ) կատարել Կանոնադրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները,

դ) տեղյակ պահել Տնօրենների Խորհրդին փոխկապակցված անձանց և Բանկի գործարքներում իրենց շահագրգռվածության մասին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3.4. Բաժնետերերն իրավունք չունեն հետ պահանջելու Կանոնադրական կապիտալում կատարած իրենց ներդրումները:

3.5. Բանկի բաժնետերերի կազմից բաժնետիրոջ դուրս գալն իրականացվում է համաձայն Կանոնադրության 3.7 կետի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:

3.6. Այն բաժնետերը, որը կանոնավոր չի կատարում Կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պարտականությունները և դրանով խոչընդոտում է Բանկի գործունեությանը, կարող է զրկվել նոր բաժնետոմսերի կամ չգնված բաժնետոմսերի ձեռք բերելու իրավունքից՝ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ: Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող են սահմանվել դրամական պատժամիջոցներ՝ բաժնետոմսի դիմաց վճարման պարտավորությունների չկատարման համար: Նշված որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ձայների 3/4-ով /երեք քառորդով/:

3.7. Բաժնետերն իրավունք ունի օտարելու իր բաժնետոմսերը, ընդ որում, գնման նախապատվության իրավունքը տրվում է Բանկի բաժնետերերին: Նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 30 /երեսուն/ օր բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից: Եթե այլ բան բխում չի Բաժնետերերի պայմանագրից, Ընդհանուր Ժողովի համաձայնության դեպքում, նախապատվության ժամկետը լրանալուց հետո բաժնետերն իրավունք ունի վաճառելու բաժնետոմսերն ոչ բաժնետեր հանդիսացող երրորդ անձանց՝ նույն գնով և մյուս հավասար պայմաններով, որոնցով դրանք առաջարկվել են բաժնետերերին: Երրորդ անձանց կողմից բաժնետոմսերի ձեռքբերման առաջարկությանը համաձայնություն տալու կամ չտալու վերաբերյալ Արտահերթ Ընդհանուր Ժողովը պետք է կայացնի երրորդ անձի կողմից բաժնետոմսերի գնման վերաբերյալ դիմումի ներկայացման պահից 30 /երեսուն/ օրվա ընթացքում, եթե այդ անձը համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից և/կամ ՀՀ օրենսդրությամբ նշանակալից և/կամ այլ մասնակցություն ունեցող անձանց համար սահմանված չափանիշներին:

Եթե այլ բան չի բխում Բաժնետերերի պայմանագրից, Բանկի բաժնետերերի և երրորդ անձ ոչ բաժնետերերի միջև կնքված բաժնետոմսերի առուվաճառքի յուրաքանչյուր գործարք անվավեր է, եթե այդ գործարքի վերաբերյալ նախապես չի ընդունվել Ընդհանուր Ժողովի

որոշում: Այդ գործարքների հետևանքով պատճառված վնասի համար Բանկը և մնացած բաժնետերերը, բացառությամբ այն բաժնետիրոջ, որը հանդիսանում է գործարքի կողմ, պատասխանատվություն չեն կրում:

Անվավեր գործարքների հետևանքով բաժնետոմսեր ձեռք բերած երրորդ անձը չի օգտվում այդ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժին ստանալու և քվեարկության ժամանակ ձայնի իրավունքից:

3.8. Բանկի բաժնետոմսերն ենթակա չեն գրավադրման առանց Ընդհանուր Ժողովի որոշմամբ արտահայտված համաձայնության: Համապատասխան համաձայնության բացակայության դեպքում նման գործարքը համարվում է անվավեր: Սույն կետը խախտող բաժնետիրոջ նկատմամբ կարող են կիրառվել դրամական պատժամիջոցներ՝ Ընդհանուր Ժողովի որոշմամբ:

3.9. Բանկի կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում բաժնետոմսերի հետգնումը պետք է իրականացվի համապատասխան պահանջի ներկայացման պահից հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն ոչ ավել, քան 30 /երեսուն/ օրվա ընթացքում: Բաժնետոմսերի հետգնումն իրականացնում է Բանկի Տնօրինության Նախագահ - Գլխավոր Տնօրենը, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան գործարքը հանդիսանում է խոշոր գործարք:

3.10. Բաժնետեր քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի իրավահաջորդության դեպքում Բանկի բաժնետոմսերը անցնում են բաժնետեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին կամ համայնքին /ժառանգների բացակայության դեպքում/՝ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի համաձայնությամբ:

Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից բաժնետոմսերի անցումը թույլատրող որոշում չընդունվելու դեպքում բաժնետոմսերն ենթակա են օտարման Կանոնադրության 3.7. կետով սահմանված կարգով, իսկ բաժնետոմսերի արժեքն ենթակա է սահմանման Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.11. Բանկի բաժնետիրոջ բաժնետոմսերի կամ դրանց մի մասի նկատմամբ ցանկացած հիմքով բռնագանձում կարող է տարածվել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանմամբ:

ՀՈԴՎԱԾ 4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը (կանոնադրական կապիտալը) կազմում է 32 087 360 000 /երեսուներկու միլիարդ ութսունյոթ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 100 273 /հարյուր հազար երկու հարյուր յոթանասուներեք/ հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320 000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով:

4.2. Մեկ հասարակ անվանական բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք: Հասարակ անվանական բաժնետոմսի ձևը սահմանված է ոչ փաստաթղթային:

4.3. Կանոնադրական կապիտալում ներդրումները կատարվում են ՀՀ պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

4.4. Յուրաքանչյուր բաժնետեր կամ փոխկապակցված անձ, որոնք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով ցանկանում են ձեռք բերել նշանակալից կամ այլ մասնակցություն,

պարտավոր են օրենքով սահմանված կարգով մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը դիմել ՀՀ կենտրոնական Բանկ՝ վերջինիս նախնական համաձայնությունը ստանալու համար:

4.5. Բանկը կարող է Կանոնադրական կապիտալն ավելացնել այն դեպքում, երբ թողարկված բոլոր բաժնետոմսերն իրենց անվանական արժեքով լրիվ վճարված են: Կանոնադրական կապիտալն ավելացվում է լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կամ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով:

Բանկը, Ընդհանուր Ժողովի որոշմամբ, կարող է միաձուլել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը՝ մեծացնելով անվանական արժեքը կամ բաժանելով ավելի փոքր անվանական արժեքի բաժնետոմսերի:

4.6. Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը կարող է ընդունվել Ընդհանուր Ժողովի կողմից:

4.7. Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ուժի մեջ է մտնում Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կենտրոնական բանկում դրա գրանցման պահից:

4.8. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիան:

4.9. Բաժնետոմսն անբաժանելի է: Այն դեպքում, երբ միևնույն բաժնետոմսը պատկանում է մի քանի անձանց, ապա նրանք բոլորը Բանկի նկատմամբ համարվում են մեկ բաժնետեր և կարող են իրենց իրավունքներն իրականացնել իրենցից որևէ մեկի կամ ընդհանուր ներկայացուցչի միջոցով:

4.10. Բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել՝ ներառյալ Բանկի նկատմամբ պահանջների հաշվանցով, չի թույլատրվում:

ՀՈԴՎԱԾ 5. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ՇԱՀՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

5.1. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15 %-ի /տասնհինգ տոկոսի/ չափով:

5.2. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Պահուստային հիմնադրամին հատկացումները կատարվում են տարեկան մաքուր շահույթից՝ նվազագույնը 5%-ի /հինգ տոկոսի/ չափով:

5.3. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է միայն Տնօրենների Խորհրդի որոշմամբ՝ Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը մարելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

5.4. Բանկն իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստ, վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ, ինչպես նաև ՀՀ օրենքներով, իրավական ակտերով նախատեսված պարտադիր այլ պահուստներ:

5.5. Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ պահուստներ /ֆոնդեր/, որոնք նպատակ ունեն նպաստելու Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

5.6. Այլ պահուստների /ֆոնդերի/ ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերն որոշվում են Բանկի Ընդհանուր Ժողովի որոշմամբ:

5.7. Բանկը կանոնադրական կապիտալի չափի փոփոխման դեպքում ՀՀ կենտրոնական բանկում բացում է կուտակային հաշիվ, որում գտնվող դրամական միջոցները Բանկը չի կարող տիրապետել, տնօրինել և օգտագործել՝ մինչև օրենքով սահմանված կարգով ՀՀ կենտրոնական Բանկում դրա հետ կապված փոփոխությունները գրանցելը: Բանկը

կանոնադրական կապիտալի չափի փոփոխման դեպքում այլ բանկերում չի կարող կուտակային հաշիվ բացել:

5.8. Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթն ենթակա է հարկման ՀՀ օրենսդրության համաձայն:

5.9. Պահուստային հիմնադրամ և այլ հիմնադրամներ կատարվող փոխանցումներից ու բյուջետային հատկացումներից հետո մնացած շահույթը (զուտ շահույթը) մնում է Բանկի տրամադրության տակ:

5.10. Շահութաբաժինները վճարվում են Բանկի զուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին: Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Ընդ որում՝ տարեկան շահութաբաժինը Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող է վճարվել բացառապես տարեկան արդյունքներով: Շահութաբաժինը վճարվում է դրամով: Բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Բանկի կողմից չեն երաշխավորվում:

5.11. Բանկի Ընդհանուր Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ:

5.12. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե լրիվ չի վճարվել Կանոնադրական կապիտալը:

5.13. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը: Բանկն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական կապիտալից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից:

ՀՈԴՎԱԾ 6. ԲԱՆԿԻ ԳՈՒՅՔԸ

6.1. Բանկը հանդիսանում է սեփականատեր՝

6.1.1. այն գույքի, ներառյալ դրամական միջոցների, որոնք Բանկի հիմնադիրները, բաժնետերերը որպես բաժնետոմսերի դիմաց վճարումներ, կամ այլ պայմանավորվածությամբ հանձնել են Բանկին,

6.1.2. Բանկի կողմից իրականացվող գործունեությունից ստացված եկամուտների՝ ներառյալ և չսահմանափակելով ներդրումային արժեթղթերով կատարված գործարքներից,

6.1.3. չբաշխված շահույթի,

6.1.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերված գույքի և ակտիվների:

6.2. Բանկի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք ՀՀ օրենսդրությանը համապատասխան չեն կարող պատկանել Բանկին:

6.3. Բանկի՝ իր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու առանձնահատկությունները, սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 7. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմինը.

- Տնօրենների Խորհուրդը.
- Տնօրինությունը և Գլխավոր տնօրենը – Տնօրինության Նախագահը:

7.1. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

7.1.1. Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը (այսուհետև՝ Ընդհանուր Ժողով) հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը:

7.1.2. Ընդհանուր Ժողովը կազմված է Բանկի բոլոր բաժնետերերի կամ նրանց կողմից նշանակված և նրանց լիազորություններով գործող ներկայացուցիչներից: Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր,

բ) Բանկի մասնակից չհանդիսացող Տնօրենների Խորհրդի անդամները, Տնօրինության Նախագահ - Գլխավոր տնօրենը և Բանկի Տնօրինության անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ) Բանկի ներքին աուդիտի ղեկավարը՝ որպես դիտորդ,

դ)Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ընդհանուր Ժողովի օրակարգի հարցերում),

ե) ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,

զ) բաժնետիրոջ կամ բաժնետերերի կողմից հրավիրված մասնագետները, խորհրդատուներն ու փորձագետները՝ խորհրդատվական ձայնի իրավունքով՝ միայն իրենց մասնագիտական կամ փորձագիտական գիտելիքներ պահանջող հարցերի քննարկման ժամանակ:

7.1.3. Ընդհանուր Ժողովի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

ա) Կանոնադրության, Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կանոնակարգերի հաստատումը, դրանց փոփոխություններն ու լրացումները և/կամ նոր խմբագրությամբ հաստատումները,

բ) Բանկի վերակազմակերպումը,

գ) Բանկի լուծարումը,

դ) լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

ե) Բանկի Տնօրենների Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի Տնօրենների Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության մասին որոշումներն ընդունվում են բացառապես Տարեկան Ընդհանուր Ժողովներում: Տնօրենների Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Տնօրենների Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, բաժնետոմսերի տեղաբաշխումը, բաժնետոմսերից բխող իրավունքների փոփոխությունը, բաժնետոմսերի փոխանցումների սահմանափակումները, ինչպես նաև Բանկի Կանոնադրական կապիտալի ավելացումը, այդ թվում՝ Կանոնադրական կապիտալի փոփոխությունը Բանկի աշխատակիցներին որպես խրախուսում Բանկի բաժնետոմսերի տրամադրմամբ,

է) Տնօրենների Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

թ) Ընդհանուր Ժողովի վարման կարգի հաստատումը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքում՝ հաշվիչ հանձնաժողովի գործառույթներն իրականացնող անձի նշանակումը,

ժ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

ժա) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը,

ժբ) առևտրային կազմակերպությունների, միությունների հիմնադրումը և այդ կազմակերպություններում, միություններում մասնակցությունը,

ժգ) Տնօրենների խորհրդի նախագահի և անդամների հիմնական/լրացուցիչ վարձատրության առավելագույն սահմանաչափերի սահմանումը,

ժդ) բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժե) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

ժզ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

ժէ) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

Սույն կետով նախատեսված բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Տնօրենների Խորհրդին, Տնօրինությանը կամ Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենին կամ այլ անձի, բացառությամբ սույն կետի առաջին մասի «ժա-ժզ» կետերում թվարկված հարցերի, որոնցով որոշումների ընդունումը Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Տնօրենների Խորհրդին:

7.1.4. Ընդհանուր Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ընդհանուր Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի 50-ից /հիսունից/ ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր Ընդհանուր Ժողովի գումարման ամսաթիվը: Տվյալ դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած Ընդհանուր Ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի 30-ից /երեսունից/ ավելի տոկոսին:

Բանկի բաժնետերերի ծանուցումը նոր Ընդհանուր Ժողովի գումարման մասին կատարվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 10 /տասն/ օր շուտ:

7.1.5. Կանոնադրության 7.1.3. կետի առաջին մասում թվարկված հարցերի վերաբերյալ Ընդհանուր Ժողովում որոշումներն ընդունվում են քվեարկող բաժնետերերի ընդհանուր ձայների 3/4-ով /երեք քառորդով/:

7.1.6. Ընդհանուր Ժողովն իրավունք չունի փոփոխել Ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

7.1.7. Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները Բանկի բաժնետերերին հաղորդվում են այդ որոշումներն ընդունելու պահից 45 /քառասունհինգ/ օրվա ընթացքում:

7.1.8. Ընդհանուր Ժողովը կարող է գումարվել հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով), բացառությամբ 7.1.3. կետի առաջին մասի «բ», «գ» և «ը» ենթակետերում նշված հարցերի: Տարեկան Ընդհանուր Ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Ընդ որում, Ընդհանուր Ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ընդհանուր Ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի, էլեկտրոնային կամ այլ կապի/համակարգի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում, կամ հեռակա /հարցման/ եղանակով՝ քվեաթերթիկի օգտագործմամբ՝ փոստային կամ էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային կապի կամ ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով:

Իրական ժամանակի ռեժիմում անցկացվող Ժողովի նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

7.1.9. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ընդհանուր Ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

7.1.10. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելն ավարտելու պահից առնվազն 35 /երեսունհինգ/ օր շուտ:

Քվեաթերթիկների տրամադրվումը Բաժնետերերին իրականացվում է անձամբ հանձնելով կամ պատվիրված նամակներ կամ դրանք Խորհրդի կողմից ընտրված կապով ուղարկելու միջոցով:

Հեռակա կարգով Ընդհանուր Ժողով գումարելիս, բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում են ՀՀ օրեսդրությամբ նախատեսված նյութերը և տեղեկությունները:

7.1.11. Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ցուցակը պետք է պարունակի ՀՀ օրենսդրությամբ պահանջվող տվյալները: Ցուցակի կազմման օրն Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը տրամադրվում է Բանկի Տնօրինության Նախագահ - Գլխավոր տնօրենին, որը պարտավոր է Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված յուրաքանչյուր բաժնետիրոջ պահանջով այն տրամադրել վերջինիս՝ տեղում ծանոթանալու համար: Բաժնետերերի համատեղ ներկայությամբ նիստի միջոցով Ընդհանուր Ժողովի անցկացման ժամանակ մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը տեղադրվում է նիստի անցկացման վայրում: Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված յուրաքանչյուր բաժնետիրոջ գրավոր պահանջով ցուցակը ստացած Բանկի Տնօրինության Նախագահ - Գլխավոր տնօրենը պարտավոր է առավելագույնը 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում կազմել և նրան տրամադրել տեղեկանք՝ Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում վերջինիս ընդգրկման մասին:

Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ընդհանուր

Ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան Ընդհանուր Ժողովի գումարումից 45 /քառասունհինգ/ օր առաջ:

Եթե Ընդհանուր Ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր Ժողովի գումարման (լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելն ավարտելու) ամսաթվից առնվազն 35 /երեսունհինգ/ օր շուտ:

Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

7.1.12. Ընդհանուր Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին գրավոր ծանուցում է ուղարկում ժողովի գումարման օրվանից առնվազն 15 /տասնհինգ/ օր առաջ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելու կամ Տնօրենների Խորհրդի կողմից ընտրված կապի միջոցով այն ուղարկելու եղանակով: Տարեկան Ընդհանուր Ժողովի մասին ծանուցումը պետք է նաև հրապարակվի մամուլում և ինտերնետում՝ Բանկի կայք-էջում:

Ընդհանուր Ժողովի անցկացման մասին ծանուցում է ՀՀ կենտրոնական բանկին՝ դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 /տասնհինգ/ օր առաջ:

7.1.13. Բանկի բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) բաժնետոմսերի առնվազն 2 /երկու/ տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո 30 /երեսուն/ օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել Տարեկան Ընդհանուր Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Տնօրենների Խորհրդի անդամության թեկնածուներ:

Ընդհանուր Ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջադրման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ անվանումը, նրան պատկանող բաժնետոմսերի քանակը և առաջարկության հեղինակի ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

Տնօրենների Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել՝ դրանք Տարեկան Ընդհանուր Ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին սույն կետով նշված ժամկետը լրանալուց 15 /տասնհինգ/ օրվա ընթացքում:

7.1.14. Ընդհանուր Ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 4 /չորս/ ամսվա ընթացքում: Տարեկան Ընդհանուր Ժողովից բացի գումարվող Ընդհանուր Ժողովները համարվում են արտահերթ:

Արտահերթ Ընդհանուր Ժողովներ կարող են գումարվել ցանկացած ժամանակ Տնօրենների Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Տնօրինության, Տնօրինության Նախագահի - Գլխավոր տնօրենի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 /տասը/ տոկոս բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

7.1.15. Արտահերթ Ընդհանուր Ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում Տնօրենների Խորհուրդը պետք է Արտահերթ Ընդհանուր Ժողով գումարի՝ պահանջը ներկայացնելու պահից 45 /քառասունհինգ/ օրվա ընթացքում:

7.1.16. Արտահերթ Ընդհանուր Ժողովի գումարման կամ գումարումը մերժելու մասին Տնօրենների Խորհրդի որոշումը պետք է ընդունվի դրա պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10/տասն/օր ժամկետում:

7.1.17. Բանկի բաժնետերերն Ընդհանուր Ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետիրոջ

ներկայացուցիչը կարող է Ընդհանուր Ժողովին մասնակցել միայն օրենքով սահմանված կարգով՝ լիազորագրի առկայության դեպքում:

7.1.18. Ընդհանուր ժողովում քվեարկությունը կատարվում է Կանոնադրության 4.2 կետի համաձայն:

7.1.19. Ընդհանուր Ժողովի արձանագրությունը կազմվում է թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով, Ժողովի ավարտից հետո 5 /հինգ/ օրվա ընթացքում, 2 /երկու/ օրինակից, որոնք ստորագրվում/հաստատվում են Ընդհանուր Ժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Ընդ որում, Ընդհանուր Ժողովի նախագահի և քարտուղարի, ինչպես նաև Բաժնետերերի ստորագրությունները արձանագրությունների /անհրաժեշտության դեպքում/, քվեաթերթիկների և այլ նյութերի վրա կարող են դրվել էլեկտրոնային եղանակով:

7.1.20. Ընդհանուր Ժողովի որոշումներն իրավաբանական ուժ կունենան, եթե պահպանվել են ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով և Բաժնետերերի պայմանագրով նախատեսված պահանջները:

7.2. ԲԱՆԿԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

7.2.1. Տնօրենների Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում, ինչպես նաև ապահովում է բաժնետերերի կողմից ներդրումների արժեքի առավելագույն ավելացումը (բաժնետոմսերի շուկայական գնի ավելացումը) և Բանկի այլ շահագրգիռ անձանց օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունը: Այդուհետ Տնօրենների խորհուրդն իր գործունեության ընթացքում ներկայացնում, պաշտպանում և ուղղորդվում է բաժնետերերի ու շահագրգիռ անձանց (բոլոր անձինք, որոնք իրենց ներդրումով՝ մարդկային, մասնագիտական, փողային, այլ, աջակցում են բանկի երկարաժամկետ առաջընթացին և մրցակցությանը, այդ թվում՝ բանկի ներդրողները, ավանդատուների վարկատուները, աշխատակիցները և այլն) շահերով, ինչպես նաև պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու համար Բանկի ներքին հսկողության գործուն և արդյունավետ համակարգի ներդնումը՝ սահմանելով ռիսկերի կառավարման ու ռիսկի ախորժակին վերաբերող հիմնական ելակետային դրույթները:

7.2.2. Տնօրենների Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ընդհանուր Ժողովի Տարեկան և Արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Բանկի Տնօրինության անդամների և Տնօրինության Նախագահի - Գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և հիմնական/լրացուցիչ վարձատրության պայմանների հաստատումը,

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նշված ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի և տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների ներքին կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե) Բանկի տարեկան բյուջեի (այդ թվում՝ տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի) հաստատումը,

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

է) Բանկի բաժնետոմսերի շուկայական գնի սահմանումը,

ը) միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշման ընդունումը, ինչպես նաև շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Տարեկան Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր Ժողովին ներկայացումը,

ժ) Ընդհանուր Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժգ) Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

ժե) Կանոնադրության 7.1.3 կետի առաջին մասի «բ», «ժա-ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն Ընդհանուր Ժողովի քննարկմանը,

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը և լուծարումը,

ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

ի) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

իա) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

իբ) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող վարկերի տրամադրման հաստատումը,

իգ) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից գույքի կամ այլ ակտիվների ձեռքբերման կամ վաճառքի գործարքների, ներառյալ փոխկապակցված գործարքները, կնքման հաստատումը,

իդ) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից իրականացվող ներդրումների, ներառյալ փոխկապակցված ներդրումների, հաստատումը,

իե) Ընդհանուր Ժողովի կողմից որոշված սահմանաչափերի ներքո Տնօրենների խորհրդի նախագահի և անդամների հիմնական/լրացուցիչ վարձատրության չափի սահմանումը, ընդ որում նշված սահմանաչափերը սահմանված չլինելու դեպքում, Տնօրենների Խորհուրդն ինքնուրույն է որոշում Տնօրենների Խորհրդի նախագահի և անդամների վարձատրության պայմանները/չափերը.

իզ) Տնօրենների Խորհրդի կազմից ստեղծել Տնօրենների Խորհրդին կից հանձնաժողովներ/կոմիտեներ, հաստատել դրանց գործունեությունը կանոնակարգող ակտերը, նշանակել Տնօրենների խորհրդի քարտուղար.

իէ) Կանոնադրությունը, Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կանոնակարգերը, դրանց փոփոխությունները և լրացումները իր նախնական հավանությամբ Ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը,

իը) Կանոնադրական կապիտալում մասնակցության/բաժնետոմսերի տրամադրման միջոցով աշխատակիցների խրախուսման ծրագրի և/կամ այդ իրավահարաբերությունները կարգավորող Ներքին իրավական ակտերի հաստատումը/փոփոխությունը,

իթ) ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, Ընդհանուր ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ հարցերով որոշումների ընդունումը:

Սույն կետի առաջին մասով նախատեսված բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց: Տնօրենների Խորհրդին կից կոմիտեներին/հանձնաժողովներին տրված լիազորությունները չեն կարող որևէ կերպ նվազեցնել Տնօրենների Խորհրդի իրավասությունների ծավալն ու շրջանակը:

7.2.3. Տնօրենների Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր Ժողովի կողմից, որը չի կարող 5 /հինգ/ տարուց պակաս և 10 /տասը/ տարուց ավել լինել, միաժամանակ Տնօրենների Խորհրդի Նախագահին ու անդամներն ունեն վերընտրվելու իրավունք:

7.2.4. Բանկի այն բաժնետերերը, որոնք տիրապետում են Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 /տասն/ և ավելի տոկոսին, իրավունք ունեն ընդգրկվել Տնօրենների Խորհրդի կազմում կամ Տնօրենների Խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին, որի իրականացման կարգն ու պայմանները սահմանվում է Տնօրենների խորհրդի և/ կամ Բաժնետերերի ժողովի կանոնակարգերով:

Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի մինչև 10 /տասը/ տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի 10 /տասն/ և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր Ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Տնօրենների Խորհրդի կազմում՝ բաժնետերերի խմբի ստեղծման համար օրենքի պահանջներին համապատասխանող պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր Ժողովին տեղեկացնելու դեպքում:

Կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Տնօրենների Խորհրդի կազմում: Սույն մասի կիրառման առումով Կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում Բանկի տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի 10 /տասը/ տոկոսից պակասին տիրապետող այն բաժնետերը, որը չի կնքել սույն կետի երկրորդ մասում նշված պայմանագիրը:

Կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող յուրաքանչյուր բաժնետեր Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո 30 /երեսուն/ օրվա ընթացքում իրավունք ունի Տնօրենների Խորհրդին առաջարկել Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի շահերը ներկայացնող Տնօրենների Խորհրդի անդամության մեկ թեկնածու՝ կցելով նրա մասին օրենքով պահանջվող տեղեկատվությունը: Տնօրենների Խորհուրդը նշված տեղեկատվությունը ներկայացնում է Ընդհանուր Ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր Ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 35 /երեսունհինգ/ օր առաջ:

Առաջադրված թեկնածուները քվեարկվում են Տարեկան Ընդհանուր Ժողովում (կամ Արտահերթ Ընդհանուր Ժողովում՝ եթե վերջինս որոշում է ընդունել Տնօրենների Խորհրդի կամ Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի շահերը ներկայացնող Տնօրենների Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին), ընդ որում, քվեարկությանը մասնակցում են միայն Ընդհանուր Ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Թեկնածուն ընտրված է համարվում, եթե նրա օգտին քվեարկել է ժողովին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի տեղաբաշխված քվեարկվող բաժնետոմսերի ընդհանուր թվի 50-ից /հիսունից/ ավելի տոկոսը: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի ստանում ընտրվելու համար սույն մասով պահանջվող ձայների բավարար քանակ, ապա առավել ձայներ ստացած 2 /երկու/ թեկնածուները քվեարկվում են կրկին՝ մինչև նրանցից մեկը չստանա ընտրվելու համար պահանջվող ձայների բավարար քանակը: Ընտրված թեկնածուն Ընդհանուր Ժողովի ավարտից հետո անմիջապես ընդգրկվում է Տնօրենների Խորհրդի կազմում:

Տնօրենների Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման ընդունման դեպքում, Տնօրենների Խորհրդի նոր անդամներն ընտրվում են Կանոնադրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Ընդ որում, եթե վաղաժամկետ դադարեցվել են Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի առաջարկությամբ ընտրված անդամի լիազորությունները, ապա նոր անդամը նույնպես ընտրվում է համապատասխանաբար փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի կողմից առաջարկված անձանցից՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.2.5. Բանկի Տնօրենների Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ընդհանուր Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 7 /յոթ/ հոգուց պակաս և 9 /ինը/ հոգուց ավելի լինել: Տնօրենների Խորհրդի անդամները (բացի Կանոնադրության 7.2.4 կետով սահմանված կարգով Տնօրենների Խորհրդի կազմում ընդգրկված անդամներից) ընտրվում են Ընդհանուր Ժողովի որոշմամբ՝ Կանոնադրության 7.1.3 կետի «ե» ենթակետի համաձայն:

Տնօրենների Խորհրդի անդամները պետք է համապատասխանեն բանկային օրենսդրությամբ և Տնօրենների խորհրդի կանոնակարգով սահմանված չափանիշներին:

Տնօրենների Խորհրդի անդամները վարձատրվում են:

7.2.6. Տնօրենների Խորհրդի նախագահն ընտրվում է Տնօրենների Խորհրդի անդամների կողմից, Տնօրենների Խորհրդի անդամների կազմից՝ Տնօրենների Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

7.2.7. Տնօրենների Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Տնօրենների Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է Տնօրենների Խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

գ) կազմակերպում է Տնօրենների Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է Ընդհանուր Ժողովում.

ե) կազմակերպում է Տնօրենների Խորհրդին կից կոմիտեների/հանձնաժողովների աշխատանքը.

զ) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Ընդհանուր ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Տնօրենների Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Տնօրենների Խորհրդի որոշմամբ կատարում է Տնօրենների Խորհրդի անդամներից մեկը:

Տնօրենների Խորհրդի նախագահին վերապահված նիստերի իրականացման, կազմակերպման և անցկացման գործառույթները կարող են իրականացվել Տնօրենների Խորհրդի նախագահի հանձնարարությամբ՝ Տնօրենների Խորհրդի քարտուղարի կողմից:

7.2.8. Տնօրենների Խորհուրդն իր իրավասություններն առավել արդյունավետ և պատշաճ իրականացնելու նպատակով, կարող է.

- Տնօրենների Խորհրդի կազմում ընդգրկել Տնօրենների Խորհրդի անկախ անդամներ,
- Տնօրենների Խորհրդի անդամների կազմում առանձնացնել Բանկի կառավարման գործընթացում մշտական հսկողություն իրականացնող անդամ/ներ/ /Տնօրենների Խորհրդի Լիազոր անդամ/, որի կարգավիճակը և գործունեության պայմանները սահմանվում են Տնօրենների Խորհրդի որոշմամբ և նրա հետ կնքված պայմանագրով, ընդ որում նշված անդամի համար կիրառելի է Բանկի ղեկավարների/աշխատակիցների համար սահմանված արտոնությունները և երաշխիքները:

Տնօրենների Խորհրդի Լիազոր անդամի կողմից մշտական հսկողության իրականացումը Բանկի ընթացիկ գործունեությանը և կառավարմանը, չի սահմանափակում Բանկի իրավասու մարմինների և անձանց /ներառյալ՝ Տնօրենների Խորհրդի մյուս անդամների/ լիազորությունների շրջանակը, վերջիններիս որոշումների կայացման հնարավորությունը, այլ բացառապես ապահովում է նրանց և Տնօրենների Խորհրդի անմիջական կապը, Տնօրենների Խորհրդի համար Բանկի ամենօրյա գործունեության մասին արժանահավատ և անմիջական տեղեկացվածության հնարավորությունը:

7.2.9. Տնօրենների Խորհդի նիստերը գումարում է Տնօրենների Խորհրդի նախագահը՝ իր, Տնօրենների Խորհրդի անդամի, Տնօրինության Նախագահ - Գլխավոր տնօրենի (Տնօրինության), ներքին աուդիտի ղեկավարի, արտաքին աուդիտն իրականացնող անձի, ՀՀ կենտրոնական բանկի Տնօրենների խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկվող բաժնետոմսերի 5 /հինգ/ կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

Տնօրենների Խորհրդի որոշումներն ընդունվում են Կանոնադրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: Տնօրենների Խորհրդի նիստերում՝ հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ քվեարկության միջոցով: Հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո հրավիրված առաջին նիստում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ այլ նիստերում, քննարկվում են Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության՝ Բանկի կարգերը և այլ ներքին իրավական ակտերը: Տնօրենների Խորհրդի նիստ պետք է գումարվի Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից տրված հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև Բանկի ներքին աուդիտի արտահերթ հաշվետվությունը քննարկելու նպատակով՝ դրա կամ դրանց ներկայացումից 10 /տասը/ օրվա ընթացքում: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման հերթական հաշվետվությունները, Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները Տնօրենների Խորհրդի կողմից քննարկվում են դրանց ներկայացմանը հաջորդող նիստերում:

Տնօրենների Խորհրդի նիստերը կարող են գումարվել և որոշումներն ընդունվել առկա կամ հեռակա կարգով, Բանկի կողմից ընդունելի կապի միջոցներով:

7.2.10. Տնօրենների Խորհուրդը համարվում է իրավասու (քվորում ունի), եթե նրա աշխատանքին մասնակցում է Տնօրենների Խորհրդի անդամների մեծամասնությունը:

Եթե Տնօրենների Խորհրդի անդամների քանակը նվազում է Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն սահմանված քանակական կազմի կեսից և/կամ օրենքով սահմանված նվազագույն քանակից, Բանկը պետք է Տնօրենների Խորհրդում թափուր մնացած տեղերը լրացնելու կամ Տնօրենների Խորհրդի քանակական կազմը նվազեցնելու նպատակով հրավիրի արտահերթ Ընդհանուր Ժողով, որի մասին որոշումը կայացնում է Տնօրենների Խորհուրդը՝ մնացած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.2.11. Տնօրենների Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Տնօրենների Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ կամ Կանոնադրությամբ այլ բան չի պահանջվում: Քվեարկության ժամանակ Տնօրենների Խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայն:

7.2.12. Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Տնօրենների Խորհրդի մեկ անդամից մյուսին կամ այլ անձի չի թույլատրվում:

7.2.13. Տնօրենների Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենը մասնակցում է Տնօրենների Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

7.2.14. Տնօրենների Խորհուրդի նիստի հրավիրման ժամկետները և տեղը որոշում է Տնօրենների Խորհրդի նախագահը:

7.2.15. Տնօրենների Խորհրդի նախագահը Տնօրենների Խորհրդի հրավիրման տեղի և ժամկետի մասին առկա կապի միջոցներով տեղյակ է պահում Տնօրենների Խորհրդի անդամներին:

7.2.16. Եթե Տնօրենների Խորհրդի նախագահը գտնում է, որ բացառապես Տնօրենների Խորհրդի իրավասությանն ենթակա քննարկվելիք հարցի առնչությամբ Տնօրենների Խորհրդի անդամների համատեղ ներկայությամբ նիստի հրավիրման անհրաժեշտություն չկա, ապա այն քննարկվում է հեռակա կարգով:

7.2.17. Տնօրենների Խորհրդի նիստերը արձանագրվում են թղթային և/կամ էլեկտրոնային եղանակներով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա /տասնօրյա/ ժամկետում: Արձանագրությունը պետք է պարունակի ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր տեղեկությունները:

Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար: Ընդ որում, Տնօրենների Խորհրդի նախագահի, անդամների և քարտուղարի ստորագրությունները արձանագրությունների, քվեաթերթիկների, որոշումների և այլ նյութերի վրա կարող են դրվել էլեկտրոնային եղանակով:

Տնօրենների Խորհրդի նիստերը վարում է Տնօրենների Խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Տնօրենների Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.2.18. Տնօրենների Խորհրդի որոշումներն իրավաբանական ուժ կունենան, եթե պահպանվել են ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով և Բաժնետերերի պայմանագրով նախատեսված պահանջները:

7.3. ԲԱՆԿԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ–ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

7.3.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Տնօրինությունն ու Տնօրինության Նախագահ-Գլխավոր տնօրենը /այսուհետ՝ Գլխավոր տնօրեն/:

7.3.2. Տնօրինության և Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և/կամ Ընդհանուր Ժողովի որոշմամբ Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

7.3.3. Տնօրինության քանակական կազմը սահմանվում է Տնօրենների Խորհրդի կողմից:

7.3.4. Գլխավոր տնօրենին նշանակում է Տնօրենների Խորհուրդը: Տնօրինության անդամները նշանակվում են Տնօրենների Խորհրդի կողմից՝ Գլխավոր տնօրենի ներկայացմամբ:

7.3.5. Տնօրինության կազմի մեջ են մտնում Գլխավոր տնօրենը, Տնօրինության անդամները /այդ թվում՝ Գլխավոր տնօրենի տեղակալը և Գլխավոր հաշվապահը/: Նշված անձինք հանդիսանում են Բանկի ղեկավարներ և իրենց լիազորությունները կարող են իրականացնել միայն որակավորման ու մասնագիտական համապատասխանության վկայականի առկայության դեպքում: Առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականի Բանկի ղեկավար աշխատելու պայմաններն ու ժամկետները սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով:

7.3.6. Տնօրինությունն իրականացնում է իր գործունեությունը նիստերի միջոցով, որոնք ենթակա են հրավիրման ամիսն առնվազն մեկ անգամ:

7.3.7. Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման, որոշումների ընդունման կարգը:

7.3.8. Տնօրինության նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Գլխավոր տնօրենը և Տնօրինության անդամների մեծամասնությունը: Տնօրինության կողմից որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ Տնօրինության գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի: Ձայների հավասարության դեպքում Գլխավոր տնօրենի ձայնն որոշիչ է:

7.3.9. Գլխավոր տնօրենի, Տնօրինության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով և Բանկի ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված պայմանագրով: Գլխավոր տնօրենի հետ Բանկի անունից պայմանագիրը ստորագրում է Տնօրենների Խորհրդի նախագահը կամ Տնօրենների Խորհրդի կողմից լիազորված Խորհրդի անդամը, իսկ Տնօրինության անդամների հետ Գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրենը, Տնօրինության անդամներն այլ կազմակերպություններում, անկախ դրանց բնույթից, կարող են պաշտոններ զբաղեցնել միայն Տնօրենների Խորհրդի

համաձայնությամբ՝ անկախ նշված գործունեության դիմաց որևէ վարձատրություն ստանալու կամ չստանալու հանգամանքից:

7.3.10. Բանկի Տնօրինության իրավասության մեջ է մտնում.

ա) Տնօրենների Խորհրդի հաստատմանը ներկայացվող Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի նախնական քննարկումն ու նախնական/պայմանական հաստատումը,

բ) Բաժնետերերի ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի հաստատմանն ենթակա Բանկի ներքին իրավական ակտերին նախնական հավանություն տալը, բացառությամբ Կանոնադրության, Բաժնետերերի ժողովի, Տնօրենների Խորհրդի, կից կոմիտեների ու հանձնաժողովների, Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի,

գ) Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների և սակագների սահմանումը,

դ) Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշումների ճիշտ և ժամանակին իրականացման ապահովումը,

ե) Բանկի ակտիվների և պասիվների կառավարման իրականացումը,

զ) Բանկի ընթացիկ, ամենօրյա գործունեությունը կանոնակարգող, օպերատիվ ղեկավարում պահանջող ու նկարագրողական բնույթ կրող ակտերի հաստատումը,

է) Բանկի հրապարակային պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատումը,

ը) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող կամ Տնօրինության իրավասությանը վերապահված վարկավորման պայմանների շեղումով բանկային գործիքների տրամադրման հաստատումը,

թ) Բանկի կողմից ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող գույքի կամ այլ ակտիվների ձեռքբերման կամ վաճառքի գործարքների, ներառյալ՝ փոխկապակցված գործարքների կնքման հաստատումը,

ժ) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից իրականացվող ներդրումների, ներառյալ փոխկապակցված ներդրումների, հաստատումը,

ի) Բանկի կողմից մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման հարցի քննարկումն ու նախնական հավանություն տալը,

իա) Բանկի ներքին և արտաքին աուդիտորների կամ այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների քննարկում և բացահայտված թերությունների մասով Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված միջոցառումների իրականացում,

իբ) Տնօրենների Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում՝ Բանկի աշխատատեղերի հաստատումը,

իգ) Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր տնօրենի իրավասությանը չվերապահված այլ հարցերի լուծումը,

իդ) Բանկի ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարների նշանակումը,

իե) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

7.3.11. Բանկի Գլխավոր տնօրենը.

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ.

բ) ներկայացնում է Բանկն այլ անձանց հետ հարաբերություններում ՀՀ տարածքում և արտերկրում.

գ) գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.

դ) սահմանված կարգով կնքում է աշխատանքային և այլ պայմանագրեր.

ե) Տնօրենների Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Տնօրինության կողմից հավանություն ստացած ներքին իրավական ակտերը.

զ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը.

է) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին, բացառությամբ Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից նշանակվող անձանցից.

ը) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

թ) կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ.

ժ) ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները.

ժա) բացում է բանկային հաշիվներ.

ժբ) կազմակերպում է Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ընդհանուր Ժողովին, Տնօրենների Խորհրդին, Տնօրինությանը և իրավունք չունի Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու.

ժգ) իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի, ներքին վերահսկողության ծառայության իրավասությանը չվերապահված իրավազորությունները.

ժդ) իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Տնօրինության անդամներից մեկին Գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարցը.

ժե) մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները.

ժզ) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

7.3.12. Գլխավոր տնօրենը Տնօրենների Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում Տնօրինության և իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Տնօրենների Խորհրդի կողմից սահմանած կարգով: Նշված կարգով պետք է սահմանվեն առնվազն հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը, վերջիններիս ներկայացման կարգը և դրանցում ներառման ենթակա տեղեկությունների ցանկը:

ՀՈԴՎԱԾ 8. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

8.1. Բանկի ներքին աուդիտն իրականացնում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ «Ներքին աուդիտ») ղեկավարը և անդամները, որոնք նշանակվում են Տնօրենների Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք: Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

8.2. Ներքին աուդիտը Տնօրենների Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.

բ) հսկողություն է իրականացնում Գլխավոր տնօրենի, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Գլխավոր տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Տնօրենների Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

Հերթական հաշվետվությունները ներկայացվում են Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված կարգով, որով պետք է սահմանվեն առնվազն հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը, վերջիններիս ներկայացման կարգը և դրանցում ներառման ենթակա տեղեկությունների ցանկը:

8.3. Ներքին աուդիտի ղեկավարը Տնօրենների Խորհրդի և Գլխավոր տնօրենի քննարկմանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները.

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր տնօրենի կամ Տնօրենների Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Տնօրենների Խորհրդի նախագահին: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.4. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Տնօրենների Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

ՀՈԴՎԱԾ 9. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

9.1. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները Բանկում իրականացնում է Բանկի գլխավոր հաշվապահը (այսուհետ՝ «Գլխավոր հաշվապահ»), որը նշանակվում է Տնօրենների Խորհրդի կողմից՝ Գլխավոր տնօրենի ներկայացմամբ: Գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր Ժողովին, Տնօրենների Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Տնօրենների Խորհրդին և Գլխավոր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Տնօրենների Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

Գլխավոր հաշվապահը լրիվ նյութական պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին

ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությանն, այլ իրավական ակտերին և Կանոնադրությանը համապատասխան:

9.2. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ «Արտաքին աուդիտ»)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Արտաքին աուդիտին ընտրում է Ընդհանուր Ժողովը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Տնօրենների Խորհուրդը:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն Արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 /հինգ/ տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով: Այդ դեպքում Արտաքին աուդիտին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում և մատուցված ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող մասնակիցները, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն Ընդհանուր Ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար: Արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել Տնօրենների Խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

Բանկն Արտաքին աուդիտի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում: Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

Բանկում աուդիտ իրականացնելու ընթացքում արտաքին աուդիտի կողմից Բանկի ֆինանսական վիճակն իր կարծիքով էականորեն վատթարացնող փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել ՀՀ կենտրոնական բանկին:

Արտաքին աուդիտի եզրակացությունը ՀՀ կենտրոնական բանկին է ներկայացվում մինչեւ տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

ՀՀ կենտրոնական բանկի պահանջով Արտաքին աուդիտը պարտավոր է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել Բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, անգամ եթե դրանք առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմեն: Սույն մասով սահմանված պարտավորությունների չկատարման համար աուդիտորական կազմակերպությունը կրում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

9.3. Բանկի ֆինանսական տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը Բանկում տարվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Բանկի գործունեության արդյունքներն արտացոլվում են ամսական, եռամսյակային և տարեկան հաշվեկշիռներում, շահույթի և վնասների վերաբերյալ հաշվետվություններում, ինչպես նաև տարեկան հաշվետվության մեջ:

9.4. Բանկը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո չորսամսյա ժամկետում հրապարակել աուդիտի եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

Բանկը պարտավոր է հրապարակել իր եռամսյակային ֆինանսական

հաշվետվությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

ՀՈԴՎԱԾ 10. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Բանկի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է Կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 11. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Կանոնադրությունը կազմված է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով և հաստատված է (ներառյալ փոփոխությունները, լրացումները) ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

Կանոնադրության (ներառյալ փոփոխությունների, լրացումների) էլեկտրոնային տարբերակը ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված Կանոնադրությունը (դրանց փոփոխությունները, լրացումները) տրամադրվում են Բանկին էլեկտրոնային տարբերակով, միաժամանակ ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրանք տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 5

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն 6
2. Պատրաստման հիմունքներ 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 10
4. Զուտ տոկոսային եկամուտ 24
5. Միջնորդավճարների գծով եկամուտ 24
6. Միջնորդավճարների գծով ծախս 24
7. Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից 24
8. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ 25
9. Այլ գործառնական եկամուտ 25
10. Այլ գործառնական ծախսեր 25
11. Արժեզրկումից կորուստներ 25
12. Այլ ընդհանուր վարչական ծախսեր 26
13. Շահութահարկի գծով ծախս 26
14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 28
15. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ 28
16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ 29
17. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ 31
18. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ 31
19. Հաճախորդներին տրված վարկեր 32
20. Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ 41
21. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ 41
22. Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ 42
23. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ 43
24. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 43
25. Այլ ակտիվներ 44
26. Բանկերի ավանդներ և մնացորդներ 45
27. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ 45
28. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ 46
29. Այլ ներգրավված միջոցներ և ստորադաս փոխառություններ 47
30. Այլ պարտավորություններ 48
31. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ 48
32. Ռիսկերի կառավարում 49
33. Կապիտալի կառավարում 65
34. Վարկային պարտավորվածություններ 66
35. Գործառնական վարձակալություն 67
36. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 67
37. Գործարքներ կապակցված կողմերի հետ 68
38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում 70

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետերերին և Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել« Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը հիմնված են աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար

EY
Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝ ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2013թ.-ի հուլիսի 31-ին տրված լիազորագրի հիման վրա)

Էրիկ Հայրապետյան

2016թ. մարտի 24

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	*2015* *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Տոկոսային եկամուտ	4	35,733,246	27,711,993
Տոկոսային ծախս	4	(20,979,260)	(13,086,733)
Զուտ տոկոսային եկամուտ		**14,753,986**	**14,625,260**
Միջնորդավճարների գծով եկամուտ	5	2,549,890	2,306,764
Միջնորդավճարների գծով ծախս	6	(487,001)	(431,643)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		**2,062,889**	**1,875,121**
Իրական արժեքով ՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ վնաս	7	(1,632,803)	(4,592,239)
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	8	4,294,233	7,596,530
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		4,975	177,614
Այլ գործառնական եկամուտ	2(գ),9	2,889,073	1,375,207
Այլ գործառնական ծախսեր	2(գ),10	(1,281,982)	(1,004,200)
Գործառնական եկամուտ		**21,090,371**	**20,053,293**
Արժեզրկումից կորուստներ	11	(6,155,514)	(1,731,323)
Անձնակազմի գծով ծախսեր		(5,744,675)	(6,011,844)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	(3,167,044)	(3,284,221)
Շահույթ մինչև շահութահարկ		**6,023,138**	**9,025,905**
Շահութահարկի գծով ծախս	13	(1,208,036)	(1,877,035)
Հաշվետու տարվա շահույթ		**4,815,102**	**7,148,870**
Այլ համապարփակ վնաս հարկումից հետո			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
-Իրական արժեքի զուտ փոփոխություն		(143,765)	(509,682)
-Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(4,975)	(177,614)
-Շահութահարկի ազդեցություն		29,746	137,459
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**(118,994)**	**(549,837)**
Այլ համապարփակ վնաս հարկումից հետո		**(118,994)**	**(549,837)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**4,696,108**	**6,599,033**

6-ից 73-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են ղեկավարության կողմից 2016թ. մարտի 24-ին և ստորագրվել են նրանց անունից՝

Տնօրինության նախագահ – Գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյան

Գլխավոր հաշվապահ Գոհար Խաչատրյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Տան.	*2015 հազ. դրամ*	*2014 հազ. դրամ*
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	142,713,317	68,115,676
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	15	465,303	–
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	16	4,963,052	518,781
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	16	5,315,549	7,092,783
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	17	8,172,675	1,157,853
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	18	5,980,477	1,526,358
Հաճախորդներին տրված վարկեր	19	305,613,716	278,808,949
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	20	8,730,005	14,216,567
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	21	2,099,464	2,852,570
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	22	5,447,954	4,481,019
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող	23	4,673,844	920,668
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	23	14,896,861	14,114,862
Վաճառքի համար պահվող ակտիվներ		–	420,928
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	24	3,195,703	2,830,644
Ընթացիկ հարկային ակտիվներ		1,090,585	–
Հետաձգված հարկային ակտիվներ	13	–	142,617
Այլ ակտիվներ	25	2,515,183	2,543,863
Ընդամենը ակտիվներ		**515,873,688**	**399,744,138**
Պարտավորություններ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	15	582,560	673,732
Բանկերի ավանդներ և մնացորդներ	26	21,214,531	30,204,324
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	27	19,004,763	21,301,407
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	28	294,012,140	208,696,931
Այլ փոխառություններ	29	78,383,861	77,625,847
Ստորադաս փոխառություններ	29	39,721,324	15,380,080
Ընթացիկ հարկային պարտավորություններ		–	685,795
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	479,244	–
Այլ պարտավորություններ	30	3,158,103	2,821,256
Ընդամենը պարտավորություններ		**456,556,526**	**357,389,372**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	31	32,087,360	25,447,680
Էմիսիոն եկամուտ		7,755,179	28,571
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		(251,309)	(132,315)
Չբաշխված շահույթ		19,725,932	17,010,830
Ընդամենը կապիտալ		**59,317,162**	**42,354,766**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**515,873,688**	**399,744,138**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	*2015 հազ. դրամ*	*2014 հազ. դրամ*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ	2(գ)	33,244,747	25,907,699
Վճարված տոկոսներ		(20,095,082)	(11,133,566)
Ստացված միջնորդավճարներ		2,549,890	2,307,052
Վճարված միջնորդավճարներ		(487,001)	(431,643)
Զուտ մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		301,737	912,281
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		2,465,955	2,344,808
Ելքեր այլ գործառնական ծախսերի գծով	2(գ)	(1,281,982)	(1,004,200)
Մուտքեր այլ գործառնական եկամտի գծով	2(գ)	2,674,847	1,409,054
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(5,740,169)	(5,110,592)
Ելքեր այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով		(2,411,669)	(2,554,065)
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		(462,216)	(4,350,621)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		(6,978,728)	4,128,484
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(4,439,653)	6,889,382
Հաճախորդներին տրված վարկեր		(25,590,770)	(77,290,901)
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ		3,834,214	(4,060,959)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		986,315	448,168
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ		(1,067,257)	(649,666)
Այլ ակտիվներ		(196,398)	(236,308)
Գործառնական պարտավորությունների ավելացում /(նվազում)			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		(2,032,902)	346,654
Բանկերի ավանդներ և մնացորդներ		(8,602,708)	7,491,140
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		(2,278,094)	4,934,599
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		84,275,500	22,898,046
Այլ պարտավորություններ		352,964	(1,221,592)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից (մինչև շահութահարկը)		**49,021,540**	**(28,026,746)**
Վճարված շահութահարկ		(2,350,000)	(1,865,632)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		**46,671,540**	**(29,892,378)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ		(1,120,887)	(696,832)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		4,055	707
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերումներ	2(գ)	(15,360,466)	(12,790,254)
Մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	2(գ)	14,490,964	11,842,125
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերումներ		(9,819,025)	(9,826,986)
Մուտքեր մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից		3,647,400	2,288,148
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		**(8,157,959)**	**(9,183,092)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվություններին բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(շարունակություն)

	Ծան.	2015 հազ. դրամ	2014 հազ. դրամ
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		14,366,288	–
Վճարված շահաբաժիններ		(2,100,000)	(2,950,000)
Ստացված ստորադաս փոխառություններ		24,081,500	8,139,600
Մուտքեր այլ փոխառություններից		41,496,387	23,234,764
Այլ փոխառությունների մարում		(42,363,568)	(19,789,715)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված ֆինանսավորման գործունեությունից		**35,480,607**	**8,634,649**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)		**73,994,188**	**(30,440,821)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		603,453	(259,195)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		**68,115,676**	**98,815,692**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	14	**142,713,317**	**68,115,676**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվություններին բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2015 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազ. դրամ)	*Տան.*	*Կանոնադրական կապիտալ*	*Էմիսիոն եկամուտ*	*Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը կապիտալ*
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1		25,447,680	28,571	417,522	12,811,960	**38,705,733**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Հաշվետու տարվա շահույթ		–	–	–	7,148,870	**7,148,870**
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	(549,837)	–	**(549,837)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		–	–	(549,837)	7,148,870	**6,599,033**
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Հայտարարված շահաբաժիններ		–	–	–	(2,950,000)	**(2,950,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ		–	–	–	(2,950,000)	**(2,950,000)**
Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		25,447,680	28,571	(132,315)	17,010,830	**42,354,766**
Մնացորդն առ 2015թ. հունվարի 1		25,447,680	28,571	(132,315)	17,010,830	**42,354,766**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Հաշվետու տարվա շահույթ		–	–	–	4,815,102	**4,815,102**
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	(118,994)	–	**(118,994)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		–	–	(118,994)	4,815,102	**4,696,108**
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Թողարկված բաժնետոմսեր		6,639,680	7,726,608	–	–	**14,366,288**
Հայտարարված շահաբաժիններ	31	–	–	–	(2,100,000)	**(2,100,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ		6,639,680	7,726,608	–	(2,100,000)	**12,266,288**
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		32,087,360	7,755,179	(251,309)	19,725,932	**59,317,162**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվություններին բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) (այսուհետ «Բանկ») հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը: 2015թ.-ի դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (այսուհետ՝ «ՎԶԵԲ») ամբողջովին գնեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը 14,366,288 հազար ՀՀ դրամով:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են «Ամերիա Գրուպ»-ը (Սի-Ուայ) և «ՎԶԵԲ»-ը, որոնց համապատասխանաբար պատկանում է Բանկի 79.3% և 20.7% բաժնետոմսերը: 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի միակ բաժնետերն էր «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ)-ը, որին պատկանում էր Բանկի 100% բաժնետոմսերը:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, դրամավճարային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի տասներկու մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9: Բանկի աշխատողների միջին քանակը 2015թ.-ին 598 է (2014՝ 590):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 37-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

2015թ.-ին Եվրասիական տնտեսական միության, հատկապես Ռուսաստանի ընդհանուր տնտեսական ակտիվությունը թույլ էր: Հայաստանի տնտեսության վրա ազդեցություն է ունեցել դրամական փոխանցումների նվազումը: Այնուամենայնիվ, Հայաստանում գրանցվել է ՀՆԱ-ի աճ, տարվա ընթացքում արտարժույթի տատանումները եղել են չափավոր և ֆինանսական կայունության խնդիրներ չեն գրանցվել:
Թույլ տնտեսական պայմանները հանգեցրեցին Հայաստանի բանկային համակարգում ավելի բարձր վարկերի արժեզրկման պահուստների և ավելի ցածր պորտֆելի աճի:

Ղեկավարության կարծիքով համապատասխան միջոցառումներ են ձեռնարկվում ընթացիկ հանգամանքներում Բանկի կայունության ապահովման համար:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Համեմատական մնացորդների վերահաշվարկներ

2014թ.-ի մնացորդների գծով կատարվել են հետևյալ վերահաշվարկները՝

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		*Նախկինում գրանցված*	*Վերահաշվարկ*	*Ճշգրտված գումար*
Այլ գործառնական եկամուտ	[1]	371,007	1,004,200	1,375,207
Այլ գործառնական ծախսեր	[1]	–	(1,004,200)	(1,004,200)
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից				
Ելքեր այլ գործառնական ծախսերի գծով	[1]	–	(1,004,200)	(1,004,200)
Մուտքեր այլ գործառնական եկամտի գծով	[1]	404,854	1,004,200	1,409,054
Ստացված տոկոսներ	[2]	25,864,025	43,674	25,907,699
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	[2]	(904,455)	904,455	–
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերումներ	[2]	–	(12,790,254)	(12,790,254)
Մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	[2]	–	11,842,125	11,842,125

[1] Բանկը ճշգրտել է Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը 2014թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա համար՝ ներկայացնելով այլ գործառնական եկամուտը և այլ գործառնական ծախսերը, ելքերը գործառնական այլ ծախսերի գծով և մուտքերը այլ գործառնական եկամտի գծով առանձին, համախառն հիմունքով:

[2]Բանկը ճշգրտել է Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը 2014թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա համար՝ ներկայացնելով վաճառքի համար մատչելի ակտիվների ձեռքբերումները և այդ ակտիվներից մուտքերը համախառն հիմունքով և ներդրումային գործունեությունում, և հանելով վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով կուտակված, բայց ոչ ստացված տոկոսները ստացված տոկոսներից:

(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը՝ ներկայացված ՀՀ դրամով, կլորացված է մինչև մոտակա հազար ՀՀ դրամ: 2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2014 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն են համապատասխանաբար 483.75 ՀՀ դրամ և 474.97 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 528.69 ՀՀ դրամ և 577.47 ՀՀ դրամ 1 եվրոի համար:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 19-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր»:

(զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Բանկը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները և ՖՀՄՄԿ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 19 «Սահմանված հատուցումների պլան. Աշխատակիցների ներդրումներ»

ՀՀՄՍ 19-ը պահանջում է, որ կազմակերպությունը հաշվի առնի աշխատակիցների և երրորդ անձանց ներդրումները սահմանված հատուցումների պլանը հաշվառելիս: Երբ ներդրումը կապված է ծառայության մատուցման հետ, այն պետք է վերաբերի տվյալ ժամանակահատվածին՝ որպես բացասական հատուցում: Այս փոփոխությունները հստակեցնում են, որ եթե ներդրման գումարը կախված չէ ծառայության տարիների քանակից, ապա կազմակերպությունը կարող է ծառայության ժամանակաշրջանի ընթացքում ներդրումը բաշխելու փոխարեն՝ այն օգտագործի ծառայության մատուցման ժամանակաշրջանի ծախսի կրճատման համար:

Այս փոփոխությունը չի վերաբերում Բանկին, քանի որ Բանկը չունի սահմանված հատուցումների պլան աշխատողների և երրորդ անձանց ներդրումների հետ կապված:

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից հետո, և Բանկը առաջին անգամ է կիրառել այս փոփոխությունները տվյալ ֆինանսական հաշվետվություններում : Դրանք ներառում են՝

ՖՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ»

Այս բարեփոխումը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է մի շարք հարցեր՝ կապված արդյունավետության և ծառայության պայմանների սահմանումների հետ, մասնավորապես՝

- Կատարողականի պայմանը պետք է պարունակի ծառայության պայման,
- Կատարողականի թիրախին պետք է հասնել, մինչ գործընկերը ծառայություն է մատուցում,
- Կատարողականի թիրախը կարող է վերաբերել կազմակերպության կամ խմբի այլ կազմակերպության գործընթացներին կամ գործունեությանը,
- Կատարողականի պայմանը կարող է լինել շուկայական կամ ոչ շուկայական,
- Եթե գործընկերը, անկախ պատճառներից, իրավունքի առաջացման ժամանակահատվածում հրաժարվում է ծառայություն մատուցելուց, ծառայության պայմանը համարվում է չբավարարված:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և պարզաբանում է, որ բոլոր պայմանական փոխհատուցումները, որոնք դասակարգվել են որպես ձեռնարկատիրական գործունեության միավորումից առաջացող պարտավորություն (կամ ակտիվներ), պետք է հետագայում չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ անկախ այն հանգամանքից, արդյոք դրանք ՖՀՄՍ 9-ի (կամ ՀՀՄՍ 39-ի) շրջանակներում են գտնվում, թե՝ ոչ: Այս փոփոխությունը համապատասխանում է Բանկի ընթացիկ հաշվապահական քաղաքականությանը, և այսպիսով այն չի ազդում Բանկի հաշվապահական քաղաքականության վրա:

ՖՀՄՍ 13 «Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր» փոփոխություններ ՖՀՄՍ 13-ում

ՖՀՄՍ 13-ի փոփոխությունը «Եզրակացության հիմքեր» բաժնում պարզաբանում է, որ կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, առանց հաստատված տոկոսադրույքների, կարելի է չափել հաշիվ-ապրանքագրի գումարով, երբ զեղչման ազդեցությունը էական չէ: Այս փոփոխությունը համապատասխանում է Բանկի ընթացիկ հաշվապահական քաղաքականությանը, և այսպիսով այն չի ազդում Բանկի հաշվապահական քաղաքականության վրա:

ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ»

Փոփոխությունը կիրառվում է հետընթաց և պարզաբանում է, որ կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպությունը (որը մատուցում է առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ) հանդիսանում է կապակցված կողմ և, համապատասխանաբար, պետք է բացահայտվի կապակցված կողմերի բացահայտումներում: Բացի այդ, կազմակերպությունը, որն օգտվում է կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպության ծառայություններից, պետք է բացահայտի կառավարման ծառայությունների գծով ծախսերը: Այս փոփոխությունը չի վերաբերում Բանկին, քանի որ այն չի ստանում որևէ կառավարման ծառայություն այլ անձանցից:

Տարեկան բարեփոխումներ՝ 2011-2013 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից հետո և ակնկալվում է, որ էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա: Դրանք ներառում են՝

ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և հստակեցնում է ՖՀՄՍ 3-ի կարգավորման շրջանակի բացառությունները.

- Բոլոր ձեռնարկատիրական միավորումները, այլ ոչ միայն համատեղ կազմակերպությունները, ՖՀՄՍ 3-ի շրջանակից դուրս են,
- Այս բացառությունը կիրառվում է միայն համատեղ ձեռնարկումների ֆինանսական հաշվետվությունների նպատակներով հաշվապահական հաշվառման համար:

Բանկը չի հանդիսանում համատեղ ձեռնարկում, և հետևաբար այս փոփոխությունը կիրառելի չէ Բանկի համար:

ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց և պարզաբանում է, որ ՖՀՄՍ 13-ում նշված պորտֆելի բացառությունը կարող է կիրառվել ոչ միայն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, այլ նաև ՖՀՄՍ 9-ի (կամ ՀՀՄՍ 39-ի, եթե կիրառելի է) շրջանակներում գտնվող այլ պայմանագրերի համար:

Բանկը չի կիրառում ՖՀՄՍ 13-ում նշված պորտֆելի բացառությունը:

ՀՀՄՍ 40 «Ներդրումային գույք»

ՀՀՄՍ 40 ստանդարտում օժանդակ ծառայությունների նկարագրությունը տարբերում է ներդրումային գույք և սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք (այսինքն՝ հիմնական միջոց) հասկացությունները: Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ որոշելու համար թե արդյոք գործարքը ակտիվի գնում է, թե ձեռնարկատիրական գործունեության միավորում, օգտագործվում է ՖՀՄՍ 3-ը, այլ ոչ թե ՀՀՄՍ 40 ստանդարտի օժանդակ ծառայությունների նկարագիրը: Նախկինում Բանկը հիմնվել է ՖՀՄՍ 3-ի, այլ ոչ ՀՀՄՍ 40-ի վրա, որպեսզի սահմանի արդյոք ձեռքբերումը ակտիվի թե բիզնեսի ձեռքբերում է, հետևաբար այս փոփոխությունը չի ազդում Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

Արդյունավետ ՖՀՄՍ-ի նշանակությունը՝ ՖՀՄՍ 1-ի փոփոխություններ

Փոփոխությունը «Եզրակացության հիմքեր» բաժնում պարզաբանում է, որ կազմակերպությունը կարող է ընտրել կիրառել ներկայիս ստանդարտը կամ նոր ստանդարտը, որը դեռևս պարտադիր չէ, բայց թույլ է տալիս վաղաժամ կիրառություն, այն պայմանով, որ ստանդարտներից ցանկացածը կիրառվում է հետևողականորեն կազմակերպության առաջին՝ ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների մեջ ներկայացված բոլոր ժամանակաշրջանների ընթացքում: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությունն ազդեցություն չունի Բանկի վրա, քանի որ Բանկը հանդիսանում է ՖՀՄՍ-ի ընթացիկ կիրառող:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ Ծանոթագրություն 2-ի (զ) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են Բանկի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքների կատարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերահաշվարկի արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ որակված դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները, և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքը, իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը՝

- ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ, կամ
- ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված է որպես արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից նախատեսվել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները կարող է նախատեսել որպես շահույթի կամ վնասի միջոցով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվների կամ պարտավորությունների ներքին կառավարումը, գնահատումը և ներկայացումը իրականացվում է իրական արժեքի հիմունքով,
- այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը, որը այլապես կառաջանար, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման ժամանակ: Ածանցյալ ֆինանսական գործիքները և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերադասակարգվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը:

Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնք Բանկը.

- մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան վարկային ռիսկի վատթարացումը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ նրանց՝

- որոնց Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ
- որոնց Բանկը դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք բավարարում են վարկերի կամ դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

(ii) Ճանաչում

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:
Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք Բանկը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- վարկեր և դեբիտորական պարտքեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ, գումարած կամ հանած սկզբնական ճանաչված գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման ցանկացած նվազեցում: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն վկայությունը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգմամբ: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով, կամ երբ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկի՝ շուկայական և վարկային ռիսկին ենթակա ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները կառավարվում են շուկայական կամ վարկային ռիսկի զուտ ենթարկվածության սկզբունքով և չափվում են՝ հիմք ընդունելով զուտ երկար դիրքի վաճառքի գինը (կամ այն գինը, որը կվճարվեր զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվների և պարտավորությունների միջև՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի համապատասխան ռիսկերի ճշգրտման հիման վրա:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

(vii) Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի զծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) **Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր**

Հետգնման պայմանագրերով (ռեպո) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի նկատմամբ պարտավորությունը ներառվում է հետգնման գործարքների զծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով (հակադարձ ռեպո) ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի զծով ստացվելիք գումարներ բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առք ու վաճառք իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

(x) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(xi) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(xii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

▸ վարձակալված գույքի բարելավումներ	5-ից 10 տարի
▸ համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր	1-ից 7 տարի
▸ տնտեսական գույք	3-ից 10 տարի
▸ փոխադրամիջոցներ	7 տարի

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման գծով ծախսումներ: Ամորտիզացիան ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

(զ) Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ ակտիվներից և պարտավորություններից բաղկացած օտարման ենթակա խմբերը, որոնց վերականգնումն ակնկալվում է հիմնականում վաճառքի, այլ ոչ՝ շարունակական օգտագործման միջոցով, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ակտիվներ: Անմիջապես նախքան որպես վաճառքի համար պահվող դասակարգումը, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերի բաղադրիչները վերաչափվում են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այնուհետև ակտիվները կամ օտարման ենթակա խմբերը չափվում են հետևյալ արժեքներից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(է) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է արժեզրկված լինել: Նման վկայության առկայության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է որևէ հայտանիշ ֆինանսական ակտիվի արժեզրկման մասին, որը հանդիսանում է սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը: Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ:

(xiii) Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ չկա, ապա Բանկը ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է օբյեկտիվ հայտանիշ, որ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորուստ է տեղի ունեցել, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն, ներառյալ սպասվող դրամական հոսքերը երաշխիքներից և գրավներից, զեղչված վարկի նախնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(է) Արժեզրկում (շարունակություն)

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(xiv) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանց արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի օբյեկտիվ հայտանիշ, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների՝ ներկա շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(xv) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(xvi) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ նվազեցված վաճառքի ծախսերով, ու օգտագործման արժեքից առավելագույնի տարբերություն: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավական կամ կառուցողական պարտականություն և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերակազմավորման գծով պահուստը ճանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերակազմավորման մանրամասն պաշտոնական պլանը, և երբ սկսվում է վերակազմավորումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

(թ) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել սահմանված վճարումներ, փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով ցանկացած կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորության գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորություններ, որոնք Բանկը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին փորձ, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորություններ:

(ժ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(xvii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(ժ) Բաժնետիրական կապիտալ (շարունակություն)

(xviii) Բաժնետիրական կապիտալի հետգնում

Երբ որպես կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված հատուցման գումարը, ներառյալ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, ճանաչվում է որպես կապիտալի նվազում:

(xiv) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(ի) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուդվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(լ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման ամսաթվին:

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

(խ) Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձակալ

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ: Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձատու

Բանկը ճանաչում է վարձակալության գծով դեբիտորական պարտքերը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի ժամանակ ռիսկերը և հատույցները արդյունավետորեն պահվում են վարձակալի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են ծախսեր հավասարաչափ մասհանումների միջոցով վարձակալության ժամկետի ընթացքում և ընդգրկվում այլ գործառնական ծախսերի մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ եկամուտ: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «*Ֆինանսական գործիքներ*» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում*», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Հետընթաց կիրառումը պարտադիր է, բայց համեմատական տեղեկատվությունը պարտադիր չէ: ՖՀՄՍ 9-ի ավելի վաղ տարբերակների (2009, 2010 և 2013) կիրառումը թույլատրելի է, եթե սկզբնական կիրառման ամսաթիվը 2015թ. փետրվարի 1-ից շուտ է: Բանկը կանխատեսում է, որ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները նշանակալի ազդեցություն կունենան իր կապիտալի վրա, սակայն այդ ազդեցության չափը որոշելու համար անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ խելամիտ և օգտակար տեղեկատվությունը՝ ներառյալ հեռանկարային տարրեր:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հրապարակվել է 2014 թվականի մայիսին և հաստատում է նոր, հինգ քայլ պարունակող մոդել, որն օգտագործվելու է հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի հաշվառման համար: Այն եկամուտը, որն առաջացել է վարձակալության պայմանագրերից՝ ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի շրջանակում, ապահովագրական պայմանագրերից՝ ՖՀՄՍ 4 «Ապահովագրական պայմանագրեր» ստանդարտի շրջանակում և ֆինանսական գործիքներից և այլ պայմանագրային իրավունքներից և պարտավորություններից՝ ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. չափումը և ճանաչումը» ստանդարտի շրջանակում (կամ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի շրջանակում՝ ավելի վաղ ընդունման դեպքում), ՖՀՄՍ 15-ի շրջանակից դուրս է և չափվում է համապատասխան ստանդարտների համաձայն:

Համաձայն ՖՀՄՍ 15-ի հասույթը ճանաչվում է հաճախորդին տրամադրված ապրանքների և ծառայությունների դիմաց ակնկալվող փոխհատուցման գումարի չափով: ՖՀՄՍ 15-ի սկզբունքները ապահովում են հասույթի չափման և ճանաչման ավելի կառուցվածքային մոտեցում:

Հասույթի վերաբերյալ նոր ստանդարտը կիրառելի է բոլոր կազմակերպությունների համար և կփոխարինի հասույթի ճանաչման ՖՀՄՍ-ի բոլոր ընթացիկ պահանջներին: Պահանջվում է ամբողջական կամ մասնակի հետընթաց կիրառում 2018թ.-ի հունվարի 1-ից սկսած հաշվետու ժամանակաշրջանների համար (թույլատրվում է նաև վաղաժամ կիրառում): Բանկը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը և պլանավորում է կիրառել նոր ստանդարտը պահանջվող ամսաթվից սկսած:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

2016 թ.-ի հունվարին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 16-ը («*Վարձակալություն*»), որն ուժի մեջ է մտնում 2019թ.-ից սկսած հաշվետու ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 16 –ի շրջանակում առաջարկված վարձակալության հաշվառումը վարձակալի տեսանկյունից մեծամասամբ նման են այն մոտեցումներին, որոնք ներկայումս կիրառվում են ՀՀՄՍ 17-ի շրջանակներում: Վարձակալները հաշվապահական հաշվեկշռում համապատասխանաբար կճանաչեն ակտիվի «օգտագործման իրավունքը» և համապատասխան ֆինանսական պարտավորությունը: Ակտիվը կամորտիզացվի վարձակալության ընթացքում, և ֆինանսական պարտավորությունը կչափվի ամորտիզացված արժեքով: Վարձատուների կողմից հաշվառումը հիմնական մասով մնում է նույնը, ինչը ՀՀՄՍ 17 ստանդարտում: Ներկայումս Բանկը գնահատում է ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխություններ՝ «Մաշվածության և ամորտիզացիայի ընդունված մեթոդների պարզաբանում»

Փոփոխությունները հստակեցնում են ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի այն սկզբունքը, որ հասույթն արտացոլում է գործունեության (որի մի մասն է հանդիսանում օգտագործվող ակտիվը) ընթացքում ձևավորված, այլ ոչ թե ակտիվի օգտագործման ընթացքում սպառվող տնտեսական օգուտները: Արդյունքում՝ առաջացած հասույթի հարաբերությունը ակնկալվող ընդհանուր հասույթին չի կարող օգտագործվել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի համար և եզակի դեպքերում կարող է օգտագործվել ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համար: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Բանկի վրա, քանի որ Բանկը ոչ նյութական ակտիվների նկատմամբ չի կիրառում հասույթի վրա հիմնված մաշվածության հաշվարկի մոտեցումը:

ՀՀՄՍ 27 ստանդարտի փոփոխություններ՝ «Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում»

Փոփոխությունները թույլ կտան, որպեսզի կազմակերպությունները դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկություններում և ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումները առանձին ֆինանսական հաշվետվություններում հաշվառեն բաժնեմասնակցության մեթոդով (equity method): Այն կազմակերպությունները, որոնք արդեն կիրառում են ՖՀՄՍ և պատրաստվում են ընդունել բաժնեմասնակցային մեթոդը, պետք է կիրառեն այն հետընթաց կերպով: Այն կազմակերպությունները, որոնք առաջին անգամ են կիրառում ՖՀՄՍ և որոշում են կիրառել բաժնեմասնակցային մեթոդը, պետք է այն կիրառեն ՖՀՄՍ-ի անցման օրվանից ի վեր: Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016թ. հունվարի 1-ից, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից հետո և ակնկալվում է, որ էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա: Դրանք ներառում են՝

ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»՝ օտարման մեթոդների փոփոխություններ

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ օտարման մեթոդի փոփոխությունը չի հանգեցնի դասակարգման ամսաթվի փոփոխությանը:

Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ». Ծառայությունների մատուցման պայմանագրերի բացահայտումներ

ՖՀՄՍ 7 պահանջում է կազմակերպությունից տրամադրել բացահայտումներ ցանկացած փոխանցված և ամբողջովին ապաճանաչված ակտիվի նկատմամբ շարունակական ներգրավվածության մասին: Խորհրդին հարցրել են, թե արդյոք ծառայությունների մատուցման պայմանագրերը բավարարում են շարունակական ներգրավվածության նպատակով կիրառվող այս բացահայտման պահանջներին: Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հաստատել ֆինանսական ակտիվի մեջ շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և ճշտի շարունակական ներգրավվածության համար անհրաժեշտ բացահայտումների համապատասխանությունը ՖՀՄՍ 7.Բ30 և ՖՀՄՍ 7.42Գ կետերում ներկայացված ցուցումներին: Փոփոխությունը պետք է կիրառվի 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխություններ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ». Միջանկյալ հաշվետվությունների համար հաշվանցման բացահայտումների կիրառելիությունը

2011թ. դեկտեմբերին ՖՀՄՍ 7-ում կատարվել են փոփոխություններ, որպեսզի ավելացվի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման ուղեցույց: ՖՀՄՍ 7-ի փոփոխությունների կիրառման ամսաթվի դրությամբ նշվում է, որ կազմակերպությունը պետք է կիրառի նշված փոփոխությունները տարեկան հաշվետվությունների և նրանց միջանկյալ հաշվետվությունների համար 2013 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: ՀՀՄՍ 34-ը՝ «*Միջանկյալ ֆինասական հաշվետվություններ*», չի անդրադառնում բացահայտման այս պահանջին, և պարզ չէ՝ հարկավոր են արդյոք բացահայտումները համառոտ միջանկյալ հաշվետվությունների համար:

Փոփոխությունը դուրս է մղում «այդ հաշվետու ժամանակաշրջանների միջանկյալ ժամանակաշրջանների ընթացքում» արտահայտությունը՝ պարզաբանելով, որ ՖՀՄՍ 7-ի բացահայտումները պարտադիր չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում: Փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց 2016 թվականի հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

ՀՀՄՍ 19 «Աշխատակիցների հատուցումներ» Տարածաշրջանային շուկայի խնդիրը գեղչման դրույքի վերաբերյալ

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի խորությունը գնահատվում է այն արժույթի հիման վրա, որով պարտավորությունը արտահայտված է, այլ ոչ տվյալ երկրի արժույթի հիման վրա: Այն դեպքերում, երբ բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի համար մասնագիտացված շուկա գոյություն չունի, օգտագործվում են պետական պարտատոմսերի դրույքները:

Այս փոփոխությունը պետք է կիրառվի 2016թ. հունվարի 1-ից սկսած հաշվետու տարիների համար, սակայն վաղ կիրառումը թույլատրելի է:

ՀՀՄՍ 34 «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություն». Տեղեկատվության բացահայտումը միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում

Փոփոխությունը նշում է, որ պահանջված միջանկյալ բացահայտումները պետք է կամ լինեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կամ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պետք է հղում պարունակեն ավելի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող այն փաստաթղթին, որտեղ դրանք կատարվել են (ղեկավարության մեկնաբանություններ կամ ռիսկերի հաշվետվություն): Խորհուրդը նշել է, որ միջանկյալ ֆինանսական հաշվետվության այլ բաղկացուցիչներում ներկայացված տեղեկատվությունը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն ժամանակ և միևնույն պայմաններով, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները: Եթե ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները այլ տեղեկատվությանը նմանօրինակ հասանելիություն չունենան, միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կլինեն ոչ ամբողջական: Փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

4. Զուտ տոկոսային եկամուտ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	30,848,124	23,363,086
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,536,660	1,182,273
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	940,327	764,705
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	818,643	923,406
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	518,646	707,560
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	349,573	282,580
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	270,333	108,342
Այլ	137,962	35,288
	35,420,268	**27,367,240**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	312,978	344,753
	35,733,246	**27,711,993**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	10,822,786	7,669,949
Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ	6,758,802	4,099,492
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	2,122,277	259,924
Ակրեդիտիվների գծով վճարվելիք գումարներ	648,020	657,971
Բանկերի ավանդներ և մնացորդներ	581,942	359,250
Այլ	45,433	40,147
	20,979,260	**13,086,733**
Զուտ տոկոսային եկամուտ	**14,753,986**	**14,625,260**

5. Միջնորդավճարների գծով եկամուտ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,094,801	1,026,049
Կանխիկացման և հաշիվների սպասարկման ծառայություններ	406,670	415,636
Դրամական փոխանցումներ	402,872	406,384
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	357,862	276,437
Բրոկերային ծառայություններ	207,388	119,727
Հաշվարկային գործառնություններ	41,521	25,109
Այլ	38,776	37,422
	2,549,890	**2,306,764**

6. Միջնորդավճարների գծով ծախս

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	289,040	234,327
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	86,114	92,936
Դրամական փոխանցումներ	78,794	65,131
Այլ	33,053	39,249
	487,001	**431,643**

7. Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ վնասը՝ 1,632,803 հազար ՀՀ դրամ գումարով (2014 թ.՝ 4,592,239 հազար ՀՀ դրամ գումարով) ներառում է արտարժույթի և տոկոսադրույքի գծով ածանցյալ գործիքների վերագնահատում, որոնք օգտագործվում են բաց արժութային և տոկոսադրույքների դիրքերը տնտեսապես հեջավորելու համար:

8. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Սփոթ գործարքներից զուտ օգուտ	2,465,955	2,344,808
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից զուտ օգուտ	1,828,278	5,251,722
	4,294,233	**7,596,530**

9. Այլ գործառնական եկամուտ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Տույժերի և տուգանքների գծով եկամուտ	2,709,524	1,298,535
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից զուտ եկամուտ	2,402	587
Այլ եկամուտ	177,147	76,085
	2,889,073	**1,375,207**

10. Այլ գործառնական ծախսեր

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Վճարային համակարգերի գծով ծախսեր	289,747	260,917
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	229,334	184,121
Ծրագրային ապահովման սպասարկում	219,278	201,053
Մոնիթորինգի ծառայություններ	210,682	42,503
Արժեթղթային և բրոքերային գործունեություն	127,737	99,025
Ինկասացիա	50,920	53,825
Տույժերի և տուգանքների գծով ծախսեր	1,022	40,870
Այլ ծախսեր	153,262	121,886
	1,281,982	**1,004,200**

11. Արժեզրկումից կորուստներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Հաճախորդներին տրված վարկեր	4,413,869	1,650,911
Այլ արժեզրկումներ	1,741,645	80,412
	6,155,514	**1,731,323**

Այլ արժեզրկումները ներառում են ակրեդիտիվների, ֆինանսական վարձակալության, ֆակտորինգի և այլ ակտիվների գծով արժեզրկումները:

12. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2015 հազ. դրամ	2014 հազ. դրամ
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	885,110	821,362
Մաշվածություն և ամորտիզացիա	753,211	760,473
Գովազդ և մարքեթինգ	426,588	581,983
Վերանորոգման և պահպանման ծախսեր	211,247	196,411
Բարեգործություն և հովանավորություն	138,614	136,173
Կապի և տեղեկատվական ծառայություններ	92,922	94,608
Ուսուցում և կրթություն	26,823	88,456
Էլեկտրականության և կոմունալ ծախսերի վճարներ	85,183	75,380
Անվտանգության ծառայություն	67,075	58,733
Գործուղման ծախսեր	64,092	47,817
Մասնագիտական ծառայություններ	62,666	77,505
Հարկեր (բացառությամբ աշխատավարձին վերաբերող հարկերի և շահութահարկի)	41,624	28,734
Գրասենյակային ծախսեր	27,905	22,816
Ապահովագրություն	26,092	20,486
Ներկայացուցչական ծախսեր	24,497	24,761
Այլ	233,395	248,523
	3,167,044	**3,284,221**

13. Շահութահարկի գծով ծախս

	2015 հազ. դրամ	2014 հազ. դրամ
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս		
Ընթացիկ հարկային ծախս	556,429	2,048,603
Հետաձգված հարկի գծով ծախս		
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	651,607	(171,568)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**1,208,036**	**1,877,035**

2015թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2014թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համաձայնեցում

	2015 հազ. դրամ	%	2014 հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	**6,023,138**		**9,025,905**	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	1,204,628	20%	1,805,181	20%
Նախորդ տարիների շահութահարկի գումարի ճշգրտում	–		33,024	
Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից և զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից (չհարկվող մաս)	23,338		14,308	
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր	(19,930)		24,522	
	1,208,036		**1,877,035**	

13. Շահութահարկի գծով ծախս (շարունակություն)

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (2014թ.՝ զուտ հետաձգված հարկային ակտիվներ):

Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2015թ. և 2014թ. ընթացքում:

2015 հազ. դրամ	*Մնացորդն առ 2015թ. հունվարի 1*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված*	*Մնացորդն առ 2015թ. դեկտեմբերի 31*
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	32,265	(11,571)	–	20,694
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	33,079	–	29,746	62,825
Այլ ստացվելիք գումարների պահուստներ և այլ պահուստներ	(110,262)	176,008	–	65,746
Հաճախորդներին տրված վարկեր	(237,650)	(772,801)	–	(1,010,351)
Հիմնական միջոցներ	60,865	(46,486)	–	14,379
Այլ ակտիվներ	13,104	–	–	13,104
Այլ պարտավորություններ	351,216	3,143	–	354,359
	142,617	**(651,607)**	**29,746**	**(479,244)**

2014 հազ. դրամ	*Մնացորդն առ 2014թ. հունվարի 1*	*Շահույթում կամ վնասում ճանաչված*	*Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված*	*Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31*
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	46,263	(13,998)	–	32,265
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(104,380)	–	137,459	33,079
Այլ ստացվելիք գումարների պահուստներ և այլ պահուստներ	(137,466)	27,204	–	(110,262)
Հաճախորդներին տրված վարկեր	(205,556)	(32,094)	–	(237,650)
Հիմնական միջոցներ	41,148	19,717	–	60,865
Այլ ակտիվներ	13,107	(3)	–	13,104
Այլ պարտավորություններ	180,474	170,742	–	351,216
	(166,410)	**171,568**	**137,459**	**142,617**

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Կանխիկ միջոցներ	15,843,126	9,566,767
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում՝ ներառյալ պարտադիր պահուստները	105,555,056	50,575,892
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- ԱԱ- -ից ԱԱ+ վարկանիշով	13,047	2,883
- Ա- -ից Ա+ վարկանիշով	14,319,969	6,742,373
- ԲԲ- -ից ԲԲԲ+ վարկանիշով	6,913,069	1,148,984
- վարկանիշ չունեցող	69,050	78,777
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**21,315,135**	**7,973,017**
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**142,713,317**	**68,115,676**

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 2%-ի չափով և արտարժույթով ներգրավված գումարների 20%-ի չափով: Օրենսդրությամբ չի սահմանափակվում այդ միջոցների ելքագրումը, սակայն եթե Բանկը չի ապահովում ՀՀ դրամով ներգրավված գումարների գծով նվազագույն միջին ամսական գումարը և արտարժույթով ներգրավված գումարների գծով նվազագույն երկշաբաթյա գումարը, ապա կարող են կիրառվել պատժամիջոցներ:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում նոստրո հաշիվների մեջ ներառված է պարտադիր պահուստի գումարը՝ 1,590,831 հազար ՀՀ դրամ ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար (2014 թ.՝ 852,538 հազար ՀՀ դրամ) և 53,680,958 հազար ՀՀ դրամ արտարժույթով ներգրավված միջոցների համար (2014 թ.՝ 43,153,758 հազար ՀՀ դրամ):

Բանկերի վերոնշյալ վարկանիշները նշված են ըստ Fitch rating agency-ի վարկանշման:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունի մեկ այլ բանկում դրամական միջոցներ, որի մնացորդը գերազանցում է կապիտալի 10%-ը (2014թ.՝ ոչ մի): Այդ մնացորդի համախառն արժեքը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 7,672,871 հազար ՀՀ դրամ:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում Բանկի մնացորդները գերազանցում են կապիտալի 10%:

15. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Ակտիվներ		
Բանկի կողմից պահվող		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի սվոպեր	465,303	–
	465,303	–
Պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Տոկոսադրույքի սվոպեր	103,468	161,325
Արտարժույթի սվոպեր	476,658	512,245
Այլ պայմանագրեր	2,434	162
	582,560	**673,732**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ:

Տոկոսադրույքի սվոպեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի գումարները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ իրական արժեքը և անվանական գումարը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս՝ դեռևս չմարված պայմանագրերի գծով չիրացված օգուտը և վնասը ճանաչվում է համապատասխանաբար շահույթում կամ վնասում:

15. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

	Իրական արժեք		*Անվանական գումար*	
	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*	*2015 հազ. դրամ*	*2014 հազ. դրամ*
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույքի վճարում, ԱՄՆ դոլարով լողացող տոկոսադրույքի ստացում	(103,468)	(161,325)	10,224,716	13,817,309

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տոկոսադրույքի սվոպի երեք պայմանագիր՝ յուրաքանչյուրը 15,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով: Այս պայմանագրերի համաձայն՝ Բանկը վճարում է 2.1350%, 1.3125% և 0.9450% ֆիքսված տոկոսադրույքներ և ստանում է 6 ամիս USD-LIBOR-BBA (Բրիտանիայի բանկիրների ասոցիացիա) լողացող տոկոսադրույքներ՝ համապատասխանաբար յուրաքանչյուր պայմանագրի համար: Տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի մարման ժամկետը լրանում է 2018թ-ին:

Արտարժույթի սվոպեր

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի արտարժույթի սվոպի 14 (2014թ.՝ 5) պայմանագրեր 4 (2014թ.՝4) գործընկերների հետ ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար արժույթներով: Այս պայմանագրերի անվանական գումարը ՀՀ դրամով արտահայտված կազմում է 56,388,061 հազար ՀՀ դրամ (2014թ.՝12,718,988 հազար ՀՀ դրամ):

16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ պետական արժեթղթեր	704,171	268,753
Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	3,190,731	–
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Միջազգային ֆինանսական հաստատություններ	818,813	104,832
Այլ	142,879	38,738
Բաժնային ներդրումներ		
- Չգնանշվող բաժնային արժեթղթեր	106,458	106,458
	4,963,052	**518,781**
ԿԲ-ի հետ հետգնման պայմանագրերով գրավադրված		
ՀՀ պետական արժեթղթեր	5,315,549	3,578,952
ՀՀ եվրոպարտատոմսեր	–	3,317,063
Միջազգային ֆինանսական հաստատությունների արժեթղթեր	–	196,768
	5,315,549	**7,092,783**

Վաճառքի համար մատչելի ակտիվներում ներառված են ստորև ներկայացվող չգնանշվող բաժնային արժեթղթերը:

Անվանումը	*Գրանցման երկիրը*	*Հիմնական գործունեությունը*	*Վերահսկվող %*		*2015 հազ. դրամ*	*2014 հազ. դրամ*
			2015	*2014*		
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	3.76%	3.76%	36,429	36,429
Արցախ Բանկ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	1.06%	1.06%	69,250	69,250
ՍՎԻՖՏ	Բելգիա	Դրամական փոխանցումներ	0.00%	0.00%	779	779
					106,458	**106,458**

16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

(ա) Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը: Այս ներդրումների համար ակտիվ շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին վկայություն տրամադրել դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, գեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի հետ կապված անորոշությամբ:

(բ) Վաճառքի համար մատչելի ակտիվների վերադասակարգումներ

2015 և 2014 թթ.-ի ընթացքում Բանկը վաճառքի համար մատչելի որոշ ակտիվներ, որոնք վերադասակարգման ամսաթվի դրությամբ, Բանկը մտադրված էր և հնարավորություն ուներ պահել մինչև մարման ժամկետի լրանալը, վերադասակարգել են մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների: Վերադասակարգված ակտիվներն իրենցից ներկայացնում են ՀՀ պետական արժեթղթեր և միջազգային ֆինանսական հաստատությունների արժեթղթեր:

Վերադասակարգումները կատարվել են 2015 և 2014 թթ.-ի ընթացքում վերադասակարգման ամսաթվին գործող իրական արժեքով: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս վերադասակարգման ամսաթվի դրությամբ վերադասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքները և դրանց ամորտիզացված արժեքը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2015 *հազ. դրամ*	*Վերադասակարգման ամսաթվի դրությամբ իրական արժեքը*	*Ամորտիզացված արժեքը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ*
Որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
ՀՀ պետական արժեթղթեր	828,262	809,699
	828,262	**809,699**

2015թ.-ի ընթացքում վերադասակարգված ֆինանսական ակտիվների մարման ժամկետները հետևյալն են՝

	հազ. դրամ
1 տարուց պակաս	14,142
1-5 տարի	350,712
5 տարուց ավել	463,408
	828,262

2014 *հազ. դրամ*	*Վերադասակարգման ամսաթվի դրությամբ իրական արժեքը*	*Ամորտիզացված արժեքը 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ*
Որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
ՀՀ պետական արժեթղթեր	2,262,610	2,208,417
Միջազգային ֆինանսական հաստատությունների պարտատոմսեր	203,212	200,329
	2,465,822	**2,408,746**

16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

(բ) Վաճառքի համար մատչելի ակտիվների վերադասակարգումներ (շարունակություն)

2014թ.-ի ընթացքում վերադասակարգված ֆինանսական ակտիվների մարման ժամկետները հետևյալն են՝

	հազ. դրամ
1 տարուց պակաս	1,068,565
1-5 տարի	1,397,257
	2,465,822

Վերադասակարգված վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի արդյունավետ տոկոսադրույքները տատանվում էին 7.7%-ից մինչև 15.2% սահմաններում և վերադասակարգված մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերի նոր արդյունավետ տոկոսադրույքները տատանվում են 8.6%-ից մինչև 14.3%.սահմաններում:

Բանկը 2015թ.-ի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում վերադասակարգված ակտիվների իրական արժեքների գծով ճանաչել է վնաս 8,837 հազար ՀՀ դրամի չափով (2014 թ.՝ 99,240 հազար ՀՀ դրամ):

Ֆինանսական ակտիվները չվերադասակարգելու դեպքում իրական արժեքի գծով վնասը, որը կճանաչվեր այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, կկազմեր 52,908 հազար ՀՀ դրամ (2014 թ.՝ 75,693 հազար ՀՀ դրամ):

17. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Պահանջներ ՀՀ ԿԲ նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների իրականացման գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ –ում	1,020,000	820,000
Վարկեր և ավանդներ այլ բանկերի հետ		
Հայկական բանկեր	6,939,025	–
ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկեր	162,258	295,220
Օտարերկյա այլ բանկեր	51,392	42,633
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և ավանդներ	**7,152,675**	**337,853**
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	**8,172,675**	**1,157,853**

Բանկերին տրված վարկերը և փոխատվություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկերի և այլ օտարերկրյա բանկերի հետ վարկերի և ավանդների մեջ ներառված 167,068 հազար ՀՀ դրամ (2014 թ.՝ 322,827 հազար ՀՀ դրամ) գումարն իրենից ներկայացնում է ակրեդիտիվների, երաշխիքների և վարկային քարտերի դիմաց գրավադրված ավանդներ:

Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ բանկում տեղաբաշխված միջոցներ (2014 թ.՝ ոչ մի բանկում), որոնց մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը:

18. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Փոքր և միջին հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	5,980,477	1,526,358
	5,980,477	**1,526,358**

18. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

Գրավ

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին կառավարության և ոչ պետական արժեթղթեր 6,332,266 հազար ՀՀ դրամ իրական արժեքով (2014 թ.՝ 1,590,527 հազար ՀՀ դրամ):

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված 1,217,526 հազար ՀՀ դրամ գումարի չափով ակտիվները վերագրավադրվել են հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

19. Հաճախորդներին տրված վարկեր

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Կորպորատիվ վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	216,842,942	179,788,620
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	54,039,424	58,195,133
Ընդամենը կորպորատիվ վարկեր	**270,882,366**	**237,983,753**
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	17,390,325	17,277,164
Վարկային քարտեր	14,694,121	16,367,111
Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր	2,904,684	4,094,804
Սպառողական վարկեր	2,596,287	3,046,377
Անհատներին տրվող բիզնես վարկեր	2,386,816	2,495,719
Այլ	–	278,684
Ընդամենը սպառողական վարկեր	**39,972,233**	**43,559,859**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**310,854,599**	**281,543,612**
Արժեզրկման գծով պահուստ	(5,240,883)	(2,734,663)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**305,613,716**	**278,808,949**

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը:

	Չարժեզրկված և ոչ ժամկետանց					
հազ. դրամ	*Բարձր վարկանիշ 2015*	*Ստանդարտ վարկանիշ 2015*	*Ստանդարտից ցածր վարկանիշ 2015*	*ժամկետանց, բայց չարժեզրկված 2015*	*Անհատապես արժեզրկված 2015*	*Ընդամենը 2015*
Կորպորատիվ հաճախորդներին տրված զուտ վարկեր	45,608,470	203,002,923	–	12,450,923	4,912,877	**265,975,193**

	Չարժեզրկված և ոչ ժամկետանց					
հազ. դրամ	*Բարձր վարկանիշ 2014*	*Ստանդարտ վարկանիշ 2014*	*Ստանդարտից ցածր վարկանիշ 2014*	*ժամկետանց, բայց չարժեզրկված 2014*	*Անհատապես արժեզրկված 2014*	*Ընդամենը 2014*
Կորպորատիվ հաճախորդներին տրված զուտ վարկեր	32,826,034	196,085,992	–	5,163,171	1,684,533	**235,759,730**

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կորպորատիվ վարկերը ներառում են 27,736,978 հազար ՀՀ դրամի չափով կապակցված կողմին տրամադրված վարկ, որն ապահովված է 28,081,049 հազար ՀՀ դրամի չափով ավանդով:

Ստորև ներկայացված է 2015թ. ընթացքում արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների:

	Կորպորատիվ վարկեր հազ. դրամ	*Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր հազ. դրամ*	*Ընդամենը հազ. դրամ*
Մնացորդը հաշվետու տարվա սկզբին	2,224,023	510,640	**2,734,663**
Զուտ ծախս	4,195,925	217,944	**4,413,869**
Նախկինում դուրս գրված վարկերի վերականգնում	806,847	197,689	**1,004,536**
Դուրսգրումներ	(2,158,436)	(592,563)	**(2,750,999)**
Վարկերի օտարում	(161,186)	–	**(161,186)**
Մնացորդը հաշվետու տարվա վերջին	**4,907,173**	**333,710**	**5,240,883**

Ստորև ներկայացված է 2014թ. ընթացքում արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների:

	Կորպորատիվ վարկեր հազ. դրամ	*Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր հազ. դրամ*	*Ընդամենը հազ. դրամ*
Մնացորդը հաշվետու տարվա սկզբին	1,178,551	207,959	**1,386,510**
Զուտ ծախս	1,140,671	510,240	**1,650,911**
Նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ	94,574	405,891	**500,465**
Դուրսգրումներ	(189,773)	(613,450)	**(803,223)**
Մնացորդը հաշվետու տարվա վերջին	**2,224,023**	**510,640**	**2,734,663**

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Կորպորատիվ վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	201,993,352	1,636,040	200,357,312	0.81%
- մինչև 30 օր ժամկետանց	4,035,029	40,350	3,994,679	1.00%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**206,028,381**	**1,676,390**	**204,351,991**	**0.81%**
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Չարժեզրկված վարկեր				
-91-180 օր ժամկետանց	1,150,296	11,503	1,138,793	1.00%
-181-270 օր ժամկետանց	108,646	1,086	107,560	1.00%
-270 օրից ավել ժամկետանց	3,963,596	39,636	3,923,960	1.00%
Արժեզրկված վարկեր՝				
- 181-270 օր ժամկետանց	1,428,738	439,599	989,139	30.77%
- 270 օրից ավել ժամկետանց	4,163,285	1,464,683	2,698,602	35.18%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	**10,814,561**	**1,956,507**	**8,858,054**	**18.09%**
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	**216,842,942**	**3,632,897**	**213,210,045**	**1.68%**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	48,692,336	438,255	48,254,081	0.90%
- մինչև 30 օր ժամկետանց	632,931	5,696	627,235	0.90%
- 31-90 օր ժամկետանց	1,605,672	14,451	1,591,221	0.90%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**50,930,939**	**458,402**	**50,472,537**	**0.90%**
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Չարժեզրկված վարկեր՝				
- 91-180 օր ժամկետանց	885,654	7,971	877,683	0.90%
- 181-270 օր ժամկետանց	14,472	130	14,342	0.90%
- 270 օրից ավել ժամկետանց	177,043	1,593	175,450	0.90%
Արժեզրկված վարկեր՝				
- մինչև 30 օր ժամկետանց	210,191	119,388	90,803	56.80%
- 31-90 օր ժամկետանց	103,421	68,671	34,750	66.40%
- 91-180 օր ժամկետանց	500,011	237,226	262,785	47.44%
- 181-270 օր ժամկետանց	152,770	65,697	87,073	43.00%
- 270 օրից ավել ժամկետանց	1,064,923	315,198	749,725	29.60%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	**3,108,485**	**815,874**	**2,292,611**	**26.25%**
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	**54,039,424**	**1,274,276**	**52,765,148**	**2.36%**
Ընդամենը կորպորատիվ վարկեր	**270,882,366**	**4,907,173**	**265,975,193**	**1.81%**
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	16,914,866	33,830	16,881,036	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	110,517	4,432	106,085	4.01%
- 31-90 օր ժամկետանց	50,502	2,025	48,477	4.01%
- 91-180 օր ժամկետանց	257,282	43,490	213,792	16.90%
- 270 օրից ավել ժամկետանց	57,158	10,721	46,437	18.76%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**17,390,325**	**94,498**	**17,295,827**	**0.54%**

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ (շարունակություն)

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	13,187,072	27,246	13,159,826	0.21%
- մինչև 30 օր ժամկետանց	144,801	23,569	121,232	16.28%
- 31-90 օր ժամկետանց	51,646	12,068	39,578	23.37%
- 91-180 օր ժամկետանց	81,472	23,595	57,877	28.96%
- 181-270 օր ժամկետանց	78,719	30,460	48,259	38.69%
- 270 օրից ավել ժամկետանց	1,150,411	50,760	1,099,651	4.41%
Ընդամենը վարկային քարտեր	**14,694,121**	**167,698**	**14,526,423**	**1.14%**
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	2,051,135	34,869	2,016,266	1.70%
- մինչև 30 օր ժամկետանց	328,989	5,593	323,396	1.70%
- 31-90 օր ժամկետանց	2,233	38	2,195	1.70%
-270 օրից ավել ժամկետանց	4,459	766	3,693	17.18%
Ընդամենը բիզնես վարկեր	**2,386,816**	**41,266**	**2,345,550**	**1.73%**
Ավտոմեքենայի վարկեր				
- ոչ ժամկետանց	2,810,826	5,622	2,805,204	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	48,962	98	48,864	0.20%
- 31-90 օր ժամկետանց	19,271	87	19,184	0.45%
- 91-180 օր ժամկետանց	16,470	3,129	13,341	19.00%
- 181-270 օր ժամկետանց	9,155	18	9,137	0.20%
Ընդամենը ավտոմեքենայի վարկեր	**2,904,684**	**8,954**	**2,895,730**	**0.31%**
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	2,467,911	4,936	2,462,975	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	10,071	416	9,655	4.13%
- 31-90 օր ժամկետանց	17,313	1,877	15,436	10.84%
- 91-180 օր ժամկետանց	91,949	12,141	79,808	13.20%
- 181-270 օր ժամկետանց	9,043	1,924	7,119	21.28%
Ընդամենը սպառողական վարկեր	**2,596,287**	**21,294**	**2,574,993**	**0.82%**
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	**39,972,233**	**333,710**	**39,638,523**	**0.83%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**310,854,599**	**5,240,883**	**305,613,716**	**1.69%**

2015թ. դեկտեմբերի 31-ի 270 օրից ավել ժամկետանց վարկային քարտերի գումարը կազմված է արժեզրկման առանձին հայտանիշներով երկու վարկերից, որոնց պահուստը գնահատվել է անհատապես:

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Կորպորատիվ վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	173,503,081	347,006	173,156,075	0.2%
- 30-90 օր ժամկետանց	600,387	1,201	599,186	0.2%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**174,103,468**	**348,207**	**173,755,261**	**0.20%**
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Չարժեզրկված վարկեր				
-270 օրից ավել ժամկետանց	3,255,951	6,512	3,249,439	0.2%
Արժեզրկված վարկեր՝				
- 181-270 օր ժամկետանց	191,645	20,805	170,840	10.9%
- 270 օրից ավել ժամկետանց	2,237,556	1,213,973	1,023,583	54.3%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	**5,685,152**	**1,241,290**	**4,443,862**	**21.83%**
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	**179,788,620**	**1,589,497**	**178,199,123**	**0.9%**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	56,319,236	563,286	55,755,950	1.0%
- մինչև 30 օր ժամկետանց	366,668	3,667	363,001	1.0%
- 31-90 օր ժամկետանց	793,744	7,937	785,807	1.0%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**57,479,648**	**574,890**	**56,904,758**	**1.00%**
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Չարժեզրկված վարկեր՝				
- 91-180 օր ժամկետանց	144,301	1,443	142,858	1.0%
- 181-270 օր ժամկետանց	23,112	231	22,881	1.0%
Արժեզրկված վարկեր՝				
- 31-90 օր ժամկետանց	46,879	4,918	41,961	10.5%
- 91-180 օր ժամկետանց	87,072	9,604	77,468	11.0%
- 181-270 օր ժամկետանց	414,121	43,440	370,681	10.5%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	**715,485**	**59,636**	**655,849**	**8.3%**
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	**58,195,133**	**634,526**	**57,560,607**	**1.1%**
Ընդամենը կորպորատիվ վարկեր	**237,983,753**	**2,224,023**	**235,759,730**	**0.9%**
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	17,016,614	340,332	16,676,282	2.0%
- մինչև 30 օր ժամկետանց	127,398	2,548	124,850	2.0%
- 31-90 օր ժամկետանց	7,897	158	7,739	2.0%
- 91-180 օր ժամկետանց	59,768	1,816	57,952	3.0%
- 181-270 օր ժամկետանց	65,487	1,310	64,177	2.0%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**17,277,164**	**346,164**	**16,931,000**	**2.0%**
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	16,075,061	32,150	16,042,911	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	60,980	12,259	48,721	20.1%
- 31-90 օր ժամկետանց	130,120	67,162	62,958	51.6%
- 91-180 օր ժամկետանց	14,868	10,113	4,755	68.0%

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ (շարունակություն)

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
- 181-270 օր ժամկետանց	86,082	20,246	65,836	23.5%
Ընդամենը վարկային քարտեր	**16,367,111**	**141,930**	**16,225,181**	**0.9%**
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	2,495,719	4,991	2,490,728	0.2%
Ընդամենը բիզնես վարկեր	**2,495,719**	**4,991**	**2,490,728**	**0.2%**
Ավտոմեքենայի վարկեր				
- ոչ ժամկետանց	4,074,131	8,148	4,065,983	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	13,306	27	13,279	0.2%
- 31-90 օր ժամկետանց	3,615	7	3,608	0.2%
- 181-270 օր ժամկետանց	3,752	8	3,744	0.2%
Ընդամենը ավտոմեքենայի վարկեր	**4,094,804**	**8,190**	**4,086,614**	**0.2%**
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	3,015,983	6,032	3,009,951	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	3,010	109	2,901	3.6%
- 31-90 օր ժամկետանց	9,922	2,631	7,291	26.5%
- 91-180 օր ժամկետանց	17,462	35	17,427	0.2%
Ընդամենը սպառողական վարկեր	**3,046,377**	**8,807**	**3,037,570**	**0.3%**
Սպառողական այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	276,371	553	275,818	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	1,816	4	1,812	0.2%
- 31-90 օր ժամկետանց	497	1	496	0.2%
Ընդամենը այլ սպառողական վարկեր	**278,684**	**558**	**278,126**	**0.2%**
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	**43,559,859**	**510,640**	**43,049,219**	**1.2%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**281,543,612**	**2,734,663**	**278,808,949**	**1.0%**

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրությունները և դատողությունները

(i) Կորպորատիվ վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է արժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ:

Կորպորատիվ վարկերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի գործունեության շուկաներում:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս Բանկը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրությունները և դատողությունները (շարունակություն)

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- խոշոր, փոքր և միջին ընկերություններին տրված աշխատող վարկերի համար պատմական կորստի գործակից է կիրառվում
- Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է հետևյալ ենթադրությունների հիման վրա՝
  1) Կիրառվում է 20% և 30% զեղչ գրավի գնահատված արժեքի նկատմամբ:
  2) Գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12 ամսով:

(ii) Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր

Մանրածախ հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումը գնահատելիս Բանկը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Մանրածախ հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով՝

- Կորստի միգրացիայի դրույքները գնահատվում են վերջին 24 ամիսների ընթացքում կրած կորստի միգրացիայի մոդելի հիման վրա: Կորստի միգրացիայի դրույքները կիրառվում են հիփոթեքային վարկերի, վարկային քարտերի, ավտոմեքենայի և սպառողական վարկերի համար:
- Պատմական կորստի տարեկան դրույքը գնահատվում է վարկերի դուրսգրումների վիճակագրության հիման վրա և կիրառվում է ֆիզիկական անձանց տրված աշխատող բիզնես վարկերի համար:

2015թ.-ին հիփոթեքային վարկերի պահուստի գնահատման մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Այդ վարկերի համար կիրառվել է Կորստի միգրացիայի դրույք (2014 թ.՝ պատմական կորստի դրույք): Այս փոփոխության հետևանքով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում 11,042 հազար ՀՀ դրամ գումարի չափով արժեզրկման գծով ձևավորված պահուստը վերականգնվել է:

Անհատապես արժեզրկված վարկեր

Անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար կազմել է 180,103 հազար ՀՀ դրամ (2014՝ 149,223 հազար ՀՀ դրամ):

(գ) Գրավի վերլուծություն

(iii) Կորպորատիվ վարկեր

Կորպորատիվ վարկերը ենթակա են անհատական հիմունքով վարկային գնահատման և արժեզրկման ստուգման: Կորպորատիվ հաճախորդի վարկունակությունը նրան տրամադրված վարկի վարկային ռիսկի չափը բնութագրող ամենակարևոր ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը լրացուցիչ ապահովվածություն է, և Բանկը, որպես կանոն, գրավ է պահանջում կորպորատիվ հաճախորդներից:

Ձեռքբերված գրավի հիմնական տեսակները հետևյալն են՝

- Արժեթղթային վարկերի և հակադարձ հետգնման գործարքների համար՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր;
- Առևտրային վարկերի համար՝ անշարժ գույքի, պաշարների, դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների գրավադրում
- Մանրածախ վարկավորման համար՝ անշարժ գույքի գրավադրում:

Բանկը նաև ձեռք է բերում երաշխիքներ մայր ընկերություններից՝ նրանց դուստր ընկերություններին վարկեր տրամադրելու համար:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին, պահանջում լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն, և հետևում է ձեռքբերված գրավի շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(գ) Գրավի վերլուծություն (շարունակություն)

Բանկի կողմից պահվող՝ արժեզրկման առանձին հայտանիշներով վարկերի գծով գրավների իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 13,093,769 հազար ՀՀ դրամ (2014՝ 9,104,418 հազար ՀՀ դրամ):

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը առավելապես կախված է վարկառուների վարկունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և պարտադիր չէ, որ Բանկը թարմացնի գրավի գնահատումը բոլոր հաշվետու ժամանակաշրջանների դրությամբ:

(iv) **Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր**

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ:

Որպես գրավով ապահովված և վարկային քարտերով տրամադրված օվերդրաֆտների ապահովվածություն հիմնականում հանդես են գալիս անշարժ գույքը և ավտոմեքենաները: Վարկային քարտերով տրված այլ օվերդրաֆտների համար ապահովվածության միջոց է հանդիսանում աշխատավարձը: Բիզնես վարկերի համար որպես ապահովության միջոց են ծառայում անշարժ գույքը և կորպորատիվ բաժնետոմսերը: Ավտոմեքենաների վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերը ապահովված են եղել անշարժ գույքով, շարժական գույքով, աշխատավարձով, դրամական միջոցներով և երաշխիքներով: Անհատներին տրված այլ վարկերը հիմնականում ապահովված են ոսկու գրավով:

(v) **Բռնագանձված գրավ**

2015թ.-ի ընթացքում Բանկը ձեռք է բերել որոշակի ակտիվներ՝ իրավաբանական անձանց տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով՝ 283,425 հազար ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով (2014թ.-ին՝ 420,169 հազար ՀՀ դրամ): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավն իրենից ներկայացնում է անշարժ գույք և դասակարգվում է որպես այլ ակտիվ:

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս կարճ ժամկետներում:

19. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

(դ) Վարկային պորտֆելի վերլուծություն՝ ըստ աշխարհագրական և տնտեսության ճյուղերի պատկանելության

Վարկերը տրամադրվել են հիմնականում իրենց գործունեությունը տնտեսության հետևյալ ճյուղերում ծավալած հաճախորդներին՝

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Անշարժ գույք	42,133,471	11,276,420
Մեծածախ առևտուր	36,447,087	40,058,797
Էլեկտրաէներգիայի արտադրություն	30,454,541	19,286,065
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	20,659,055	18,950,113
Սննդի և խմիչքի արտադրություն	18,954,719	23,325,577
Շինարարություն	18,813,972	20,161,498
Կապի ծառայություններ	17,245,195	4,477,959
Հանքարդյունաբերություն/մետալուրգիա	17,102,521	17,666,644
Մանրածախ առևտուր	16,816,434	18,133,476
Հյուրանոցային սպասարկման ոլորտ	11,643,854	11,830,145
Տրանսպորտ	11,135,143	8,972,125
Արդյունաբերություն	9,027,795	9,348,465
Ֆինանսներ և ներդրումներ	5,802,627	19,408,474
Մունիցիպալ մարմիններ	2,597,393	4,992,968
Այլ	12,048,559	10,095,027
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	39,972,233	43,559,859
	310,854,599	**281,543,612**
Արժեզրկման զծով պահուստ	(5,240,883)	(2,734,663)
	305,613,716	**278,808,949**

Բանկի՝ կորպորատիվ վարկերի (զուտ վարկեր) աշխարհագրական կենտրոնացվածությունը բերված է հետևյալ աղյուսակում՝

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Հայաստան	217,645,811	201,255,671
ՏՀՋԿ և ԵՄ	41,995,136	17,565,034
Այլ երկրներ	6,334,246	16,939,025
	265,975,193	**235,759,730**

(ե) Խոշոր վարկեր

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի վեց վարկառու կամ վարկառուների կապակցված խմբեր (2014թ.-ին՝ ինը), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 49,681,996 հազար ՀՀ դրամ (2014թ.-ին՝ 49,368,323 հազար ՀՀ դրամ):

(զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև վարկային պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

20. Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ բանկերից	1,226,469	–
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ այլ կազմակերպություններից	8,749,959	14,245,057
Արժեզրկման գծով պահուստ	(1,246,423)	(28,490)
	8,730,005	**14,216,567**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի ոչ մի հաճախորդ (2014թ.-ին՝ մեկ հաճախորդ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմել է 5,280,350 հազար ՀՀ դրամ:

2015թ.-ին և 2014թ.-ին արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	28,490	–
Զուտ ծախս	1,217,933	28,490
Դուրսգրումներ	–	–
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	**1,246,423**	**28,490**

21. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում		
Մինչև մեկ տարի ժամկետով	761,401	1,041,372
Մեկից հինգ տարի ժամկետով	1,745,003	2,347,890
Հինգ տարուց ավել ժամկետով	51,309	134,391
	2,557,713	**3,523,653**
Չվաստակած ֆինանսական եկամուտ	(416,240)	(665,366)
Արժեզրկման գծով պահուստ	(42,009)	(5,717)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**2,099,464**	**2,852,570**
Ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումները ներառում են՝		
Մինչև մեկ տարի ժամկետով	699,033	967,290
Մեկից հինգ տարի ժամկետով	1,366,503	1,797,278
Հինգ տարուց ավել ժամկետով	33,928	88,002
	2,099,464	**2,852,570**

(ա) Ֆինանսական վարձակալության որակական վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ապահովում է տեղեկություն 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության որակական վերլուծության մասին՝

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Ֆինանսական վարձակալություն				
- ոչ ժամկետանց	2,088,159	19,446	2,068,713	0.93%
- 91-180 օր ժամկետանց	53,314	22,563	30,751	42.32%
Ընդամենը ֆինանսական վարձակալություն	**2,141,473**	**42,009**	**2,099,464**	**1.96%**

21. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

(ա) Ֆինանսական վարձակալության որակական վերլուծություն (շարունակություն)

Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության որակական վերլուծության մասին՝

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Ֆինանսական վարձակալություն				
- ոչ ժամկետանց	2,858,287	5,717	2,852,570	0.2%
Ընդամենը ֆինանսական վարձակալություն	**2,858,287**	**5,717**	**2,852,570**	**0.2%**

(բ) Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների կենտրոնացում

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի հաճախորդներ, որոնց գծով ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը (2014թ.-ին նման հաճախորդներ չեն եղել):

2015թ.-ին և 2014թ.-ին արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	5,717	–
Զուտ ծախս	46,822	23,688
Դուրսգրումներ	(10,530)	(17,971)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	**42,009**	**5,717**

(գ) Ֆինանսական վարձակալության ժամկետայնություն

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ի (դ) կետում, որտեղ ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պայմանագրային վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը:

(դ) Ֆինանսական վարձակալության պայմանագրերի աշխարհագրական վերլուծություն

Ֆինանսական վարձակալության պայմանագրերի հիմնական մասը կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հաճախորդների հետ:

22. Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	5,458,872	4,489,999
Արժեզրկման գծով պահուստ	(10,918)	(8,980)
	5,447,954	**4,481,019**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը (2014թ.-ին՝ նման հաճախորդներ չեն եղել):

22. Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

2015թ.-ին և 2014թ.-ին արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	8,980	–
Ջուտ ծախս	113,812	8,063
Դուրսգրումներ	(111,874)	917
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	**10,918**	**8,980**

23. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ պետական արժեթղթեր	2,575,961	819,255
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Միջազգային ֆինանսական հաստատություններ	1,301,535	–
Այլ	796,348	101,413
	4,673,844	**920,668**
Հետգնման պայմանագրերով գրավադրված		
- ՀՀ պետական արժեթղթեր	7,912,045	7,193,845
- ՀՀ եվրոպարտատոմսեր	6,984,816	5,952,409
- Միջազգային ֆինանսական հաստատությունների պարտատոմսեր	–	767,067
- Այլ	–	201,541
	14,896,861	**14,114,862**

24. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

(հազ.դրամ)	*Վարձակալված գույքի բարելավումներ*	*Համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր*	*Տնտեսական գույք*	*Փոխադրամիջոցներ*	*Ոչ նյութական ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք						
Մնացորդն առ 2015թ. հունվարի 1	**1,626,201**	**2,640,538**	**541,291**	**188,435**	**893,308**	**5,889,773**
Ավելացումներ	42,282	355,900	43,739	1	678,965	1,120,887
Օտարումներ/դուրսգրումներ	–	(34,338)	(6,127)	(7,647)	(3,684)	(51,796)
Մնացորդն առ 2015թ. դեկտեմբերի 31	**1,668,483**	**2,962,100**	**578,903**	**180,789**	**1,568,589**	**6,958,864**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդն առ 2015թ. հունվարի 1	**603,492**	**1,628,538**	**309,686**	**157,815**	**359,598**	**3,059,129**
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	169,278	325,547	78,412	10,492	169,482	753,211
Օտարումներ/դուրսգրումներ	–	(33,987)	(5,926)	(7,647)	(1,619)	(49,179)
Մնացորդն առ 2015թ. դեկտեմբերի 31	**772,770**	**1,920,098**	**382,172**	**160,660**	**527,461**	**3,763,161**
Հաշվեկշռային արժեքն առ 2015թ. դեկտեմբերի 31	**895,713**	**1,042,002**	**196,731**	**20,129**	**1,041,128**	**3,195,703**

24. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ (շարունակություն)

(հազ.դրամ)	Վարձակալված գույքի բարելավումներ	Համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	1,504,229	2,302,955	462,518	177,848	784,702	5,232,252
Ավելացումներ	121,972	337,583	78,773	12,812	145,692	696,832
Օտարումներ/դուրսգրումներ	–	–	–	(2,225)	(37,086)	(39,311)
Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31	1,626,201	2,640,538	541,291	188,435	893,308	5,889,773
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	406,326	1,294,932	207,634	149,802	279,273	2,337,967
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	197,166	333,606	102,052	10,238	117,411	760,473
Օտարումներ/դուրսգրումներ	–	–	–	(2,225)	(37,086)	(39,311)
Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31	603,492	1,628,538	309,686	157,815	359,598	3,059,129
Հաշվեկշռային արժեքն առ 2014թ. դեկտեմբերի 31-ի	1,022,709	1,012,000	231,605	30,620	533,710	2,830,644

25. Այլ ակտիվներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Հաշիվներ քլիրինգային կազմակերպություններում՝ օգտագործման սահմանափակումներով	654,261	342,001
Բանկային ծառայությունների գծով ստացվելիք գումարներ	378,067	344,205
Բրոքերային հաշիվներ	205,552	247,673
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**1,237,880**	**933,879**
Գրավի բռնագանձման արդյունքում առաջացած ակտիվներ	721,058	322,435
Կանխավճարներ մատակարարներին	430,380	911,812
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	77,973	200,232
Պաշարներ	60,400	67,539
Արժեզրկման գծով պահուստ	(65,522)	(65,522)
Այլ	53,014	173,488
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**1,277,303**	**1,609,984**
Ընդամենը այլ ակտիվներ	**2,515,183**	**2,543,863**

2015թ.-ին և 2014թ.-ին այլ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	65,522	65,522
Ձուլ ծախս	363,078	20,171
Դուրսգրումներ	(363,078)	(20,171)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	**65,522**	**65,522**

26. Բանկերի ավանդներ և մնացորդներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Պարտավորություններ ակրեդիտիվների գծով	11,119,805	16,857,511
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	5,921,668	2,769,692
Կարճաժամկետ վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	3,849,834	10,292,230
Լորո հաշիվներ	235,997	199,344
Երկարաժամկետ վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	87,227	85,547
	21,214,531	**30,204,324**

Պայմանագրի համաձայն ՀՀ ԿԲ-ն Բանկին ապահովում է վարկերով, իսկ Բանկն իր հերթին վարկեր է տրամադրում որակավորվող վարկառուներին: Վարկերի մոնիտորինգը և վարչարարությունը կատարվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» -ի կողմից:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք կողմ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: Հաշվի համախառն մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 11,144,709 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 18,821,471 հազար ՀՀ դրամ):

27. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	**19,004,763**	**21,301,407**

Բանկն իրականացնում է արժեթղթերը վարկով տրամադրելու, արժեթղթերը հետգնման պայմանագրերով վաճառելու գործարքներ և արժեթղթերը վերավաճառքի պայմանագրերով գնելու գործարքներ:

Ըստ հետգնման պայմանագրերի վաճառված կամ որպես վարկ տրամադրված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, որի դիմաց Բանկը ստանում է դրամական միջոցներ: Այդ ֆինանսական ակտիվները կարող են կրկին գրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի սնանկացման պայմանների բացակայության դեպքում, սակայն պայմանագրի մարման ամսաթվին գործընկերը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Բանկը որոշել է, որ պահպանում է այդ արժեթղթերի նկատմամբ հիմնականում բոլոր ռիսկերն ու օգուտները և, հետևաբար, չի ապաճանաչում դրանք: 20,212,410 հազ. ՀՀ դրամ արժողությամբ այս արժեթղթերը Ծանոթագրություն 16-ում և 23-ում ներկայացվում են որպես «հետգնման պայմանագրերով գրավադրված»: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի գնման գնի վճարման պարտավորությունը ճանաչվում է որպես ֆինանսական պարտավորություն:

Այս գործարքները իրականացվում են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման գործընթացներին բնորոշ պայմաններին համաձայն:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,217,526 հազար ՀՀ դրամ արժողության գրավը, որը գրավադրված էր հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց (Ծանոթագրություն 18), կրկնակի գրավադրվել է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց:

Փոխանցված ֆինանսական ակտիվներ և գրավադրված կամ որպես գրավ պահվող ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջովին չեն ապաճանաչվել

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ֆինանսական ակտիվների ամփոփ նկարագիրը, որոնք փոխանցվում են այնպես, որ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը կամ ամբողջը չի բավարարում ապաճանաչման չափանիշներին՝

27. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (շարունակություն)

Փոխանցված ֆինանսական ակտիվներ և գրավադրված կամ որպես գրավ պահվող ակտիվներ (շարունակություն)

		Մինչև մարման ժամկետը պահվող գործիքներ		Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ		
Հազ. դրամ	Փոխանցված ֆինանսական ակտիվներ	Պետ. Պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	Այլ պարտատոմսեր	Պետ. Պարտատոմսեր	Այլ պարտատոմսեր	Ընդամենը
		2015	2015	2015	2015	2015
Հաշվեկշռային արժեք Ակտիվներ	Հետգնման պայմանագրեր	14,896,861	–	5,315,549	–	20,212,410
Ընդամենը		**14,896,861**	**–**	**5,315,549**	**–**	**20,212,410**
Այդ ակտիվների հետ կապված պարտավորություններ հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր					19,004,763
Զուտ դիրք		–	–	–	–	1,207,647

		Մինչև մարման ժամկետը պահվող գործիքներ		Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ		
Հազ. դրամ	Փոխանցված ֆինանսական ակտիվներ	Պետ. Պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	Այլ պարտատոմսեր	Պետ. պարտատոմսեր	Այլ պարտատոմսեր	Ընդամենը
		2014	2014	2014	2014	2014
Հաշվեկշռային արժեք Ակտիվներ	Հետգնման պայմանագրեր	13,146,254	968,608	6,896,015	196,768	21,207,645
Ընդամենը		**13,146,254**	**968,608**	**6,896,015**	**196,768**	**21,207,645**
Այդ ակտիվների հետ կապված պարտավորություններ հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր					21,301,407
Զուտ դիրք						(93,762)

28. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2015 Հազ. դրամ	2014 Հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	31,940,756	17,233,728
- Իրավաբանական անձինք	61,011,030	56,878,290
Ժամկետային ավանդներ		
- Ֆիզիկական անձիք	105,223,342	86,304,747
- Իրավաբանական անձինք	95,837,012	48,280,166
	294,012,140	**208,696,931**

28. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ (շարունակություն)

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ավանդներից 45,608,470 հազար ՀՀ դրամ գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և չճանաչված վարկային գործիքների դիմաց (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30,441,182 հազար ՀՀ դրամ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի չորս հաճախորդ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ տասը հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 68,380,267 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2014թ.՝ 57,902,264 հազար ՀՀ դրամ):

29. Այլ ներգրավված միջոցներ և ստորադաս փոխառություններ

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Ներգրավված միջոցներ միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից	76,912,193	73,799,775
Ներգրավված միջոցներ ՀՀ կառավարությունից	1,471,668	3,826,072
	78,383,861	**77,625,847**
Ստորադաս փոխառություններ	**39,721,324**	**15,380,080**

(ա) Միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցների կենտրոնացում

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի ներգրավված միջոցներ տասնմեկ ֆինանսական կազմակերպություններից (2014թ.-ին՝ ինը), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 109,578,263 հազար ՀՀ դրամ (2014թ.-ին՝ 72,239,256 հազար ՀՀ դրամ):

(բ) ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցներ

ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցներն իրենցից ներկայացնում են փոխառություններ ՀՀ կառավարությունից (ՀՀ ԿԲ-ն հանդիսանում է ՀՀ կառավարության գործակալ): Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն փոխառություններ է տրամադրում Բանկին, որն իր հերթին վարկեր է տրամադրում որակավորվող վարկառուներին: Վարկերի վերահսկողությունը և վարչարարությունն իրականացնում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակը:

Փոխառությունները տրամադրվում են ՀՀ դրամով, մինչև հինգ տարի ժամկետով, դրանց գծով կիրառվող տոկոսադրույքները կազմում են 7.3%-7.8%, փոխառությունները ենթակա են մարման՝ մարման ժամկետի վերջում:

(գ) Ստորադաս փոխառություններ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառություններն իրենցից ներկայացնում են՝

- Կապակցված կողմից ստացված փոխառություն (5,921,184 հազար ՀՀ դրամ), որի մարման ժամկետը լրանում է 2021թ. հունվարի 11-ին: Վարկատուն իրավունք ունի պահանջել փոխակերպել վարկը ամբողջությամբ կամ դրա մի մասը՝ ներառյալ կուտակված տոկոսները, Բանկի բաժնետիրական կապիտալի՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:
- Այլ ֆինանսական հաստատությունից ստացված փոխառություն (9,831,897 հազար ՀՀ դրամ), որը մարվում է 2020թ. սեպտեմբերի 23-ին: Ֆինանսական հաստատությունը իրավունք ունի փոխակերպել ստորադաս փոխառության 62.5%-ը Բանկի սովորական բաժնետոմսերի:
- Միջազգային ֆինանսական հաստատություններից ստացած փոխառություն (23,968,243 հազար ՀՀ դրամ), որը մարվում է 2022թ. հունվարի 11-ին:

Սնանկության դեպքում ստորադաս փոխառությունները կմարվեն Բանկի մյուս բոլոր պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

29. Այլ ներգրավված միջոցներ և ստորադաս փոխառություններ (շարունակություն)

(դ) Սահմանափակումներ

Համաձայն փոխառության պայմանագրերի՝ Բանկը պարտավոր է ապահովել համապատասխանությունը որոշակի սահմանափակումներին:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ մի սահմանափակման փաստացի ցուցանիշը գերազանցում էր ֆինանսական հաստատության հետ կնքած փոխառության պայմանագրով սահմանափակման առավելագույն սահմանաչափը: Այս փաստը հանգեցնում է պարտատիրոջ իրավունքին՝ պահանջելու 6,985,025 հազար ՀՀ դրամ գումարի չափով վճարումը ժամկետից շուտ:

Հաշվետու ամսաթվից հետո՝ տվյալ ֆինանսական հաշվետվությունների թողարկումից առաջ Բանկը վարկատուից ստացել է սահմանափակման խախտման գծով ներում (կասեցում), և ղեկավարությունը ակնկալում է, որ վարկատուն չի պահանջի վճարում մինչև մարման պայմանագրային մարման ժամկետը:

30. Այլ պարտավորություններ

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Կրեդիտորական պարտքեր աշխատակազմի նկատմամբ	1,738,221	1,733,715
Այլ կրեդիտորական պարտքեր	636,227	372,126
Այլ ֆինանսական պարտավորություններ	767,841	552,323
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**3,142,289**	**2,658,164**
Հետաձգված եկամուտ	10,155	10,320
Այլ հարկային պարտավորություններ	5,659	152,772
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**15,814**	**163,092**
Ընդամենը այլ պարտավորություններ	**3,158,103**	**2,821,256**

31. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 100,273 սովորական բաժնետոմսից (2014թ.-ին՝ 79,524): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 320 հազար ՀՀ դրամ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2015թ. ապրիլի 30-ին Բաժնետերերի խորհրդի կայացրած որոշումների համաձայն Բանկի կողմից հայտարարված շահաբաժինները կազմել են 2,100,000 հազար ՀՀ դրամ (2014թ.-ին՝ 2,950,000 հազար ՀՀ դրամ): Շահաբաժինների հայտարարման և վճարման օրվա դրությամբ մեկ բաժնետոմսի համար վճարվող շահաբաժինը կազմել է 26.407 հազար ՀՀ դրամ (2014թ.-ին՝ 37.096 հազար ՀՀ դրամ):

32. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը բնորոշ գործոն է բանկային ոլորտի համար և հանդիսանում է Բանկի գործառնությունների կարևոր տարր: Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերն են:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի վերահսկման, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարն ուղղակիորեն հաշվետու է Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի («ԱՊԿԿ») միջոցով: Որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից ու տեսակից:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կիրառվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծություններից, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը՝ կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը իմանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում:

Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է պարտքային և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթակա են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների փոփոխություններին:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա ընդունելի սահմաններում պահպանել այս ռիսկին ենթակա լինելու աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն՝ Գլխավոր տնօրենի նախագահությամբ: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Շուկայական ռիսկը Բանկը կառավարում է սահմանելով ֆինանսական գործիքների բաց դիրքի, տոկոսադրույքի, ժամկետայնության և արտարժութային դիրքերի գծով սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերանայվում և հաստատվում են Տնօրինության կողմից:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ի լրումն, Բանկը կիրառում է բազմաթիվ սթրես-թեստեր՝ առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր վիճակի վրա մի շարք առանձնահատուկ շուկայական սցենարների հնարավոր ֆինանսական ազդեցությունը ձևավորելու համար: Սթրես թեստերը թույլ են տալիս որոշել հնարավոր վնասի չափը, որը կարող է առաջանալ ծայրահեղ իրավիճակներում:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը ենթակա է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքների մոնիտորինգի և վերագնանշման նախապես սահմանված սահմանաչափեր սահմանելու միջոցով: Նշված սահմանաչափերի հետ համապատասխանության մոնիտորինգն իրականացվում է ԱՊԿԿ-ի կողմից, որին մոնիտորինգի ամենօրյա գործունեությունում աջակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար: Լողացող տոկոսադրույքով գործիքները խմբավորվում են ըստ իրենց վերագնահատման ամսաթվերի:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

(հազ. դրամ)	*Մինչև 3 ամիս*	*3-6 ամիս*	*6-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անտոկոս կամ ժամկետանց*	*Ընդամենը*
2015թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	–	–	–	–	–	142,713,317	142,713,317
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	34,243	570,496	818,813	6,617,748	2,130,841	106,460	10,278,601
Բանկերին տրված վարկեր	6,985,607	–	–	–	–	1,187,068	8,172,675
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,980,477	–	–	–	–	–	5,980,477
Հաճախորդներին տրված վարկեր	53,116,619	13,576,243	32,566,376	162,787,834	31,061,856	12,504,788	305,613,716
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	1,404,271	381,894	2,956,525	3,987,315	–	–	8,730,005
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	252,964	150,393	295,676	1,366,503	33,928	–	2,099,464
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	4,701,022	746,932	–	–	–	–	5,447,954
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,563,685	3,492,092	2,998,617	10,877,982	638,329		19,570,705
	74,038,888	**18,918,050**	**39,636,007**	**185,637,382**	**33,864,954**	**156,511,633**	**508,606,914**
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(5,946,744)	(1,207,719)	(3,603,911)	(8,262,368)	(2,193,789)	–	(21,214,531)
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	(19,004,763)	–	–	–	–	–	(19,004,763)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(61,159,253)	(33,413,051)	(54,740,255)	(51,657,186)	(90,609)	(92,951,786)	(294,012,140)
Ստորադաս փոխառություններ	(33,909,489)	–	–	–	(5,811,835)	–	(39,721,324)
Այլ փոխառություններ	(47,094,096)	(20,740,323)	(295,853)	(10,253,589)	–	–	(78,383,861)
	(167,114,345)	**(55,361,093)**	**(58,640,019)**	**(70,173,143)**	**(8,096,233)**	**(92,951,786)**	**(452,336,619)**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	8,300,710	–	(1,924,006)	(6,376,704)	–	–	–
Տարբերություն	**(84,774,747)**	**(36,443,043)**	**(20,928,018)**	**109,087,535**	**25,768,721**	**63,559,847**	**56,270,295**

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

(հազ. դրամ)	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Անտոկոս կամ ժամկետանց	Ընդամենը
2014թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	–	–	–	–	–	68,115,676	68,115,676
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	174,800	53,529	41,410	2,540,545	4,694,822	106,458	7,611,564
Բանկերին տրված վարկեր	–	–	–	–	–	1,157,853	1,157,853
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,526,358	–	–	–	–	–	1,526,358
Հաճախորդներին տրված վարկեր	39,627,977	26,265,045	42,391,158	137,469,519	29,891,193	3,164,057	278,808,949
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	413,048	163,865	919,180	12,720,474	–		14,216,567
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	249,874	250,038	467,378	1,797,278	88,002	–	2,852,570
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,201,754	1,091,531	187,734	–	–	–	4,481,019
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,867,550	952,514	1,061,373	5,121,613	6,032,480		15,035,530
	47,061,361	**28,776,522**	**45,068,233**	**159,649,429**	**40,706,497**	**72,544,044**	**393,806,086**
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(9,639,684)	(4,482,783)	(3,893,266)	(10,812,328)	(1,376,263)	–	(30,204,324)
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	(21,301,407)	–	–	–	–	–	(21,301,407)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(57,243,647)	(23,132,957)	(44,728,848)	(9,373,482)	(105,979)	(74,112,018)	(208,696,931)
Ստորադաս փոխառություններ	(9,680,440)				(5,699,640)		(15,380,080)
Այլ փոխառություններ	(21,693,866)	(40,726,091)	(13,772,286)	(1,433,604)	–	–	(77,625,847)
	(119,559,044)	**(68,341,831)**	**(62,394,400)**	**(21,619,414)**	**(7,181,882)**	**(74,112,018)**	**(353,208,589)**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	11,928,223	–	(1,889,085)	(10,039,138)	–	–	–
Տարբերություն	**(60,569,460)**	**(39,565,309)**	**(19,215,252)**	**127,990,877**	**33,524,615**	**(1,567,974)**	**40,597,497**

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Միջին տոկոսադրույքներ

Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների՝ մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը, բացառությամբ այլ փոխառություններում ներառված 67,852,500 հազար ՀՀ դրամ գումարով (2014թ.-ին՝ 71,166,443 հազար ՀՀ դրամ) վարկերի, որոնց նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները վերանայվում են կիսամյակային կտրվածքով՝ LIBOR -ի հիման վրա:

Տոկոսադրույքի վերանայման ամսաթիվ	*2015 հազ. դրամ*	*Տոկոսադրույքի վերանայման ամսաթիվ*	*2014 հազ. դրամ*
8 Հունվար 2016	4,493,714	8 Հունվար 2015	4,745,819
16 Փետրվար 2016	6,736,821	15 Փետրվար 2015	9,665,478
29 Փետրվար 2016	7,394,844	16 Փետրվար 2015	9,253,770
9 Մարտ 2016	9,829,954	26 Փետրվար 2015	7,240,371
15 Մարտ 2016	12,120,666	16 Մարտ 2015	478,966
5 Ապրիլ 2016	487,320	2 Ապրիլ 2015	382,695
15 Ապրիլ 2016	13,758,645	15 Ապրիլ 2015	15,429,293
18 Ապրիլ 2016	3,622,384	16 Ապրիլ 2015	119,962
12 Մայիս 2016	875,801	17 Ապրիլ 2015	5,034,927
17 Մայիս 2016	77,449	12 Մայիս 2015	717,211
27 Մայիս 2016	3,821,159	17 Մայիս 2015	10,220
6 Հունիս 2016	976,856	18 Մայիս 2015	182,320
10 Հունիս 2016	3,656,887	27 Մայիս 2015	763,632
	67,852,500	29 Մայիս 2015	6,355,853
		10 Հունիս 2015	3,647,272
		16 Հունիս 2015	7,138,654
			71,166,443

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(ը) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2015 Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			2014 Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	13.28%	6.51%	–	11.90%	5.73%	–
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	9.31%	7.08%	–	–	–	–
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	10.60%	–	–	24.00%	–	–
Հաճախորդներին տրված վարկեր	13.70%	10.58%	10.11%	14.54%	10.54%	10.14%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	14.88%	11.29%	9.75%	15.19%	11.31%	11.03%
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	18.00%	11.08%	13.41%	15.73%	11.40%	12.33%
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	11.42%	5.62%	–	12.19%	5.47%	–
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	7.42%	1.75%	1.76%	6.00%	3.23%	2.52%
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	9.16%	–	–	20%	–	–
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
Ժամկետային ավանդներ	12.12%	6.31%	5.96%	9.17%	6.23%	4.53%
Ստորադաս փոխառություններ	-	7.60%	–		6.18%	–
Այլ փոխառություններ	14.07%	5.56%	–	9.74%	5.50%	–

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է տոկոսադրույքի փոփոխության հավանականությունից, որը ազդում է հետագա դրամական հոսքերի և ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ֆինաասական արդյունքների հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր խելամիտ փոփոխության նկատմամբ:

Ֆինանսական արդյունքների հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի ենթադրյալ փոփոխության ազդեցությունն է մեկ տարվա տոկոսային եկամուտի վրա՝ հիմնված դեկտեմբերի 31-ին առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիքսված տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատմամբ: Հաշվի է առնվում տոկոսադրույքների փոփոխությունները՝ հիմված այն ենթադրության վրա, որ տեղի են ունենում եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժեր:

Արժույթ	Բազիսային կետի ավելացում 2015	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ	Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ
ՀՀ դրամ	5.00%	–	1,512,108
ԱՄՆ դոլար	1.00%	68,353	–

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Արժույթ	*Բազիսային կետի նվազում 2015*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ*	*Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ*
ՀՀ դրամ	5.00%	–	(1,512,108)
ԱՄՆ դոլար	1.00%	(68,353)	–

Արժույթ	*Բազիսային կետի ավելացում 2014*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2014 հազ. դրամ*	*Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2014 հազ. դրամ*
ՀՀ դրամ	2.18%	–	618,072
ԱՄՆ դոլար	1.00%	66,218	–

Արժույթ	*Բազիսային կետի նվազում 2014*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2014 հազ. դրամ*	*Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2014 հազ. դրամ*
ՀՀ դրամ	2.18%	–	(618,072)
ԱՄՆ դոլար	1.00%	(66,218)	–

(ii) Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական հոսքերի տատանման ռիսկն է:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազ.դրամ)	*ԱՄՆ դոլար*	*Եվրո*	*Այլ արտարժույթ*	*Ընդամենը*
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,141,868	15,012,464	1,521,188	**76,675,520**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	3,333,610	–	–	**3,333,610**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	3,184,243	63,443	16,550	**3,264,236**
Հաճախորդներին տրված վարկեր	228,788,428	12,485,159	–	**241,273,587**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	4,681,253	5,295,175	–	**9,976,428**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,206,759	473,256	–	**1,680,015**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	5,277,664	12,878	11,584	**5,302,126**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	7,478,416	–	–	**7,478,416**
Այլ ակտիվներ	1,163,741	65,068	90,071	**1,318,880**
Ընդամենը	**315,255,982**	**33,407,443**	**1,639,393**	**350,302,818**
Պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	105,902	–	–	**105,902**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	10,295,701	4,932,921	113,686	**15,342,308**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	188,172,730	28,185,894	2,929,210	**219,287,834**
Ստորադաս փոխառություններ	39,721,324	–	–	**39,721,324**
Այլ փոխառություններ	69,615,481	–	–	**69,615,481**
Այլ պարտավորություններ	701,156	306,350	55,264	**1,062,770**
Ընդամենը	**308,612,294**	**33,425,165**	**3,098,160**	**345,135,619**
Զուտ դիրքը	**6,643,688**	**(17,722)**	**(1,458,767)**	**5,167,199**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**(2,321,837)**	**–**	**1,490,584**	**(831,253)**
Զուտ դիրքը՝ ներառյալ ածանցյալ գործիքներ	**4,321,851**	**(17,722)**	**31,817**	**4,335,946**

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազ.դրամ)	*ԱՄՆ դոլար*	*Եվրո*	*Այլ արտարժույթ*	*Ընդամենը*
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,547,326	6,840,148	1,882,493	**17,269,967**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	3,355,802	–	–	**3,355,802**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	318,948	11,549	36,842	**367,339**
Հաճախորդներին տրված վարկեր	233,285,293	8,698,674	–	**241,983,967**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	7,617,134	6,627,922	–	**14,245,056**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,595,526	708,369	–	**2,303,895**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	1,775,182	51,641	12,049	**1,838,872**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	5,952,408	–	–	**5,952,408**
Այլ ակտիվներ	836,751	108,293	213,153	**1,158,197**
Ընդամենը	**263,284,370**	**23,046,596**	**2,144,537**	**288,475,503**
Պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	161,487	–	–	**161,487**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	17,092,270	10,333,760	106	**27,426,136**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	147,760,605	24,193,947	2,144,104	**174,098,656**
Ստորադաս փոխառություններ	15,478,987	–	–	**15,478,987**
Այլ փոխառություններ	65,737,532	–	–	**65,737,532**
Այլ պարտավորություններ	327,838	82,892	6,592	**417,322**
Ընդամենը	**246,558,719**	**34,610,599**	**2,150,802**	**283,320,120**
Զուտ դիրքը	**16,725,651**	**(11,564,003)**	**(6,265)**	**5,155,383**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**(13,133,572)**	**11,549,400**	**19,122**	**(1,565,050)**
Զուտ դիրքը՝ ներառյալ ածանցյալ գործիքներ	**3,592,079**	**(14,603)**	**12,857**	**3,590,333**

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2015		*2014*	
	Արժևորում	*Շահույթ կամ վնաս հազ. դրամ*	*Արժևորում*	*Շահույթ կամ վնաս հազ. դրամ*
ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ	10.00%	(432,185)	19.10%	(686,087)
ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ	14.00%	2,481	20.71%	3,024

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ու Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը, որոնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (կորպորատիվ և սպառողական) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի նկատմամբ պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման և մոնիտորինգի ընթացակարգերը:

Կորպորատիվ վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից: Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչությունը պատասխանատու է Բանկի կորպորատիվ վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և գործունեության ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ստուգում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող վարկի դիմումներն ուսումնասիրվում են մանրածախ վարկավորման ստորաբաժանումների կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Սովորաբար գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների և բանկերին տրված վարկերի և փոխատվությունների դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և վերջիններիս գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 19-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների հետ կապված վարկային ռիսկին ենթակա լինելու առավելագույն չափը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 34-ում:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ հաշվանցման պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխառության գլոբալ գլխավոր պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են շուկայում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմաններին: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական պարտավորությունների տեսակներ հազ. դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,980,477	–	5,980,477	(5,980,477)		–
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**5,980,477**	–	**5,980,477**	**(5,980,477)**		–
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(19,004,763)	–	(19,004,763)	19,004,763		–
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(19,004,763)**	–	**(19,004,763)**	**19,004,763**		–

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական պարտավորությունների տեսակներ հազ. դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		
				Ֆինանսական գործիքներ		*Ջուտ գումար*
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,526,358	–	1,526,358	(1,526,358)		–
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**1,526,358**	**–**	**1,526,358**	**(1,526,358)**		**–**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(21,301,407)	–	(21,301,407)	21,207,645		(93,762)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(21,301,407)**	**–**	**(21,301,407)**	**21,207,645**		**(93,762)**

Վերը նշված աղյուսակում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված այն պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿԿ-ի կողմից:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտավորությունների ֆինանսավորման ծրագրերի վարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատության ծրագրերի ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում: Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները ընդունում է ԱՊԿԿ-ն, իսկ Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը իրականացնում է դրանք:

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ընդհանուր համախառն արտահոսքն իրենից ներկայացնում է դրամական միջոցների չզեղչված հոսքերը պարտավորությունների կամ վարկային պարտավորվածությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազ. դրամ)	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 6 ամիս*	*6- ից 12 ամիս*	*Ավելի քան 1 տարի*	*Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար*	*Հաշվեկշռային արժեք*
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,883,158	4,231,283	1,364,087	3,885,333	13,220,970	**24,584,831**	21,214,531
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19,004,763	–	–	–	–	**19,004,763**	19,004,763
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	119,142,533	38,188,710	35,907,181	58,368,806	62,043,279	**313,650,509**	294,012,140
Ստորադաս փոխառություններ	273,785	859,956	754,011	1,508,023	53,369,542	**56,765,317**	39,721,324
Այլ ներգրավված միջոցներ	9,584,295	3,535,589	6,891,382	8,410,496	68,906,815	**97,328,577**	78,383,861
Այլ ֆինանսական պարտավորություններ	767,914	62,217	2,312,158	–	–	**3,142,289**	3,142,289
Ածանցյալ պարտավորություններ							
- Ներհոսք	–	–	–	–	(6,657)	**(6,657)**	(6,657)
- Արտահոսք	3,904	58,674	–	30,542	496,097	**589,217**	589,217
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	150,660,352	46,936,429	47,228,819	72,203,200	198,030,046	**515,058,846**	456,061,468
Վարկային պարտավորվածություններ	32,259,866	–	–	–	–	**32,259,866**	32,259,866

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 6 ամիս*	*6- ից 12 ամիս*	*Ավելի քան 1 տարի*	*Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար*	*Հաշվեկշռային արժեք*
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,666,333	8,127,790	4,635,448	3,895,229	13,864,878	**32,189,678**	30,204,324
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	21,301,407	–	–	–	–	**21,301,407**	21,301,407
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	107,361,359	25,767,626	24,417,387	46,573,584	10,476,044	**214,596,000**	208,696,931
Ստորադաս փոխառություններ	78,322	439,838	234,965	469,931	19,375,239	**20,598,295**	15,380,080
Այլ ներգրավված միջոցներ	383,576	2,870,651	10,015,491	25,677,346	54,772,870	**93,719,934**	77,625,847
Այլ ֆինանսական պարտավորություններ	212,486	2,344,655	101,023	–	–	**2,658,164**	2,658,164
Ածանցյալ պարտավորություններ							
- Ներհոսք	–	–	–	–	(37,178)	**(37,178)**	(37,178)
- Արտահոսք	–	311,654	–	348,250	51,007	**710,911**	710,910
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	131,003,483	39,862,214	39,404,314	76,964,340	98,502,860	**385,737,211**	356,540,485
Վարկային պարտավորվածություններ	25,964,464	–	–	–	–	**25,964,464**	25,964,464

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների պատմական կայունությունը: Պատմականորեն դրանց մարումը տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան ցույց է տրվում տվյալ աղյուսակում: Դրանց մնացորդները աղյուսակներում ընդգրկվում են երեք ամսից պակաս ժամանակահատվածի գումարներում:

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անժամկետ*	*Ժամկետանց*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	142,713,317	–	–	–	–	–	–	**142,713,317**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	465,303	–	–	–	**465,303**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	–	34,243	1,389,309	6,617,748	2,130,843	106,458	–	**10,278,601**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	5,748,086	1,237,521	–	–	–	1,187,068	–	**8,172,675**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,980,477	–	–	–	–	–	–	**5,980,477**
Հաճախորդներին տրված վարկեր	14,461,769	14,129,803	51,930,687	174,147,478	38,439,191	–	12,504,788	**305,613,716**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	1,095,892	308,379	3,338,419	3,987,315	–	–	–	**8,730,005**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	87,382	165,582	446,069	1,366,503	33,928	–	–	**2,099,464**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,919,226	1,781,796	746,932	–	–	–	–	**5,447,954**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,274,824	288,860	6,490,709	10,877,982	638,330	–	–	**19,570,705**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	–	–	–	3,195,703	–	**3,195,703**
Ընթացիկ հարկային ակտիվներ	–	–	1,090,585	–	–	–	–	**1,090,585**
Այլ ակտիվներ	892,907	93,568	1,101,311	–		427,397	–	**2,515,183**
Ընդամենը ակտիվներ	**175,173,880**	**18,039,752**	**66,534,021**	**197,462,329**	**41,242,292**	**4,916,626**	**12,504,788**	**515,873,688**
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	3,904	58,674	30,542	489,440		–	–	**582,560**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19,004,763	–	–	–	–	–	–	**19,004,763**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,825,832	4,120,912	4,811,630	8,262,368	2,193,789	–	–	**21,214,531**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	117,925,467	36,185,264	88,153,500	51,657,299	90,610	–	–	**294,012,140**
Ստորադաս փոխառություններ	22,448	357,282	–	9,595,511	29,746,083	–	–	**39,721,324**
Այլ ներգրավված միջոցներ	7,516,525	2,734,291	11,753,769	50,675,377	5,703,899	–	–	**78,383,861**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	–	479,244	–	–	–	–	**479,244**
Այլ պարտավորություններ	767,914	67,876	2,322,313	–	–	–	–	**3,158,103**
Ընդամենը պարտավորություններ	**147,066,853**	**43,524,299**	**107,550,998**	**120,679,995**	**37,734,381**	–	–	**456,556,526**
Զուտ դիրքը	**28,107,027**	**(25,484,547)**	**(41,016,977)**	**76,782,334**	**3,507,911**	**4,916,626**	**12,504,788**	**59,317,162**
Կուտակային զուտ դիրքը	**28,107,027**	**2,622,480**	**(38,394,497)**	**38,387,837**	**41,895,748**			

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1- ից 3 ամիս	3- ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	68,115,676	–	–	–	–	–	–	**68,115,676**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	–	174,800	94,938	2,540,546	4,694,822	106,458	–	**7,611,564**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	515,026		–	–	–	642,827	–	**1,157,853**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,526,358	–	–	–	–	–	–	**1,526,358**
Հաճախորդներին տրված վարկեր	23,724,390	15,903,586	68,656,203	137,469,520	29,891,193	–	3,164,057	**278,808,949**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	64,711	319,847	1,083,045	12,748,964	–	–	–	**14,216,567**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	88,683	161,191	717,416	1,797,278	88,002	–	–	**2,852,570**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	1,473,248	1,728,506	1,279,265	–	–	–	–	**4,481,019**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	–	1,867,550	2,013,887	5,121,613	6,032,480		–	**15,035,530**
Վաճառքի համար պահվող ակտիվներ	–	–	420,927	–	–	–	–	**420,927**
Հետաձգված հարկային ակտիվներ	–	–	–	–	–	142,618	–	**142,618**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	–	–	–	2,830,644	–	**2,830,644**
Այլ ակտիվներ	743,029	945,102	516,257	–		339,475		**2,543,863**
Ընդամենը ակտիվներ	**96,251,121**	**21,100,582**	**74,781,938**	**159,677,921**	**40,706,497**	**4,062,022**	**3,164,057**	**399,744,138**
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	311,654	348,250	13,828	–	–	–	**673,732**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	21,301,407	–	–	–	–	–	–	**21,301,407**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,585,656	8,054,028	8,376,049	10,812,328	1,376,263	–	–	**30,204,324**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	106,658,123	24,697,543	67,861,804	9,373,482	105,979	–	–	**208,696,931**
Ստորադաս փոխառություններ	–	283,194			15,096,886	–	–	**15,380,080**
Այլ ներգրավված միջոցներ	–	2,087,516	32,190,033	36,786,752	6,561,546	–	–	**77,625,847**
Ընթացիկ հարկային պարտավորություններ	–	–	685,795	–	–	–	–	**685,795**
Այլ պարտավորություններ	396,920	2,332,649	91,687	–	–	–	–	**2,821,256**
Ընդամենը պարտավորություններ	**129,942,106**	**37,766,584**	**109,553,618**	**56,986,390**	**23,140,674**	–	–	**357,389,372**
Զուտ դիրքը	**(33,690,985)**	**(16,666,002)**	**(34,771,680)**	**102,691,531**	**17,565,823**	**4,062,022**	**3,164,057**	**42,354,766**
Կուտակային զուտ դիրքը	**(33,690,985)**	**(50,356,987)**	**(85,128,667)**	**17,562,864**	**35,128,687**			

32. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները:

Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և տարվա ընթացքում.

	2015 հազ. դրամ (Աուդիտ չանցած)	*2014 հազ. դրամ (Աուդիտ չանցած)*
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	177%	93%
Միջինը ամսվա համար	151%	94%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը որոշելու համար (ոչ պակաս քան 60%):

33. Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել Բանկի՝ կապիտալի վերաբերյալ արտաքին պահանջների համապատասխանությանը և, որ Բանկը պահպանում է բարձր վարկային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանը աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը պահպանելու կամ դրա մեջ ճշգրտումներ մտցնելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Նախկին տարիների համեմատությամբ ոչ մի փոփոխություն չի եղել համապատասխան կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում և ընթացակարգերում:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

33. Կապիտալի կառավարում (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2015 հազ. դրամ (Աուդիտ չանցած)	*2014 հազ. դրամ (Աուդիտ չանցած)*
Հիմնական Կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	32,087,360	25,447,680
Էմիսիոն եկամուտ	7,755,179	28,571
Գլխավոր պահուստ	4,127,146	4,127,146
Չբաշխված շահույթ	11,842,250	11,508,621
Նվազեցումներ	(1,806,935)	(1,656,244)
Ընդամենը հիմնական կապիտալ	**54,005,000**	**39,455,774**
Լրացուցիչ կապիտալ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	(251,309)	(132,315)
Ստորադաս փոխառություններ (ոչ ավել քան հիմնական կապիտալի 50%-ը)	27,253,810	15,199,040
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	**27,002,501**	**15,066,725**
Ընդամենը կապիտալ	**81,007,501**	**54,522,499**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**401,512,924**	**398,811,974**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն	**20.2%**	**13.7%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

34. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Բանկը նաև տրամադրում է երաշխիքներ՝ գործելով որպես գործակալ արժեթղթերի փոխառության և վարկավորման գործարքներում:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման ժամանակ Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

34. Վարկային պարտավորվածություններ (շարունակություն)

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Պայմանագրային գումար		
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	14,657,058	11,188,074
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	6,787,810	6,698,182
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	5,459,585	6,163,643
Չօգտագործված օվերդրաֆտներ	5,355,413	1,914,565
	32,259,866	**25,964,464**

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

35. Գործառնական վարձակալություն

(ա) Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չխզվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են՝

	2015 *հազ. դրամ*	*2014* *հազ. դրամ*
Մինչև մեկ տարի ժամկետով	1,809,340	831,417
Մեկից հինգ տարի ժամկետով	9,727,656	11,839,529
Ավելի քան հինգ տարի ժամկետով	6,709,069	6,843,686
	18,246,065	**19,514,632**

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարները սովորաբար բարձրացվում են տարեկան կտրվածքով՝ շուկայական դրույքներին համապատասխանելու համար: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալությունը ներառում է կապակցված կողմի հանդեպ վարձակալություն, որը կազմում է 15,309,875 հազար ՀՀ դրամ և ենթակա չէ չեղարկման (2014թ.՝ 15,032,003 հազար ՀՀ դրամ):

36. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ապահովագրված է մինչև 6,521,734 հազար ՀՀ դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

36. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության՝ խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

37. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Ամերիա Գրուպ (Սի-Ռւայ) Լիմիթիդ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 79.3% -ը:

Բանկի վերջնական մայր կազմակերպությունն է «Ար Քեյ Վի Էֆ» ընտանեկան հիմնադրամը, որի վերահսկող անձը Ռուբեն Վարդանյանն է, իսկ վերջնական շահառուները՝ նրա ընտանիքի անդամները:

Մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին	2,267,194	1,913,379

Ստորև ներկայացված են 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2015 հազ. դրամ	*Միջին տոկոսադրույք, %*	*2014 հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրված վարկեր	957,650	6.4%	567,065	6.5%
Այլ ակտիվներ	1,771	0.0%	1,503	0.0%
Ստացված ավանդներ	1,139,953	6.8%	1,119,864	7.0%
Երաշխիքներ	33,863	0.0%	33,248	0.0%

Վարկերը և երաշխիքները հայկական դրամով են և ԱՄՆ դոլարով և պետք է մարվեն մինչև 2027թ.:

37. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են Խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2015 հազ. դրամ	*2014 հազ. դրամ*
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	42,951	32,130
Տոկոսային ծախս	(64,119)	(66,216)

Ստորև ներկայացված են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ.-ին շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր կազմակերպություն		*Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր*		*Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ*		*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր*		
	հազ. դրամ	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*Ընդամենը հազ. դրամ*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	–	–	–	465,960	–	**465,960**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	–	–	678,138	12.0%	–	–	–	–	**678,138**
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	–	–	–	–	27,776,910	14.0%	**27,776,910**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	–	–	1,051,056	12.0%	–	–	–	–	**1,051,056**
Պարտավորություններ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–		–				473,034		**473,034**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	2,020,704	0.0%	1,444	0.0%	84,166	0.0%	3,667,836	0.0%	**5,774,150**
- Ժամկետային ավանդներ	–	–	–	–	2,916,150	3.5%	28,580,396	12.8%	**31,496,546**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	–	–	–	5,932,070	6.0%	**5,932,070**
Այլ պարտավորություններ	–	–	9,796,186	13.2%	–	–	–	–	**9,796,186**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված միավորներ									
Կապակցված կողմերից ստացված երաշխիքներ	–	–	8,740,522	–	–	–	–	0.0%	**8,740,522**
Տրված երաշխիքներ	–	–	–	–	–	–	18,504	0.0%	**18,504**
Չօգտագործված վարկային գծեր			967,500				–		**967,500**
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտ	–	–	–	–	–	–	2,640,209	–	**2,640,209**
Տոկոսային ծախս	–	–	(28,685)	–	(37,453)	–	(1,260,516)	–	**(1,326,654)**
Ընդհանուր վարչական ծախսեր	–	–	–	–	–	–	–	–	–

37. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2014թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		*Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ*		*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր*		
	հազ. դրամ	*Միջին տոկոսա-դրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսա-դրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսա-դրույք, %*	*Ընդամենը հազ. դրամ*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	–	–	61,147	11.6%	**61,147**
Այլ ակտիվներ	–	–	–	–	1,197	0.0%	**1,197**
Պարտավորություններ							
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	52,828	0.0%	467,688	0.0%	4,002,387	0.0%	**4,522,903**
- Ժամկետային ավանդներ	–		66,680	3.9%	516,769	6.6%	**583,449**
Այլ պարտավորություններ	–		7,000	0.0%	593	0.0%	**7,593**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	–	5,825,503	6.0%	**5,825,503**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված միավորներ							
Տրված երաշխիքներ	–	–	15,225	–	20,211	0.0%	**35,436**
Շահույթ (վնաս)							
Տոկոսային եկամուտ	13,170	–	–	–	3,905	–	**21,130**
Տոկոսային ծախս	–	–	(7,454)	–	(345,234)	–	**(352,688)**
Ընդհանուր վարչական ծախսեր	–	–	–	–	(8,077)	–	**(8,077)**

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Իրական արժեքի գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց գնահատման ժամանակաշրջանի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, համեմատությունը նմանատիպ գործիքների հետ, որոնց համար առկա են շուկայական դիտարկելի տվյալներ և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում օգտագործվող ենթադրություններն ու տվյալները ընդգրկում են ոչ ռիսկային և բազիսային տոկոսադրույքներ, վարկային սփրեդներ և այլ ցուցանիշներ, որոնք օգտագործվում են զեղչային դրույքների, պարտատոմսերի գների, արտարժույթի փոխարժեքի, պարտատոմսերի ինդեքսների գների չափման մեջ: Գնահատման մեթոդների նպատակն է հասնել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ֆինանսական գործիքի գինը արտացոլող այն իրական արժեքի որոշմանը, որը կորոշվեր անկախ գործող շուկայի մասնակիցների կողմից:

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք (շարունակություն)

Ավելի տարածված և պարզ ֆինանսական գործիքների, ինչպես, օրինակ՝ տոկոսադրույքի և արժութային սվոպերի իրական արժեքները որոշելու համար Բանկը օգտագործում է լայնորեն ճանաչված գնահատման մոդելներ, որոնք օգտագործում են միայն դիտարկելի շուկայական տեղեկատվությունը և չեն պահանջում ղեկավարության լայն դատողություններ և գնահատումներ: Դիտարկելի գներն ու մոդելների տվյալները սովորաբար հասանելի են ցուցակված պարտատոմսերի և արժեթղթերի, բորսաներում շրջանառվող ածանցյալ գործիքների համար, ինչպիսիք են տոկոսադրույքի սվոպերը:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի, հաճախորդներին տրված վարկերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 106,458 հազար ՀՀ դրամ (2014: 106,458 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը չի կարող չափվել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների հաշվեկշռային և իրական արժեքները 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	*Իրական արժեք հազ. դրամ*
Հաճախորդներին տրված վարկեր	305,613,716	302,066,571
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	19,570,705	18,933,331
Ընդամենը	**325,184,421**	**320,999,902**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների հաշվեկշռային և իրական արժեքները 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	*Իրական արժեք հազ. դրամ*
Հաճախորդներին տրված վարկեր	278,808,949	276,720,071
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	15,035,530	14,703,551
Ընդամենը	**293,844,479**	**291,423,622**

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- 3.5% և 11.6%-16.4% զեղչման դրույքներ են կիրառվում համապատասխանաբար բանկերին տրված վարկերից ու փոխատվություններից և հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար;
- 5.5%-12% զեղչման դրույքներ են կիրառվում պարտավորություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս մակարդակը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

(հազ. դրամ)	*1-ին մակարդակ*	*2-րդ մակարդակ*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ ակտիվներ	–	465,303	**465,303**
- Ածանցյալ պարտավորություններ	–	(582,560)	**(582,560)**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Պարտքային գործիքներ	–	10,172,143	**10,172,143**
	–	10,054,886	**10,054,886**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

(հազ. դրամ)	*1-ին մակարդակ*	*2-րդ մակարդակ*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ պարտավորություններ	–	(673,732)	**(673,732)**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Պարտքային գործիքներ	–	7,505,106	**7,505,106**
	–	6,831,374	**6,831,374**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն ֆինանսական գործիքները, որոնք չեն չափվում իրական արժեքով, սակայն որոնց համար իրական արժեքը բացահայտվում է, ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

38. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(բ) Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները, որոնք գնահատվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ ներառող տեխնիկայով, հիմնականում ներառում են տոկոսադրույքի և արտարժույթի սվոպեր և արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման տեխնիկաները ֆորվարդների գնահատման և սվոփերի մոդելներն են, ներառյալ ներկա արժեքի հաշվարկները: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, փոխարժեքի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերը, որոնք գնահատվում են գնահատման մոդելի օգնությամբ, հիմնականում կազմված են ՀՀ պետական պարտատոմսերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, որը ներառում է շուկայում դիտարկելի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակած տվյալները;

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն 5
2. Պատրաստման հիմունքներ 5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում 7
4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն 21
5. Զուտ տոկոսային եկամուտ 23
6. Միջնորդավճարների գծով եկամուտ 23
7. Միջնորդավճարների գծով ծախս 23
8. Ցեսիայից օգուտ 24
9. Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից 24
10. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ 24
11. Այլ գործառնական եկամուտ 24
12. Այլ գործառնական ծախսեր 24
13. Արժեզրկումից կորուստներ 25
14. Այլ ընդհանուր վարչական ծախսեր 25
15. Շահութահարկի գծով ծախս 25
16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 27
17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ 28
18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ 29
19. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ 30
20. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ 30
21. Հաճախորդներին տրված վարկեր 30
22. Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ 39
23. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ 39
24. Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ 41
25. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ 41
26. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 42
27. Այլ ակտիվներ 43
28. Բանկերի ավանդներ և մնացորդներ 43
29. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ 44
30. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ 45
31. Թողարկված պարտքային արժեթղթեր 45
32. Այլ ներգրավված միջոցներ և ստորադաս փոխառություններ 46
33. Այլ պարտավորություններ 47
34. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ 47
35. Ռիսկերի կառավարում 47
36. Կապիտալի կառավարում 63
37. Վարկային պարտավորվածություններ 64
38. Գործառնական վարձակալություն 64
39. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 65
40. Գործարքներ կապակցված կողմերի հետ 65
41. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում 69
42. Հաշվետու ժամակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր 72

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պարտականությունները նկարագրված են ստորև *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի *Պրոֆեսիոնալ Հաշվապահների Վարքագրքի* (ՀՎՄՍԽ Վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն ՀՎՄՍԽ Վարքագրքի: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերը այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համատեքստում ընդհանրապես, և այդ հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս: Մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում՝ այդ հարցերի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում՝ ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Վարկերի արժեզրկման գծով պահուստ

Վարկերի արժեզրկման գծով պահուստը ղեկավարության համար հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա: Արժեզրկման բացահայտումն ու փոխհատուցվող գումարի որոշումը իր բնույթով անորոշ գործընթաց է, որը ներառում է տարբեր ենթադրություններ և գործոններ, ներառյալ գործընկերոջ ֆինանսական վիճակը, սպասվող ապագա դրամական հոսքերը, գրավի իրացման սպասվող զուտ գները և իրացման ժամանակահատվածը: Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման էականորեն տարբեր արդյունքների: Սա կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց հաճախորդներին տրված վարկերի գումարի նշանակալի լինելու (Բանկի ընդհանուր ակտիվների 69.4%՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) և արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով:

Մենք գնահատել ենք խմբային արժեզրկման հաշվարկների նկատմամբ վերահսկողության միջոցների նախագծման և գործարկման արդյունավետությունը: Մենք թեսթավորել ենք խմբային արժեզրկման հաշվարկի հիմքում ընկած մոդելներն ու ենթադրությունները, մոդելների բանաձևերն ու մուտքային տվյալները, ինչպիսիք են վարկերի զուտ դուրսգրումներն ու ժամկետանց օրերը:

Անհատական հիմունքներով հաշվարկված արժեզրկման գծով կորուստների համար մենք թեսթավորել ենք արժեզրկման բացահայտման և քանակական գնահատման հիմքում ընկած ենթադրությունները, ներառյալ հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի գնահատումը ու ապագա դրամական հոսքերի կանխատեսումը: Մենք ուշադրությունը կենտրոնացրել ենք հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման հայտանիշեր ունեցող իրավաբանական անձանց տրված նշանակալի վարկերի վրա:

Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Բանկի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը և արժեզրկման գծով պահուստի գնահատման համար կատարված առանցքային ենթադրություններն ու դատողությունները նկարագրող բացահայտումների նկատմամբ (Ծանոթագրություն 21):

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ցեսիայից օգուտ

2016թ. ընթացքում Բանկը ճանաչել է ցեսիայից օգուտ՝ ապագայում ստացվելիք հատուցման դիմաց վարկերի և այլ ստացվելիք գումարների փոխանցումից (Ծանոթագրություն 8): Բանկի ղեկավարությունը կիրառել է իր դատողությունները՝ փոխանցված վարկերի և այլ ստացվելիք գումարների ապաճանաչման հայտանիշերը գնահատելու և ստացվելիք հատուցման գումարի իրական արժեքը որոշելու համար:

Ցեսիայից օգուտը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց իր ոչ սովորական բնույթի և ղեկավարության համապատասխան դատողությունների սուբյեկտիվության պատճառով:

Մենք իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր ճանաչված գումարների ճշգրտության և գնահատման նկատմամբ: Մեր աուդիտորական ընթացակարգերը ներառել են ապաճանաչման չափանիշների գնահատում փոխանցված վարկերի և այլ ստացվելիք գումարների համար և արված առանցային ենթադրությունների վերլուծություն, ներառյալ՝ հատուցման գումարի վերադարձելիությունը:

Բանկի 2016թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո: Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ: Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

- Գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան տեղեկատվության բացահայտման խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն դարձնել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

Մենք Տնօրենների խորհրդին նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Տնօրենների խորհրդին հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում, և հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի մեր եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Էրիկ Հայրապետյանն է:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

2017թ. մարտի 23

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	5	42,624,265	35,733,246
Տոկոսային ծախս	5	(27,749,228)	(20,979,260)
Զուտ տոկոսային եկամուտ		**14,875,037**	**14,753,986**
Միջնորդավճարների գծով եկամուտ	6	2,866,115	2,549,890
Միջնորդավճարների գծով ծախս	7	(610,329)	(487,001)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		**2,255,786**	**2,062,889**
Ցեսիայից օգուտ	8	1,096,824	–
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ/(վնաս)	9	1,055,909	(1,632,803)
Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ	10	2,465,343	4,294,233
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		736,347	4,975
Այլ գործառնական եկամուտ	11	1,561,640	2,889,073
Այլ գործառնական ծախսեր	12	(1,461,489)	(1,281,982)
Գործառնական եկամուտ		**22,585,397**	**21,090,371**
Արժեզրկումից կորուստներ	13	(5,434,401)	(6,155,514)
Անձնակազմի գծով ծախսեր		(5,675,290)	(5,744,675)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	14	(3,746,410)	(3,167,044)
Շահույթ մինչև շահութահարկ		**7,729,296**	**6,023,138**
Շահութահարկի գծով ծախս	15	(1,522,610)	(1,208,036)
Հաշվետու տարվա շահույթ		**6,206,686**	**4,815,102**
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
-Իրական արժեքի զուտ փոփոխություն		1,435,355	(143,765)
-Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(736,347)	(4,975)
-Շահութահարկի ազդեցություն		(139,802)	29,746
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**559,206**	**(118,994)**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) հարկումից հետո		**559,206**	**(118,994)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**6,765,892**	**4,696,108**

6-ից 72-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են ղեկավարության կողմից 2017թ. մարտի 23-ին և ստորագրվել են վերջինիս անունից՝

Տնօրինության նախագահ – Գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյան

Գլխավոր հաշվապահ Գոհար Խաչատրյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	135,280,872	142,713,317
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	17	3,130,071	465,303
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	18	12,408,292	4,963,052
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	18	–	5,315,549
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	19	4,853,302	8,172,675
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	20	6,446,797	5,980,477
Հաճախորդներին տրված վարկեր	21	499,288,522	305,613,716
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	22	7,707,303	8,730,005
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	23	2,040,022	2,099,464
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	24	4,182,862	5,447,954
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող	25	36,255,642	4,673,844
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	25	–	14,896,861
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	26	3,651,239	3,195,703
Ընթացիկ հարկային ակտիվներ		1,321,801	1,090,585
Այլ ակտիվներ	27	2,796,698	2,515,183
Ընդամենը ակտիվներ		**719,363,423**	**515,873,688**
Պարտավորություններ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	17	2,535,283	582,560
Բանկերի ավանդներ և մնացորդներ	28	71,834,882	21,214,531
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	29	–	19,004,763
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	30	414,608,686	294,012,140
Թողարկված պարտքային արժեթղթեր	31	18,124,500	–
Այլ փոխառություններ	32	102,735,039	78,383,861
Ստորադաս փոխառություններ	32	40,811,255	39,721,324
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	1,442,872	479,244
Այլ պարտավորություններ	33	2,873,138	3,158,103
Ընդամենը պարտավորություններ		**654,965,655**	**456,556,526**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	34	32,087,360	32,087,360
Էմիսիոն եկամուտ		7,755,179	7,755,179
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		307,897	(251,309)
Չբաշխված շահույթ		24,247,332	19,725,932
Ընդամենը կապիտալ		**64,397,768**	**59,317,162**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**719,363,423**	**515,873,688**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		40,931,425	33,244,747
Վճարված տոկոսներ		(23,817,560)	(20,095,082)
Ստացված միջնորդավճարներ		2,866,115	2,549,890
Վճարված միջնորդավճարներ		(610,329)	(487,001)
Զուտ մուտքեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		676,407	301,737
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		2,724,237	2,465,955
Ելքեր այլ գործառնական ծախսերի գծով		(1,461,489)	(1,281,982)
Մուտքեր այլ գործառնական եկամտի գծով		1,427,995	2,674,847
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(5,754,347)	(5,740,169)
Ելքեր այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով		(2,967,916)	(2,411,669)
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում			
Իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		(2,665,582)	(462,216)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		2,754,468	(6,978,728)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(464,617)	(4,439,653)
Հաճախորդներին տրված վարկեր		(196,032,198)	(25,590,770)
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ		628,842	3,834,214
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		252,241	986,315
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ		1,244,660	(1,067,257)
Այլ ակտիվներ		(704,138)	(196,398)
Գործառնական պարտավորությունների ավելացում /(նվազում)			
Իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		2,330,730	(2,032,902)
Բանկերի ավանդներ և մնացորդներ		50,005,742	(8,602,708)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		(18,999,995)	(2,278,094)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		119,077,450	84,275,500
Այլ պարտավորություններ		(239,818)	352,964
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից (մինչև շահութահարկը)		**(28,797,677)**	**49,021,540**
Վճարված շահութահարկ		(930,000)	(2,350,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		**(29,727,677)**	**46,671,540**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ		(1,373,907)	(1,120,887)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		145,298	4,055
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերումներ		(15,698,772)	(15,360,466)
Մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից		15,036,412	14,490,964
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերումներ		(38,114,289)	(9,819,025)
Մուտքեր մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից		21,633,698	3,647,400
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		**(18,371,560)**	**(8,157,959)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		–	14,366,288
Վճարված շահաբաժիններ		(1,685,286)	(2,100,000)
Ստացված ստորադաս փոխառություններ		–	24,081,500
Մուտքեր այլ փոխառություններից		77,618,450	41,496,387
Այլ փոխառությունների մարում		(53,479,054)	(42,363,568)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից		17,815,044	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		**40,269,154**	**35,480,607**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(7,830,083)**	**73,994,188**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		397,638	603,453
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		**142,713,317**	**68,115,676**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	16	**135,280,872**	**142,713,317**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազ. դրամ)	*Ծան.*	*Կանոնադրական կապիտալ*	*Էմիսիոն եկամուտ*	*Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը կապիտալ*
Մնացորդն առ 2015թ. հունվարի 1		**25,447,680**	**28,571**	**(132,315)**	**17,010,830**	**42,354,766**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Հաշվետու տարվա շահույթ		–	–	–	4,815,102	**4,815,102**
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	(118,994)	–	**(118,994)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**–**	**–**	**(118,994)**	**4,815,102**	**4,696,108**
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Թողարկված բաժնետոմսեր		6,639,680	7,726,608	–	–	**14,366,288**
Հայտարարված շահաբաժիններ	34	–	–	–	(2,100,000)	**(2,100,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ		**6,639,680**	**7,726,608**	**–**	**(2,100,000)**	**12,266,288**
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**32,087,360**	**7,755,179**	**(251,309)**	**19,725,932**	**59,317,162**
Մնացորդն առ 2016թ. հունվարի 1		**32,087,360**	**7,755,179**	**(251,309)**	**19,725,932**	**59,317,162**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Հաշվետու տարվա շահույթ		–	–	–	6,206,686	**6,206,686**
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	559,206	–	**559,206**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**–**	**–**	**559,206**	**6,206,686**	**6,765,892**
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Հայտարարված շահաբաժիններ	34	–	–	–	(1,685,286)	**(1,685,286)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ		**–**	**–**	**–**	**(1,685,286)**	**(1,685,286)**
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**32,087,360**	**7,755,179**	**307,897**	**24,247,332**	**64,397,768**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվություններեի բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) (այսուհետ «Բանկ») հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը: 2015թ. դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (այսուհետ՝ «ՎԶԵԲ») ամբողջովին գնեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը 14,366,288 հազար ՀՀ դրամով:

2016թ. դեկտեմբերի 21-ին «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունից գնեց Բանկի բաժնետոմսերի 13.5% -ը:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են «Ամերիա Գրուպ»-ը (Սի-Ուայ) ընկերությունը, «ՎԶԵԲ»-ը և «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը, որոնց համապատասխանաբար պատկանում է Բանկի 65.8%, 20.7% և 13.5% բաժնետոմսերը:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, դրամավճարային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի տասներկու մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9: Բանկի աշխատողների միջին քանակը 2016թ. 597 է (2015թ.՝598):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 40-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում շարունակում են տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Չնայած համաշխարհային տնտեսական անկայուն միջավայրին, Հայաստանում այս տարի ևս գրանցվել է ՀՆԱ-ի աճ: Նշանակալի բարելավում է գրանցվել երկրի առևտրային հաշվեկշռում: Ներմուծման աճի պայմաններում արտահանումը տարվա կտրվածքով աճել է 20%-ով: Սրանով պայմանավորված բարելավվել է նաև երկրի ընթացիկ հաշվեկշիռը: Կայունացումը Եվրասիական Տնտեսական Միությունում (հատկապես տարվա երկրորդ կիսամյակում), անկասկած, ունեցել է իր դրական ազդեցությունը առևտրի ծավալների և դրամական փոխանցումների ներհոսքի վրա:

Ղեկավարության կարծիքով համապատասխան միջոցառումներ են ձեռնարկվում ներկայիս պայմաններում Բանկի կայունության ապահովման համար:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը՝ ներկայացված ՀՀ դրամով, կլորացված է մինչև մոտակա հազար ՀՀ դրամ: 2016 թ. դեկտեմբերի 31-ի և 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն են համապատասխանաբար 483.94 ՀՀ դրամ և 483.75 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 512.20 ՀՀ դրամ և 528.69 ՀՀ դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր»:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Բանկը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ. Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում

ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները հստակեցնում են, այլ ոչ թե էապես փոխում ՀՀՄՍ 1-ի առկա պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են հետևյալը՝

- ՀՀՄՍ 1-ի պահանջները էականության նկատմամբ,
- Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների առանձին հոդվածները կարող են առանձնացվել,
- Կազմակերպություններն ունեն հնարավորություն ընտրելու ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունների ներկայացման կարգը,
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկությունների համապարփակ եկամտի մասը պետք է ներկայացվի ամբողջությամբ մեկ հոդվածում և դասակարգվի որպես հոդվածներ, որոնք հետագայում կդասակարգվեն կամ չեն դասակարգվի շահույթի կամ վնասի կազմում:

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ միջանկյալ ենթագումարների բացահայտման ժամանակ: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այս փոփոխությունները Բանկի վրա ազդեցություն չունեն:

2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 թթ.

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Դրանք մասնավորապես ներառում են՝

ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով: Այս փոփոխությունները Բանկի վրա ազդեցություն չունեն:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»

Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հանդիսանալ ֆինանսական ակտիվի շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և պայմանագիրը ՖՀՄՍ 7-ի շարունակական մասնակցության ուղեցույցի համաձայն՝ գնահատելու համար, թե արդյոք պահանջվում են բացահայտումներ: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունները: Այս փոփոխությունները Բանկի վրա ազդեցություն չունեն:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ Ծանոթագրություն 2-ի (ե) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են Բանկի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքների կատարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտմամբ ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերահաշվարկի արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ որակված դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները, և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքը, իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը՝

- ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ, կամ
- ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված է որպես արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից նախատեսվել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները կարող է նախատեսել որպես շահույթի կամ վնասի միջոցով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվների կամ պարտավորությունների ներքին կառավարումը, գնահատումը և ներկայացումը իրականացվում է իրական արժեքի հիմունքով,
- այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը, որը այլապես կառաջանար, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման ժամանակ: Ածանցյալ ֆինանսական գործիքները և իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերադասակարգվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը:

Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնք Բանկը.

- մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան վարկային ռիսկի վատթարացումը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ նրանց՝

- որոնց Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ
- որոնց Բանկը դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք բավարարում են վարկերի կամ դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

(ii) Ճանաչում

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք Բանկը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- վարկեր և դեբիտորական պարտքեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ, գումարած կամ հանած սկզբնական ճանաչված գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման ցանկացած նվազեցում: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն վկայությունը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգմամբ: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ երբ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկի՝ շուկայական և վարկային ռիսկին ենթակա ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները կառավարվում են շուկայական կամ վարկային ռիսկի զուտ ենթարկվածության սկզբունքով և չափվում են՝հիմք ընդունելով զուտ երկար դիրքի վաճառքի գինը (կամ այն գինը, որը կվճարվեր զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվների և պարտավորությունների միջև՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի համապատասխան ռիսկերի ճշգրտման հիման վրա:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրերով (ռեպո) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի նկատմամբ պարտավորությունը ներառվում է հետգնման գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով (հակադարձ ռեպո) ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առք ու վաճառք իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

(x) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

▸ վարձակալված գույքի բարելավումներ	5-ից 10 տարի
▸ համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր	1-ից 7 տարի
▸ տնտեսական գույք	3-ից 10 տարի
▸ փոխադրամիջոցներ	7 տարի

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման գծով ծախսումներ: Ամորտիզացիան ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

(զ) Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ ակտիվներից և պարտավորություններից բաղկացած օտարման ենթակա խմբերը, որոնց վերականգնումն ակնկալվում է հիմնականում վաճառքի, այլ ոչ՝ շարունակական օգտագործման միջոցով, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ակտիվներ: Անմիջապես նախքան որպես վաճառքի համար պահվող դասակարգումը, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերի բաղադրիչները վերաչափվում են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այնուհետև ակտիվները կամ օտարման ենթակա խմբերը չափվում են հետևյալ արժեքներից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

(է) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է արժեզրկված լինել: Նման վկայության առկայության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է որևէ հայտանիշ ֆինանսական ակտիվի արժեզրկման մասին, որը հանդիսանում է սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ:

(i) Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ չկա, ապա Բանկը ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(է) Արժեզրկում (շարունակություն)

Եթե առկա է օբյեկտիվ հայտանիշ, որ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորուստ է տեղի ունեցել, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն, ներառյալ սպասվող դրամական հոսքերը երաշխիքներից և գրավներից, զեղչված վարկի նախնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման, և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանց արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի օբյեկտիվ հայտանիշ, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների՝ ներկա շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(է) Արժեզրկում (շարունակություն)

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշները բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ նվազեցված վաճառքի ծախսերով, ու օգտագործման արժեքից առավելագույնի տարբերություն: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավական կամ կառուցողական պարտականություն և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերակազմավորման գծով պահուստը ճանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերակազմավորման մանրամասն պաշտոնական պլանը, և երբ սկսվում է վերակազմավորումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

(թ) Փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Բանկն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնեմասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը:

Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառման միջոցով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(ժ) Վարկային պարտավորություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել սահմանված վճարումներ, փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(ժ) Վարկային պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով ցանկացած կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորության գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորություններ, որոնք Բանկը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին փորձ, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորություններ:

(ի) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(i) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(ii) Բաժնետիրական կապիտալի հետգնում

Երբ որպես կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված հատուցման գումարը, ներառյալ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, ճանաչվում է որպես կապիտալի նվազում:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(լ) Սեգմենտային հաշվետվություն

Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ Մանրածախ բանկային գործունեություն, Կորպորատիվ բանկային գործունեություն, Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն:

(խ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(խ) Հարկում (շարունակություն)

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուդվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

(ծ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման ամսաթվին:

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(կ) Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձակալ

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ:

Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձատու

Բանկը ճանաչում է վարձակալության գծով դեբիտորական պարտքերը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի ժամանակ ռիսկերը և հատույցները ըստ էության պահվում են վարձակալի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս հավասարաչափ մասհանումների միջոցով վարձակալության ժամկետի ընթացքում և ընդգրկվում այլ գործառնական ծախսերի մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ եկամուտ: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

(հ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Բանկի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «*Ֆինանսական գործիքներ*» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Դասակարգման և չափման տեսանկյունից, նոր ստանդարտը կպահանջի գնահատել բոլոր ֆինանսական գործիքները, բացի բաժնային գործիքներում ներդրումներից և ածանցյալ գործիքներից, համակցված մոտեցման հիման վրա՝ ելնելով ընկերության՝ ակտիվները կառավարելու բիզնես մոդելի և գործիքների դրամական հոսքերի բնութագրիչներից: ՀՀՄՍ 39-ի չափման կատեգորիաները կփոխարինվեն հետևյալ կատեգորիաներով. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքներ: ՖՀՄՍ 9-ը նաև թույլ կտա ընկերություններին շարունակել դասակարգել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքների սահմանմանը համապատասխանող գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը: Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքներում ներդրումները կարող են դասակարգվել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) որպես իրական արժեքով՝այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող գործիքներ, առանց օգուտների կամ վնասների հետագա վերադասակարգման ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ֆինանսական պարտավորությունների հաշվառման ՀՀՄՍ 39-ի պահանջները էապես չեն փոխվի:

ՖՀՄՍ 9-ը նաև հիմնովին կփոխի վարկերի արժեզրկման նկատմամբ մոտեցումը: Ստանդարտը կփոխարինի ՀՀՄՍ 39-ի՝ կրած վնասների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: Խմբից կպահանջվի ակնկալվող վարկային կորուստների պահուստ ճանաչել բոլոր վարկերի և պարտքային ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար: Պահուստը գնահատվում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ: Այն դեպքերում, երբ գործիքի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի էական աճ, պահուստը գնահատվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց կարգով, սակայն համեմատական տեղեկատվության վերահաշվարկ չի պահանջվում. կիրառման ազդեցությունը անցման ամսաթվին (2018թ. հունվարի 1) կգրանցվի չբաշխված շահույթում: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Բանկն ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ը նշանակալի ազդեցություն կունենա իր կապիտալի վրա: Այդ ազդեցության չափը որոշելու համար Բանկին անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ հիմնավորված և կիրառելի տեղեկությունը՝ ներառյալ հեռանկարային տարրեր:

Բանկը արդեն սկսել է ՖՀՄՍ 9-ին անցման գործընթացը և նախատեսում է այն ավարտել մինչև 2017թ. տարեվերջ:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

2014 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «*Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ*» ՖՀՄՍ 15-ը, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 15-ը սահմանում է հասույթի ճանաչման սկզբունքները և կիրառելի է լինելու հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի համար: Սակայն տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մասն են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ «*Վարձակալություն*»):

Ստանդարտի համաձայն հասույթը պետք է ճանաչվի, երբ ապրանքներն ու ծառայությունները փոխանցվել են, այն փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ իրավունքը ընկերությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց: Ստանդարտը նաև կհստակեցնի հասույթի բնույթի, չափի և ժամկետների, ինչպես նաև հասույթի և հաճախորդներից համապատասխան դրամական հոսքերի վերաբերյալ ցանկացած անորոշության վերաբերյալ բացահայտումների մի շարք համապարփակ պահանջներ: Բանկը չի նախատեսում ՖՀՄՍ 15-ի վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16 «*Վարձակալություն*» վարձակալության հաշվառման նոր ստանդարտը 2016թ. հունվարին: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» (շարունակություն)

Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց հնարավորություն կունենան չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը: Ընդհանուր առմամբ, շահույթի կամ վնասի ճանաչման կարգը նման է այսօրվա ֆինանսական վարձակալության հաշվառմանը՝ շահույթ կամ վնասում տոկոսային եկամտի և մաշվածության առանձին ճանաչմամբ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, պայմանով, որ հասույթի նոր ստանդարտ ՖՀՄՍ 15-ը կիրառվում է նույն օրը: Բանկը չի նախատեսում ՖՀՄՍ 16 վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում՝ «Շահութահարկ»

2016թ. հունվարին, փոփոխություններ հրապարակելով ՀՀՄՍ 12-ում, ՖՀՄՍ Խորհուրդը հստակեցրեց ֆինանսական հաշվառման նպատակով իրական արժեքով չափվող, սակայն հարկային հաշվառման նպատակով սկզբնական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով հետաձգված հարկային ակտիվների հաշվառման պահանջները:
Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղ կիրառման թույլատրելիության սկզբունքով:
Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին »

2016թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց *«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՄՍ* 7-ում փոփոխություններ՝ նպատակ ունենալով բարելավել ֆինանսավորման գործունեության բացահայտումները և օգնել օգտագործողներին ավելի լավ հասկանալ հաշվետու ընկերության իրացվելիության դիրքերը: Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ինչպիսիք են փոփոխությունները դրամական հոսքերից և ոչ-դրամական հոդվածներից (օր.՝ օգուտ և վնաս արտարժույթի փոփոխությունից):
Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից: Բանկը ներկայումս գնահատում է փոփոխության ազդեցությունը:

ՖՀՄԿԿ Մեկնաբանություն 22 – «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչումից կանխավճարված փոխհատուցման հետ կապված համապատասխան ակտիվի սկզբնական ճանաչման և ծախսերը և եկամուտները հաշվելու համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Եթե կան մի քանի ստացվող և վճարվող կանխավճարներ, կազմակերպությունը պետք է որոշի գործարքի ամսաթիվը յուրաքանչյուր ստացված կամ վճարված կանխավճարի համար:

Կազմակերպությունները պետք է կիրառեն փոփոխությունները հետընթաց: Կազմակերպություններն ունեն այլընտրանք կիրառել մեկնաբանությունը առաջընթաց դրա շրջանակներում գտնվող բոլոր ակտիվների, ծախսերի և եկամուտների համար, որոնք սկզբնապես ճանաչվել են հետևյալ ժամանակաշրջաններում կամ ավելի ուշ.

(i) Այն հաշվետու ժամանակաշրջանի սկզբում, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառել է մեկնաբանությունը,

(ii) Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում՝ ներկայացված որպես համեմատական տեղեկատվություն այն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է մեկնաբանությունը: Մեկնաբանության վաղ կիրառումը թույլատրվում է և պետք է բացահայտվի: ՖՀՄՍ առաջին անգամ կիրառողները նույնպես կարող են կիրառել մեկնաբանությունը առաջընթաց ՖՀՄՍ-ին անցման ամսաթվին կամ դրանից հետո սկզբնապես ճանաչված բոլոր ակտիվների, ծախսերի և եկամուտների համար:

Փոփոխությունները նպատակ ունեն նվազեցնել պրակտիկայում առկա տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով ստացվող կամ վճարվող կանխավճարված փոխհատուցման հետ կապված ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության ապաճանաչումից համապատասխան ակտիվը, ծախսը կամ եկամուտը (կամ դրա մի մասը) ճանաչելիս: Փոփոխությունները ազդեցություն չունեն Բանկի վրա:

4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Բանկը բաժանվում է հետևյալ երեք սեգմենտների.

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց և փոքր ու միջին ձեռնարկությունների ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում, փոքր և միկրո վարկեր:
Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ:

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Շահութահարկը կառավարվում է նախքան շահութահարկը շահույթի հիման վրա և բաշխվում է գործառնական սեգմենտների մեջ:

Գործառնական սեգմենտների միջև ներքին փոխանցումների գները համապատասխանում են շուկայական պայմաններին, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում:

2016 և 2015թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Բանկի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Բանկի գործառնական սեգմենտների գծով եկամտի և շահութի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

2016

Հասույթ	*Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ*	*Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ*	*Ընդամենը հազ. դրամ*
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	(2,052,253)	13,801,679	3,125,611	**14,875,037**
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	1,470,570	3,058,723	3,181,067	**7,710,360**
Միջսեգմենտային եկամուտ (ծախս)	7,414,212	(5,256,654)	(2,157,558)	–
Գործառնական շահույթ	**6,832,529**	**11,603,748**	**4,149,120**	**22,585,397**
Արժեզրկումից կորուստներ	(749,239)	(4,685,162)	–	**(5,434,401)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(633,600)	(85,826)	(59,068)	**(778,494)**
Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(4,941,067)	(2,427,731)	(1,274,408)	**(8,643,206)**
Շահույթ մինչև շահութահարկ	**508,623**	**4,405,029**	**2,815,644**	**7,729,296**
Շահութահարկի գծով ծախս	(100,195)	(867,756)	(554,659)	**(1,522,610)**
Հաշվետու տարվա շահույթ	**408,428**	**3,537,273**	**2,260,985**	**6,206,686**

2016

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	*Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ*	*Ընդամենը հազ. դրամ*
Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ	60,254,233	461,773,974	58,613,279	**580,641,486**
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	172,461,524	472,310,438	3,108,720	**647,880,682**

4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Տոկոսակիր ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերն և փոխառությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը, ակրեդիտիվների, ֆինանսական վարձակալության, ֆակտորինգի գծով ստացվելիք համախառն գումարները և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները:

Տոկոսակիր պարտավորությունները ներառում են բանկերի ավանդներն ու մնացորդները (բացառությամբ ոստրո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառություններն ու ստորադաս փոխառությունները:

2015

Հատույթ	*Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ*	*Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ*	*Ընդամենը հազ. դրամ*
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	(1,394,716)	15,399,792	748,910	**14,753,986**
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	1,371,764	3,145,255	1,819,366	**6,336,385**
Միջսեգմենտային եկամուտ (ծախս)	6,313,667	(6,115,493)	(198,174)	–
Գործառնական շահույթ	**6,290,715**	**12,429,554**	**2,370,102**	**21,090,371**
Արժեզրկումից կորուստներ	(561,324)	(5,594,190)	–	**(6,155,514)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(630,674)	(73,600)	(48,937)	**(753,211)**
Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(4,743,775)	(2,116,439)	(1,298,294)	**(8,158,508)**
Շահույթ մինչև շահութահարկ	**354,942**	**4,645,325**	**1,022,871**	**6,023,138**
Շահութահարկի գծով ծախս	(223,734)	(768,903)	(215,399)	**(1,208,036)**
Հաշվետու տարվա շահույթ	**131,208**	**3,876,422**	**807,472**	**4,815,102**

2015

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	*Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ*	*Ընդամենը հազ. դրամ*
Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ	47,567,898	280,863,474	42,826,715	**371,258,087**
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	144,821,547	288,274,312	19,004,763	**452,100,622**

Տոկոսակիր ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերն և փոխառությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը, ակրեդիտիվների, ֆինանսական վարձակալության, ֆակտորինգի գծով ստացվելիք համախառն գումարները և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները:

Տոկոսակիր պարտավորությունները ներառում են բանկերի ավանդներն ու մնացորդները (բացառությամբ ոստրո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները, այլ փոխառություններն ու ստորադաս փոխառությունները:

Աշխարհագրական տեղեկատվություն

Բանկն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բացի ֆինանսական գործիքներից, Բանկը չունի ՀՀ-ից տարածքից դուրս այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

5. Զուտ տոկոսային եկամուտ

	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	36,883,039	30,848,124
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,853,537	1,536,660
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,228,587	940,327
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	768,153	518,646
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	752,499	818,643
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	611,213	349,573
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	265,806	270,333
Այլ	44,421	137,962
	42,407,255	**35,420,268**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	217,010	312,978
	42,624,265	**35,733,246**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	15,765,834	10,822,786
Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ	8,766,471	6,758,802
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,672,840	581,942
Թողարկված պարտքային արժեթղթեր	552,984	–
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	520,236	2,122,277
Ակրեդիտիվների գծով վճարվելիք գումարներ	445,940	648,020
Այլ	24,923	45,433
	27,749,228	**20,979,260**
Զուտ տոկոսային եկամուտ	**14,875,037**	**14,753,986**

6. Միջնորդավճարների գծով եկամուտ

	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,274,114	1,094,801
Դրամական փոխանցումներ	519,754	402,872
Կանխիկացման, հաշիվների սպասարկման և հեռահար համակարգային սպասարկման ծառայություններ	465,820	406,670
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	319,171	357,862
Բրոկերային ծառայություններ	184,142	207,388
Հաշվարկային գործառնություններ	54,782	41,521
Այլ	48,332	38,776
	2,866,115	**2,549,890**

7. Միջնորդավճարների գծով ծախս

	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	407,321	289,040
Դրամական փոխանցումներ	104,680	78,794
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	71,176	86,114
Այլ	27,152	33,053
	610,329	**487,001**

8. Ցեսիայից օգուտ

2016 թվականի ընթացքում Բանկը պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) պայմանագրեր է կնքել չորս գործընկերոջ հետ և նրանց փոխանցել տասը պարտատիրոջ գծով վարկեր և այլ ստացվելիք գումարներ (այդ թվում՝ ամբողջապես դուրս գրված մնացորդներ) 2,130,029 հազար ՀՀ դրամ ընդհանուր համախառն անվանական արժեքով՝ 1,801,635 հազար ՀՀ դրամ իրական արժեքով ապագայում ստացվելիք հատուցման դիմաց:

Ղեկավարությունը եզրակացրել է, որ Բանկը փոխանցված վարկերի և այլ ստացվելիք գումարների գծով փոխանցել է բոլոր ռիսկերն ու օգուտները և այդ վարկերի և այլ ստացվելիք գումարների հաշվեկշռային արժեքի (704,811 հազար ՀՀ դրամ) ու ցեսիայի պայմանագրերի կնքման ամսաթվերի դրությամբ ստացվելիք հատուցման իրական արժեքի միջև տարբերությունը ճանաչել է որպես ցեսիայից օգուտ՝ 1,096,824 հազար ՀՀ դրամ գումարի չափով: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Բանկին վճարվել է ստացվելիք հատուցման մի մասը՝ 393,135 ՀՀ հազար դրամ գումարի չափով:

9. Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտը՝ 1,055,909 հազար ՀՀ դրամ գումարով (2015թ.՝ զուտ վնաս՝ 1,632,803 հազար ՀՀ դրամ) ներառում է արտարժույթի և տոկոսադրույքի գծով ածանցյալ գործիքների վերագնահատում, որոնք օգտագործվում են բաց արժութային և տոկոսադրույքների դիրքերը և Բանկի որոշ վարկային գործառնությունները տնտեսապես հեջավորելու համար:

10. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Սփոթ գործարքներից զուտ օգուտ	2,724,237	2,465,955
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից զուտ (վնաս)/օգուտ	(258,894)	1,828,278
	2,465,343	**4,294,233**

11. Այլ գործառնական եկամուտ

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Տույժերի և տուգանքների գծով եկամուտ	1,337,303	2,709,524
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ	–	2,402
Այլ եկամուտ	224,337	177,147
	1,561,640	**2,889,073**

12. Այլ գործառնական ծախսեր

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Վճարային համակարգերի գծով ծախսեր	359,890	289,747
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	311,351	229,334
Ծրագրային ապահովման սպասարկում	250,323	219,278
Բրոքերային համակարգերի օգտագործման միջնորդավճարներ	125,533	127,737
Գործակալական վճարներ	72,267	–
Ֆինանսական համակարգի հաշտարար	51,380	40,271
Ինկասացիա	48,134	50,920
Մոնիթորինգի ծառայություններ	47,800	210,682
Տույժերի և տուգանքների գծով ծախսեր	251	1,022
Այլ ծախսեր	194,560	112,991
	1,461,489	**1,281,982**

13. Արժեզրկումից կորուստներ

	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	5,084,493	4,413,869
Այլ արժեզրկումներ	349,908	1,741,645
	5,434,401	**6,155,514**

Այլ արժեզրկումները ներառում են ակրեդիտիվների, ֆինանսական վարձակալության, ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների և այլ ակտիվների գծով արժեզրկումները:

14. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	1,019,034	885,110
Մաշվածություն և ամորտիզացիա	778,494	753,211
Գովազդ և մարքեթինգ	631,039	426,588
Վերանորոգման և պահպանման ծախսեր	258,883	211,247
Բարեգործություն և հովանավորություն	118,550	138,614
Անվտանգության ծառայություն	113,331	67,075
Կապի և տեղեկատվական ծառայություններ	102,925	92,922
Մասնագիտական ծառայություններ	98,849	62,666
Էլեկտրականության և կոմունալ ծախսերի վճարներ	87,427	85,183
Գործուղման ծախսեր	87,173	64,092
Ուսուցում և կրթություն	33,370	26,823
Հարկեր (բացառությամբ աշխատավարձին վերաբերող հարկերի և շահութահարկի)	32,081	41,624
Ապահովագրություն	29,501	26,092
Գրասենյակային ծախսեր	28,421	27,905
Ներկայացուցչական ծախսեր	20,532	24,497
Անձնակազմի գծով ծախսեր	163,086	143,628
Այլ	143,714	89,767
	3,746,410	**3,167,044**

15. Շահութահարկի գծով ծախս

	2016 հազ. դրամ	2015 հազ. դրամ
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս		
Ընթացիկ հարկային ծախս	765,182	556,429
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	(66,398)	–
Հետաձգված հարկի գծով ծախս		
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	823,826	651,607
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**1,522,610**	**1,208,036**

2016թ. ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2015թ-ին՝ 20%):

15. Շահութահարկի գծով ծախս (շարունակություն)

Արդյունավետ հարկային դրույքի համաձայնեցում

	2016 հազ. դրամ	%	2015 հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	**7,729,296**		**6,023,138**	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	1,545,859	20%	1,204,628	20%
Նախորդ տարիների շահութահարկի գումարի ճշգրտում	(66,398)		–	
Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից և զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից (չհարկվող մաս)	(17,932)		23,338	
(Չհարկվող եկամուտ)/ևվազեցվող ծախսեր	61,081		(19,930)	
	1,522,610		**1,208,036**	

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2016թ.և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2016թ. և 2015թ. ընթացքում:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի վերահսկման, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարն ուղղակիորեն հաշվետու է Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի («ԱՊԿԿ») միջոցով: Որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից ու տեսակից:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կիրառվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծություններից, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը՝ կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը իմանալու համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է պարտքային և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթակա են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների փոփոխություններին:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա ընդունելի սահմաններում պահպանել այս ռիսկին ենթակա լինելու աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն՝ Գլխավոր տնօրենի նախագահությամբ: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Շուկայական ռիսկը Բանկը կառավարում է սահմանելով ֆինանսական գործիքների բաց դիրքի, տոկոսադրույքի, ժամկետայնության և արտարժութային դիրքերի գծով սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերանայվում և հաստատվում են Տնօրենների խորհրդի կողմից:

Ի լրումն, Բանկը կիրառում է բազմաթիվ սթրես-թեստեր՝ առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր վիճակի վրա մի շարք առանձնահատուկ շուկայական սցենարների հնարավոր ֆինանսական ազդեցությունը ձևավորելու համար: Սթրես թեստերը թույլ են տալիս որոշել հնարավոր վնասի չափը, որը կարող է առաջանալ ծայրահեղ իրավիճակներում:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը ենթակա է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքների մոնիտորինգի և վերագնանշման նախապես սահմանված սահմանաչափեր սահմանելու միջոցով: Նշված սահմանաչափերի հետ համապատասխանության մոնիտորինգն իրականացվում է ԱՊԿԿ-ի կողմից, որին մոնիտորինգի ամենօրյա գործունեությունում աջակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար: Լողացող տոկոսադրույքով գործիքները խմբավորվում են ըստ իրենց վերագնահատման ամսաթվերի:

հազ. դրամ	*Մինչև 3 ամիս*	*3-6 ամիս*	*6-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անտոկոս կամ ժամկետանց*	*Ընդամենը*
2016թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	–	–	–	–	–	135,280,872	135,280,872
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	3,418,111	1,542,423	49,967	6,794,780	496,553	106,458	12,408,292
Բանկերին տրված վարկեր	3,516,249	–	–	–	–	1,337,053	4,853,302
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	–	–	–	–	–	6,446,797
Հաճախորդներին տրված վարկեր	49,987,719	70,035,996	63,011,550	239,247,172	65,826,585	11,179,500	499,288,522
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	2,591,904	749,057	1,640,657	2,725,685	–	–	7,707,303
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	123,519	118,237	240,466	900,996	656,804	–	2,040,022
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,841,855	1,341,007	–	–	–	–	4,182,862
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	13,258,091	8,148,865	675,060	14,031,035	142,591	–	36,255,642
	82,184,245	**81,935,585**	**65,617,700**	**263,699,668**	**67,122,533**	**147,903,883**	**708,463,614**
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(3,724,091)	(893,022)	(4,516,288)	(60,870,822)	(1,830,659)	–	(71,834,882)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(74,215,296)	(31,244,657)	(67,043,411)	(53,453,037)	(69,119)	(188,583,166)	(414,608,686)
Թողարկված պարտքային արժեթղթեր	(109,244)	(24,650)	–	(17,990,606)	–	–	(18,124,500)
Ստորադաս փոխառություններ	(35,010,155)	–	–	(5,801,100)	–	–	(40,811,255)
Այլ փոխառություններ	(59,734,053)	(42,510,773)	(396,597)	(47,470)	(46,146)	–	(102,735,039)
	(172,792,839)	**(74,673,102)**	**(71,956,296)**	**(138,163,035)**	**(1,945,924)**	**(188,583,166)**	**(648,114,362)**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	9,293,848	–	(2,364,707)	(6,049,248)	(879,893)	–	–
Տարբերություն	**(81,314,746)**	**7,262,483**	**(8,703,303)**	**119,487,385**	**64,296,716**	**(40,679,283)**	**60,349,252**

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

հազ. դրամ	*Մինչև 3 ամիս*	*3-6 ամիս*	*6-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անտոկոս կամ ժամկետանց*	*Ընդամենը*
2015թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	–	–	–	–	–	142,713,317	142,713,317
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	34,243	570,496	818,813	6,617,748	2,130,841	106,460	10,278,601
Բանկերին տրված վարկեր	6,985,607	–	–	–	–	1,187,068	8,172,675
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,980,477	–	–	–	–	–	5,980,477
Հաճախորդներին տրված վարկեր	53,116,619	13,576,243	32,566,376	162,787,834	31,061,856	12,504,788	305,613,716
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	1,404,271	381,894	2,956,525	3,987,315	–	–	8,730,005
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	252,964	150,393	295,676	1,366,503	33,928	–	2,099,464
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	4,701,022	746,932	–	–	–	–	5,447,954
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,563,685	3,492,092	2,998,617	10,877,982	638,329	–	19,570,705
	74,038,888	**18,918,050**	**39,636,007**	**185,637,382**	**33,864,954**	**156,511,633**	**508,606,914**
Պարտավորու-թյուններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(5,946,744)	(1,207,719)	(3,603,911)	(8,262,368)	(2,193,789)	–	(21,214,531)
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	(19,004,763)	–	–	–	–	–	(19,004,763)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(61,159,253)	(33,413,051)	(54,740,255)	(51,657,186)	(90,609)	(92,951,786)	(294,012,140)
Ստորադաս փոխառություններ	(33,909,489)	–	–	–	(5,811,835)	–	(39,721,324)
Այլ փոխառություններ	(47,094,096)	(20,740,323)	(295,853)	(10,253,589)	–	–	(78,383,861)
	(167,114,345)	**(55,361,093)**	**(58,640,019)**	**(70,173,143)**	**(8,096,233)**	**(92,951,786)**	**(452,336,619)**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	8,300,710	–	(1,924,006)	(6,376,704)	–	–	–
Տարբերություն	**(84,774,747)**	**(36,443,043)**	**(20,928,018)**	**109,087,535**	**25,768,721**	**63,559,847**	**56,270,295**

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2016 *Միջին արդյունավետ տոկոսադրույք, %*			*2015* *Միջին արդյունավետ տոկոսադրույք, %*		
	ՀՀ դրամ	*ԱՄՆ դոլար*	*Այլ արտարժույթ*	*ՀՀ դրամ*	*ԱՄՆ դոլար*	*Այլ արտարժույթ*
Տոկոսակիր ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	13.27%	1.86%	–	13.28%	6.51%	–
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	6.15%	–	–	9.31%	7.08%	–
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6.88%	3.50%	–	10.60%	–	–
Հաճախորդներին տրված վարկեր	12.14%	8.19%	9.95%	13.70%	10.58%	10.11%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	14.74%	8.80%	12.00%	14.88%	11.29%	9.75%
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	15.55%	10.80%	–	18.00%	11.08%	13.41%
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	8.63%	5.04%	–	11.42%	5.62%	–
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	9.69%	2.71%	0.89%	7.42%	1.75%	1.76%
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	–	–	–	9.16%	–	–
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ժամկետային ավանդներ	12.11%	5.80%	5.89%	12.12%	6.31%	5.96%
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.75%	5.56%	–	–	–	–
Ստորադաս փոխառություններ	–	8.11%	–	–	7.60%	–
Այլ փոխառություններ	9.04%	6.57%	–	14.07%	5.56%	–

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է տոկոսադրույքի փոփոխության հավանականությունից, որը ազդում է հետագա դրամական հոսքերի և ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ֆինասական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր խելամիտ փոփոխության նկատմամբ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի ենթադրյալ փոփոխության ազդեցությունն է մեկ տարվա տոկոսային եկամուտի վրա՝ հիմնված դեկտեմբերի 31-ին առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիքսված տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատմամբ: Հաշվի են առնվում տոկոսադրույքների փոփոխությունները՝ հիմված այն ենթադրության վրա, որ տեղի են ունենում եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժեր:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Արժույթ	Բազիսային կետի ավելացում 2016	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ	Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ
ՀՀ դրամ	3.70%	–	(644,216)
ԱՄՆ դոլար	1.00%	(99,386)	–

Արժույթ	Բազիսային կետի նվազում 2016	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ	Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2016 հազ. դրամ
ՀՀ դրամ	3.70%	–	644,216
ԱՄՆ դոլար	1.00%	99,386	–

Արժույթ	Բազիսային կետի ավելացում 2015	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ	Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ
ՀՀ դրամ	5.00%	–	(1,512,108)
ԱՄՆ դոլար	1.00%	(68,353)	–

Արժույթ	Բազիսային կետի նվազում 2015	Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ	Կապիտալի և այլ համապարփակ եկամտի զգայունությունը 2015 հազ. դրամ
ՀՀ դրամ	5.00%	–	1,512,108
ԱՄՆ դոլար	1.00%	68,353	–

(ii) Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական հոսքերի տատանման ռիսկն է:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է արտարժութային դիրքի կառուցվածքը ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առ 31 դեկտեմբերի 2016թ.:

(հազ.դրամ)	*ԱՄՆ դոլար*	*Եվրո*	*Այլ արտարժույթ*	*Ընդամենը*
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,519,867	16,343,707	1,286,790	**78,150,364**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	5,046,032	–	–	**5,046,032**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	183,897	2,197,338	62,810	**2,444,045**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,196,793	–	–	**1,196,793**
Հաճախորդներին տրված վարկեր	360,368,545	14,339,351	13,550	**374,721,446**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	4,995,759	2,711,546	–	**7,707,305**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,585,355	226,224	–	**1,811,579**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,927,965	–	–	**3,927,965**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	7,771,091	–	–	**7,771,091**
Այլ ակտիվներ	722,995	26,648	381,770	**1,131,413**
Ընդամենը ակտիվներ	**446,318,299**	**35,844,814**	**1,744,920**	**483,908,033**
Պարտավորություններ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	9,911,600	2,725,678	174,652	**12,811,930**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	278,789,515	33,005,620	2,533,880	**314,329,015**
Թողարկված պարտքային արժեթղթեր	17,106,596	–	–	**17,106,596**
Ստորադաս փոխառություններ	40,811,255	–	–	**40,811,255**
Այլ փոխառություններ	88,947,284	–	–	**88,947,284**
Այլ պարտավորություններ	436,779	113,422	7,192	**557,393**
Ընդամենը պարտավորություններ	**436,003,029**	**35,844,720**	**2,715,724**	**474,563,473**
Զուտ դիրքը	**10,315,270**	**94**	**(970,804)**	**9,344,560**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(404,937)	–	1,377,911	**972,974**
Զուտ դիրքը՝ ներառյալ ածանցյալ գործիքներ	**9,910,333**	**94**	**407,107**	**10,317,534**

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է արտարժութային դիրքի կառուցվածքը ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առ 31 դեկտեմբերի 2015թ.:

(հազ.դրամ)	*ԱՄՆ դոլար*	*Եվրո*	*Այլ արտարժույթ*	*Ընդամենը*
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,141,868	15,012,464	1,521,188	**76,675,520**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	3,333,610	–	–	**3,333,610**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	3,184,243	63,443	16,550	**3,264,236**
Հաճախորդներին տրված վարկեր	228,788,428	12,485,159	–	**241,273,587**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	4,681,253	5,295,175	–	**9,976,428**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,206,759	473,256	–	**1,680,015**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	5,277,664	12,878	11,584	**5,302,126**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	7,478,416	–	–	**7,478,416**
Այլ ակտիվներ	1,163,741	65,068	90,071	**1,318,880**
Ընդամենը ակտիվներ	**315,255,982**	**33,407,443**	**1,639,393**	**350,302,818**
Պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	105,902	–	–	**105,902**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	10,295,701	4,932,921	113,686	**15,342,308**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	188,172,730	28,185,894	2,929,210	**219,287,834**
Ստորադաս փոխառություններ	39,721,324	–	–	**39,721,324**
Այլ փոխառություններ	69,615,481	–	–	**69,615,481**
Այլ պարտավորություններ	701,156	306,350	55,264	**1,062,770**
Ընդամենը պարտավորություններ	**308,612,294**	**33,425,165**	**3,098,160**	**345,135,619**
Զուտ դիրքը	**6,643,688**	**(17,722)**	**(1,458,767)**	**5,167,199**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(2,321,837)	–	1,490,584	**(831,253)**
Զուտ դիրքը՝ ներառյալ ածանցյալ գործիքներ	**4,321,851**	**(17,722)**	**31,817**	**4,335,946**

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով (պայմանավորված փոխարժեքի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքով): Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2016		*2015*	
	Արժևորում	*Շահույթ կամ վնաս հազ. դրամ*	*Արժևորում*	*Շահույթ կամ վնաս հազ. դրամ*
ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ	6.00%	(594,620)	10.00%	(432,185)
ՀՀ դրամը Եվրոյի նկատմամբ	11.00%	(10)	14.00%	2,481

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ու Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը, որոնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի նկատմամբ պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման և մոնիտորինգի ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց տրված վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից: Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչությունը պատասխանատու է իրավաբանական անձանց վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և գործունեության ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ստուգում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող վարկի դիմումներն ուսումնասիրվում են մանրածախ վարկավորման ստորաբաժանումների կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Սովորաբար գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների և բանկերին տրված վարկերի և փոխատվությունների դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գծով:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և վերջիններիս գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների հետ կապված վարկային ռիսկին ենթակա լինելու առավելագույն չափը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 37-ում:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ հաշվանցման պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխառության գլոբալ գլխավոր պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են շուկայում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմաններին: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ հազ. դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	–	6,446,797	6,446,797		–
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**6,446,797**	–	**6,446,797**	**6,446,797**		–
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	–	–	–	–		–
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	–	–	–	–		–

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների տեսակներ հազ. դրամ	*Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար*	*Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար*	*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ		
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,980,477	–	5,980,477	(5,980,477)		–
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**5,980,477**	–	**5,980,477**	**(5,980,477)**		–
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(19,004,763)	–	(19,004,763)	19,004,763		–
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(19,004,763)**	–	**(19,004,763)**	**19,004,763**		–

Վերը նշված աղյուսակում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չափվում են ամորտիզացված արժեքով:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված այն պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության աննկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտավորությունների ֆինանսավորման ծրագրերի վարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատության ծրագրերի ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները ընդունում է ԱՊԿԿ-ն, իսկ Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը իրականացնում է դրանք:

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Բացառություն են կազմում համախառն մարվող ածանցյալ գործիքները, որոնք ներկայացված են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Բանկը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Բանկի՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազ. դրամ)	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 6 ամիս*	*6- ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար*	*Հաշվեկշռային արժեք*
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2,100,331	3,138,977	2,407,413	7,544,034	73,997,839	3,755,885	**92,944,479**	71,834,882
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	177,880,935	44,547,002	80,066,279	75,153,976	73,936,195	372,751	**451,957,138**	414,608,686
Թողարկված պարտքային արժեթղթեր	145,337	113,980	174,723	300,146	18,698,254	–	**19,432,440**	18,124,500
Ստորադաս փոխառություններ	1,287,282	922,310	804,708	1,609,415	27,985,181	28,181,381	**60,790,277**	40,811,255
Այլ փոխառու միջոցներ	4,249,206	13,524,822	5,206,334	11,539,299	91,124,295	12,413,978	**138,057,934**	102,735,039
Այլ ֆինանսական պարտավորություններ	545,421	165,393	2,062,933	–	–	–	**2,773,747**	2,773,747
Զուտ մարվող ածանցյալ պարտավորություններ	2,645	–	–	–	–	–	**2,645**	2,645
Համախառն մարվող ածանցյալ ֆինանսական գործիքներ								
-Վճարվելիք պայմանագրային գումարներ	–	–	–	(92,312,915)	(72,559,894)	–	**(164,872,809)**	(2,532,638)
- Ստացվելիք պայմանագրային գումարներ	–	–	–	92,683,275	72,781,457	–	**165,464,732**	3,056,734
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**186,211,157**	**62,412,484**	**90,722,390**	**96,517,230**	**285,963,327**	**44,723,995**	**766,550,583**	**651,414,850**
Վարկային պարտավորվածություններ	**43,908,219**	–	–	–	–	–	**43,908,219**	**43,908,219**

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 6 ամիս*	*6- ից 12 ամիս*	*Ավելի քան 1 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար*	*Հաշվեկշռային արժեք*
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,883,158	4,231,283	1,364,087	3,885,333	9,998,554	3,222,416	**24,584,831**	21,214,531
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19,004,763	–	–	–	–	–	**19,004,763**	19,004,763
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	119,142,533	38,188,710	35,907,181	58,368,806	61,928,073	115,206	**313,650,509**	294,012,140
Ստորադաս փոխառություններ	273,785	859,956	754,011	1,508,023	21,294,946	32,074,596	**56,765,317**	39,721,324
Այլ ներգրավված միջոցներ	9,584,295	3,535,589	6,891,382	8,410,496	61,776,172	7,130,643	**97,328,577**	78,383,861
Այլ ֆինանսական պարտավորություններ	767,914	62,217	2,312,158	–	–	–	**3,142,289**	3,142,289
Ածանցյալ պարտավորություններ								
- Ներհոսք	–	–	–	–	(6,657)	–	**(6,657)**	(6,657)
- Արտահոսք	3,904	58,674	–	30,542	496,097	–	**589,217**	589,217
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**150,660,352**	**46,936,429**	**47,228,819**	**72,203,200**	**155,487,185**	**42,542,861**	**515,058,846**	**456,061,468**
Վարկային պարտավորվածություններ	**32,259,866**	–	–	–	–	–	**32,259,866**	**32,259,866**

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների պատմական կայունությունը: Պատմականորեն դրանց մարումը տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան ցույց է տրվում տվյալ աղյուսակում: Դրանց մնացորդները աղյուսակներում ընդգրկվում են երեք ամսից պակաս ժամանակահատվածի գումարներում:

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1-ից 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անժամկետ*	*Ժամկետանց*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	135,280,872	–	–	–	–	–	–	**135,280,872**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	32,747	–	1,635,132	1,462,192	–	–	–	**3,130,071**
Կաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	235,398	3,182,714	1,592,389	6,794,780	496,553	106,458	–	**12,408,292**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	3,516,249	–	–	–	–	1,337,053	–	**4,853,302**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	–	–	–	–	–	–	**6,446,797**
Հաճախորդներին տրված վարկեր	16,403,038	28,527,041	125,809,682	236,921,824	80,447,437	–	11,179,500	**499,288,522**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	148,376	2,443,528	2,389,714	2,725,685	–	–	–	**7,707,303**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	45,415	78,104	358,703	900,996	656,804	–	–	**2,040,022**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,244,277	597,578	1,341,007	–	–	–	–	**4,182,862**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	–	13,258,090	8,823,925	14,031,034	142,593	–	–	**36,255,642**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	–	–	–	3,651,239	–	**3,651,239**
Ընթացիկ հարկային ակտիվներ	–	–	–	1,321,801	–	–	–	**1,321,801**
Այլ ակտիվներ	522,684	88,859	1,484,368	–	–	700,787	–	**2,796,698**
Ընդամենը ակտիվներ	**164,875,853**	**48,175,914**	**143,434,920**	**264,158,312**	**81,743,387**	**5,795,537**	**11,179,500**	**719,363,423**
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	2,081	–	1,554,643	978,559	–	–	–	**2,535,283**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,595,259	2,128,832	5,409,310	60,870,822	1,830,659	–	–	**71,834,882**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	176,449,951	41,703,120	142,918,485	53,468,011	69,119	–	–	**414,608,686**
Թողարկված պարտքային արժեթղթեր	95,313	13,931	24,650	17,990,606	–	–	–	**18,124,500**
Ստորադաս փոխառություններ	1,019,046	385,838	–	15,378,096	24,028,275	–	–	**40,811,255**
Այլ ներգրավված միջոցներ	3,619,303	12,292,150	11,198,771	69,423,677	6,201,138	–	–	**102,735,039**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	–	–	1,442,872	–	–	–	**1,442,872**
Այլ պարտավորություններ	545,421	165,393	2,162,324	–	–	–	–	**2,873,138**
Ընդամենը պարտավորություններ	**183,326,374**	**56,689,264**	**163,268,183**	**219,552,643**	**32,129,191**	**–**	**–**	**654,965,655**
Զուտ դիրքը	**(18,450,521)**	**(8,513,350)**	**(19,833,263)**	**44,605,669**	**49,614,196**	**5,795,537**	**11,179,500**	**64,397,768**
Կուտակային զուտ դիրքը	**(18,450,521)**	**(26,963,871)**	**(46,797,134)**	**(2,191,465)**	**47,422,731**			

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անժամկետ*	*Ժամկետանց*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	142,713,317	–	–	–	–	–	–	**142,713,317**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	465,303	–	–	–	**465,303**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	–	34,243	1,389,309	6,617,748	2,130,843	106,458	–	**10,278,601**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	5,748,086	1,237,521	–	–	–	1,187,068	–	**8,172,675**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	5,980,477	–	–	–	–	–	–	**5,980,477**
Հաճախորդներին տրված վարկեր	14,461,769	14,129,803	51,930,687	174,147,478	38,439,191	–	12,504,788	**305,613,716**
Սկրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	1,095,892	308,379	3,338,419	3,987,315	–	–	–	**8,730,005**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	87,382	165,582	446,069	1,366,503	33,928	–	–	**2,099,464**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,919,226	1,781,796	746,932	–	–	–	–	**5,447,954**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,274,824	288,860	6,490,709	10,877,982	638,330	–	–	**19,570,705**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	–	–	–	3,195,703	–	**3,195,703**
Ընթացիկ հարկային ակտիվներ	–	–	1,090,585	–	–	–	–	**1,090,585**
Այլ ակտիվներ	892,907	93,568	1,101,311	–	–	427,397	–	**2,515,183**
Ընդամենը ակտիվներ	**175,173,880**	**18,039,752**	**66,534,021**	**197,462,329**	**41,242,292**	**4,916,626**	**12,504,788**	**515,873,688**
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	3,904	58,674	30,542	489,440	–	–	–	**582,560**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,825,832	4,120,912	4,811,630	8,262,368	2,193,789	–	–	**21,214,531**
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	19,004,763	–	–	–	–	–	–	**19,004,763**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	117,925,467	36,185,264	88,153,500	51,657,299	90,610	–	–	**294,012,140**
Ստորադաս փոխառություններ	22,448	357,282	–	9,595,511	29,746,083	–	–	**39,721,324**
Այլ փոխառու միջոցներ	7,516,525	2,734,291	11,753,769	50,675,377	5,703,899	–	–	**78,383,861**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	–	–	479,244	–	–	–	**479,244**
Այլ պարտավորություններ	767,914	67,876	2,322,313	–	–	–	–	**3,158,103**
Ընդամենը պարտավորություններ	**147,066,853**	**43,524,299**	**107,071,754**	**121,159,239**	**37,734,381**	**–**	**–**	**456,556,526**
Զուտ դիրքը	**28,107,027**	**(25,484,547)**	**(40,537,733)**	**76,303,090**	**3,507,911**	**4,916,626**	**12,504,788**	**59,317,162**
Կուտակային զուտ դիրքը	**28,107,027**	**2,622,480**	**(37,915,253)**	**38,387,837**	**41,895,748**			

35. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

(դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն, և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները:

Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և տարվա ընթացքում.

	2016	*2015*
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	128%	177%
Դեկտեմբերի ամսվա միջին ցուցանիշ	133%	151%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը որոշելու համար (ոչ պակաս, քան 60%):

36. Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել Բանկի՝ կապիտալի վերաբերյալ արտաքին պահանջներին համապատասխանությունը և, որ Բանկը պահպանում է բարձր վարկային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանը աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը պահպանելու կամ դրա մեջ ճշգրտումներ մտցնելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Նախկին տարիների համեմատությամբ ոչ մի փոփոխություն չի եղել կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում և ընթացակարգերում:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
1- ին դասի կապիտալ	63,227,715	59,061,233
2 -րդ դասի կապիտալ	31,613,858	29,530,617
Ընդհանուր կապիտալ	**94,841,573**	**88,591,850**
Ընդամենը ռիսկերով կշռված ակտիվներ	**463,628,657**	**382,726,609**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդհանուր կապիտալի գործակից)	**20.46%**	**23.14%**

36. Կապիտալի կառավարում (շարունակություն)

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

37. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Բանկը նաև տրամադրում է երաշխիքներ՝ գործելով որպես գործակալ արժեթղթերի փոխառության և վարկավորման գործարքներում:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման ժամանակ Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	21,416,078	5,459,585
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	9,740,164	14,657,058
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	7,976,314	6,787,810
Չօգտագործված օվերդրաֆտներ	4,775,663	5,355,413
	43,908,219	**32,259,866**

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

38. Գործառնական վարձակալություն

(ա) Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չխզվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են՝

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Մինչև մեկ տարի ժամկետով	1,952,090	1,809,340
Մեկից հինգ տարի ժամկետով	9,490,860	9,727,656
Ավելի քան հինգ տարի ժամկետով	6,676,219	6,709,069
	18,119,169	**18,246,065**

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարները սովորաբար բարձրացվում են տարեկան կտրվածքով՝ շուկայական դրույքներին համապատասխանելու համար: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալությունը ներառում է կապակցված կողմի հանդեպ վարձակալություն, որը կազմում է 15,315,888 հազար ՀՀ դրամ և ենթակա չէ չեղարկման (2015թ.՝ 15,309,875 հազար ՀՀ դրամ):

39. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ապահովագրված է մինչև 7,112,000 հազար ՀՀ դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության՝ խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

40. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթիդ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 65.8% -ը:

Բանկի վերջնական մայր կազմակերպությունն է «Ար Քեյ Վի Էֆ» ընտանեկան հիմնադրամը, որի վերահսկող անձը Ռուբեն Վարդանյանն է, իսկ վերջնական շահառուները՝ նրա ընտանիքի անդամները:

Մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին	2,271,649	2,267,194

40. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2016 հազ. դրամ	*Միջին տոկոսադրույք, %*	*2015 հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրված վարկեր	956,059	6.96%	957,650	6.44%
Այլ ակտիվներ	1,135	0.0%	1,771	0.0%
Ստացված ավանդներ	422,061	6.58%	1,139,953	6.79%
Այլ պարտավորություններ	850,945	0.0%	1,108,644	0.0%
Երաշխիքներ	33,876	0.0%	33,863	0.0%

Վարկերը և երաշխիքները հայկական դրամով և ԱՄՆ դոլարով են և պետք է մարվեն մինչև 2027թ.:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2016 հազ. դրամ	*2015 հազ. դրամ*
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	62,275	42,951
Տոկոսային ծախս	(43,675)	(64,119)

40. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2016թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		*Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր*		*Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ*		*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր*		
	հազ. դրամ	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*Ընդամենը հազ. դրամ*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	–	–	–	1,633,886	–	**1,633,886**
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	–	–	1,001,707	6.25%	–	–	–	–	**1,001,707**
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	–	–	–	–	82,599,050	6.25%	**82,599,050**
Այլ ակտիվներ	–	–	–	–	–	–	3,596	–	**3,596**
Պարտավորություններ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	–	–	–	1,554,397	–	**1,554,397**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	70,859	0.00%	326,386	0.00%	964,541	0.00%	32,025,131	0.00%	**33,386,917**
- Ժամկետային ավանդներ	–	–	–	–	1,227,222	3.20%	29,346,134	12.82%	**30,573,356**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	–	–	–	5,920,428	6.00%	**5,920,428**
Այլ փոխառություններ	–	–	14,103,304	9.08%	–	–	–	–	**14,103,304**
Այլ պարտավորություններ	–	–	20,765	0.00%	–	–	–	–	**20,765**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ									
Տրված երաշխիքներ	–	–	–	–	–	–	17,927	0.00%	**17,927**
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտներ	–	–	1,706	–	–	–	4,166,018	–	**4,167,724**
Տոկոսային ծախսեր	(28,196)	–	(1,281,883)	–	(41,595)	–	(3,924,377)	–	**(5,276,051)**
Այլ ծախսեր	–	–	(35,706)	–	–	–	–	–	**(35,706)**

40. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		*Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր*		*Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ*		*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր*		
	հազ. դրամ	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*հազ. դրամ*	*Միջին տոկոսադրույք, %*	*Ընդամենը հազ. դրամ*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	–	–	–	465,960	–	**465,960**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	–	–	678,138	12.03%	–	–	–	–	**678,138**
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	–	–	–	–	27,776,910	14.00%	**27,776,910**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	–	–	1,051,056	12.03%	–	–	–	–	**1,051,056**
Պարտավորություններ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	–	–	–	473,034	–	**473,034**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
- Ընթացիկ հաշիվներ և պահանջ ավանդներ	2,020,704	0.00%	1,444	0.00%	84,166	0.00%	3,667,836	0.00%	**5,774,150**
- Ժամկետային ավանդներ	–	–	–	–	2,916,150	3.52%	28,580,396	12.89%	**31,496,546**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	–	–	–	5,932,070	6.00%	**5,932,070**
Այլ փոխառություններ	–	–	9,796,186	13.29%	–	–	–	–	**9,796,186**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ									
Կապակցված կողմերից ստացված երաշխիքներ	–	–	8,740,522	–	–	–	–	0.00%	**8,740,522**
Տրված երաշխիքներ	–	–	–	–	–	–	18,504	0.00%	**18,504**
Չօգտագործված վարկային գծեր	–	–	967,500	–	–	–	–	–	**967,500**
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտ	–	–	–	–	–	–	2,640,209	–	**2,640,209**
Տոկոսային ծախս	–	–	(28,685)	–	(37,453)	–	(1,260,516)	–	**(1,326,654)**

41. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Իրական արժեքի գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց գնահատման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և դատողությունների սուբյեկտիվությունը, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, համեմատությունը նմանատիպ գործիքների հետ, որոնց համար առկա են շուկայական դիտարկելի տվյալներ և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում օգտագործվող ենթադրություններն ու տվյալները ընդգրկում են ոչ ռիսկային և բազիսային տոկոսադրույքներ, վարկային սփրեդեր և այլ ցուցանիշներ, որոնք օգտագործվում են զեղչային դրույքների, պարտատոմսերի գների, արտարժույթի փոխարժեքի, պարտատոմսերի ինդեքսների գների չափման մեջ: Գնահատման մեթոդների նպատակն է հասնել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ֆինանսական գործիքի գինը արտացոլող այն իրական արժեքի որոշմանը, որը կորոշվեր անկախ գործող շուկայի մասնակիցների կողմից:

Ավելի տարածված և պարզ ֆինանսական գործիքների, ինչպես, օրինակ՝ տոկոսադրույքի և արժութային սվոպերի իրական արժեքները որոշելու համար Բանկը օգտագործում է լայնորեն ճանաչված գնահատման մոդելներ, որոնք օգտագործում են միայն դիտարկելի շուկայական տեղեկատվությունը և չեն պահանջում ղեկավարության լայն դատողություններ և գնահատումներ: Դիտարկելի գներն ու մոդելների տվյալները սովորաբար հասանելի են ցուցակված պարտատոմսերի և արժեթղթերի, բորսաներում շրջանառվող ածանցյալ գործիքների համար, ինչպիսիք են տոկոսադրույքի սվոպերը:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի, հաճախորդներին տրված վարկերի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և թողարկված պարտքային արժեթղթերի, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 106,458 հազար ՀՀ դրամ (2015թ.՝ 106,458 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը չի կարող չափվել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և թողարկված տեղական պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	*Իրական արժեք հազ. Դրամ*
Հաճախորդներին տրված վարկեր	499,288,522	492,389,794
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	36,255,642	36,889,889
Թողարկված պարտքային արժեթղթեր	18,124,500	18,326,465
Ընդամենը	**553,668,664**	**547,606,148**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների հաշվեկշռային և իրական արժեքները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ	*Իրական արժեք հազ. Դրամ*
Հաճախորդներին տրված վարկեր	305,613,716	302,066,571
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	19,570,705	18,933,331
Ընդամենը	**325,184,421**	**320,999,902**

41. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- 3.5% և 11.6% -16.4% զեղչման դրույքներ են կիրառվում համապատասխանաբար բանկերին տրված վարկերից ու փոխատվություններից և հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար;
- 5.5% -12% զեղչման դրույքներ են կիրառվում պարտավորություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

(բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս մակարդակը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս կատեգորիան ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

41. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(բ) Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

(հազ. դրամ)	*1-ին մակարդակ*	*2-րդ մակարդակ*	*3-րդ մակարդակ*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Ածանցյալ ակտիվներ	–	3,130,071	–	**3,130,071**
- Ածանցյալ պարտավորություններ	–	(2,535,283)	–	**(2,535,283)**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	3,418,111	8,883,723	–	**12,301,834**
	3,418,111	**9,478,511**	–	**12,896,622**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	492,389,794	**492,389,794**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	804,054	36,085,835	–	**36,889,889**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	18,326,465	–	**18,326,465**
	804,054	**54,412,300**	**492,389,794**	**547,606,148**

41. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

(բ) Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

(հազ. դրամ)	*1-ին մակարդակ*	*2-րդ մակարդակ*	*3-րդ մակարդակ*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Ածանցյալ ակտիվներ	–	465,303	–	**465,303**
- Ածանցյալ պարտավորություններ	–	(582,560)	–	**(582,560)**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	–	10,172,143	–	**10,172,143**
	–	**10,054,886**	–	**10,054,886**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	302,066,571	**302,066,571**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	–	18,933,331	–	**18,933,331**
	–	**18,933,331**	**302,066,571**	**320,999,902**

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները, որոնք գնահատվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ ներառող տեխնիկայով, հիմնականում ներառում են տոկոսադրույքի և արտարժույթի սվոպեր և արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման տեխնիկաները ֆորվարդների գնահատման և սվոփերի մոդելներն են, ներառյալ ներկա արժեքի հաշվարկները: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, փոխարժեքի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերը, որոնք գնահատվում են գնահատման մոդելի օգնությամբ, հիմնականում կազմված են ՀՀ պետական պարտատոմսերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, որը ներառում է շուկայում դիտարկելի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակած տվյալները:

42. Հաշվետու ժամակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2017թ. հունվար - մարտ ամիսների ընթացքում Բանկը տեղաբաշխել է 14,540,500 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 2019թ. մարման ժամկետով պարտատոմսեր՝ համաձայն 2016թ. երրորդ եռամսյակում ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցված առավելագույնը 50,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերի թողարկման ազդագրի:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2017թ. առաջին եռամսյակի համար

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....7

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
31 մարտի 2017թ.

Բանկի անվանումը՝ **ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ**

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, 0015, Գր.Լուսավորիչ 9, հեռ՝ 56 11 11

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծնթ.	01/01/2017-31/03/2017 (չստուգված)	01/01/2016-31/03/2016 (չստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4	12,779,982	10,076,454
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(8,549,773)	(6,670,308)
ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎ ՆՄԱՆԱՏԻՊ ԵԿԱՄՈՒՏ		**4,230,209**	**3,406,146**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	755,581	625,347
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	6	(159,750)	(132,085)
ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ		**595,831**	**493,262**
Իրական արժեքով ՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ (վնաս)/ օգուտ	7	583,985	(245,710)
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	8	229,744	665,073
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		53,872	12,367
Այլ գործառնական եկամուտներ	9	285,426	312,947
Այլ գործառնական ծախսեր	9	(415,952)	(308,366)
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		**5,563,115**	**4,335,719**
Արժեզրկումից կորուստներ	10	(1,020,882)	(860,185)
Աշխատակազմի գծով ծախսեր		(1,476,003)	(1,152,830)
Ընդհանուր վարչական ծախսեր	11	(929,331)	(789,036)
ՇԱՀՈՒՅԹ / ՎՆԱՍ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ		**2,136,899**	**1,533,668**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	12	(492,239)	(337,772)
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՇԱՀՈՒՅԹ		**1,644,660**	**1,195,896**
ԱՅԼ ՀԱՍԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ/ՎՆԱՍ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներից օգուտ (վնաս)		(4,526)	125,939
ԱՅԼ ՀԱՍԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ/ՎՆԱՍ		**(4,526)**	**125,939**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ		**1,640,134**	**1,321,835**

Հաշվետվության վերջին ամսաթիվը՝ 14.04.17թ.

ԿՏ

ՏՆՕՐԻՆՈՒՄՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական դրության մասին
31 մարտի 2017թ.

Բանկի անվանումը՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, 0015, Գր.Լուսավորիչ 9, հեռ՝ 56 11 11

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծնթ.	31/03/2017 (չստուգված)	31/12/2016 (ստուգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	139,969,994	135,280,872
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորներ		388,209	351,233
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	14	2,292,275	3,130,071
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	15	8,105,780	12,408,292
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	15	3,082,791	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	16	482,912	4,853,302
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	9,092,719	6,446,797
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	18	461,498,209	499,288,522
Պահանջներ ակրեդիտիվների գծով	19	5,708,503	7,707,303
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	20	1,913,629	2,040,022
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	21	4,570,685	4,182,862
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող	22	29,347,023	36,255,642
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	22	4,390,729	
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	23	3,663,332	3,651,239
Ընթացիկ հարկային ակտիվ	12	1,321,801	1,321,801
Այլ ակտիվներ	24	3,550,490	2,445,465
Ընդամենը՝ ակտիվներ		**679,379,081**	**719,363,423**
Պարտավորություններ			
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	14	1,027,329	2,535,283
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		7,503,772	-
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	25	74,312,040	71,834,882
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	26	360,731,035	414,608,686
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	27	27,318,722	18,124,500
Ստորադաս փոխառություններ	28	39,930,121	40,811,255
Այլ փոխառություններ	28	97,479,702	102,735,039
Հետաձգված հարկային պարտավորություն	12	1,933,979	1,442,872
Այլ պարտավորություններ	29	3,104,479	2,873,138
Ընդամենը՝ պարտավորություններ		**613,341,179**	**654,965,655**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	30	32,087,360	32,087,360
Էմիսիոն եկամուտ		7,755,179	7,755,179
Վերագնահատման պահուստներ		303,371	307,897
Չբաշխված շահույթ (վնաս)		25,891,992	24,247,332
Ընդամենը՝ կապիտալ		**66,037,902**	**64,397,768**
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**679,379,081**	**719,363,423**

Հաշվետվության վավերագրման ամսաթիվը՝ 14.04.17թ.

ԿՏ

ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎ ՊԱՇՏՕՆԱՅ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀՀՇՊ՝ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
31 մարտի 2017թ.

Բանկի անվանումը՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, 0015, Գր.Լուսավորչի 9, հեռ՝ 56 11 11

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	01/01/2017-31/03/2017 (չաուդված)	01/01/2016-31/03/2016 (չաուդված)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	x	x
Ստացված տոկոսներ	11,122,935	9,960,745
Վճարված տոկոսներ	(8,934,430)	(5,780,394)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	755,580	625,400
Վճարված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	(159,750)	(132,085)
Զուտ վճարներ (մուտքեր) վաճառքի համար մատչելի ակտիվներից	(161,103)	93,950
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից	627,621	598,303
Այլ եկամուտ (ծախսեր)	(150,903)	771,951
Վճարված աշխատավարձ և վճարումներ աշխատակիցներին	(1,415,739)	(1,775,593)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(706,384)	(567,347)
Գործառնական ակտիվների նվազում/ (ավելացում)		
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	840,143	146,379
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	4,303,696	2,145,227
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(2,647,028)	718,647
Հաճախորդներին տրված վարկեր	38,125,267	(8,806,804)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	174,560	295,167
Ստացվելիք գումարներ ակրեդիտիվներից	2,041,975	(1,261,591)
Ստացվելիք գումարներ ֆակտորինգից	(369,027)	(1,252,570)
Այլ ակտիվներ	(1,109,695)	(104,530)
Գործառնական պարտավորությունների նվազում/ (ավելացում)		
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	(711,507)	(419,526)
Բանկերի ավանդներ և մնացորդներ	2,260,938	(2,417,858)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	7,499,999	(1,000,000)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(55,024,593)	(5,907,772)
Այլ պարտավորություններ	498,270	710,456
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**(3,139,175)**	**(13,359,845)**
Վճարված շահութահարկ	-	(380,000)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**(3,139,175)**	**(13,739,845)**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	x	x
Հիմնական միջոցների ձեռքբերում	(215,552)	(424,563)
Հիմնական միջոցների վաճառք	5,595	-
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	1,215,852	618,760
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	2,559,886	(1,045,301)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**3,565,781**	**(851,104)**
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	x	x
Վճարված շահաբաժիններ	-	-
Զուտ մուտքեր այլ փոխառություններից	(5,456,866)	(856,787)
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	9,245,015	-
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**3,788,149**	**(856,787)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	474,367	933,473
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**4,689,122**	**(14,514,263)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում (Ծանոթագրություն 13)	**135,280,872**	**142,713,317**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում (Ծանոթագրություն 13)	**139,969,994**	**128,199,054**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 14.04.17թ.
ԿՏ

ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
31 մարտի 2017թ.

Բանկի անվանումը՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, 0015, Գր.Լուսավորիչ 9, հեռ՝ 56 11 11

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Վերաչափումից տարբերություններ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)					
Մնացորդը առ 01 հունվարի 2016թ. (ստուգված)	32,087,360	7,755,179	(251,309)	19,725,932	59,317,162
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-
Վերահաշվարկված մնացորդը	32,087,360	7,755,179	(251,309)	19,725,932	59,317,162
Ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ հետաձգված հարկից զուտ		-	125,939	-	125,939
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	-	-	-	1,195,896	1,195,896
Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-
Մնացորդը առ 31 մարտի 2016թ. (չստուգված)	32,087,360	7,755,179	(125,370)	20,921,828	60,638,997
Ընթացիկ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)					
Մնացորդը առ 01 հունվարի 2017թ. (ստուգված)	32,087,360	7,755,179	307,897	24,247,332	64,397,768
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-
Վերահաշվարկված մնացորդը	32,087,360	7,755,179	307,897	24,247,332	64,397,768
Ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ հետաձգված հարկից զուտ	-	-	(4,526)	-	(4,526)
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	-	-	-	1,644,660	1,644,660
Բաշխված շահութաբաժիններ			-	-	-
Մնացորդը առ 31 մարտի 2017թ. (չստուգված)	32,087,360	7,755,179	303,371	25,891,992	66,037,902

Հաշվետվության ստորագրման ամսաթիվը՝ 14.04.17թ.

ԿՏ

ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՆՁԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՀԱՆԵՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1. Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Ամերիաբանկ ՓԲԸ-ն (նախկին ,Հայներարտբանկ ՓԲԸ) (այսուհետ, Բանկ) հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց, Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում, Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ ընկերությունը վերանվանվեց, Ամերիա Գրուպ (Սի-Ուայ): 2013թ-ի ընթացքում Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) ընկերությունը դարձավ Բանկի բաժնետիրական կապիտալի 100% բաժնետեր:
2015թ.-ի դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (այսուհետ՝, ՎԶԵԲ) ամբողջովին գնեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը 14,366,288 հազար ՀՀ դրամով:
2016.-ի դեկտեմբերի 21-ին ԻԷՍՊԻԷՍ հոլդինգ լիմիթեդը (ESPS Holding Limited) գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 13.5%-ը, որի արդյունքում Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) ընկերության բաժնեմասը կազմեց 65.8%.
2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են Ամերիա Գրուպը (Սի-Ուայ) 65.8%, ՎԶԵԲ-ը 20.7% և ԻԷՍՊԻԷՍ հոլդինգ լիմիթեդը (ESPS Holding Limited) 13.5%:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, դրամավճարային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի տասներեք մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9: Բանկի աշխատողների միջին քանակը 2017թ.-ի առաջին եռամսյակի դրությամբ 637 է (2016՝ 621):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 36-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը՝ ներկայացված ՀՀ դրամով, կլորացված է մինչև մոտակա հազար ՀՀ դրամ: 2017 թ.-ի մարտի 31-ի և 2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն են համապատասխանաբար 483.45 ՀՀ դրամ և 483.94 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 515.99 ՀՀ դրամ և 512.2ՀՀ դրամ 1 եվրոի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 18-ում՝ Հաճախորդներին տրված վարկեր:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Բանկը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները և ՖՀՄՄԿ-ները, որոնք ուժի մեջ են

մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ. Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման ոլորտում

ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները հստակեցնում են, այլ ոչ թե էապես փոխում ՀՀՄՍ 1-ի առկա պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են հետևյալը՝

- ՀՀՄՍ 1-ի պահանջները էականության նկատմամբ,
- Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների առանձին հոդվածները կարող են առանձնացվել,
- Կազմակերպություններն ունեն հնարավորություն ընտրելու ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունների ներկայացման կարգը,
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկությունների համապարփակ եկամտի մասը պետք է ներկայացվի ամբողջությամբ մեկ հոդվածում և դասակարգվի որպես հոդվածներ, որոնք հետագայում կդասակարգվեն կամ չեն դասակարգվի շահույթի կամ վնասի կազմում:

Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են այն պահանջները, որոնք կիրառվում են ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում լրացուցիչ միջանկյալ ենթագումարների բացահայտման ժամանակ: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այս փոփոխությունները Բանկի վրա ազդեցություն չունեն:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 շրջան

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Դրանք մասնավորապես ներառում են՝

ՖՀՄՍ 5 ,Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կա՛մ վաճառքի, կա՛մ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՖՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՖՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով: Այս փոփոխությունները Բանկի վրա ազդեցություն չունեն:

ՖՀՄՍ 7 ,Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ

Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հանդիսանալ ֆինանսական ակտիվի շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և պայմանագիրը ՖՀՄՍ 7-ի շարունակական մասնակցության ուղեցույցի համաձայն՝ գնահատելու համար, թե արդյոք պահանջվում են

բացահայտումներ: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխությունները: Այս փոփոխությունները Բանկի վրա ազդեցություն չունեն:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն ամփոփ նկարագիր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ ծանոթագրություն 2-ի (ե) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահանջներին համապատասխանող տարբերությունների՝ հեջի արդյունավետ լինելու չափով:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները, և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են

ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Բանկի կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում:

Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Բանկը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Բանկը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են փոխառությունների ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- փոխառությունների ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Բանկը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության

համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Շուկայական և վարկային ռիսկին ենթարկվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները, որոնք Բանկը կառավարում է շուկայական կամ վարկային ռիսկին իր զուտ ենթարկվածության սկզբունքով, չափվում են հիմք ընդունելով այն գինը, որը կստացվեր համապատասխան/կոնկրետ ռիսկի գծով զուտ երկար դիրքը վաճառելուց (կամ կվճարվեր համապատասխան/կոնկրետ ռիսկի գծով զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվներին և պարտավորություններին՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի գծով համապատասխան ռիսկի ճշգրտման հիմունքով:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության

հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, սփոթ գործարքները, տոկոսադրույքների օպցիոնները, արտարժույթի փոխարժեքները, թանկարժեք մետաղները և բորսաները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն իրականացնում է ածանցյալ գործիքների առք ու վաճառք ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն որակվում որպես հեջի հաշվառման ենթակա:

(x) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

– վարձակալված գույքի բարելավումներ	5-ից 10 տարի
– համակարգիչներ և կապի սարքավորումներ	1-ից 7 տարի
– տնտեսական գույք	3-ից 10 տարի
– փոխադրամիջոցներ	7 տարի

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

(զ) Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ ակտիվներից և պարտավորություններից բաղկացած օտարման ենթակա խմբերը, որոնց վերականգնումն ակնկալվում է հիմնականում վաճառքի, այլ ոչ՝ շարունակական օգտագործման միջոցով, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ակտիվներ: Անմիջապես նախքան «որպես վաճառքի համար պահվող» դասակարգումը, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերի բաղադրիչները վերաչափվում են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այնուհետև, որպես կանոն, ակտիվները կամ օտարման ենթակա խումբը չափվում են հետևյալ արժեքներից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

(է) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկառության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են փոխառությունները և այլ դեբիտորական պարտքերը («փոխառություններ և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր փոխառությունները և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին փոխառությունների ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն փոխառությունների ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ փոխառությունը կամ դեբիտորական պարտքը վարկային ռիսկի համանման բնութագրերով փոխառությունների և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն փոխառությունները և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես փոխառության կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ փոխառության կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ փոխառության հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը փոխառության մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ փոխառությունը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են փոխառության վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնահատվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գուդվիլի փոխհատուցվող գումարը որոշվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերակազմավորման գծով պահուստը ճանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերակազմավորման մանրամասն պաշտոնական պլանը և երբ սկսվում է վերակազմավորումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

(թ) Վարկավորման պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկավորման պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկավորման այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկավորման պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- եթե Բանկն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկավորման պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(ժ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերին ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(i) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(ii) Բաժնետիրական կապիտալի հետգնում

Երբ որպես սեփական կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված հատուցման գումարը, ներառյալ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, ճանաչվում է որպես սեփական կապիտալի նվազում:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահութաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(յ) Սեգմենտային հաշվետվողականություն

Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ Մանրածախ բանկային գործունեություն, Կորպորատիվ բանկային գործունեություն, Առևտրային ու Ներդրումային բանկային գործունեություն:

(ի) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ հարկային նպատակներով չնվազեցվող գուդվիլ, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

(յ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով հաշվեգրված զեղչերը և հավելավճարները ճանաչվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից ստացված զուտ եկամտում:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահութաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման օրը:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(իա) Վարձակալություն

Ֆինանսական վարձակալություն `Բանկը որպես ֆինանսական վարձակալ

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, ևվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ: Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը

ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

Ֆինանսական վարձակալություն ՝ Բանկը որպես ֆինանսական վարձատու

Բանկը ճանաչում է վարձակալության գծով դեբիտորական պարտքերը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

Գործառնական վարձակալություն ՝ Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի ժամանակ ռիսկերը և հատույցները արդյունավետորեն պահվում են վարձակալի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ճանաչվում են ծախսեր հավասարաչափ մասհանումների միջոցով վարձակալության ժամկետի ընթացքում և ընդգրկվում այլ գործառնական ծախսերի մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ եկամուտ: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Բանկի համապարփակ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 ,Ֆինանսական գործիքներ

2014 թ. հուլիսին ՀՀՍՄԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 ,Ֆինանսական գործիքներե ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՍՄ 39-ին՝ ,Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումըե, և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ:

Դասակարգման և չափման տեսանկյունից, նոր ստանդարտը կպահանջի գնահատել

բոլոր ֆինանսական գործիքները, բացի բաժնային գործիքներում ներդրումներից և ածանցյալ գործիքներից, համակցված մոտեցման հիման վրա՝ ելնելով ընկերության ակտիվները կառավարելու բիզնես մոդելի և գործիքների դրամական հոսքերի բնութագրիչներից: ՀՀՍՍ 39-ի չափման կատեգորիաները կփոխարինվեն հետևյալ կատեգորիաներով. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքներ: ՖՄՀՍ 9-ը նաև թույլ կտա ընկերություններին շարունակել դասակարգել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, և ամորտիզացված արժեքով չափվող գործիքների սահմանմանը համապատասխանող գործիքները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը: Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքներում ներդրումները կարող են դասակարգվել (առանց հետագա վերադասակարգման հնարավորության) որպես իրական արժեքով՝այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող գործիքներ, առանց օգուտների կամ վնասների հետագա վերադասակարգման ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ֆինանսական պարտավորությունների հաշվառման ՀՀՍՍ 39-ի պահանջները էապես չեն փոխվի:

ՖՀՄՍ 9-ը նաև հիմնովին կփոխի վարկերի արժեզրկման նկատմամբ մոտեցումը: Ստանդարտը կփոխարինի ՀՀՍՍ 39-ի՝ կրած վնասների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱԿՎ) մոտեցմամբ: Խմբից կպահանջվի ակնկալվող վարկային կորուստների պահուստ ճանաչել բոլոր վարկերի և պարտքային ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար: Պահուստը գնահատվում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ: Այն դեպքերում, երբ գործիքի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի էական աճ, պահուստը գնահատվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականության հիման վրա:

ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց կարգով, սակայն համեմատական տեղեկատվության վերահաշվարկ չի պահանջվում. կիրառման ազդեցությունը անցման ամսաթվին (2018թ. հունվարի 1) կգրանցվի չբաշխված շահույթում: ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբն ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ը նշանակալի ազդեցություն կունենա իր կապիտալի վրա: Այդ ազդեցության չափը որոշելու համար Խմբին անհրաժեշտ է կատարել ավելի մանրամասն վերլուծություն, որը հաշվի կառնի ամբողջ հիմնավորված և կիրառելի տեղեկությունը՝ ներառյալ հեռանկարային տարրեր: Բանկը արդեն սկսել է ՖՀՄՍ 9-ին անցման գործընթացը և նախատեսում է այն ավարտել մինչև 2017թ. տարեվերջ:

ՖՀՄՍ 15 ,Հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթ

2014 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ,Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթե ՖՀՄՍ 15-ը, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 15-ը սահմանում է հասույթի ճանաչման սկզբունքները և կիրառելի է լինելու հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի համար: Սակայն, տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և

վարձակալության անբաժան մասն են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ ,Վարձակալություններ):

Ստանդարտի համաձայն հասույթը պետք է ճանաչվի, երբ ապրանքներն ու ծառայությունները փոխանցվել են, այն փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ իրավունքը ընկերությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց:

Բանկը չի նախատեսում ՖՀՄՍ 15-ի վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

ՖՀՄՍ 16 ,Վարձակալություն

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16 ,Վարձակալություններ վարձակալության հաշվառման նոր ստանդարտը 2016թ. հունվարին: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն, այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ:

Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց հնարավորություն կունենան չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալությունը: Ընդհանուր առմամբ, շահույթի կամ վնասի ճանաչման կարգը նման է այսօրվա ֆինանսական վարձակալության հաշվառմանը՝ շահույթ կամ վնասում տոկոսային եկամտի և մաշվածության առանձին ճանաչմամբ:

ՖՀՄՍ 16 ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, պայմանով, որ հասույթի նոր ստանդարտ ՖՀՄՍ 15-ը կիրառվում է նույն օրը: Բանկը չի նախատեսում ՖՀՄՍ 16 վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում՝ ,Շահութահարկ

2016թ. հունվարին, փոփոխություններ հրապարակելով ՀՀՄՍ 12-ում, ՀՀՄՍ-ն հստակեցրեց ֆինանսական հաշվառման նպատակով իրական արժեքով չափվող, սակայն հարկային հաշվառման նպատակով սկզբնական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով հետաձգված հարկային ակտիվների հաշվառման պահանջները:
Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղ կիրառման թույլատրելիության սկզբունքով:
Փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում՝ ,Դրմական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2016թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց ,Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին ՀՀՄՍ 7-ում փոփոխություններ՝ նպատակ ունենալով բարելավել ֆինանսավորման գործունեության բացահայտումները և օգնել օգտագործողներին ավելի լավ հասկանալ հաշվետու ընկերության իրացվելիության դիրքերը: Ըստ նոր

պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ինչպիսիք են փոփոխությունները դրամական հոսքերից և ոչ-դրամական հոդվածներից (օր.՝ օգուտ և վնաս արտարժույթի փոփոխությունից): Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

4. Զուտ տոկոսային եկամուտ

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	11,339,458	8,573,798
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	96,390	195,320
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	245,194	286,853
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	40,093	57,855
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	720,064	453,874
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	48,949	106,224
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	125,144	148,902
Պահանջներ ակրեդիտիվների գծով	156,953	233,809
Այլ	7,737	19,819
	12,779,982	**10,076,454**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,003,028	3,911,511
Այլ փոխառություններ և ստորադասված փոխառություն	2,622,142	2,235,659
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,477,454	127,673
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,771	252,210
Ակրեդիտիվներ և երաշխիքներ	101,352	130,640
Թողարկված արժեթղթերի դիմաց վճարվելիք գումարներ	319,529	-
Այլ	22,497	12,615
	8,549,773	**6,670,308**
Զուտ տոկոսային եկամուտ		

5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Վարկային քարտերի սպասարկման ծառայություններ	326,261	274,547
Դրամական փոխանցումներ	146,528	94,001
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	63,112	77,481

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Կանխիկացման, հաշիվների և հեռահար համակարգերի սպասարկման ծառայություններ	125,575	105,453
Հաշվարկային գործառնություններ	15,075	11,820
Բրոկերային ծառայություններ	28,053	50,963
Այլ	50,977	11,082
	755,581	**625,347**

6. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	19,084	31,407
Վարկային քարտերի սպասարկման ծառայություններ	108,619	73,241
Դրամային փոխանցումներ	27,802	21,100
Այլ	4,245	6,337
	159,750	**132,085**

7. Իրական արժեքով ՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ (վնաս)/ օգուտ

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից առաջացած զուտ շահույթ (վնաս) իր մեջ ներառում է հիմնականում արտարժութային ածանցյալ գործիքների վերագնահատումներ, որոնք օգտագործվում են արտարժութային դիրքերի հեջավորման համար:

8. Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ շահույթ (վնաս)	627,621	598,303
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ (վնաս)	(397,877)	66,770
	229,744	**665,073**

9. Այլ գործառնական եկամուտներ/ծախսեր

Այլ գործառնական եկամուտներ

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Ստացված տույժեր և վնասներ	217,323	278,254
Այլ եկամուտ	68,103	34,693
	285,426	**312,947**

Այլ գործառնական ծախսեր

Տույժերի և տուգանքների գծով ծախսեր	-	(10)
Ինկասացիա	(12,366)	(12,222)
Արժեթղթային և բրոքերային գործունեություն	(24,169)	(34,476)
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	(82,585)	(68,597)
Ծրագրային ապահովման սպասարկում	(67,248)	(59,473)
Վճարման համակարգի գծով ծախսեր	(102,221)	(87,104)
Այլ ծախսեր	(127,363)	(46,484)
	(415,952)	**(308,366)**

10. Արժեզրկումից կորուստներ/Արժեզրկումից հակադարձումներ

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	1,027,694	769,642
Այլ ակտիվներ	(6,812)	90,543
	1,020,882	**860,185**

11. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Գործառնական վարձակալության գծով ծախս	268,650	228,382
Գովազդ և շուկայավարում	154,188	137,062
Մաշվածություն և ամորտիզացիա	203,135	199,757
Վերանորոգման և պահպանման ծախսեր	77,328	41,550
Կապի և տեղեկատվական ծառայություններ	28,594	25,809
Գործուղման ծախսեր	14,386	3,506
Անվտանգության ծառայություն	30,625	21,821
Մասնագիտական ծառայություններ	5,550	6,365

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Էլեկտրականության և կոմունալ ծախսերի վճարներ	28,517	28,115
Ապահովագրություն	7,706	7,353
Բարեգործություն և հովանավորություն	4,784	1,830
Ներկայացուցչական ծախսեր	5,474	6,713
Գրասենյակային ծախսեր	7,985	2,579
Հարկեր, բացառությամբ աշխատավարձին վերաբերող հարկերի և շահութահարկի	6,394	9,967
Այլ	86,015	68,227
	929,331	**789,036**

12. Շահութահարկի գծով ծախս

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս		
Հետաձգված հարկերի շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	492,239	337,772
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**492,239**	**337,772**

2017թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2016թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	%	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	2,136,899		1,533,668	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	427,380	20%	306,734	20%
Չնվազեցվող ծախսեր	64,859	3%	31,038	2.0%
	492,239	**23.0%**	**337,772**	**22.0%**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2017թ. և 2016թ. ընթացքում:

2016թ. **հազ. դրամ**	**Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Մնացորդը առ 31 մարտի 2017թ.**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	(102,874)	(32,080)	-	(134,954)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(76,977)		1,131	(75,846)
Այլ ստացվելիք գումարների պահուստներ	(197,664)	5,933	-	(191,731)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,336,197)	(434,369)	-	(1,770,566)
Հիմնական միջոցներ	(45,152)	(11,346)	-	(56,498)
Այլ ակտիվներ	10,500	(8,418)	-	2,082
Այլ պարտավորություններ	362,234	(4,357)	-	357,877
Այլ փոխառու միջոցներ	(56,742)	(7,601)	-	(64,343)
	(1,442,872)	**(492,239)**	**1,131**	**(1,933,979)**

2016թ. **հազ. դրամ**	**Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Մնացորդը առ 31 մարտի 2016թ.**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	20,694	12,587	-	33,281
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	62,825		(31,482)	31,343
Այլ ստացվելիք գումարների պահուստներ	65,746	(95,346)	-	(29,600)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,010,351)	(289,836)	-	(1,300,187)
Հիմնական միջոցներ	14,379	3,339	-	17,718
Այլ ակտիվներ	13,104		-	13,104
Այլ պարտավորություններ	354,359	31,484	-	385,843
	(479,244)	**(337,772)**	**(31,482)**	**(848,498)**

13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	11,220,842	12,826,023
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	111,212,546	104,878,940
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- ԱԱ- -ից ԱԱ+ վարկանիշով	14,893	17,767
- Ա- -ից Ա+ վարկանիշով	14,660,458	10,310,205
- Բ- -ից ԲԲԲ+ վարկանիշով	2,736,592	7,026,283
- վարկանիշ չունեցող	123,991	221,654
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**17,535,934**	**17,575,909**
Ցպահանջ ավանդներ բանկերի հետ		
- Ա- -ից Ա+ վարկանիշով	**672**	**-**
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**139,969,994**	**135,280,872**

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվներն իրենցից ներկայացնում են վճարահաշվարկային գործունեության համար նախատեսված մնացորդներ, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստավորման ենթակա միջոցներ: Պարտադիր պահուստները նս կարող են օգտագործվել Բանկի հայեցողությամբ, քանի որ դրանցից միջոցների ելքագրումը սահմանափակված չէ:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն: Վերը նշված վարկանիշները Fitch վարկանշային գործակալության վարկանիշներն են:

2017թ. մարտի 31-ի դրությամբ Բանկը ունի տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում (2016թ.դեկտեմբերի 31-ին՝ մեկ), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2017թ. մարտի 31-ի դրությամբ տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարը կազմում է 12,871,625 հազար դրամ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարը կազմում է 7,041,151 հազար դրամ:)

2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
Ակտիվներ		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	518,139	-
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Տոկոսադրույքի սվոպեր	55,540	40,590
Արտարժույթի պայմանագրեր	1,718,596	3,089,481
	2,292,275	**3,130,071**
Պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի պայմանագրեր	1,027,329	2,535,283
	1,027,329	**2,535,283**

Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ:
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Տոկոսադրույքի սվոպեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի գումարները 2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-դրությամբ՝ ներառյալ իրական արժեքը և անվանական գումարը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս դեռևս չմարված պայմանագրերի գծով չիրացված օգուտը և վնասը ճանաչվում է համապատասխանաբար շահույթում կամ վնասում:

	Իրական արժեք		Անվանական գումար	
	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ	2017 հազ. դրամ	2016 հազ. դրամ
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույքի վճարում, ԱՄՆ դոլարով լողացող տոկոսադրույքի ստացում	55,540	40,590	9,284,438	11,218,609

2017թ. մարտի 31-ի դրությամբ Բանկն ունի տոկոսադրույքի սվոպի չորս պայմանագիր՝ երեքը 15,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով և մեկը 10,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով (2016թ դեկտեմբերի 31-ին՝ տոկոսադրույքի սվոպի երեք պայմանագիր՝ յուրաքանչյուրը 15,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով և մեկը 10,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով): Այս պայմանագրերի համաձայն՝ Բանկը վճարում է 2.1350%, 1.3125%, 0.9450% և 1.5850% ֆիքսված տոկոսադրույքներ և ստանում է 6 ամիս USD-LIBOR-ICE լողացող տոկոսադրույքներ՝ համապատասխանաբար յուրաքանչյուր պայմանագրի համար: Տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի մարման ժամկետը լրանում է 2022թ-ին:

15. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ կառավարության պարտատոմսեր	5,014,916	7,174,650
Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	2,119,221	-
Այլ երկների եվրոպարտատոմսեր	-	1,066,963
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Օտարերկրյա այլ կազմակերպությունների պարտատոմսեր	-	3,418,111
Հայկական կորպորատիվ պարտատոմսեր	865,185	642,110
Բաժնային ներդրումներ		
- Չգնանշվող բաժնային արժեթղթեր սկզբնական արժեքով	106,458	106,458
	8,105,780	**12,408,292**
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
ՀՀ կառավարության պարտատոմսեր	3,082,791	-
	3,082,791	**-**

Վաճառքի համար մատչելի ակտիվներում ներառված են ստորև ներկայացվող չգնանշվող բաժնային արժեթղթերը:

Անվանումը	Գրանցման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող % 2017թ.	Վերահսկվող % 2016թ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	3.76%	3.76%	36,429	36,429
«Արցախ Բանկ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	1.06%	1.06%	69,250	69,250
SWIFT	Բելգիա	Դրամային փոխանցումներ	0.00%	0.00%	779	779
					106,458	**106,458**

(ա) Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը դրամային փոխանցումների ոլորտում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություն դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ:

16. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներ		
ՀՀ ԿԲ-ում վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց	420,000	1,220,000
Այլ բանկերին տրված վարկեր և ավանդներ		
Հայկական բանկեր	64	2,500,839
ՏՀՋԿ կազմի մեջ մտնող բանկեր	62,848	1,078,322
Օտարերկյա այլ բանկեր	-	54,141
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և ավանդներ	**62,912**	**3,633,302**
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	**482,912**	**4,853,302**

Բանկերին տրված վարկերը և փոխատվություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

ՏՀՋԿ կազմի մեջ մտնող բանկերին և այլ օտարերկյա բանկերին տրված վարկերում և ավանդներում ներառված 62,848 հազար դրամ (2016թ-ին՝ 117,053 հազար դրամ) գումարն իրենից ներկայացնում է ակրեդիտիվների, երաշխիքների և վարկային քարտերի դիմաց գրավադրված ավանդները:

Բանկերին տրված վարկերի և ավանդների կենտրոնացում

2017թ. մարտի 31-ի դրությամբ Բանկը չունի բանկում տեղաբաշխված միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը (2016թ-ին՝ չունի բանկ):

17. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Փոքր և միջին չափի հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	9,092,719	6,446,797
	9,092,719	**6,446,797**

Գրավ

2017թ. մարտի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին կառավարության և ոչ պետական արժեթղթեր 9,641,195 հազար ՀՀ դրամ իրական արժեքով (2016 թ.՝ 6,814,064 հազար ՀՀ դրամ):

18. Հաճախորդներին տրված վարկեր

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	346,632,548	384,267,796
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	77,062,682	77,010,316
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**423,695,230**	**461,278,112**
Անհատներին տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	20,392,258	20,051,103
Վարկային քարտեր	17,219,493	18,403,846
Բիզնես վարկեր	993,553	1,043,918
Ավտոմեքենայի վարկեր	1,785,900	2,043,068
Սպառողական վարկեր	7,039,082	5,454,847
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**47,430,285**	**46,996,782**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**471,125,515**	**508,274,894**
Արժեզրկման գծով պահուստ	(9,627,306)	(8,986,372)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**461,498,209**	**499,288,522**

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը:

	Չարժեզրկված և ոչ ժամկետանց					
	Բարձր վարկանիշ 2017	Ստանդարտ վարկանիշ 2017	Ստանդարտից ցածր վարկանիշ 2017	ժամկետանց, բայց չարժեզրկված 2017	Անհատապես արժեզրկված 2017	Ընդամենը 2017
Իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	63,667,672	335,542,086	933,795	4,036,472	10,429,545	**414,609,571**

	Չարժեզրկված և ոչ ժամկետանց					
	Բարձր վարկանիշ 2016	Ստանդարտ վարկանիշ 2016	Ստանդարտից ցածր վարկանիշ 2016	ժամկետանց, բայց չարժեզրկված 2016	Անհատապես արժեզրկված 2016	Ընդամենը 2016
Իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	145,465,084	291,807,706	2,052,570	2,871,395	10,591,029	**452,787,784**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների 2017թ. ընթացքում:

	Վարկեր իրավաբանական անձանց հազ. դրամ	Վարկեր անհատներին հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	8,490,328	496,044	8,986,372
Զուտ ծախս	760,689	267,005	1,027,694
Նակինում դուրս գրված վարկերի վերադարձ	4,577	29,670	34,247
Դուրս գրումներ	(169,935)	(251,072)	(421,007)
Մնացորդը տարեվերջին	**9,085,659**	**541,647**	**9,627,306**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների 2016թ. ընթացքում:

	Վարկեր իրավաբանական անձանց հազ. դրամ	Վարկեր անհատներին հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	4,907,173	333,710	5,240,883
Զուտ հակադարձում	4,505,096	579,397	5,084,493
Նակինում դուրս գրված վարկերի վերադարձ	188,461	179,374	367,835
Դուրս գրումներ	(894,856)	(596,437)	(1,491,293)
Վարկերի օտարում	(215,546)	–	(215,546)
Մնացորդը տարեվերջին	**8,490,328**	**496,044**	**8,986,372**

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017թ. մարտի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	334,252,891	2,467,758	331,785,133	0.74%
- մինչև 30 օր ժամկետանց	916,663	9,625	907,038	1.05%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**335,169,555**	**2,477,383**	**332,692,171**	**0.74%**
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Չարժեզրկված վարկեր				
- ոչ ժամկետանց	677,381	7,113	670,269	1.05%
-270 օրից ավել ժամկետանց	741,699	7,788	733,911	1.05%
Արժեզրկված վարկեր՝				
- ոչ ժամկետանց	4,135,497	275,902	3,859,595	6.67%
-270 օրից ավել ժամկետանց	5,908,417	3,170,995	2,737,422	53.67%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	**11,462,993**	**3,461,797**	**8,001,196**	**30.20%**
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	**346,632,548**	**5,939,180**	**340,693,368**	**1.71%**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	68,448,035	1,023,411	67,424,625	1.50%
- մինչև 30 օր ժամկետանց	46,752	720	46,032	1.54%
- 31-90 օր ժամկետանց	1,716,633	26,436	1,690,197	1.54%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**70,211,421**	**1,050,567**	**69,160,855**	**1.50%**
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Չարժեզրկված վարկեր՝				
- ոչ ժամկետանց	267,648	4,122	263,527	1.54%
- 91-180 օր ժամկետանց	77,611	1,195	76,415	1.54%
- 181-270 օր ժամկետանց	87,994	1,355	86,639	1.54%
-270 օրից ավել ժամկետանց	504,001	7,762	496,239	1.54%
Արժեզրկված վարկեր՝				
- ոչ ժամկետանց	538,136	187,422	350,713	34.83%
- 91-180 օր ժամկետանց	795,542	150,152	645,390	18.87%
- 181-270 օր ժամկետանց	1,044,968	276,890	768,078	26.50%
- 270 օրից ավել ժամկետանց	3,535,361	1,467,014	2,068,347	41.50%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկեր	**6,851,260**	**2,095,912**	**4,755,348**	**30.14%**
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	**77,062,682**	**3,146,479**	**73,916,203**	**3.65%**
Ընդամենը Իրավաբանական անձանց տրված վարկեր	**423,695,230**	**9,085,659**	**414,609,571**	**2.14%**

	Համախառն վարկեր հազ. դրամ	*Արժեզրկման պահուստ հազ. դրամ*	*Զուտ վարկեր հազ. դրամ*	*Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %*
Անհատներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	19,472,844	38,946	19,433,898	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	106,054	8,781	97,273	8.28%
- 31-90 օր ժամկետանց	239,304	36,050	203,254	15.06%
- 91-180 օր ժամկետանց	65,547	6,062	59,485	9.25%
- 181-270 օր ժամկետանց	374,603	40,012	334,591	10.68%
- 270 օրից ավել ժամկետանց	133,906	36,662	97,245	27.38%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**20,392,258**	**166,512**	**20,225,746**	**0.82%**
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	15,058,243	32,769	15,025,474	0.22%
- մինչև 30 օր ժամկետանց	72,211	23,503	48,708	32.55%
- 31-90 օր ժամկետանց	608,369	127,934	480,435	21.03%
- 91-180 օր ժամկետանց	23,938	9,164	14,775	38.28%
- 181-270 օր ժամկետանց	1,269,578	27,188	1,242,389	2.14%
- 270 օրից ավել ժամկետանց	187,154	37,362	149,792	19.96%
Ընդամենը վարկային քարտեր	**17,219,493**	**257,919**	**16,961,574**	**1.50%**
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	564,546	12,420	552,126	2.20%
- մինչև 30 օր ժամկետանց	7,205	158	7,046	2.20%
- 31-90 օր ժամկետանց	96,262	2,118	94,145	2.20%
- 270 օրից ավել ժամկետանց	325,540	8,292	317,248	2.55%
Ընդամենը բիզնես վարկեր	**993,553**	**22,988**	**970,565**	**2.31%**
Ավտոմեքենայի վարկեր				
- ոչ ժամկետանց	1,728,277	3,457	1,724,820	0.20%
- մինչև 30 օր ժամկետանց	18,476	896	17,580	4.85%
Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխառության գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման գործարքների, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը գծով:

Նման գրավի համար գործում են ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտակարությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿԿ-ի կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական իրավաբանական անձանց և անհատների ավանդները: Ինչպես նաև Բանկը ձգտում է ապահովել բարձր իրացվելի ակտիվների բազմազանեցված պորտֆել՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների, այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտավորությունների ֆինանսավորման ծրագրերի վարում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման կամ նվազման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը ճևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական՝ կտրվածքով և իրականացնում է կանոնավոր ,սթրես-թեսթերե իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները ընդունում է ԱՊԿԿ-ն, իսկ Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը իրականացնում է դրանք:

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. մարտի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անժամկետ*	*Ժամկետանց*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	139,969,994	-	-	-	-	-	-	**139,969,994**
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	-	-	-	-	-	388,209	-	**388,209**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	71,617	-	448,031	1,254,488	518,139	-	-	**2,292,275**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	444,012	419,229.99	307,357	8,149,424	1,762,089	106,459	-	**11,188,571**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	-	-	-	-	-	482,912	-	**482,912**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	9,092,719	–	–	–	–	–	–	**9,092,719**
Հաճախորդներին տրված վարկեր	23,996,289	9,979,519	94,870,512	236,578,719	85,874,031	-	10,199,139	**461,498,209**
Պահանջներ ակրեդիտիվների գծով	153,437	701,204	2,219,017	2,634,845	-	-	-	**5,708,503**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	61,878	79,779	338,067	821,904	612,001	-	-	**1,913,629**
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,643,037	1,853,913	73,735	-	-	-	-	**4,570,685**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,838,730	6,462,662	4,876,761	18,903,254	1,656,345	-	-	**33,737,752**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	3,663,332	-	**3,663,332**
Ընթացիկ հարկային ակտիվ	-	-	1,321,801	-	-	-	-	**1,321,801**

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անժամկետ*	*Ժամկետանց*	*Ընդամենը*
Այլ ակտիվներ	877,036	123,848	2,200,388	-	-	349,218	-	**3,550,490**
Ընդամենը ակտիվներ	**179,148,749**	**19,620,155**	**106,655,669**	**268,342,634**	**90,422,605**	**4,990,130**	**10,199,139**	**679,379,081**
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	2,081	-	-	1,027,329	-	-	-	**1,027,329**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,595,259	2,128,832	5,456,914	61,363,121	1,657,248	-	-	**74,312,040**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	176,783,360	41,605,855	116,883,959	46,925,606	64,788	-	-	**360,731,035**
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	95,313	13,931	-	27,134,936	-			**27,318,722**
Ստորադաս փոխառություններ	1,019,046	385,838	578,608	39,351,513	-			**39,930,121**
Այլ ներգրավված միջոցներ	3,621,356	12,323,624	10,973,896	66,882,644	10,122,462	-	-	**97,479,702**
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	1,933,979	-	-	-	-	**1,933,979**
Այլ պարտավորություններ	545,421	165,393	2,114,051	-	-	-	-	**3,104,479**
Ընդամենը պարտավորություններ	**183,661,836**	**56,623,473**	**137,941,407**	**242,685,149**	**11,844,498**	**-**	**-**	**613,341,179**
Զուտ դիրքը	**(13,098,560)**	**(9,002,661)**	**(31,285,738)**	**25,657,485**	**78,578,107**	**4,990,130**	**10,199,139**	**66,037,902**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1- ից 3 ամիս*	*3- ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Անժամկետ*	*Ժամկետանց*	*Ընդամենը*
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	135,280,872	-	-	-	-	-	-	**135,280,872**
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	-	-	-	-	-	351,233	-	**351,233**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	32,747	-	1,635,132	1,462,192	-	-	-	**3,130,071**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	235,398	3,182,714	1,592,389	6,794,780	496,553	106,458	-	**12,408,292**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	3,516,249	-	-	-	-	1,337,053	-	**4,853,302**
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	6,446,797	–	–	–	–	–	–	**6,446,797**
Հաճախորդներին տրված վարկեր	16,403,038	28,527,041	125,809,682	236,921,824	80,447,437	–	11,179,500	**499,288,522**
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	148,376	2,443,528	2,389,714	2,725,685	-	-	-	**7,707,303**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	45,415	78,104	358,703	900,996	656,804	–	–	2,040,022
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	2,244,277	597,578	1,341,007	-	-	-	-	**4,182,862**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	-	13,258,090	8,823,925	14,031,034	142,593	-	-	**36,255,642**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	3,651,239	-	**3,651,239**
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	-	1,321,801	-	-	-	**1,321,801**
Այլ ակտիվներ	522,684	88,859	1,484,368			349,554	-	**2,445,465**
	164,875,853	**48,175,914**	**143,434,920**	**264,158,312**	**81,743,387**	**5,795,537**	**11,179,500**	719,363,423
Ընդամենը ակտիվներ								
Պարտավորություններ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	2,081	-	1,554,643	978,559	-	-	-	**2,535,283**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,595,259	2,128,832	5,409,310	60,870,822	1,830,659	-	-	**71,834,882**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	176,449,951	41,703,120	142,918,485	53,468,011	69,119	–	–	**414,608,686**
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	95,313	13,931	24,650	17,990,606	-	-	-	**18,124,500**
Ստորադաս փոխառություններ	1,019,046	385,838	-	15,378,096	24,028,275	-	-	**40,811,255**
Այլ ներգրավված միջոցներ	3,619,303	12,292,150	11,198,771	69,423,677	6,201,138	–	–	**102,735,039**
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	1,442,872	-	-	-	**1,442,872**
Այլ պարտավորություններ	545,421	165,393	2,162,324	-	-	-	-	**2,873,138**
Ընդամենը պարտավորություններ	**183,326,374**	**56,689,264**	**163,268,183**	**219,552,643**	**32,129,191**	**-**	**-**	**654,965,655**
Զուտ դիրքը	**(18,450,521)**	**(8,513,350)**	**(19,833,263)**	**44,605,669**	**49,614,196**	**5,795,537**	**11,179,500**	**64,397,768**

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական խնդիրներից մեկը իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության որոշումն է: Այս նպատակով իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության, ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այլ կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումն այլ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի մարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը:

	2017թ. հազ. դրամ	**2016թ. հազ. դրամ**
Առ 31 մարտի (աուդիտ չանցած)	123%	128%
Միջինը մարտի համար (աուդիտ չանցած)	126%	133%

Վերը նշված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի հետ համապատասխանությունը գնահատելու համար (ոչ պակաս քան 60%):

32. Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել Բանկի՝ կապիտալի վերաբերյալ արտաքին պահանջների համապատասխանությանը և, որ Բանկը պահպանում է բարձր վարկային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանը աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը պահպանելու կամ դրա մեջ ճշգրտումներ մտցնելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Նախկին տարիների համեմատությամբ ոչ մի փոփոխություն չի եղել համապատասխան կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում և ընթացակարգերում:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
	Աուդիտ չանցած	Աուդիտ չանցած
Հիմնական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	32,087,360	32,087,360
Էմիսիոն եկամուտ	7,755,180	7,755,180
Գլխավոր պահուստ	4,249,146	4,249,146
Չբաշխված շահույթ	13,704,125	13,483,398
Նվազեցումներ	(2,547,691)	(2,499,105)
Ընդամենը հիմնական կապիտալ	**55,248,120**	**55,075,979**
	Աուդիտ չանցած	Աուդիտ չանցած
Լրացուցիչ կապիտալ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	303,371	307,897
Ստորադասված փոխառություն (ոչ ավել, քան հիմնական կապիտալի 50%-ը)	25,526,160	27,230,093
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	**25,829,531**	**27,537,990**
Ընդամենը կապիտալ	**81,077,651**	**82,613,969**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**541,755,285**	**516,128,882**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	**14.97%**	**16.01%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

33. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Բանկը նաև տրամադրում է երաշխիքներ՝ գործելով որպես գործակալ արժեթղթերի փոխառության և վարկավորման գործարքներում:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման ժամանակ Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Երաշխիքներ	8,537,821	9,116,861
Ակրեդիտիվներ	52,445	623,303
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	8,355,056	7,976,314
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	13,128,344	21,416,078
Չօգտագործված օվերդրաֆտներ	4,423,202	4,775,663
	34,496,868	**43,908,219**

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային վարկավորման պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս վարկավորման պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

34. Գործառնական վարձակալություն

(ա) Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չխզվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են՝

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	1,783,099	1,952,090
Մեկից հինգ տարի ժամկետով	9,430,714	9,490,860
Ավելի քան հինգ տարի ժամկետով	6,622,577	6,676,219
	17,836,389	**18,119,169**

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարները սովորաբար բարձրացվում են տարեկան կտրվածքով՝ շուկայական դրույքներին համապատասխանելու համար: 2017թ. մարտի 31-ի դրությամբ գործառնական վարձակալությունը ներառում է կապակցված կողմի հանդեպ վարձակալություն, որը կազմում է 15,300,380 հազար ՀՀ դրամ և ենթակա չէ չեղարկման (2016թ.՝ 15,315,888 հազար ՀՀ դրամ):

35. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկն ապահովագրված է մինչև 6,521,734 հազար դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են պարզաբանումներ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական վիճակի վրա, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

36. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է, Ամերիա Գրուպ (Սի-Ռուայ) Լիմիթիդե-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 79.3% -ը:

Բանկի վերջնական մայր կազմակերպությունն է «Ար Քեյ Վի Էֆ» ընտանեկան հիմնադրամը, որի վերահսկող անձը Ռուբեն Վարդանյանն է, իսկ վերջնական շահառուները՝ նրա ընտանիքի անդամները:

Մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը:

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	278,913	619,184

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների անկանխիկ հատուցումները:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին տոկոսադրույքները 2017թ. մարտի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ. հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	2016թ. հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր	967,190	6.98%	956,059	6.96%
Այլ ակտիվներ	3,280	0.0%	1,135	0.0%
Ստացված ավանդներ	325,781	6.25%	422,061	6.58%
Այլ պարտավորություններ	1,085,751	0.0%	850,945	0.0%
Երաշխիքներ	33,842	0%	33,876	0.0%

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները 2017թ. և 2016թ.թ.-ի առաջին եռամսյակների համար:

	01/01/2017-31/03/2017 հազ. դրամ	01/01/2016-31/03/2016 հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	17,362	16,291
Տոկոսային ծախս	(5,804)	(17,624)

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները 2017թ. մարտի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2017թ.-ի առաջին եռամսյակի շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր կազմակերպություն		*Նշանակալից Մասնակցությամբ բաժնետեր*		Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ		Այլ		
	հազ. դրամ	Միջին տոկոսադր. %	հազ. դրամ	Միջին տոկոսադր. %	հազ. դրամ	Միջին տոկոսադր. %	հազ. դրամ	Միջին տոկոսադր. %	Ընդամենը հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
ԱԿՏԻՎՆԵՐ									
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	1,195,664	-	**1,195,664**
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	-	-	-	-	56,170,665	8.9%	**56,170,665**
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	2,384	-	**2,384**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ									
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	-	1,027,750	-	**1,027,750**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	67,605	0.00%	216,916	0%	927,043	0.00%	16,143,029	0.00%	**17,354,593**
- Ժամկետային ավանդներ	-	-		-	271,301	5.14%	30,112,779	12.84%	**30,384,080**
Ստորադաս փոխառություն	-	-	-	-	-	-	5,825,374	6.00%	**5,825,374**
Այլ փոխառություն	-	-	14,573,472	9.03%	-	-	-	-	**14,573,472**
Այլ պարտավորություններ	-	-	18,549	0.00%	-	-	-		**18,549**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված միավորներ									
Տրված երաշխիքներ	-	-	-	-	-	-	18,060	-	**18,060**
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտ	-	-	1,371	-	-	-	1,176,409	-	**1,177,780**
Տոկոսային ծախս	-	-	(321,383)	-	(7,609)	-	(965,504)	-	**(1,294,495)**
Այլ ծախս	-	-	(35,706)	-	-	-	-	-	**(35,706)**

Ստորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2016թ.-ի առաջին եռամսյակի շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր կազմակերպություն		*Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր*		*Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ*		*Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր*		
	Միջին հազ. դրամ	*տոկոսադրույք, %*	*Միջին հազ. դրամ*	*տոկոսադրույք, %*	*Միջին հազ. դրամ*	*տոկոսադրույք, %*	*Միջին հազ. դրամ*	*տոկոսադրույք, %*	*Ընդամենը հազ. դրամ*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն									
Ակտիվներ									
Իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	–	–	–	–	–	1,633,886	–	**1,633,886**
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	–	–	1,001,707	6.25%	–	–	–	–	**1,001,707**
Հաճախորդներին տրված վարկեր	–	–	-	-	–	–	82,599,050	6.25%	**82,599,050**
Այլ ակտիվներ	–	–	–	–	–	–	3,596	–	**3,596**
Պարտավորություններ									
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	-	–	-	-	-	1,554,397	-	**1,554,397**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ									
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	70,859	0.00%	326,386	0.00%	964,541	0.00%	32,025,131	0.00%	**33,386,917**
- Ժամկետային ավանդներ	–	–	–	–	1,227,222	3.20%	29,346,134	12.82%	**30,573,356**
Ստորադաս փոխառություններ	–	–	–	–	–	–	5,920,428	6.00%	**5,920,428**
Այլ փոխառություն	–	–	14,103,304	9.08%	–	–	–	–	**14,103,304**
Այլ պարտավորություններ	–	–	20,765	0.00%	–	–	–	–	**20,765**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված միավորներ									
Տրված երաշխիքներ	–	–	–	–	–	–	17,927	0.00%	**17,927**
Շահույթ (վնաս)									
Տոկոսային եկամուտ	–	–	–	–	-	–	994,393	–	**994,393**
Տոկոսային ծախս	(7,462)	–	(346,395)	–	(21,775)	–	(977,666)	–	**(1,353,298)**

37. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց գնահատման ժամանակաշրջանի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, համեմատությունը նմանատիպ գործիքների հետ, որոնց համար առկա են շուկայական դիտարկելի տվյալներ և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում օգտագործվող ենթադրություններն ու տվյալները ընդգրկում են ոչ ռիսկային և բազիսային տոկոսադրույքներ, վարկային սփրեդեր և այլ ցուցանիշներ, որոնք օգտագործվում են զեղչային դրույքների, պարտատոմսերի գների, արտարժույթի փոխարժեքի, պարտատոմսերի ինդեքսների գների չափման մեջ: Գնահատման մեթոդների նպատակն է հասնել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ֆինանսական գործիքի գինը արտացոլող այն իրական արժեքի որոշմանը, որը կորոշվեր անկախ գործող շուկայի մասնակիցների կողմից:

Ավելի տարածված և պարզ ֆինանսական գործիքների, ինչպես, օրինակ՝ տոկոսադրույքի և արժութային սվոպերի իրական արժեքները որոշելու համար Բանկը օգտագործում է լայնորեն ճանաչված գնահատման մոդելներ, որոնք օգտագործում են միայն դիտարկելի շուկայական տեղեկատվությունը և չեն պահանջում ղեկավարության լայն դատողություններ և գնահատումներ: Դիտարկելի գներն ու մոդելների տվյալները սովորաբար հասանելի են ցուցակված պարտատոմսերի և արժեթղթերի, բորսաներում շրջանառվող ածանցյալ գործիքների համար, ինչպիսիք են տոկոսադրույքի սվոպերը:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի և ներքնի աղյուսակում բացահայտված ֆինանսական գործիքների, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2017թ.-ի մարտի 31-ի դրությամբ 106,458 հազար դրամ (2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 106,458 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը չի կարող որոշվել:

(բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս մակարդակը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ.-ի մարտի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

(հազ. դրամ)	*1-ին մակարդակ*	*2-րդ մակարդակ*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
- Ածանցյալ ակտիվներ	–	1,774,136	1,774,136
- Ածանցյալ պարտավորություններ	–	(1,027,329)	(1,027,329)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Պարտքային գործիքներ	–	7,999,322	7,999,322
	–	**8,746,129**	**8,746,129**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

(հազ. դրամ)	*1-ին մակարդակ*	*2-րդ մակարդակ*	*Ընդամենը*
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
- Պարտքային գործիքներ	–	1,971,711	1,971,711
- Ածանցյալ պարտավորություններ	–	(1,463,653)	(1,463,653)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Պարտքային գործիքներ	–	12,301,834	12,301,834
	–	**12,809,892**	**12,809,892**

2017թ. մարտի 31-ի դրությամբ այն ֆինանսական գործիքները, որոնք չեն չափվում իրական արժեքով, սակայն որոնց համար իրական արժեքը բացահայտվում է, ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

ՔԱՂՎԱԾՔ
N 05/17 Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք.Երևան 23.05.2017թ.

Նիստն անցկացվել է 2017թ. մայիսի 23-ին, միաժամանակ հեռախոսային կոնֆերանսի միջոցով, Երևանի ժամանակով ժամը 11.00-ին, և հեռակա /հարցմամբ/՝ Պորտալի միջոցով: Հեռակա քվեարկության վերջնաժամկետը՝ մինչև 2017թ. մայիսի 23-ը, Երևանի ժամանակով ժամը 23.59-ը ներառյալ[1]:

Մասնակցել են՝
Տնօրենների խորհրդի նախագահ-Լիազոր անդամ՝ Անդրեյ Մկրտչյանը,
Տնօրենների խորհրդի անդամներ՝ Ռուբեն Վարդանյանը, Նուբար Աֆեյանը, Ռոբերտ Բրենդեն ֆոն Ռեկովսկին, Ալեքսեյ Գերմանովիչը, Օլեգ Յարկովը, Պիեռ Գյուրջյանը:

Քվորումն ապահովված է:

Մասնակցել են՝
Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյան՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Օրակարգում ընդգրկված 9-րդ հարց. «Ամերիաբանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկումը

Բանկի կանոնադրության 7.2.2 կետի «ժզ» ենթակետի համաձայն՝ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը վերապահված է Բանկի Տնօրենների Խորհրդին:

Տնօրինության 18.04.2017թ. թիվ 01/55/17 որոշմամբ հավանություն է տրվել Բանկի կողմից ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով արտահայտված պարտատոմսերի առաջարկի ծրագրին, որը ներկայացվել է Տնօրենների Խորհրդի հաստատմանը:

Քվեարկության դրվեց օրակարգի 9-րդ հարցը:

Քվեարկության արդյունքները. Անդրեյ Մկրտչյան – կողմ, Ռուբեն Վարդանյան – կողմ, Նուբար Աֆեյան – կողմ, Ռոբերտ Բրենդեն ֆոն Ռեկովսկի – կողմ, Ալեքսեյ Գերմանովիչ – կողմ, Օլեգ Յարկով – ձեռնպահ, Պիեր Գյուրջյան-կողմ: Ընդամենը՝ կողմ – 6, դեմ – 0, ձեռնպահ – 1:

Որոշեցին. (Որոշում թիվ 05/17/09)

[1] Նիստի վերաբերյալ նյութերը /ներառյալ՝ օրակարգը, որոշման նախագծերը և նյութերը/ Խորհրդի անդամներին ուղարկվել են Ավտոմատացված էլեկտրոնային համակարգի /Պորտալի/ միջոցով:

ՀՀ, 0010, Երևան, Գրիգոր Լուսավորչի 9
9, Grigor Lusavorich str., Yerevan, 0015, RA
www.ameriabank.am
Tel.: (374 10) 56 11 11,513135
Fax: (374 10) 56 33 92
E-mail: office@ameriabank.am

1. Թողարկել ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված ոչ փոխարկելի, արժեկտրոնային, անվանական պարտատոմսեր (այսուհետ՝ «Պարտատոմսեր») հետևյալ կարգով և պայմաններով.

1.1. Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ առավելագույնը 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, 40,000,000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար, 10,000,000 (տասը միլիոն) եվրո,

1.2. Պարտատոմսերի թողարկման նպատակը՝ ֆինանսավորման աղբյուրների տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), բանկի հաշվեկշռի պասիվային մասի ծախսատարության նվազեցում, արտարժութային պարտավորությունների ներգրավման հետ կապված պահուստավորման ծախսի նվազեցում, հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնում և տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), նախքան Բանկի առաջնային հանրային տեղաբաշխումը (IPO) Լոնդոնի Ֆոնդային Բորսա և/կամ ՆԱՍԴԱՔ Օ Էմ Էքս Արմենիա հարթակներում հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացում, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածում ներդրողների լայն շրջանակում,

1.3. Պարտատոմսերի թողարկման կառուցվածքը՝ յուրաքանչյուր արժույթով արտահայտված առնվազն մեկ թողարկում ու տեղաբաշխում, ընդ որում՝ Բանկը կարող է իրականացնել թողարկված Պարտատոմսերի մի քանի տեղաբաշխում՝ պահպանելով սույն որոշմամբ սահմանված թողարկման առավելագույն ծավալը,

1.4. Պարտատոմսերի ժամկետայնությունը՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբից ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,

1.5. Յուրաքանչյուր Պարտատոմսի անվանական արժեքը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար և/կամ 100 (մեկ հարյուր) եվրո՝ համաձայն թողարկման արժույթի.

1.6. Պարտատոմսերի քանակը՝ համաձայն Պարտատոմսերի թողարկման ծավալի և Պարտատոմսի անվանական արժեքի հարաբերության.

1.7. Պարտատոմսերի արժեկտրոնի (տոկոսների) եկամտաբերությունը՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբից ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,

1.8. Պարտատոմսերի արժեկտրոնի (տոկոսների) հաշվարկման մոտեցումը՝ փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual),

1.9. Պարտատոմսերի արժեկտրոնի (տոկոսների) վճարման պարբերականությունը՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբից ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,

1.10. օպցիոնների առկայություն՝ չի նախատեսվում,

1.11. վարկային ռիսկի բարելավումներ (credit risk enhancement)՝ չի նախատեսվում,

1.12. մեկ ներդրողի կողմից ձեռքբերման սահմանափակումները՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբից ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,

1.13. տեղաբաշխողը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ,

1.14. տեղաբաշխման սկիզբը և ավարտը՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման Պարտատոմսերի տեղաբաշխման սկզբից ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,

1.15. Շուկայի ստեղծումը (մարքեթ մեյքինգ) կարող է իրականացվել մինչև պարտատոմսերի ցուցակումը և համաձայն ներդրումային ընկերությունների և լիցենզավորված բանկերի հետ կնքված համապատասխան պայմանագր/եր/ի,

1.16. վճարային գործակալ՝ երրորդ անձի (գործակալի) ներգրավում չի նախատեսվում, վճարումները կատարելու է Բանկը:

2. Սույն որոշման 1-ին կետում չնշված և Պարտատոմսերի տեղաբաշխմանը վերաբերող մնացած բոլոր պայմանները հաստատված համարել համաձայն Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Բանկի Տնօրինության որոշման, այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը և սույն որոշման 1-ին կետով սահմանված պայմաններին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրեն՝ **Արտակ Հանեսյան**

ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 55

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18 ապրիլի, 2017թ.**

Մասնակցել են՝

Տնօրինության անդամներ՝

Գ. Թառումյան՝	Ֆինանսական գծով տնօրեն, Տնօրինության նախագահի ժ/պ
Ա. Բարսեղյան՝	Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն
Ա. Բարսեղյան՝	Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար
Ա. Բաբայան՝	Առևտրային գործառնությունների գծով տնօրեն
Գ. Սահակյան՝	Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն
Գ. Խաչատրյան՝	Գլխավոր հաշվապահ
Բ. Մովսիսյան՝	Գործառնությունների և տեխնոլոգիաների գծով տնօրեն
Ս. Աղաբաբյան՝	Անվտանգության ծառայության ղեկավար
Տ. Ջրբաշյան՝	Զարգացման գծով տնօրեն

Ընդամենը՝ 9 ձայն

Քվորումն ապահովված է:

Օրակարգի առաջին հարց. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեց՝ Շուշանիկ Հովսեփյանը

Հիմք ընդունելով «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության 7.2.2 կետի ժզ) ենթակետը (այն է՝ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը վերապահված է Բանկի Տնօրենների խորհրդին) և 7.3.10 ե) ենթակետը (այն է՝ Բանկի ակտիվների և պասիվների կառավարման իրականացումը վերապահված է Բանկի Տնօրինությանը), ղեկավարվելով Բանկի կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ՝ Տնօրինությունը՝

Հարցը դրեց քվեարկության՝

Անդրանիկ Բարսեղյան – կողմ

Արման Բարսեղյան – կողմ

Արթուր Բաբայան – կողմ

Գևորգ Թառումյան – կողմ

Գագիկ Սահակյան – կողմ

Գոհար Խաչատրյան – կողմ

Բուրաստան Մովսիսյան – կողմ

Սամվել Աղաբաբյան - կողմ

Տիգրան Ջրբաշյան– կողմ

Ընդամենը՝ կողմ – 9, դեմ – 0, ձեռնպահ – 0, չի մասնակցել – 0,

Որոշեց՝ (Որոշում թիվ 01/55/17)

1.1. Հավանություն տալ Բանկի կողմից ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով արտահայտված պարտատոմսերի առաջարկի ծրագրին՝ հետևյալ պայմաններով՝

- **Արժեթղթերի տեսակը**՝ ոչ փոխարկելի, արժեկտրոնային, անվանական պարտատոմսեր.
- **Թողարկման ծավալը**՝ առավելագույնը 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, 40,000,000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար, 10,000,000 (տասը միլիոն) եվրո.
- **Թողարկման նպատակը**՝ ֆինանսավորման աղբյուրների տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), բանկի հաշվեկշռի պասիվային մասի ծախսատարության նվազեցում, արտարժութային պարտավորությունների ներգրավման հետ կապված պահուստավորման ծախսի նվազեցում, հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնում և տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), նախքան Բանկի առաջնային հանրային տեղաբաշխումը (IPO) Լոնդոնի Ֆոնդային Բորսա և/կամ ՆԱՍԴԱՔ Օ Էմ Էքս Արմենիա հարթակներում հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացում, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածում ներդրողների լայն շրջանակում.
- **Թողարկման կառուցվածքը**՝ յուրաքանչյուր արժույթով արտահայտված առնվազն մեկ թողարկում ու տեղաբաշխում, ընդ որում Թողարկման ծավալի պահպանմամբ Բանկը կարող է իրականացնել թողարկված պարտատոմսերի մի քանի տեղաբաշխում՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման.
- **Պարտատոմսերի ժամկետայնությունը**՝ ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ.
- **Պարտատոմսի անվանական արժեքը**՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/100 (մեկ հարյուր) եվրո.
- **Թողարկվող պարտատոմսերի քանակը**՝ հավասար է Թողարկման ծավալի և Պարտատոմսի անվանական արժեքի հարաբերությանը.
- **Արժեկտրոնի (տոկոսների) եկամտաբերությունը**՝ ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ.
- **Արժեկտրոնի (տոկոսների) հաշվարկման մոտեցումը**՝ Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual).
- **Արժեկտրոնի (տոկոսների) վճարման պարբերականությունը**՝ ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ.
- **Օպցիոնների առկայություն**՝ չի նախատեսվում.
- **Վարկային ռիսկի բարելավումներ** (credit risk enhancement)՝ չի նախատեսվում.

- **Մեկ ներդրողի կողմից ձեռքբերման սահմանափակումները**՝ ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ.
- **Տեղաբաշխող**՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ.
- **Տեղաբաշխման սկիզբը և ավարտը**՝ սահմանվում է Բանկի Տնօրինության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,
- **Շուկայի ստեղծում** (մարքեթ մեյքինգ)՝ կարող է իրականացվել՝ բանակցելով ներդրումային ընկերությունների և լիցենզավորված բանկերի հետ և կնքելով համապատասխան պայմանագիր մինչևպարտատոմսերի ցուցակումը.
- **Վճարային գործակալ**՝ երրորդ անձի (գործակալի) ներգրավում չի նախատեսվում, վճարումները կատարելու է Բանկը.

1.2. Սույն որոշման 1.1. կետում նշված պայմաններից բացի պարտատոմսերի տեղաբաշխմանը վերաբերող բոլոր պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ՝ այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը և սույն որոշման 1.1. կետով սահմանված պայմաններին:

2. **Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրենին՝**
   Ներկայացնել սույն որոշման 1-ին կետով հավանության արժանացած առաջարկը Տնօրենների խորհրդի հաստատմանը:

3. **Հանձնարարել Ներդրումային Բանկային գործառնությունների դեպարտամենտի ղեկավարին՝**
   - Տնօրենների Խորհրդի կողմից պարտատոմսերի թողարկման և առաջարկի ծրագրի պայմանների հաստատումից հետո հնգօրյա ժամկետում թողարկման ծրագրային ազդագիրը ներկայացնել ՀՀ կենտրոնական Բանկ գրանցման:
   - Պարտատոմսերի տեղաբաշխումից հետո 5 (հինգ) աշխատանքային օր ժամկետում դիմել կարգավորվող շուկայի օպերատորին պարտատոմսերի ցուցակման ու առևտրին թույլատվություն ստանալու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, իսկ սույն որոշման 1-ին կետով հավանության արժանացած առաջարկն ուժի մեջ է մտնելու Տնօրենների խորհրդի կողմից հաստատվելուց հետո և կիրարկվելու է ՀՀ ԿԲ գրանցումից հետո:

Նախագահ՝	Գևորգ Թառումյան
Անդամներ՝	Անդրանիկ Բարսեղյան
	Արման Բարսեղյան
	Արթուր Բաբայան
	Գագիկ Սահակյան
	Գոհար Խաչատրյան
	Բուրաստան Մովսիսյան
	Սամվել Աղաբաբյան
	Տիգրան Ջրբաշյան
Քարտուղար՝	Աննա Պապյան